

Հ. Լոհսդուկոսաս—ՍՈՅ. ԴԱՄ. ԳԼՈՒԽՈՎ ԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԴԱՐԿԵՐ

ԱՃԻԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑ 1 ԱՌՏՎԱԾՆԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՐՄԱՐ

Յերկրագունդ
և Օ և Մ
ԽՈՀՄ-ի հարեվան յերկրներ
Մի բանի բուշտուական յերկրներ

Խաղաց Հ. ԵԼԻՆՈՎԻՉ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ № 799

ԾԵՐԵԴ. ԱՐ. — 1928 թ.

193

16791



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

A 38345

ԱՆԴՐԱՇԽԵՎԻ ԳԻՒՐԻ և ԱՄՈՏԵՎԱՆԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Եազգական և Ավելացնական




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ № 799

Georgian—1928 p.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յերբ մենք դաշտում կանգնած դիւնչից կողմերը առաջ ենք մեր չորս կողմը, մեզ թվում ե, թէ հեռվում յերկինքն ու յերկիրը միանում են: Այն զիծք, վոր դոյանում ե յերկնքի և յեր-



Նկ. 1. Հորիզոն

Արի միացումից, կոչվում ե հորիզոնն Հորիզոնը մեզ յերեացող տարածության սահմանն ե. Հորիզոնի այն կողմը դանվող վայրերը մենք չենք տեսնում:

Արևն ամեն որ ծագում ե հորիզոնի մի կողմում և, յերկնակամարի վրա շարժում կատարելով, մայր և մանում

հակառակ կողմում: Հորիզոնի այն կողմը, վորտեղ արել ծագում է, կոչվում է արեվիլք*), իսկ այն կողմը, վորտեղ արել մայր և մանուշ՝ արեվմուտք: Յեթե յերեսներս դարձնենք գեպի արևելք, այն գեպը մեր ձախ կողմը կլինի հյուսիս, իսկ աջ կողմը՝ հարավ:

Արեւելքը, արևմուտքը, հյուսիսը և հարավը հորիզոնի գլխավոր կողմերն են:

Հորիզոնն ունի և յերկրորդական կողմեր: Այդ յերկրորդական կողմերն են՝ հյուսիս-արեւելքը, հարավ-արևմուտքը և այլն:

Հյուսիս՝ արևմուտքը հորիզոնի այն կողմն է, վոր գտնվում է հյուսիսի և արևմուտքի միջև, հյուսիս-արեւելքը՝ հյուսիսի և արեւելքի միջև, հարավ՝ արեւելքը՝ հարավի և արեւելքի միջև և այլն:

Ցույց տվեք հորիզոնի գլխավոր և յերկրորդական կողմերը Զեռքներդ մեկնեցեք գեպի հյուսիս, ձեռքներդ մեկնեցեք գեպի հյուսիս—արեւելք և այլն:


Չեր հարեան դյուցը վժը կողմն և գտնվում:

Աշխատանք.—Գծեցեք մի շրջան՝ Յենթաղբենք, թե դա ձեր հորիզոնն է և գուռ ել գտնվում եք այդ շրջանի կենտրոնում: Նրա վերևի կողմն ընդունեցեք հյուսիս, ներքեւի կողմը՝ հարավ, աջ կողմը՝ արեւելք, իսկ ձախ կողմը՝ արևմուտք: Այդ շրջանի յեղերքին նշանակեցնք հորիզոնի գլխավոր և յերկրորդական կողմերը (Ն. Ելիբեկյանի Աշխարհ, տեսր—աշխատանք 1.):

Հորիզոնի կողմերը կարելի յե վորոշել նաև սովորի ոգնությամբ: Յեթե մի հարթ տեղ ուղղաձիգ դրությամբ մի ձող տնկենք և ապա դիտենք ստվերը, այն գեպը կտեսնենք, վոր մինչև կեսոր այդ ստվերը կարձանում է, իսկ կեսորից հետո՝ յերկարում: Ամենակարճ ստվերը լի-

^{*)} Արեւելք կոչվում է իսկապես այն կողմը, վորտեղ արել ծագում է մարտի 20-ին կամ սեպտեմբերի 20-ին: Զմեռը արել ծագում է այդ կետից փոքր ինչ հարավ, իսկ ամառը՝ փոքր ինչ հյուսիս:

նում և կեսարին և ուզգված և լինում ուղիղ դեպի հյուսիս: Այն զիծը, վոր անցնում և ստվերի ուղղությամբ, կոչ-



Նկ. 2 Հորիզոնի կողմերի վորոշելը ստվերի ողնությամբ:


վում և սիցուելի զիծ կամ միջուեալիան: Այդ զծի մի ծայրն ուղղվում է դեպի հյուսիս, իսկ մյուսը՝ դեպի հարավ:

Աշխատանիք. Դպրոցի բակում մի ձոր տնկեցեք և նրա ողնությամբ գտեք միջորեական զիծը: Չողի շուրջը կավճակ մի շրջան գծեցեք և առաջ նրա վրա նշանակեցեք կողմերը (աշխարհ, տեսր, աշխ, 2):

Արեփ ողնությամբ զիշերները կամ ամպամնացույց: Ապամած ցերեկները մենք հորիզոնի կողմերը չենք կարող ցույց տալ: Այդ պատճառով նման դեպքերում հորիզոնի կողմերը վորոշելու համար դորձ են ածում կողմնացույց կոչված գործիքը:

Կողմնացույցը մի փոքրիկ տուփ է, վորի մեջ սրածայր հենարանի վրա զրված և մի սագնիսական սլամ: Այդ մագնիսական սլամի ծայրը միշտ նայում է դեպի հյուսիս, իսկ մյուսը՝ դեպի հարավ: Սլամի այն ծայրը, վորը ցույց է տալիս հյուսիս, սովորաբար սեւացրած և լինում: Տուփի հատակին նշանակված են հորիզոնի կողմերը.—

հյուսիս N, հարավը S, արևելքը O և արևմուտքը W
տառերով: Հյուսիս-արևելքը նշանակված է NO, հարավ-
արևելքը SO, հյուսիս-արևմուտքը NW և հարաւ-արև-
մուտքը SW տառերով կամ նշա-



մուտքը SW տառերով կամ նշա-
նակում են ոռուերեն C (սевեր
=հյուսիս), IO (յոր=հարավ),
B (восток=արևելք), Z (запад
=արևմուտք) տառերով: Կողմնա-
ցույցի ոգնությամբ հորիզոնի
կողմերը հեշտ ե գտնել: Դրա
համար կողմնացույցը պետք է
գնել մի հարթ տեղ, որինակա-
ռեղանին, փորպեսզի ոլաքը
կարողանա ազատ շարժվել: Ցերք
ոլաքը կանգ կառնի, կողմնա-
ցույցը պետք է զգուշությամբ

շրջել, մինչև վոր N տառը լինի ոլաքի սեփացրած ծայրի
դիմաց: Այն ժամանակ տուփի հատակի տառերը ցույց
կտան հորիզոնի մնացած կողմերի ուղղությունը:

Կողմնացույցի կամ արևի ոգնությամբ

Գ ի ր բ: մենք հեշտությամբ կարող ենք գտնել, թե
հարեան դրույզը մեր բնակասեզի (զյուղի
կամ քաղաքի) վոր կողմն ե գտնվում: Որինակ յեթե ապ-
րում ենք Ցերեանում, այն զեպքում կարող ենք ցույց
տալ, վոր նոր Արարկիրը գտնվում է Ցերեանի հյուսի-
սային կողմը: Բայց Ցերեանի հյուսիսային կողմը գտնվում
է վոչ միայն ն. Արարկիրը, այլ և Ցեղվարդ զյուղը.
այդ պատճառով ն. Արարկիրի գիրքը Ցերեանի նկատմամբ
վորոշելու համար մենք պետք ե ցույց տանք նաև ն. Արար-
կիրի հեռավորությունը Ցերեանից: Հեռավորությունը վա-
րոշում ենք կիլոմետրով: Ասում ենք—նոր Արարկիրը
գտնվում է Ցերեանի հյուսիսային կողմը, 2 կիլոմետր
հեռավորության վրա:

Ուրեմն, վորեվի զույլի, խողաքի կամ լեռան դիրքը մեր բնակատեղի նկատմամբ վորություն նաևս, մենք պես ե ցուց տանի, թե այդ զույլը կամ լեռը մեր բնակատեղի վո՞ր կողմն է գՏնվում լին ի՞նչ նեռավորության վրա:

Գտեք ձեր հարհան աների դիրքը դասարանի նկատմամբ:

Վորոշեցեք հարհան, մոռիկ գյուղերի դիրքը ձեր գյուղի կամ քաղաքի նկատմամբ:

Աշխատանի!—Կողմացույցը գրեք սեղանին և ապա նրա շուրջը տարրեր հեռավորության վրա մի քանի տարեկանիր զրեք: Վորոշեցեք այդ տարրեկաների դիրքը կողմացույցին նկատմամբ (Աշխարհագրական տեսք, աշխատանքը 3):


**Քարտեզի վրա վերսի կողմը ցույց ե տալիս
Քարտեզ: Հյուսիս, ներքեինը՝ հարավ, աջ կողմը՝ արևելքը
իսկ ձախ կողմը՝ արևմուտք:**

**Բաց արեք Հայաստանի քարտեզը և գտեք Յերևանը,
Աշխարհակը, Վազարշապատը, Լենինականը, Նոր Բայազետը,
Գորիսը, Նախիջևանը և այլն:**

**Այդ քաղաքները Յերևանի վեր կողմն են գտնվում:
(Նկար № 4 նայիր հետեւյալ յերեսին):**

Քարտեզի տակ սովորաբար նշանակված ե լինում մասօտը, վարը ցույց ե տալիս, թե մի քաղաքից մինչև մյուսը, կամ մի գյուղից մինչև քաղաքը քանի կիլոմետր ե: Հայաստանի քարտեզի տակ գծված ե մի այնպիսի մասշտար, վարի մեկ սանտիմետրը համապատասխանում է 8 կիլոմետրի ընտանիք մեջ: Յեթե զուք գտաք, վոր քարտեզի վրա Աշխարհակը Յերևանից հեռու ե 4 սանտիմետր, տպա իրականության մեջ նու հեռու կլինի 4×8 կիլո-մետր=32 կիլոմետր:


Մասշտաբի ոգնությամբ գտեք թե՛ 1) Յերևանից մինչև լենինական, 2) Յերևանից մինչև Նոր Բայազետ, 3) Լենինականից մինչև Դարձի (Դարձաքիլիսա) 4) Արագածի գագաթից մինչև Մասիսի գագաթը քանի կիլոմետր ե:



Մասշատ

0 8 16 24 32 40 48 56 (g/m²) (bottom)

Նկ. 4. Յերիանի գավառի քարտեզը (1 սահմանից ետքի միջ 16 կիլոմետր)



Նկ. 5. Յերևանի զավաքի բարտեզը (1 սահմանագիծը մեջ 32 կիլոմետր)

Այսպիսով քարտեզի
ողնությամբ շատ հեշտ
է վորոշել զանազան կե-
տերի դիրքը Յերևանի
կամ մի այլ տեղինկատ-
մամբ: Որինակ, քարտեզի
ողնությամբ մենք իմա-
նում ենք, վոր Դարձի-
լիսան գտնվում է Յերև-
անի հյուսիսային կողմը
և 70 կիլոմետր հեռա-
փորության վրա (ուղիղ
գծով հաշված): Բաթումը
գտնվում է Թիֆլիսի
արևմտյան կողմը 269
կիլոմետր հեռավորու-
թյան վրա և այն:

թյան վրա և այն:

Ա. Վահագուստիվ: — Կատարեցեք աշխարհակրական տեսքի
4 րդ, 5-րդ, 6-րդ յև 7-րդ աշխատանքները:

Ա. Վահագուստիվ: — Գծել շրջանի հարեւնքը:

1. Քերցրեք մի թերթ թուղթ և նրա վրա գծեցեք մի
մեծ քառակուսի այնպես, վոր այդ քառակուսու կողմերը
թղթի յեզերքներին մոտ լինեն:

2. Քառակուսու շրջանակի մակարդ նշանակեցեք մի կետ
և այդ կետի մոտ գրեցեք ձեր ընակավայրի անունը:

3. Շրջանակի վերնի կողմի վրա գրեցեք հյուսիս, ներ-
քենի կողմի վրա՝ հարավ, աջ կողմի վրա՝ արևելք, իսկ ձախ
կողմի վրա՝ արևմուտք:

4. Վորոշեցեք մոտիկ գյուղերի դիրքը ձեր բնականեզի
նկատմամբ, այսինքն իմացեք, թե այդ գյուղերից յուրաքան-
չչյուրը ձեր գյուղի կամ քաղաքի վրա կողմն և գտնվում է
ինչ հեռավորության վրա: Յեթե գյուղի հեռավորությունը

ինքներդ շցխոեր, այս դեպքում հարցըք ուսուցչին. նու ձեզ կտա հարկավոր տեղեկությունները:

5. Վորագեղի այդ գյուղերը ըրջանակի մեջ տեղավորեք, դուք պիտօք ե ընտրեք մի հարժար մասշտաբ, որին ամեն 4 կիլոմետրի փոխարեն պետք է վերցնեք մեկ սանտիմետր: Յենթաղընք, թե Ա. գյուղը զանգում և ձեր բնակատեղի տրենյան կողմը և 8 կիլոմետր հեռավորության վրա: Այս գեղքում ձեր գյուղը ցոյց տվող կետից գեղի տրեկոք վերցնում եք յերկու սանտիմետր և այդ հեռավորության վրա նշանակում Ա. գյուղը: Նույն յեղանակով գուք կարող եք նշանակել նուև մնացած գյուղերն ու քաղաքները: Այսպիսով կոտանաք շրջանի բնակավայրերի քարտեզը:

Յեթե կարող եք նշանակեցնեք ձեր զավառակը ամսանը և զավառակի վարչական կենտրոնի տակը կարմիր գիծ քաշեցք:

Ձեր գծաղրած քարտեզի վրա անցկացրեք զոյտթյուն ունեցող խճուղիները, յերկաթուղին, դետերը և այլն:

I. ՅԵՐԿՐԱԳՈՒՆԴ.

Ա. ՅԱՏՏԱԲԻ. — Վերցըք մի գորեն գնդակ կամ կալից ինքներդ պատրաստեցեք: Դիմացեք այդ գնդակը և տացեք. նրա յերեսը ուսուցիկ է, թե ատափակ: Ամբողջ յերեսը հավասարապես և ուսած, թե տեղատեղ միայն:

Գնդակի վրա մի կտա նշանակեցնեք և ապա այդ կետից գեղի աջ մի գիծ քաշեցնեք, բայց գեղի վեր կամ գեղի վեր ցած չծոնեք: Զեր քաշած գիծը վերջն ուր հասավ:

Թելի ոգնությամբ գնդակի շրջապիծը չափեցնեք. քանի սանտիմետր ստացաք: Նույն յեղանակով մի քանի անգամ չափեցնեք շրջագիծը և տեսեք, թե ամեն ուղղությամբ նույն թիվն և ստացվում:

Գուլպայի մի ձագ կամ վորեն բարակ ձողիկ գնդակի միջով անցկացրեք, վոր ձագը գնդակի կենտրոնով անցնի: Գտեք տրամագծի և շառավղի մեծությունը:

Հին ժամանակ մարդիկ յերկրի ձեի Յերկրի ձեի մասին ձիշտ հասկացողություն չունեյին:

Այն ժամանակ վոչ միայն տպետ մարդիկ, այլի զիտուններն անգամ կարծում եյին, թե յերկրի մի

տափարակ տարածություն և՝ ըրջապատված անսահման ծովագի Շատ ժամանակ անցավ, մինչեւ վոր մարդիկ վերջապես հասկացան, վոր յերկիրը զնդի ձև ունի:

Վոր յերկիրը զնդածե և, այդ յերեւում և հետեւալ փաստերից:

Յերբ ծովագին կանդնած նայում ենք հեռացող նապին, տեսնում ենք, վոր հեռանալիս հորիզոնի տակ ծածկիում և նախ նավի ստորին մասը, ապա՝ միջինը և վերջը վերին մասը: Ընդհակառակը, յերբ նավը մոտենում է, առաջ յերեւում և նրա վերին մասը և ապա ստորինը: Այս յերեւոյթը ցույց է տալիս, վոր մեր և նավի միջինը զբանվագի յերեսը տափակ չե, այլ ուսուցիկ, կորնիթարը: Յեթե ջրի յերեսը տափակ լիներ, այն գեղքում ամբողջ



Նկ. 6. Ծովագի հեռացող նավը հետզետե ծածկվում և հորիզոնի տակ:

նավը պետք է վիանկամից ծածկվիր, վիանկամից ել յերեսը: Նույնագիսի մի յերեւոյթ նկատում ենք և ցամաքի վրա: Խորհրդացին Միության յերկողական մասը, ինչպես հետականենք, համարյա ամբողջաղես մի ընդարձակ հարթություն է: Յերբ այդ հարթության վրայով զնալիս մոտենում ենք վորեն զյուղի, այն դեպքում տեսնում ենք, վոր զեռ յերեւում են զյուղի ամենաբարձր առարկաները (ծասերի զաղամթները), ապա աները և այլ ցածր աեղեր:

Ուրեմն յերկիրը ամենանարթ տեղերում անդամ տափարակ չե: Թե ծովը ևթե ցամաքը, վոր կողմն ել նայելու լինենք, մեզ ուսուցիկ են յերեւում:

Յեթե յերկիրն ամեն կողմից ուսուցիկ և, նշանակում է նա զնդածե և, ինչպես ձեր զնդակը, ձմերուկը: Այդ բանում մարդիկ վերջնականապես համոզվեցին այն

ժամանակ, յերբ մի քանի հայտնի ճանապարհորդներ կարողացան պատվել յերկրի շուրջը: Առաջին անգամ այդպիսի շուրջերկրյա ճանապարհորդություն կատարեց Մագելլանը մեջնից մոտ 400 տարի առաջ: Շուրջերկրյա ճանապարհորդությունների ժամանակ մարդիկ իմացան, վոր յերկրի շրջապիծը ամեն ուղղությամբ հավասար չեր լինի:

Մեր յերկիրը շատ մեծ գունդ է. նրա արամագիծը հավասար է մոտ 12700 կիլոմետրի, իսկ շրջապիծը՝ 40000 կիլոմետրի: Մինչև յերկրագնդի կենտրոնը հաշվում են մոտ 6300 կիլոմետր:


Յերկրագունդը վոչ մի բանի վրա ամրացած չե և ամեն կողմից շրջապատված է ողով: Ուր ել զնալու լինենք, մեր զիխավերեր յերկինքը կգտնին, իսկ վատքերի տակ՝ զետինը: Յերկրագնդի հակառակ կողմերում գտնվող մարդիկ իրար զարձած են լինում վատքերով և շրջապատող տարածության մեջ չեն ընկնում, վարովնեան յերկիրը նրանց դեպի ինքն է քաշում:

Արեւ ծագելիս ճառագյթները լուսավորում են նախ բարձր սարի զագաթը և ապա ցածր տեղերը. ինչնու:

Բարձր սարի զագաթից ավելի մեծ տարածություն և յերեսում: ինչնու:

Նարնջի վրա կան ցցվածքներ ու փոսիկներ, բայց այդ անհշան խորդուբորդությունները նրա դնդանությանը չեն խանգարում: Յերկրի վրա կան լեռներ, ձորեր, հովիտներ, հազար ինչնու յերկիրը դնդանենք համարում:

Յերկրագունդը լավ պատկերացնելու համար մարդիկ խավագարտից կամ զանից պատրաստում են մի գունդ, վորի վրա զանագան նշաններով նշանակում են ծովերը, ցամաքները,



Նկ. 7. Մըջյունները պատվամ են զնդակի շուրջը նրանցից մեկը զեւ նոր և զուրութեան Ա կեաից:

գետերը, քաղաքները և այլն. այդպիսի գունդը կոչվում է զլորուս. Գլորուսի միջով անցնում է մի ձող, փորի շորջը զլորուսը կարողէ հեշտապես պատվել: Այդ ձողը կոչվում է առանց:

Գլորուսի այն երկու կետերը, փորտեղ առանցքի ծայրերը գուրս են գալիս, կոչվում են բելեններ. վերեխնը՝ նուսիսային, իսկ ներքեխնը՝ հարավային բելենը: Գլորուսի շորջը, բեկաներից հավասարապես հեռու՝ անցնում է մի շրջապիծ, փորը կոչվում է նոսարակած: Հասարակածով զլորուսը բաժանվում է յերկու կիսադնդերի՝ հյուսիսային և հարավային:

Հուսիսային բեկոր մի շարք գծերով միացած է հարավային բեկորի հետ: Այդ գծերը կոչվում են միջութեականնեններ: Միջորեականներից մեկը, փոր

Նկ. 8. Գլորուս

անցնում է Անգլիայի Գրինիչ (Լոնդոնի մոտ) քաղաքի վրայով, ընդունված է վորապես զիսավոր միջութեականն: Գլխավոր մեջորեականով յերկրագունդը բաժանվում է յերկու կիսադնդերի՝ արևմելյան և արևմեծյան: Արեվմելյան կիսադունդը գտնվում է զլիսավոր միջորեականի աջ կողմը, իսկ արևմտյան կիսադունդը՝ ձախ կողմը:

Յերկրագունդն ել զլորուսի նման ունի յուր առանցքը, բեկանները, միջորեականներն ու հասարակածը, բայց դրանք



յերկրագնդի վրա նշանակված չեն, մենք նրանց յերեակայում ենք միայն:

Գլորուսի վրա ցույց տվիք հուսխային և հարավային բևեռները, հասարակածը և միջորեականները:

Աջախտանիք. — Գնդակի միջով ձաղը կրկին անցկացրեք, Գնդակն այսպես բռնեցեք, վոր ձաղի մի ծայրն ուղղված լինի գեղի վեր, իսկ մյուսը՝ գեղի ցած: Այդ ձաղը կլինի ձեր գնդակի ասանցքը: Գնդակի այն տեղերը, վորանու ձաղը զուրու և գալիս ընդունեցեք վորպես բևեռներ:

Նշանակեցեք հուսխային և հարավային բևեռները:

Թձեցեք մի շրջապիծ, վոր համապատասխանի հասարակածին:

Թձեցեք մի միջորեական:

Ցեմե հասարակածով կամ միջորեականով ձեր զունդը կիսեք, ինչ կիսագնդեր կստանաք:

Գլորուսի ոգնությամբ մենք կարող ենք սիսակների բարեկարգեցնել, թե յերկրագնդի վրա ինչ ցամաքներ, բարեկարգեցնել, թե յերկրագնդի վրա միջորեականով ձեր զունդը կիսեք, զետեք, քաղաքներ կան: Բայց զլուրուսին նայելիս մենք միայն նրա մի յերեսն ենք տեսնում: Վորպեսզի զլորուսի ամրող յերեսը միանդամից տեսնենք և իմանանք, թե բոլոր ցամաքներն ու ծովերը ինչպես են դասավորված՝ բավ կլիներ, վոր զլորուսը զլմավոր միջորեականով կիսելինք և հետո արհմույան կիսագունդը պատին ջոկ կլինելինք, իսկ արհելլանը՝ ջոկ: Այս գեսքում մենք զլորուսի ամրող յերեսը միանդամից կտեսնելինք:

Ինչ վոր տեսնում ենք այդ կիսագնդերի վրա, մենք կարող ենք գծել և թղթի վրա: Այսպես, կողք-կողքի կնկարենք յերկու շրջան, ձախ շրջանի տակ կզբենք «արեմայան կիսագունդ», աջ շրջանի տակ՝ «արելլան» կիսագունդ»: Հետո այս շրջանների մեջ կզծենք ցամաքներն ու ծովերն այսպես, ինչպես նրանք դասավորված են զլորուսի վրա: Այս յեղանակով կստանանք «կիսագնդերի

քարտեզ: Կիսագնդերի քարտեզը գործածության համար ավելի հարմար է, քան զլորուսը:

Կիսագնդերի քարտեզը յերբեմն գունավոր և լինում: Այս դեսպան ծովերը սովորաբար նկարում են կապույտ գույնով, գաշտավայրերը՝ կանաչ, բարձրավանդակները՝ բաց գարշինագույն, լեռները՝ գարշինագույն և այլն:

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք արևելյան և արևմտյան կիսագնդերը:

Ցույց տվեք զիսավոր միջորեականը, այնուղի, վորտեղ գլխու միջորեականը կարում և հասարակածը, նշանակված և օ:

Գաեք հասարակածը, հյուսիսային և հարավային թերթեաները:

Ի՞նչպես են կոչվում այն զծերը, վորոնք միացնում են բեեաներն իրար հետ: Ցույց տվեք:

Մենք քիչ տուած ասացինք, վոր յերկիրը զնդի ձև ունի, բայց հետազոտությունները ցույց են տալիս, վոր նա միանդամայն կլոր չե: Հասարակածից մինչև կենարոնը 6377 կիլոմետր է, իսկ բեեոփց մինչև կենարոնը 6356 կիլոմետր է: Հետևազես բեեոային շառավիզը՝ 21 կիլոմետրով հասարակածային շառավիզց կարճ է, դա ցույց է տալիս, վոր յերկրագունդը բեեոների կողմից փոքր ինչ սեղմված է, ինչպես մանդարինը: Բայց այդ սեղմվածությունն այնքան անշատն է, վոր յերկիրն ընդունում ենք զեղածե:

Աշխարհամաս: Կում կիսագնդերի քարտեզը, զուք կուեսնեք,
ահր: Վար յերկրագնդի մեծ մասը ծածկված է
ջրով: Յերկրագնդի ամբողջ մակերեսույթը հաշվում են 510
միլիոն քառ. կիլոմետր, վորից ջուրը բռնում է 361 մի-
լիոն քառ. կիլոմետր, իսկ ցամաքը՝ 149 միլիոն քառ.
կիլոմետր, այսինքն ջուրը ցամաքից մոտ $2\frac{1}{2}$ անգամ
ավելի մեծ տեղ է բռնում:

Ամբողջ ցամաքը բաղկացած է հինգ աշխարհամա-
սերից: Այդ աշխարհամասերն են՝ Ասիա, Յեւրոպա, Ամե-

րիկա, Աֆրիկա յև Ավուստալիու: Այժմ այդ հինգ աշխարհամասերին ավելանում է և վեցերորդը, վոր կոչվում է Անսարկիզիու:

Ասիան, Յեփրասպան և Աֆրիկան կողած են իրար և միասին վերցրած կոչվում են Արևիլյան մայր ցամաց կոմ Հիմ աշխարհի: Ամերիկան կոչվում է Արևիլյան մայր ցամաք կամ Դուռը աշխարհի, իսկ Ավստրալիան՝ Հարավային աշխարհանուն:

Աշխարհամասերի մածուրյունը (հաշված յև կրթիթեր):

Ասիա	44,2	միլիոն քառ. կիլոմետր
Աֆրիկա	29,8	» » »
Ամերիկա	42,2	» » »
Յեփրասպա	9,9	» » »
Ավստրալիա	8,9	» » »
Անտարկտիդա	14,0	» » »

Ամբողջ ցամաքը 149 միլ. քառ. կիլոմետր

Աշխարհամասերից ամենամեծը վորն է:

Աշխարհամասերից ամենափոքրը վորն է:

Յույց տիեզր ամեն մի աշխարհամասն առանձին (Աշխարհ, առան, կիսագնդերի քարտեզ):

Ասիան Յեփրասպայից բաժանվում է Աւրալյան լիոնսիրով, Աւրալ գետով, Կասպիյ ծովով, Կովկասյան լիոնսիրով, Կոստանդնուպոլիսի և Դարդանելի նեղուցներով, յույց տիեզր:

Աֆրիկան Յեփրասպայից բաժանվում է Միջերկրական ծովով, իսկ Ասիայից՝ Սուեզի պարանոցով և Կարմիր ծովով, յույց տիեզր:

Գտեք Անտարկտիդան: Նա վարեղ և գանգում:

Գտեք Յերևանի տեղը: Ա. Հայտաստանը վոր աշխարհամասում է գտնվում:

Աշխատանք. — Կիսագնդերի քարտեզի վրա տարրեր գույներով ներկեցեք աշխարհամասերը և յուրաքանչյուրի վրա գրեցեք յուր անունը: Զմոռանաք ներկել և կղզիները (Աշխարհագրական տետր, աշխ, 8):

Յերկրագնդի ընդարձակ ջրերն ել յառիկանուներ: մաքի նման բաժանվում են մի քանի շատ մեծ մասերի, վորոնք կոչվում են ովլիսանուններ: Սովորաբար ընդունում են հինգ ովլիսանոս, այն

Ե՞ Մեծ կամ Խաղաղ ովկիանոս, Արևինյան ովկիանոս, Հնդկական ովկիանոս, Հյուս. Խառուցյալ ովկիանոս յեվ Հար. Խառուցյալ ովկիանոս:

Հյուս. Խառուցյալ ովկիանոսն այժմ կոչվում է Հյուսիսային Բելեւուային ծով և կազմում է Ատլանտյան ովկիանոսի մասը: Հար. Խառուցյալ ովկիանոսի մեծ մասը բռնված է Անտարկտիդայով, իսկ մնացածը մասամբ միանում է Ատլանտյան ովկիանոսին, մասամբ՝ Խաղաղ ովկիանոսին և մասամբ ել Հնդկական ովկիանոսին: Այսպիսով մնում է միայն յերեք ովկիանոս—Մեծ կամ Խաղաղ, Արևինյան և Հնդկական ովկիանոս:

Ովկիանոսների մեծությունը

Խաղաղ ովկիանոս	180	միլիոն քառ. կիլոմետր
Ատլանտյան ովկիանոս	106	» » »
Հնդկական ովկիանոս	75	» » »
Բոլոր ովկիանոսները	361	միլիոն քառ. կիլոմետր

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք ովկիանոսները: Ատլանտյան ովկիանոսը Յելքոսկայի վրա կողմին և գտնվում:

Խաղաղ ովկիանոսը կամ Հնդկական ովկիանոսը Սոխայի վրա կողմին և գտնվում:

Հնդկական ովկիանոսը վրա աշխարհամասերի ափերն եւ վողողում:

Հյուս. Բելեւուային ծովը վրա ովկիանոսի մասն եւ կազմում: Ովկիանոսներից ամենամեծը վրան եւ

Աշխատանք.—Կիսագնդերի համբ քարտեզի վրա ովկիանոսները ներկեցեք կապույտ գույնով և ապա նշանակեցեք ովկիանոսների անունները:

Յամաքի յեղերքը սովորաբար կտրը ովկիանոսի յել տված ել լինում: Տեղանուղ ցամաքը մանում է ծովի մեջ և կազմում թերակղզի, տեղանուղ ել ջուրն և մտնում ցամաքի մեջ և կազմում ծովեր և ծոցեր: Զրի այն նեղ շերտը, վոր յերկու ջրային մեծ տա-



բածություններ միացնում ե իրար հետ, կոչվում ե լինդոյց; Իսկ ցամաքի այն նեղ շերտը, վոր յերկու ցամաքներ միացնում ե իրար, կոչվում ե պարանոց: Ծովի մեջ ընկած փոքր ցամաքները կոչվում են կողմիներ:

Կատարել աշխարհագրական տեսրի 7-րդ աշխատանիր:

Յեմոպայի քարտեզի վրա ցույց տվեք՝

1. Սկանդինավյան, Պիրենեյան, Ալպեննինյան և Բալկանյան թերակղզիները:

2. Սև, Միջերկրական, Հյուսիսային, Բալտիկ և Ազգական ծովերը:

3. Կոստանդնուպոլիսի, Քարգանելի, Զիբրալտարի, Լամանշի, Ակազերբակ և Զունդ նեղուցները:

4. Բալանդիա, Մեծ Բրիտանիա, Իրլանդիա, Միցիլիա և Արգինիա կղզիները:

Միջերկրական ծովը վոր ովկիանոսի մասն և:

Բաթումից Սուլանտայան ովկիանոս գուբր գալու համար ի՞նչ ծովերով և նեղուցներով պետք ե անցնել (Աշխ. առլաս, Յեղրուղա):

Ասիայի քարտեզի վրա զտեք՝

1. Փոքր Ասիա, Արարիա, Հնդկաստան, Հնդկաչին և Կամչատկա թերակղզիները:

2. Յելլոն, Սումատրա, Յավա, Բորնեո, Ֆիլիպովյան, Յապօնական և Սախալին կղզիները:

3. Սուեզի պարանոցը, Կարմիր ծովը, Բարել-Մանդերի նեղուցը, Պարսից ծոցը, Բևնզալյան ծովը, Հար, Զենական ծովը, Արևել, Զին, ծովը, Յապօնական ծովը, Բերինյան ծովը և Բերինյան նեղուցը:

Գտեք Մերսիկայի ծոցը և Պահամայի սլաբանոցն Ամերիկայում:

Աշխատանիք: Ասիայի և Յեղրուղայի համը քարտեզների վրա նշանակեցիք վերը հիշած թերակղզիների, կղզիների, ծովերի, ծոցերի, ծոցերի և նեղուցների անունները (Աշխարհ. տեսոր): Կարգացիք «Կոլումբո», «Կուկ» և «Մագելան» հողվածները («Աշխարհի շուրջը»—II մաս):

ՅԵՐԿՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ հոդվածի մեջ մենք զաղափար կազմեցինք յերկրագնդի ձևի մասին. այսուհետեւ տեսանք, վոր նրա մակերեսու յիշը բաղկացած ե ցամաքից և ջրից:


Այժմ տեսնենք, թե յերկիրն ի՞նչ կազմություն ունի, այսինքն՝ յերկրի ներսը գտնվող նյութերն ի՞նչ վիճակում են գտնվում, վորչափ տաք են և այն:

Հանքահորեր փորելիս մարզիկ նկատում են, վորինչքան ավելի խոր են գնում, ջերմության աստիճանն այնքան ավելի բարձրանում են: Մոտ 2 կիլոմետր խորության մեջ այն աստիճան տաք ե լինում, վոր բանվորները դժվարանում են աշխատել: Վոր յերկրի խորքերում շատ տաք ե, այդ յերեսում ե նրանից, վոր յերկրագնդի զանազան աեղերում, որինակ՝ թիֆլիսում, Պյատիգորսկում և այնի, գետնից բղասում են տաք աղբյուրներ: Այդ աղբյուրների ջրերը յերկրի յերեսից գեղի խորքերն են ծծվում սառը վիճակում, բայց հետո նրանք խոր շերտերի մեջ տաքանում են և դուրս հոսում վորպես տաք աղբյուրներ:

Յենթագրում են, վոր մոտ 70 կիլոմետր խորության մեջ այնքան տաք պետք ե լինի, վոր յեթի մենք այդ աստիճանի տարության ստանանք յերկրի յերեսին, ամեն տեսակի նյութ կարող ենք հալել: Գիտնականների կարծիք յերկրագնդի կենտրոնում պետք ե *վոր 100000 աստիճան ջերմություն լինի: Բայց թե նյութերը յերկրի ներսը ի՞նչ վիճակում են գտնվում, այդ մեզ հաստատապես հայտնի չե: Գիտնականներից վոմանք ընդունում են, վոր յերկրագնդի միջուկը հեղուկ վիճակում ե գտնվում: Վամանք ել կարծում են, վոր այդ միջուկը պետք ե զազային լինի, վոմանք ել հաստատում են, վոր նա պինդ պետք ե լինի: Գիտնականների մեծ մասն այժմ ընդունում ե, վոր յերկրագնդի միջուկը պինդ վիճակում ե գտնվում:


Յենթագրում են, վոր յերկիրը մի ժամանակ ամրող ջապես հարված վիճակում ե յեղել և փայլելիս, ինչպես արեք բայց հետագայում նա կամաց կամաց սառել և յերեսը ծածկվել կեղևով: Ողի, ջրի, տաքության ու ցրտի ազդեցությունից յերկրի կեղերը քայլայվել ե, փոփոխվել և վերջ ի վերջո ընդունել յուր այսորվա ձևը:

Յերկրագնդի շիկացած միջուկը հետո աղիների հովանում և և սեղմվում, փոքրածագում: Սառչելուց միջուկի և կեղեկի արանքում պետք է գատարկություն գոյանար, բայց կեղեն իր ծանրությունից մի քանի տեղերում իջնում և և գրանից յերկրի յերեսի վրա առաջանում են:




Նկ. 9. I Յերկրի կազմությունը: II Յերկրի միջուկը առաջելիս սեղմվում է: Եղեկի և միջուկի միջև դատարկություն է գոյանում:
անհարթություններ — դաշտավայրեր և բարձրավանդակներ:

Ուրիշ տեղերում յերկրի կեղեկի մեջ ծալքեր են գայանում: Թե՛ ինչպես են այդ ծալքերն առաջանում, յերե-




Նկ. 10. III. Յերկրի կեղեռում ճեղքեր են գոյանում: IV. Մանրությունից կեղել տեղ նստում և և լեռներ գոյացնում:

ուժ և հետեւյալ փորձից: Յեթե վերցնենք մահուդի մի քանի կտոր, իրար վրա գալսենք և ապա կողքից ձնշենք, մենք կտեսնենք, զոր այդ կտորները կուշ են գալիս և



Նկ. 11. Թաց ավագի շերտերը ձնշենիս ժամբեր են առաջանում:

ծալքեր զոյացնում: Նույնը տեղի յէ ունենում՝ յերկը կեղեկի մեջ: Յերկը միջուկի կծկվելու ժամանակ կեղեկ նոսում և այդ միջոցին կեղեկի ամեն մի կտորը ձնշման և յենթարկում հարևան կտորների կողմից: Այդ կողքերից ազդող ձնշումից կեղեկի մեջ առաջանում են մեծ կամ փոքր ծալքեր: Յեթե ծալքերը շատ մեծ են, այն դեպ-



Նկ. 12. Յերկը կեղեկի ծալքերից լեռներ են զոյացել: Կետերով ցույց են տրված այդ ծալքերի վերին մասերը, զոր ջուրը մաշել է:

քում զոյանում են լեռներ, վրանք կոչվում են ծալքավոր: Յերկը զնդի լեռների մեծ մասը այդ յեղանակով և առաջացել (տես նկար 13):

Կատարեցիք աշխարհագրական տեսրի 9, 10, 11 աշխատանքները:

Ցույց տվիք հետեւյալ լեռնաշղթաները.

Ասիայում — Կովկասյան, Հիմալայան, Կուեն-Կուն, Տյան-Շան, Սայանյան լեռները:

ՅԵՎՐՈՍՊԱՅՄԱՆ - Արտյան, Պիրենեյան, Ապենինյան,
Բալկանյան, Կորսակայան և Արալյան լեռները:

Ամերիկական - Կորդիլիրները:

Աւելասան: Ասիայի և ՅԵՎՐՈՍՊԱՅԻ համբ քարտեզների
վրա գրեցեք գլխավոր լեռների անունները (գրել մանր և
յեթե այդ անունը չի աեղափորվում, կրծատել):

ՅԵՐԿՐԻ ՆԻՔՐԻ ԱԹՔՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԼՈՒ

ՀՐԱՐՈՒԽ: ապացուցը նշարտ խնիւթն էն: Հրարիսային
կոչվում և այն սարը, վորի զազաթից յեր-
բեմն զանազան զավեր, շատին գորոշեներ յեթ նունե-
դուկ լավա (այսինքն՝ հալված լեռնային ահաւակներ) են




Նկ. 13. Ծալքավոր լեռներ:

դուրս զալիս: ՅԵՐԿՐԱԳՆԴԻ վրա հրարտախներ շատ կան: Դրանցից ամենանշանավորը Վեզուվին է, վոր զանվում և Ապենինյան թերակղզու վրա:

Ժայթքումից առաջ սովորաբար ստորերկրյա զգրդյուն
և լսվում: Հրարիսի շուրջը յերկիրն սկսում և ցնցվել,
շարժվել: Բիշ հետո զազաթին յերեսում և շատին զորու-
սի, վորը սյունի նման վեր և բարձրանում և անաղին սկ
ամուլ գոյացնում: Զրային զոլորշների ժայթքումի միջոցին
բարձրանում են նաև անաղին քարի կտորներ և լսվայի
մանր կաթիրներ: Այդ կաթիրները ողում ստոչելով դո-

յացնում են վտշի, վորը կոչվում է նրաբխային մասից, Յերք ջրային գոլորշները ստոչում են, ջուրն ու մոխիրը խանճում են իրար հետ և թափվում ցած ու ցեխով ծածկում անտառներ, զաշտեր, յերրեմնել դյուղեր



Նկ. 14. Հրաբուխի կազմությունը: 1.—յերկրի հեղեղեր, 2—լավա, 3—սպառ լավայից և մոխիրից գոյացած լասա, 4—դիմավոր կրատերը (խանճարներ), 5—կողդի կրատերներ, 6—լավայի հեղեղեր:

ու քաղաքներ: Մեզնից 2000 տարի առաջ վեցումի ժայդքման միջոցին այդպիսի ցեխի տակ կորան Պոմպեյ և Հերկուլանում քաղաքները վերջը յերկում եւ և լավան, վորը զանգաղորեն սարի լանջով հրեցն զետի նման ցած և հոռում և ավերածություններ անում ձանապարհն: Լավան հետո պնդանում եւ և գոյացնում քարեր:

Այն հրաբուխները, վորոնք այլևս չեն գործում, կոչվում են հանգած հրաբուխներ, որինակ՝ Մասիսը, Արտազը, Կաղեկը, Ելբռուսը և այլն:

Վեցումի և այլ հրաբուխների մոխիսաբանի թից ու լավայից գոյացել են այնպիսի քառերուխները: բայցին զանգվածներ, վորոնցից Հայաստանում շատ կան: Ամբողջ Սրազածը այդպիսի քարերից և բաղկացած: Բոլոր այն քարերը, վորոնք լավայից են առաջացել, կոչվում են նրաբխային լինեային ժեսակներ, զրանց մի տեսակը կոչվում է բազալտ, մյուսը՝ սրախիս, յերրորդը անդեկտիս և այլն: Հրաբխային մոխից առաջանում եւ այսպես կոչված նրաբխային տոմք:

Յեթե Մասին ու Արագածը կազմված են այնպիսի քարերից, ինչպիսին առաջացել ե Վեզուվի և այլ հրաբուխների լավայից ու մոխրից, այն գեպըում Մասին ու Արագածը նույնպես հրաբուխներ են, բայց նրանք այժմ չեն գործում, նույնպատճեն նրաբոխներ են: Հայաստանում հանգած հրաբուխներ շատ կան: Հրաբոխի գործունեցությունից այսակեղ գոյացել են վոչ միայն Արագածի նման բարձր լեռներ, այլ և ընդարձակ բարձրավանդակները: Դարավիթ, Սևանի, Շիրակի բարձրավանդակները գոյացել են մոտակա լեռներից բղիսած լավայից, վորո ծածկել ե այդ տեղերը և հետո պնդանալով առաջացրել հոկայտկան հաստոթյուն ունեցող քարային ծածկոց:

Գետերը ժամանակի ընթացքում ձեղքել են այդ ծածկոցը և խոր խոր ձորեր առաջացրել: Այդպիսի ձորերով են հոսում Ախուրյանը, Չորագետը և այլն:

Յերկրի կեղեր յերբեմն սոսորերկրյա

Յերկրաշարժ: Հարվածներից ցնցվում ե. ասում ենք յերկրաշարժ և տեղի ունենում: Յերկրաշարժը սովորաբար թույլ ե լինում, բայց յերբեմն ել այնքան ուժեղ և լինում, վոր առարկաները, աները, ծառերը որորվում, յերկրի կեղերի մեջ ձեղքեր են առաջնում, լեռներում ժայռեր են փլում, ազրյուները փոխում են իրենց ուղղությունը և այլն:

Յերկրաշարժը հաճախ տեղի յե ունենում լինուստ յերկրներում: Անդրկովկասում հաճախակի յերկրաշարժներ լինում են Ախալքարքում, Գորիսում, Լի-



Նկ. 15. Յերկրաշարժից յերկրի մի կողործ տեղահան ե յեղեւ և դրանից յերկրամբուզու ուղիղ գիծը ծավել է:

Նինականում և այլն։ Բերենք մի քանի սրբնակ։ 1899 թ. ուժեղ յերկրաշարժից Ախալքալաքի շրջանում վլատակների տակ կորան 100 մարդ և մոտ 2500 զլուխ անասուն։ 1920 թ. յերկրաշարժից կործանվեց Գորին շրջակա գյուղերի հետ։ 1926 թ. յերկրաշարժը սոսկալի ավերածություններ արեց Լենինականի շրջանում։ ամրող զյուղեր ու Լենինականը այնպիսի վնասներ կրեցին, վոր այսոր ել դեռ նրանք ամբողջովին չեն վերաշնվել։

Ի՞նչ հիման վրա յենթադրում ենք, վոր յերկրի ներարշառ տաք ե։

Պար հրարուխն և կոչվում գործող և վարը հանգած։

Հրարուխներից կարող են լեռներ ու հարթություններ առաջանալ։

Յերկրաշարժն ի՞նչ փոփոխություններ և առաջացնում յերկրի վրա։

Կարդացեք «Նոր կղզիներ և լեռներ», «Վեղութիւնայթքումը», «Պոմպեյի ավերակներում» «Կործանված քաղաքներ» հոգվածները («Աշխարհի շուրջը» 11 մաս)։

Աշխատանք։—Հրարիսի կտրվածքը ցույց ե արված առանձին (Ակարով Աշխարհ, տետր, աշխատ. 13)։ Այդ նկարի վրա առանձին զույներով ներկեցեք լավան, մոխիրը և այլն։


ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՊՏՏՎԵԼԸ ՅՈՒՐ ԱՌԱՆՑՔԻ ՇՈՒՐՋԸ

Աշխատանք։—Գասարանը մինացրեք։ Գլորուսը զրեք սեղանին և ապա վառ մոմք պահեցեք զլորուսից քիչ հեռու։ Ամրող գլորուսը լուսավորվում է։

Զեղանից մեկը թող զլորուսը պատի յուր առանցքի շուրջը։ Նայեցեք աշխարհամասերին, նրանք պտավելու ժամանակ կամ լուսավոր կողմն են անցնում կամ խավար։ Յենթադրենք, թե մի մրջյուն նստած ե պտավող զլորուսի վրա։ Նրա համար անընդհատ լույս կլինի։

(Յեթե զլորուս չունեք, փորձը կատարեցեք վորհեղողակի վրա)։

Մենք զիտենք, վոր ամեն առավոտ արել ծագում և արեելքում, ապա հետպհետեւ դեպի վեր և բարձրանում և նորից թերվիլով դեպի հորիզոնը, յերեկոյան ծածկում և արհմուտքում: Եռոյն ձևով արենլքից դեպի արհմուտք են շարժվում նաև աստղերը: Հին ժամանակ մարդիկ կարծում ենին, թե արեն ու աստղերն իսկապես շարժվում են յերկրի շուրջը, բայց XVI-րդ դարում նշանագոր զիտենական կոսպերնիկոսը ապացուցեց, վոր արևին ու աստղերն



Նկ. 16. Գիշեր և ցերեկ (Փորբիկ գունդը լուսինն է):

ամեարձ են, իսկ յերեւողնոր պտտվում է յուր առաօնցի շուրջը. Ինչպես զլորուսը: Այնպիսի առանցք (ձող), ինչպիսին զլորուսն ունի, յերկրագունդը չունի: Յերեւողնորի առանցքը յերեվակայական է, ինչպես պտտվող նոդին:

Յերկրագունդը մի պտույտը յուր առանցքի շուրջը կատարում է 24 ժամում, այսինքն մեկ որում: Պտտվելու ժամանակ նա դեպի արեն և գարձնում կամ մի յերեսը կամ մյուսը: Լուսավորված կողմը լինում է ցերեկ, իսկ մութ կողմը՝ զիշեր: Յերը Ասիայում ցերեկ և լինում նույն միջոցին Ամերիկայում զիշեր և լինում: Բայց վորովհետեւ յերկրի հետ մենք եւ ենք շարժվում, ուստի այդ

շարժումը չենք նկատում: Մեզ թվում ե, թե ցերեկն արեն և շարժվում, իսկ զիշերը՝ առաջերն ու լուսինը, ձիշտ այսպես, ինչպես յերկաթուղով դնալիս, յերբ վագոնից դուրս ենք նայում, մեզ թվում ե, թե հեռազրի սյուները, ծառերը շարժվում են, իսկ մենք անշարժ ենք:


Ուրիշն արեն ու աստղերը արելիթից արելմուտից չեն շարժվում. յերկրի հետ միասին մենք ենք շարժվում արելմուտից դեպի արելիթ:

Դիշերն ու ցերեկը ինչըց են առաջանում:
Յերբ մեզ մոտ զիշեր է, վար յերկրներում և ցերեկ լինում:


Յերկրագունդը յուր առանցքի շուրջը մի պատշաճ գործան ժամանակում և կատարում:

ԱՍՏԻՃԱՆԱՑՎՆՑ

Գլորուսի վրա բացի հասարակածից և միջորեկան կաններից անց են կացնում նաև զուգահեռական գծեր: Զուգահեռական կոչվում ե այն շրջադիր, վորը անցնում



Նկ. 17. Զուգահեռականներ



Նկ. 18. Միջորեկաններ

և հասարակածին զուգահեռ: Յեթե պատկերացնեք մի մարդ, վորը հասարակածին զուգահեռ շարժվելով յերկրի շուրջը պատշաճ կատարի, այն զեպքում նրա կատարած

շրջանը կլինի զուգահեռական։ Հասկանալի յէ, իհարկէ, վոր զլորուսի վրա կարող ենք շատ զուգահեռականներ անցկացնել, բայց զրանք տարրեր մեծություն կունենան։ Չուզահեռականներից ամենամեծը հասարակածն է, հասարակածից դեպի բևեռները նրանք փոքրանում են։

Գլորուսի կամ կիսադնդերի քարտեզի վրա ցույց ավելիք միջորեականները։

Երանը ինչ ուղղությամբ են անցնում։

Դաեւը զլուավոր միջորեականը։

Ցույց տվելը զուգահեռականները և հասարակածը, սրանը ինչ ուղղությամբ են անցնում։


Յուրաքանչյուր շրջադիմ բաժանվում է 360 մասի, վորոնցից ամեն մեկը կոչվում է աստիճան (⁽⁶⁾)։ Հասարակածը, ինչպես և ամեն մի զուգահեռական, ունի 360 աստիճան, իսկ միջորեականը՝ 180 աստիճան (ինչո՞ւ)։

Զուգահեռականները նաևվում են հասարակածից դեպի հյուսիս յև հարավ, յեթե զուգահեռականնը հասարակածից 20° հեռու է գտնվում, այդ դեպքում նա կոչվում է 20-րդ զուգահեռական, յեթե 60° է հեռու՝ 60-րդ զուգահեռական և այլն։ Միջորեականները նաևվում են զիսավոր միջորեականից դեպի արեվիլք յև արեվմուտ։

Հասարակածը, զուգահեռականները և միջորեականները միասին կազմում են աստիճանացանց։ Աստիճանացանցից ողնությամբ միշտ կարելի յէ վորոշել վորեե քաղաքի կամ վայրի դիրքը։ Դրա համար հարկավոր է իմանալ, թե այդ վայրը կամ քաղաքը ինչ հեռավորություն ունի հասարակածից և գլխավոր միջորեականից։

Տեղի հեռավորությունը հասարակածից կոչվում է անխարհուցական լայնություն։ Յեթե քաղաքը հասարակածից դեպի հյուսիս հեռու յէ 60°, այն դեպքում նա ունի 60° հյուսիսային լայնություն։ Յեթե վորեե քաղաք հասարակածից դեպի հարավ հեռու յէ 75°, այն դեպքում նա ունի 75° հարավային լայնություն և այլն։

Տեղի հեռավորությունը զիխավոր միջորեականից կոչվում է աշխարհագրական յերկայնություն, փորը լինում է ստեղծելու յև արեվմտյան։ Յեթե վորեն վայր գրա-



Դի. 19. Աշխարհագր. լայնության և յերկայնության վորոշումը:

նվում է զիխավոր միջորեականի արևմտյան կողմը և նրանից հեռացած է 40° , այն դեպքում նա ունի 40° արևմտյան յերկայնություն։

Աւելին՝ թե լայնությունը յև թե յերկայնությունը հասվում են աստիճաններով։

Կիսագնդերի քարտեզի վրա գտեք Յերեանի տեղը։ Նա հասարակածից մոտ 40° դեպի հյուսիս և զտնվում, իսկ զիխավոր միջորեականից մոտ 45° դեպի արևելք։ Աւելին նա զտնվում է 40° հյուսիսային լայնության և 45° արևելյան յերկայնության վրա։

Կիսագնդերի քարտեզի վրա գտեք Լենինգրադի տեղը, փորը նշանակված է 1. տառով։ Նա զտնվում է 60° հյու-

սիսային լայնության և 30° արևելյան յերկայնության վրա: Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք մի այնպիսի կետ, վոր գտնվի 30° հարավային լայնության և 40° արևելյան յերկայնության վրա:

Հուսիսային բևեռը վեր լայնության վրա և գտնվում:

Քարտեզների վրա զուգահեռականները ցույց տվող թվերը զրկում են քարտեզի աջ և ձախ կողմը, իսկ միջորեականները ցույց տվող թվերը զրկում են քարտեզի վերի և ներքին կողմը:

Յեկուզիների քարտեզի վրա ցույց տվեք այն թվերը, վորոնք ցույց են տալիս զուգահեռականները կամ միջորեականները:

Վերաշեցեք Մոմիվայի, Ասմարայի, Աստրախանի, Բադի աշխարհագրական դիրքը՝ այսինքն, զանք նրանց լայնությունն ու յերկայնությունը:

Հասարակածի և միջորեականի ամեն մի աստիճանը համասար և մոտ 111 կիլոմետրի: Իսկ ինչու զուգահեռականի մեկ աստիճանը 111 -ից փոքր է:

Յերեանից մինչև հասարակած քանի կիլոմետր է:

Հասարակածից մինչև բևեռը քանի կիլոմետր է:

Ա. Յանտարին: — Կիսագնդերի ցանցի վրա միջորեականների և զուգահեռականների վրայով զունավոր մատիսով զիծ քաշեցեք: Միջորեականներից մեկն ընդունեցեք վորպես զիմավոր և ապա նրա վրա (հասարակածի մոտ) նշանակեցեք զերո (0): Գլխավոր միջորեականից զեզի արևելք նշանակեցեք 20° , 40° , 60° և այլն:

Նոյն յեղանակով նշանակեցեք նաև զուգահեռականները (Աշխարհ, տեսք, աշխատ. 16, 17 և 18):


ՅԵՐԿՐԻ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՐԵՎԻ ՇՈՒՐՋԸ

Ա. Յանտարին: — Գասարանը մթնացրեք: Վառ մոմք զրեք սեղանին: Զեղանից մեկը թող վերցնի զլորուսը, առանցքի շուրջը շարունակ պտտեցնի և միենայն ժամանակ պտույտ կատարի մոմքի շուրջը:

Յերկրագունդն ել պտտվում և արեի շուրջը, ինչպես զլորուսը մոմքի շուրջը: Նա պտտվելով յուր առանցքի

շուրջը՝ 24 ժամում, միաժամանակ առաջ և շարժվում է 365 օրում ու 6 ժամում մի պատյան կատարում արեւ շուրջը:

Յերկիրը արեւի շուրջը այնպես է պատվում, վոր առանցքը մի վորոշ չափով ճանապարհի նկատմամբ թերթած է լինում, այդ պատճառով հյուսիսային և հարավային



Նկ. 20. Յերկրագնդի շարժումն արեւի շուրջը:

կիսագնդերը տարվա ընթացքում հավասարապես չեն տարանում:

Յերը հյուսիսային կիսագունդը հարավայինից ավելի է տարանում, այսակա ամառ և լինում, իսկ հարավային կիսագնդում այդ միջոցին ձմեռ և լինում: Ինկ յերը յերկու կիսագնդերն ել հավասար են տաքանում, լինում են զարու կամ աշուն:

Դիտեցեք նկարը: Հունիսի վերջը յերկրագունդն այնպիսի դիրք է ընդունում, վոր հյուսիսային կիսագունդը ավելի շատ է լուսավորվում և տաքանում, քան թե հարավայինը: Հյուսիսային կիսագնդում յերկար յերեկներ են լինում, իսկ հարավային կիսագնդում՝ յերկար զիշերներ.

Դեկտեմբերի վերջը, այսինքն կես տարի հետո, յերկրագունդն այնպիսի դիրք է ընդունում, վոր հարավային

կիսագունդն ավելի յե տաքանում, քան հյուսիսայինը: Հարավային կիսագնդում այդ ժամանակ սկսվում է ամառը, իսկ հյուս, կիսաղնդում՝ ձմեռը: Հարավային կիսագնդում լինում են յերկար ցերեկներ, իսկ հյուս, կիսաղնդում՝ յերկար զիշերներ:

Մարտի վերջը յերկու կիսագնդերն ել հավասարապես են տաքանում և զիշերն ու ցերեկը հավասար են լինում: Հյուս, կիսագնդի համար սկսվում է գարունը, հարավային կիսագնդի համար՝ աշունը:

Մեղամբերի վերջը յերկու կիսագնդերը դարձյալ հավասարապես են տաքանում և զիշերն ու ցերեկը դարձյալ հավասար են լինում, բայց հյուս, կիսագնդի համար սկսվում է աշունը, իսկ հար. կիսագնդի համար՝ գարունը:

Յեթի յերկրի առանցքը ճանապարհի նկատմամբ թերգած չլիներ, տարվա յեղանակներ կլինելին:


Յերկրագնդի շարժումն արեի շուրջը լավ պատկերացնելու համար զիտեցեք այդ մասին մի նկար, վոր տեղավորված և ատլասի առաջին թերթի վրա:

Մեզնից ամեն մեկը զիտե, վոր արեց Ալիմայական ամառվա ընթացքում ավելի շատ և տաքացգոտին: Նում յերկիրը, քան թե ձմեռը: Ամառը ցերեկը յերկար և լինում, ուրեմն արեն ել յերկար ժամանակ և տաքացնում. բացի այդ՝ ամառը կեսորին արեն ավելի բարձրից և տաքացնում, քան ձմեռը: Վորքան ճառագայթները բարձրից են ընկնում յերկրի վրա, այնքան մեծ և նրանց տաքության ույժը: Հենց այդ և պատճառը, վոր կեսորին ավելի տաք և լինում, քան թե յերեկոյան գեմ կամ առավոտը:

Յերկիրն արեի շուրջն այնպես և պատվում, վոր արեի ճառագայթներն ամբողջ տարին հասարակածի մոտ ուղղահայց են ընկնում: Նույնիսկ ձմեռն այնտեղ այնքան տաք և, վոր զետերն ու լճերը յերբեք չեն սառչում: Հունվարին հասարակածի մոտ այնքան տաք և, վորքան Յերե-

վանում հուլիս տամսին։ Այդ տաք յերկրները հասարակածի յերկու կողմերով լայն գոտու պես պատռման են յերկրագունդը և կազմում ամ գոտի։ Տաք գոտին տարածվում է խեցքեանի արեվադարձից (կամ հյուս. լայնության $23^{\circ} \frac{1}{2}$ -ից) մինչև այծեղից արեվադարձը (հար. լայնության $23^{\circ} \frac{1}{2}$ -ը):

Հ. 1.



Հ. 2.

Նկ. 21. Յերկարգությա արեի ճառագայթներից համարագություն չի տարանում։

Յեթե տաք գոտուց ուղերժենք գեպի հյուսիս, կտեսնենք, վոր արեն այնքան ել բարձրից չի տարացնում և ձմեռը լինում է ցուրտ։ Այս յերկրները բարեխառն են։ Բարեխառն յերկրները նույնապես գոտու նման պատռմ են յերկրը և ձգվում խեցքեանի արևադարձից մինչև հյուսիսային բևեռային շրջանը կամ հյուսիսային լայնության $23^{\circ} \frac{1}{2}$ -ից մինչև $66^{\circ} \frac{1}{2}$ -ը։

Բարեխառն յերկրներից գեպի հյուսիս շարժվելիս մենք տեսնում ենք, վոր արեի ճառագայթները կեսորին բավական ցածից են ընկնում և յերկրը քիչ է տարա-

նուռմ: Բնեսի շուրջը ամբողջ տարին սոսկալի սառնամասնիքներ են լինում: Արեք նույնիսկ ամառվա ընթացքում կեսորին շատ չի բարձրանում:

Զմեսային գիշերը շաբաթներ, ամիսներ և տեսում, իսկ ըեեսում 6 ամիս արեք չի ծագում (ձմեռը), 6 ամիս ել մայր չի մանում (ամառը): Յերկրի մեծ մասը ձյունով ու սառուցներով և ծածկված: Այդ յերկրները կազմում են ցուց զոտի, փորը սկսվում և հյուսիսային թեեսային շրջանից և տարածվում մինչև հյուս. բենոր:

Յեթև հասարակածից դեպի հարավ զնանք, դեռ կմանենք բարեխառն, ապա ցուրտ յերկրները: Ուրեմն հարավային կիսագնդում ել կան բարեխառն և ցուրտ յերկրներ:

Աբազիսով յերկրագնդի վրա կան հետեւյալ հինգ զոտիները 1. Հյուսիսային ցուց զոտի, 2. Հյուս. բարեխառն զոտի, 3. Տաֆ զոտի, 4. Հարավային բարեխառն զոտի յեզ 5. Հարավ. ցուց զոտի:

Կիսագնդերի քարտեզի կամ ավելի լավ և գլորուսի վրա ցույց տվեք խեցգետնի և այծեղջեր արեագարձները, հյուսիսային և հարավային թեեսային շրջանները, հյուսիսային և հարավային թեենները:

Թվեցեք զոտիները հյուսիսից դեպի հարավ:

Աստիճաններով վորոշեցեք ամեն մի գոտու սահմանները. որինակ՝ ցույց տվեք, թե տաք զոտին վոր աստիճանից մինչև վոր աստիճանն և տարածվում:

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք Ցելոն, Սումատրա, Յավա կղզիները (Ասիայի հարավում), Նոր Յերկիր, Շապիցրեզեն, Նոր Միրիր, Գրենանդիա կղզիները (Հյուս. Սառուց. ովկիանոսում): Այդ կղզիները վոր գոտում են գտնվում: Ինչու Ցելոնում ձմեռ յերբեք չի լինում, իսկ Գրենանդիան ամբողջ տարին ծածկված և ձյունով ու սառցադաշտով:

Ինչու Ասիայի հարավային ափերն ավելի տաք են, քան հյուսիսայինը:

Ինչու Հնդկական ովկիանոսը յերբեք չի սառչում, իսկ

Հյուս. Բնենային ծովը (այսինքն Հյուս. Աստուցյալ ովկիանոսը) համարյա ամբողջ տարին սառուցներով և ծածկված։ Ամերիկան քանի գոտում և գտնվում։

Աշխատանք. — Կիսադնդերի համբ քարտեզի վրա տարեր գույներով ներկեցնեք կլիմայական գոտիները (Աշխարհ. տետր. աշխ. 19):

Կարգացեք «Նանսենի ճանապարհորդությունը գեղի հյուսիսային բևեռը» (Աշխարհի շուրջը. II մաս):

Կ Լ Ի Մ Ա

Յերբ մենք սենյակից գուրս ենք գալիս, անմիջապես ուշադրություն ենք դարձնում յեղանակի վրա, այսինքն՝ արդյոք տաք և գուրսը թե վոչ, պմրդ և որը, թե ամպամած, անձրեային ե, թե չոր, հանդարտ ե, թե քամի և և այլն։ Տարությունը, քամին, չորությունը և խոնավությունը, ընդհանրապես յեղանակը շարունակ փոփոխվում է։ Յերբեմն մնկ որվա մնջ յեղանակը մի քանի անգամ փոփոխվում է. որինակ՝ առավոտը լինում և պարզ, քիչ հետո, տեսնում ես, յերկինքը ծածկվում և ամպերով, առառ անձրե և գալիս, իսկ կեսորին ամպերը չքանում են և պայծառ արեն սկսում և տաքացնել յերկիրը։ Յեղանակները փոփոխվում են և տարվա ընթացքում. որինակ՝ մեղնում ամառը շոգ յեղանակներ են լինում, իսկ ձմեռը՝ ցուրտ։ Բայց յեղանակի փոփոխությունները ամեն տարի կրկնվում են կանոնավոր կերպով։ Յերեանում ամեն տարի ամառը սոսկալի շոգեր են լինում, մնջիկը ջերմաչափի մեջ հուլիսին բարձրանում և մինչև 40 աստիճան, իսկ ձմեռը սառնամանիքներ են լինում և մնդիկը հունվարին իջնում և 0-ից դեպի ցած մինչև—20°, յերբեմն ել ավել։ Գարունը անձրեային և լինում, ամառը՝ չոր։ Արարատյան դաշտի ամենաչոր ամիսը հուլիսն է։

Ուրեմն տարիների ընթացքում դիտելով վորհե վայրի յեղանակները, կարելի յե ցույց տալ, վոր այդ տեղի յե-

զանակները ամեն տարի կրկնվում են բավական կանոնագոր կերպով: Յեղանակի այդ կանոնալոր փոփոխություններով մենք զաղափար ենք կազմում տեղի կլիմայի մասին:

Ամեն յերկիր յուր կլիման ունի Յեթե Յերևանից աեղափոխվենք Սև ծովի ափը, որինակ՝ Բաթում, մենք կտեսնենք, վոր այնտեղ անձրևներ ավելի հաճախ են գուլս, ձմեռն այնպիսի ցրտեր, վորպիսին մեղ մոտ են լինում, այնտեղ յերեք չեն լինում, ամառն ել այնքան շող չե, ինչպես մեղնում: Յեթե զնոնք Պարսկաստանի խորքերը, այն դեպքում կտեսնենք, վոր այնտեղ կլիման ավելի չոր ե, քան մեղնում: Նույն կլիման շունեն նաև Մասփար զագաթը և Արարատյան դաշտը: Այն ժամանակ, յերբ Արագատյան դաշտի այգիներում ու բանջարանոցներում զեղձն ու ծիրանը, գուղման ու ձմերուկը, խաղողն ու թուզը աղատորեն աճում են և ցրտից չեն նեղվում, Մասփարի զագաթին, ընդհակառակը, մշտական ձյունն ու սառնամանիքներն են իշխում:


Այժմ տեսնենք, թե ինչն է պատճառը, վոր տարրեր յերկրներ տարրեր կլիմաներ ունեն:

Կլիման կախված է տեղի աշխարհագրական լոյնությունից: Մենք տեսանք, վոր մի յերկիր վորոքան մոտ է հասարակածին, այնքան ավելի տաք կլիմա ունի նա և, ընդհակառակը, վորքան հեռու յե հասարակածից, այնքան ավելի ցուրտ է նրա կլիման:

Կլիման կախված է ծովի մոտիկությունից: Զուբը շուտ չի տաքանում, բայց շուտ ել չի սառչում, այդ պատճառով ծովի վրայի ողը ամառը շատ տաք չի լինում, իսկ ձմեռը՝ շատ ցուրտ, ինչպես վոր այդ նկատվում է ցամաքի ներսը: Ուրեմն ծովափնյա յերկրների կլիման ավելի համահավասար կլիմի, քան այն յերկրների կլիման, վորոնք ծովից հեռու յեն գտնվում:

Բացի այդ՝ ջրային գուրգիները մեծ մասամբ ծո-

վերից և ովկիանուներից են բարձրանում։ Պարզ է, վոր ծովագնյա յերկրների ողը ավելի շատ գոլորշիներ կունենա յուր մեջ, քան այն յերկրներինը, վորոնք գտնվում են աշխարհամասերի կենտրոնում։ Այդ պատճառով ծովափ-



ԳԼԱՎԳՈ
(Շոտլանդիայում)

Ա Հույսի մքնին բարեխառնությունը

Բ Հունվարի միջին բարեխառնությունը

Նկ. 22 Ամառվա և ձմեռվա բարեխառնությունների առանձնահատվածները
տարբեր յերկրներում

նյա յերկրների կյիման վխոնավ է լինում, յերկինքը հաճախ ծածկվում է ամպով և շատ անձրևներ են գալիս, իսկ ծովից հեռու գտնվող յերկրներում կյիման լինում է չոր, յերկինքը մեծ մասամբ պարզ և անձրևներ քիչ են գալիս, հույսի և հունվարի բարեխառնությունների տարբերությունը մեծ է լինում։ Համահավասար և խոնավ կյիման, վոր սովորաբար լինում է ծովա ինյա յերկրներում

և կղզիների վրա, կոչվում է ծովայիկի կղիմա. Հոր և մեծ տատանումներ ունեցող կղիման, վոր նկատվում է ծովից հեռու գտնվող յերկրներում, կոչվում է ցուխայիկի կղիմա, Յերեանի կղիման ցամաքային և, իսկ Բաթոմինը՝ ծովայիկի:

	Հորիս	Հունվար	Բարիխառա- նության տա- րեկան տա- տանումները	Մթնոլուա- տեղումները	Ի՞նչպիսի կղիմա յէ.
Բաթում . .	23, 2°	+ 6, 1°	17, 1°	2529 միլի- մետր	Ծովային
Յերեան . .	25°	- 6, 4°	31, 4	318 միլի- մետր	Ցամաքային

Աշխատանք: Առանձին նկարով ցույց է տրված ծովափը՝ ծովը և ցամաքը նշելեցեք տարբեր գույներով և վորտեղ տաք և նշանակեցեք +, իսկ վորտեղ ցուրտ և — նշան (աշխարհ, տեսր, աշխ. 19):

Աշխատանք: Զերծաշափների ցուցմունքներով վորոշելութե վոր յերկրներն ունեն ցամաքային և վորը ծովային կղիմա (աշխ. տեսր, աշխ. 21, 22):

Կղիման կախված է նայել տեղի բարձրությունից: Բացի այն հեռավորությունից, վոր յերկիրն ունի հասարակածից և ծովից, կղիմայի վրա մեծ ազդեցություն ունի նաև տեղի բարձրությունը ծովի մակերեսութից: Վորքանեմի յերկիր ծովի մակերեսութից բարձր է գտնվում, այնքան նրա կղիման ավելի ցուրտ է լինում:

Յերեանը ծովի մակերեսութից բարձր է 994 մետր, իսկ Արագածը՝ 4095 մետր: Յեթե այդ տեղերի տարեկան միջին բարեխառնությունը համեմատելու լինենք իրար հետ, կստանանք հետեւյալ պատկերը: Յերեանի տարեկան միջին բարեխառնությունն է 11,4°, Յելենովկայինը՝ 5°, իսկ Արագածինը 0-ից ել ցածր է: Հենց այդ պատճառով ել բարձր սարերը ծածկված են լինում հավերժական ձյունով և սպոռցներով:

Կիյմայի կտառմբ լեռնաւըրաների դասավորությունից, Վերջապես մեծ նշանակություն ունինակ այն հաճամանքը, թե լեռներն ինչպես են դասավորված: Յեթև լեռնաշղթաները գտնվում են ծովին մոտ, այն գեղքում նրանք թույլ չեն տա, վոր ծովից գոլորշիներն անցնեն յերկրի ներսը. օրինակ, այն լեռները, վորոնք գտնվում են Արարատյան գաշտի արևմտյան կողմը թույլ չեն տալիս, վոր այդ գաշտը խոնավություն ստանա Սև ծովից: Հիմալայան լեռները մեծ ազդեցություն ունեն կենտրոնական Ասիայի կլիմայի վրա:

Հնդկաստանը առատորեն վոռոգվում է Հնդկական սվերանոսից, իսկ կենտրոնական Ասիան, վոր գտնվում է Հիմալայան լեռներից հյուսիս, ունի չոր, ցամաքային կլիմա: Հիմալայան լեռների այն լանջերը, վորոնք դարձած են գեղի Հնդկական սվերանոսը, ծածկված են փարթամ, ճոխ անտառներով, իսկ հյուսիսային լանջերը մերկ են ու աղբատ:

Մենք գիտենք, վոր ողբ միշտ հանդիսի գիտա չի լինում, յերեամ նա շարժվում է: Ողի շարժումը կոչվում է բամի: Բամին առաջ ե գալիս նրանից, վոր յերկրի մակերևույթի մի տեղն ավելի շատ ե տաքանում, քան մի ուրիշը:

Յերեկները ցամաքն ավելի շուտ և տաքանում, քան թե ջուրը. ցամաքի վրայի ողբ տաքությունից ընդարձակվում է և բարձրանում, իսկ նրա տեղը բռնում է ծովից յեկող ողբ: Գիշերը հակառակն է լինում: Ցամաքն ավելի շուտ և ցրտում, քան ջուրը: Ցամաքի վրայի ողբ ցրտից խոտանում է և սկսում է շարժվել գեղի ծովը: Այսպիսով ծովափերին ցերեկը քամին ծովից փչում է գեղի ցամաքը, իսկ գիշերը՝ ցամաքից գեղի ծովը: Այսպիսի քամիները բրիգներ են կոչվում:

Բրիգները իրենց ուղղությունը որպատուսիւր իրաւություն ունի յերկու անգամ, բայց կան և այնպիսի քամիներ, վորոնք կես տարի փչում

են մի ուղղությամբ, կես տարի ել՝ հակառակ ուղղությամբ Այդպիսի քամիները կոչվում են մուսանիներ:

Այսուսանները փշում են զիսավորապես Հնդկական և Խաղաղ օվկիանոսներում Ասիայի հարավարևելյան ափերին (Հնդկաստանում, Հնդկաշխնում և այլն):

Չմեռը (սեպտեմբերից մինչև մարտը) Ասիայի միջին մասերն ավելի յեն ցրում, քան թե Հնդկական և Խա-



Ել. 23. Չմեռային մուսանն

Ամառային մուսանն


ղաղ օվկիանոսի ջրերը: Այդ պատճառով ցամաքի վրայի ողը, լինելով ավելի ցուրտ և ավելի խիտ, սկսում է շարժվել ցամաքից դեպի օվկիանոսը. դա ձմեռային մուսանն է:

Ամառը (ապրիլց մինչև հոկտեմբեր) կենար. Ասիան սոսկալի տաքանում է, ողը տաքությունից ընդարձակվում է և թեքիանալով սկսում է բարձրանալ, իսկ նրա աեղքագալիս բռնում է ծովի համեմատաբար ցուրտ և խիտ ողը. այժմ քամին փշում է ծովի կողմից և կոչվում է ամառային մուսանն:

Ամառային մուսաննը փշելով օվկիանոսի կողմից իր հետ միմուլուրտային տեղումներ և ըերում ցամաքին:

Աջասանն. — Ամառային և ձմեռային մուսաններ ցույց են տրված պարսերով: Ամառային մուսանների վրայով քաշեցեր կարմիր, իսկ ձմեռային մուսանների վրայով՝ կապույտ գիծ (Աշխարհ. տեսար. աշխ. 19):

Ովկիանոսներում, մոտավորապես արեալ-
Պաստաները դարձների միջև, ավելի կանոնավոր քամի-
ներ են փշում, վորոնք պաստաներ են
կոչվում: Պաստաներն այսպես են առաջնում: Հաստ-
րակածի մոտ արեի կիզող ճառագայթներից ողն սկսում



Նկ. 24. Պաստաներ

և ընդարձակվել և բարձրանալ. այդ վեր բարձրացող ողի
տեղը բանում և արեալարձների շրջանի ցուրտ ողը: Ա-
ռաջ են զալիս հյուսիս-արեկելյան և հարավ-արեկելյան պաս-
տաներ:

Աշխատանիք.—Հյուս.-արեկելյան և հարավ.-արեկելյան պաս-
տաների վրայով գունավոր մատիտով զծեր քաշեցեք: Աշ-
խարհամասերի այն շրջանները, վորոնք պաստաներից խո-
նավություն են ստանում, կապույտ գույնով ներկեցեք:

Քարտեզի վրա գտեք պաստաների ուղղությունը:

Ցույց տվեք հույսիս-արեկելյան և հարավ-արեկելյան
պաստաները: Դեպի մեր են նրանք փշում:

Քամիներից ծովի յերեսի ջուրը սկսում
ծովային և շարժվել, հոսել: Պաստաները ամբողջ
Հոսանքները: աարին փշելով միենալույն ուղղությամբ
շարժում են ովկիանոսի յերեսի ջուրը և
նրան տեղափոխում մի վորոշ ուղղությամբ: Այդպես են

առաջ յեկել այն հոսարտկածային ծովային հոսանքները, վորոնք հասարակածի յերկարությամբ շարժվում են արեւիքից դեպի արևմուտք: Այդ հոսանքները ձանապարհին հանդիպելով վորեե աշխարհամասի, ծոռւմ են իրենց ընթացքը և հոսում դեպի հյուսիս և հարավ:

Այսպես որինակ՝ Ատլանտյան ովկիանոսի հասարակածային հոսանքը՝ դեմ առնելով Ամերիկային՝ բաժանվում է յերկու ճյուղի, վորոնցից մեկը հոսում է դեպի հյուսիս արևելք՝ Գոլֆօսոն անունով և տաքացնում Յեփրոպայի կլիման: Վորովինեան Գոլֆշարումը դեպի հյուսիս հասարակածից և հոսում, ուսափ նրա ջուրն ավելի տաք է, քան այն ծովերի ջուրը, որ հասնում է Գոլֆշարումը: Այդպիսի հոսանքները կոչվում են Տափ հոսանքներ: Տափ հոսանքների միջոցով դեպի հյուսիս կամ հարավ տարվող ջրերի փոխարեն հյուսիսից և հարավից դեպի հասարակած ևս հոսում սառը ջրեր, վորոնք կազմում են ցուրտ հոսանքներ: Այսպես, որինակ՝ Հյուսիսային Ամերիկայի արևելյան ափերի մոտով հյուսիսից դեպի հարավ և հոսում Լարգադորյան ցուրտ հոսանքը:

Քամիների լեզ
ծովային հոսանք
ների ազդեցու-
րութիւր կլիմայի
վրա:

Քամիները և ծովային հոսանքները
մեծ ազգեցություն ունեն վորեե յերկրի
կլիմայի վրա: Տափ հոսանքները տաքաց-
նում են այն յերկրների կլիման, վորի
մոտովը անցնում են նրանք:

Գոլֆշարումի պատճառով Յեփրոպայի արևմտյան մասերը ավելի տաք են, քան թե արևելյանը: Գոլֆշարումի մի ճյուղը մանում է նույնիսկ Հյուսւ Բենեային ծովը և տաքացնում Մուրմանի ծովափը: Մուրմանի ծովափը թեև գտնվում է ցուրտ գտում, բայց և այնպես յերեք չի սառչում:

Մեծ Աշանակություն ունեն և քամիները: Ծովի կողմից փչող քամիները մեղմացնում են յերկրի կլիման և նրան դարձնում են ավելի խոնավ: Արևմուտքից փչող քա-

միների պատճառով Արևմտյան Յեղողան ունի խոնավ կլիմա, իսկ Արևելյան Յեղողան, ընդհակառակը, չոր եւ:

Դրանով ե բացատրվում այն հանգամանքը, վոր Արևմտյան Անգրկովկան ավելի խոնավ ե, քան թե արեգելյանը: Արևմտյան Անգրկովկասի կլիման մեղմանում եւ արևմտյան խոնավ քամիների ազդեցությունից:

Կլիման ինչի՞ց ե կախված: Ի՞նչ ե նշանակում ձովային և ցամաքային կլիմա:

Քամին ինչի՞ց ե առաջանում: Ամառային ժուսառնը ձմեռայինից ինչնիվ ե տարրերվում:

Վոր քամիներն են կոչվում պասատներ:

Ծովային հոսանքներն ինչպես են առաջանում: Նրանք կլիմայի վրա ի՞նչ ազդեցություն ունեն:

Աշխատանք.—Ծովային տաք հոսանքների վրայով քաշեցէք կարմիր գիծ, իսկ ցուրտ հոսանքների վրայով՝ կապույտ կամ վորեան այլ գիծ (Աշխատա, տեսք, աշխատա, 23):

Ա. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Խոնչպիս և կոչվում այն պետությունը՝ վորտեղ մենք
ապրում ենք:

Խոնչ և նշանակում ԽՍՀՄ. բացատրեցեք:

Գրորուսը կամ կիստղնդերի քարտեզի վրա ցույց տվեք
ԽՍՀՄ-ի տեղը:

Համաշխարհային քաղաքական քարտեզի վրա գտեք
ԽՍՀՄ-ի բնած տեղը (Աշխարհ. ատլաս):

Յեվրոպայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք
Յեվրոպայի այն մասը, վոր ԽՍՀՄ-ին և պատկանում (Աշխարհ. ատլաս):

Ասիայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք
Ասիայի այն մասը, վոր ԽՍՀՄ-ին և պատկանում (Աշխարհ. ատլաս):

Ուրեմն ԽՍՀՄ-ն վոր աշխարհամասերում և գտնվում:

ԽՍՀՄ-ն ամենամեծ պետու-
թագրագույն սոցիա-
լիստական Համերապե-
տարյանիների Միու-
րանքը:

Խ մեռմ միայն Անդիխայից, վորը յուր գաղութներով
բնաւմ և ամրող ցամաքի ^{1/4}-ը Բայց Անդիխայի կալ-
վածները ցրված են բոլոր աշխարհամասերում, այն ինչ
Խորհրդային Միությունը մի ամրող ջական յերկիր է, վորը
ուսար պետություններով և ովկիանուններով կարտված չե:

ԽՍՀՄ-ի այն մասը, վոր գտնվում և Յեվրոպայում
կոչվում է ԽՍՀՄ-ի Յեվրոպական մաս, իսկ այն մասը,
վոր գտնվում է Ասիայում՝ ԽՍՀՄ-ի Ասիական մաս:
Անդրկովկասը (Հայաստանը, Աղրբեջանը և Վրաստանը)
Ասիական մասումն և գտնվում:

Խուռա պիտուրյաների մակերեսիույթի մեծությունը:

Անգլիան զաղութիւներով	34,644,000	քառ.	կիլոմ-
Անգլիան առանց զաղութիւների	244,000	»	»
ԽՍՀՄ	21,343,000	»	»
Ֆրանսիան զաղութիւներով	12,422,000	»	»
Ֆրանսիան առանց զաղութիւների	551,000	»	»
Միաց. Նահանգները զաղութիւներով	9,772,000	»	»
Միաց. Նահանգ. առանց զաղութ.	9,369,000	»	»
Բրազիլիան	8,498,000	»	»
Չինաստանը (հաշված և Տիբետը, առանց Մոնղոլիայի)	8,350,000	»	»
Յապոնիան զաղութիւներով	684,000	»	»

Ամբողջ ցամաքը 149 միլիոն քառակուսի կիլոմետր է.
ԽՍՀՄ-ուն նրա վարերարդ մասն է բռնում:

ԽՍՀՄ-ն և մեծ, թե ամբողջ Յեվրոպան ու Ավստրա-
լիան միասին վերցրած:

ԽՍՀՄ-ն մասավորապես քանի անդամ և մեծ Ֆրան-
սիայից, Դերմանիայից:

Աշխատանիք.—Գծեցեք խոշոր պետությունների համե-
մատական մեծության դիագրամը (Աշխարհագրական տեսք-
աշխատանը 30):

Համաշխարհային համբ քարտեզի վրա ներկեցեք
ԽՍՀՄ-ի բռնած տեղը:

Մասշտարի ոգնությամբ զտեք) թե Լենինգրադից մին-
չե Վրագիվոստոկ քանի կիլոմետր եւ

Յերբ Դեմեկում (ԽՍՀՄ-ի ամենաարեալյան կետում)
ցերեկա ժամը 12-ն ե լինում, կենինգրադում այդ միջո-
ցին լինում ե զիշերդա 1 ժ. 20 րոպե: Դա ինչո՞ւ կարող եք
բացատրել (նկատի ունեցեք յերկրի զնդաձեռնությունը):

ԽՍՀՄ-Ի ՍԱՀՄԱՆԵՐԸ

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա ցույց տվեք ԽՍՀՄ-ի հյուսի-
սային սահմանը. այսուհետ ի՞նչ ծով կա:

ԽՍՀՄ-ի արևելյան կողմը ի՞նչ ծովեր և ովկիանոսներ
կան:

ԽՍՀՄ-ի արեմայտն սահմանը վոր ողևառթյունների հետ է:

Ցուց տվեք հարավային սահմանը:

ԽՍՀՄ-ի համբ քարտեզի սահմանների վրայով կարմիր գիր քաշեցեք:

ԽՍՀՄ-ի հյուսիսային ափերը վողողում ե Հյուսիսային Բևիլուային ծովը (Նոխելին Հյուս. Սառուցյալ ովկիսանոսը), վորն սկսում է Գլուրսիների թերակղղուց (Ֆինլանդիայի սահմանում) և տարածվում ե մինչև Բերինգյան նեղուցը: Այս ծովում են գտնվում նոր Յերկիր, Վայզաչ, Կոլգոյեվ և նոր Սիրիր կղզիները, վորոնք պատկանում են Խորհրդ. Միությանը:

Նոր Յերկիրից գեպի արեմուտք գտնվում են Ասիսակ և Բարենցի ծովերը, իսկ գեպի արեմը՝ Կարայի ծովը:

Հյուս. Բևեռային ծովը տարվա մեծ մասը (մոտ 9—10 ամիս) ծածկված ե լինում ձյունով և սառուցներով: Ամառը 2—3 ամսով ծովը բացվում է, բայց այդ ժամանակ ել հսկայական սառցի կտորներ (սառցասարեր) լողում են ծովում և նավազնացությունը դժվարացնում: Նավերն ամբողջ տարին ազատորեն յերթեեկում են միայն Բարենցի ծովում, ուր ներս և մասում Գոլֆօւրով տաք հոսանքը: Բարենցի ծովի այն մասը, վոր գտնվում ե Կոլա թերակղղու մոտ, կոչվում է Մուրմանի ծով: Այս ծովի ափին գտնվում ե ԽՍՀՄ-ի չսառչող նավահանգիստներից մեկը—Մուրմանսկը, վորի վրայով ամբողջ տարին և. Միությունն առեստուր ե անում ոտար յերկրների հետ: Մուրմանսկը յերկաթուղով միացած ե Լենինգրադի հետ: Նոր քաղաք ե, բայց յուր աշխարհագրական հարմար դիրքի պատճառով շատ մեծ առաջա ունի:

Ասիսակ ծովը նույնպես տարվա մեծ մասը ծածկվում ե սառուցներով: Նավազնացությունը հսարավոր ե միայն ամառային յերեք ամիսների ընթացքում, յերբ նա բոլորովին ազատվում ե լողացող սառուցներից: Նրա ա-

մին և՝ գտնվում Արխանգելսկ նավահանգիստը, վորի մրայով ԽՍՀՄ-ից արտահանվում և յուղ, փայտ և այլն: Արխանգելսկ յերկաթուզով միացած և Մոսկվայի հետ (ցույց տվեք):

Գտեք Խաղաղ ովկիանոսը. ցույց տվեք Բերինգյան, Ոխոտի և Յապոնական ծովերը:

Հյուս. Բերեային ծովից կարելի յէ անցնել Խաղաղ ովկիանոս: Հյուս. Բերեային ծովը Խաղաղ ովկիանոսի հետ ի՞նչ նեղուցով և միանում:

Յապոնական ծովի ափին գտնվում և լ. Միության կարեռ նավահանգիստաներից մեկը. ցույց տվեք:

Վաղիվոստոկից նավով մոտակա ի՞նչ յերկրներ կարելի յէ անցնել:

ԽՍՀՄ-ի արեելյան սահմանն և Խաղաղ ովկիանոսը, վորի մասերն են Բերինգյան, Ոխոտի և Յապոնական ծովերը: Բերինգյան և Ոխոտի ծովերը նավագնացության համար հարմար չեն, վորովհետեւ յերկար ժամանակներով սառչում են, իսկ ամառներն ել ազատ չեն լողացող սառուցներից և մառախուզներից: Սրանց գիշավոր հարստությունը կազմում են փոկերը, ծովացուլերը, կետերը և ձկները, վորոնց մեծ քանակությամբ վորսում են:

Յապոնական ծովը համեմատաբար տաք և և մեր ափերի մոտ սառչում և միայն մի քանի շաբաթով: Նրա ափին և գտնվում ԽՍՀՄ-ի կարեռ նավահանգիստաներից մեկը — Վաղիվոստոկը, վորտեղից սկսվում են ծովային ճանապարհներ դեպի Յապոնիա, Չինաստան, Ամերիկա և այլն:

Ցույց տվեք ԽՍՀՄ-ի ամրող հարավային սահմանը, սկսած Պույկատի ծոցից մինչև Ռուսակայի սահմանը:

Գտեք Սև ծովը, Թյուրքիան, Պարսկաստանը, Կասպից ծովը, Չինաստանը, Մոնղոլիան:

Սև ծովին ի՞նչ պիտություններ են տիրում:

Սև ծովի ափին լ. Միության վրա քաղաքներն են գտնվում (ցույց տվել խոշորները):

Վլադիվոսառկից փոքր ինչ հարավ գտնվում ե՞ս Պուշ-
յեաի ծոցը, վորտեղից սկսվում և ԽՍՀՄ-ի հարավային
սահմանը: Այս սահմանով և. Միությունը բաժանվում է
Յազոնիայի կալվածից—Կորեայից, ապա Զինաստանի կալ-
վածից՝ Մանջուրիայից: Այսուհետեւ գեսի արևմուտք սահ-
մանն անցնում է Խոնդուայի հետ, վորը յերկար ժամա-
նակ գտնվում էր Զինաստանի տիրապետության տակ,
իսկ այժմ անկախ է: Տյան-Շան և Պամիր լեռներում
ԽՍՀՄ-ն կրկին շփում է Զինաստանի հետ, վորից
հետո զայիս են Աֆղանստանը՝ Պարսկաստանը և Թյուր-
քիան:

Պարսկաստանի սահմանն անցնում է Կոսայից ծովով,
Թալիչի լեռներով և Արաք գետով, իսկ Թյուրքիայինը՝
Արաքի միջին հոսանքով (Հայաստանում), Ախուրյանով,
ապա կարում է լեռները և համնում մինչև Սեվ ծովը
(Բաթումից հարավ):

Սև ծովը տաք ծով է և ամբողջ տարին ազատ և
սառուցներից, բացառություն է կազմում նրա հյուսի-
սային մասը, վորտեղ նավահանգիստները մի քանի շա-
բաթով ստուծում են: Սև ծովից նավերը կարող են անց-
նել Միջերկրական ծով, այստեղից ել Ատլանտյան ով-
կիանոս: Այդ պատճառով Սև ծովը առևտրի համար շատ
հարմար է: Նրա յեղերքին գտնվում են բազմաթիվ խոշոր
քաղաքներ, վորոնց վրայով ԽՍՀՄ-ն առևտուր է անում
Թյուրքիայի, Իտալիայի և այլ յերկրների հետ: Սև ծովը
միանում է Ազովի ծովի հետ: Կասպից ծովը ովկիանոսի
հետ կապ չունի: Նա լիձ է: Նրա վրայով և. Միությունն
առևտուր է անում Պարսկաստանի հետ:

Ցույց տվեք ԽՍՀՄ-ի արեմտյան սահմանը:

Գտեք Ֆիննական ծոցը, վորտեղ գտնվում է Անդին-
գրադը:

Լենինգրադից կարելի յե Ատլանտյան ովկիանոս դուրս
գալ:

ԽՍՀՄ-ի արևմտյան սահմանն սկսվում է Առ ծովից և
համնում է մինչև Հյուս. Բեեռային ծովը: Այստեղ ԽՍՀՄ-ին
սահմանակից են՝ Առ մանիան, Լեհաստաճ, Լատվիան,
Եստոնիան և Ֆինլանդիան: Արևմտյան սահմանը կարեոր
նշանակություն ունի, քորովհետեւ նրանից գեպի արե-
մուտք գտնվում են տնտեսագես զարգացած յերկրներ—
Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան և այլն, զորոնք ԽՍՀՄ-ից
ստանում են հաց, յուղ, ձու, վուշ և այլն, իսկ ԽՍՀՄ-ն
այդ յերկրներից ներմուծում և մեթենալին: Ֆիննական
ծոցի ափին գտնվում է ԽՍՀՄ-ի առաջնակարգ նավա-
հանգիստը՝ Լենինգրադը: Այդ նավահանգիստն այնքան
խոր է, զոր ծովային խոշոր շղթենավերը կարողանում էն
այցելել նրան՝ բերելով իրենց հետ զանազան ավրանք-
ներ:

Աշխատանիք.—ԽՍՀՄ-ի համբ քարտեզի վրա բոլոր ծովերը և լճերը ներկեցեք կապույտ գույնով և ապա նշանակեցեք համեմայլ անունները.

1. ζεπτικούσιων γένους αυτόν μαντικόν - ζεπτικά. Βιβλιοπαγήν τον,
βιβλιοπαγήν τον, Βιβλιοπαγήν τον, Βιβλιοπαγήν τον, Βιβλιοπαγήν τον,

2. Արեւելյան սահմանում—Բերինգյան նեղուց, Բերինգյան ծով, Յապոնական ծով, Սախալին, Վլադիվոստոկ, Յապոնիա:

3. Հարբավային սահմանում՝ Կորիա, Մանջուրիա, Մոնղոլիա, Չինաստան, Աֆղանստան, Պարսկաստան, Կասպից ծով, Թյուրքիա, Արաքս, Բաթում, Սև ծով, Ազովի ծով, Ռուսաստան:

4. Արևմտյան սահմանում—Ռումանիա, Լեհաստան, Լատվիա, Եստոնիա, Ֆիննական ծոց, Լենինգրադ, Ֆինլանդիա. (Աշխարհ, տեսք, աշխ. 31):

Ցույց տվեք Վաղիվոստոկ - Բաթում, Լենինգրադ -
Լոնդոն (Անգլիայում), Մուրմանսկ - Լոնդոն ծովային ճանա-
պարհները:

Ինչպես ասացինք, ԽՍՀՄ-ն բաղկացած է Յեվրոպականի և Ասիական մասերից:

Յեվրոպական մասը Ասիականից բաժանվում է Աւրայան լեռներով, Աւրայ գետով, Կասպից ծովով և Կոմմա-Մանիջան ցածրությամբ:

Կումա-Մանիչյան ցածրությունը սկսվում է Կումայի գետաբերանից (Կասպից ծովի արևմտյան յեզրերից) և Մանիչի վրայով համեմում է մինչև Ազովի ծովը: Այս ցածրության տեղը մի ժամանակ նեղուց է յեղել, վորով Սև և Ազովի ծովերը միանում են Կասպից ծովի հետ:

ԽՍՀՄ-ի Ասիական մասը յուր հերթին բաժանվում է յերեք մասի—Սիրիո, Կովկաս և Թուրքիանական:

Սիրիորը բանում է Ասիայի հյուսիսային մասը և տարածվում է Աւրայան լեռներից մինչև Խաղաղ օվկիանոսը, Հյուս. Բնեռային ծովից մինչև Չինաստանը և Մոնղոլիան:

Թուրքեստանը գտնվում է Կասպից ծովի արևելյան կողմը, Արալյան ծովի շուրջը:

Կովկասի սահմանները կազմում են հյուսիսից Կումա-Մանիչի ցածրությունը, արևելյան՝ Կասպից ծովը, արևմուտքից՝ Սև ծովը, իսկ հարավից՝ Թյուրքիան և Պարսկաստանը: Կովկասի այն մասը, վոր գտնվում է Կովկասոյան լեռների հյուսիսային կողմը՝ կոչվում է Հյուսիսային Կովկաս, իսկ այն մասը, վոր գտնվում է այդ լեռներից հարավ, կոչվում է Անդրկովկաս:

Ցույց տվեք Անդրկովկասի սահմանները (Աշխարհագրական ատլաս—ԽՍՀՄ և Անդրկովկաս քարտեզները):

Անդրկովկասի հյուսիսային կողմն ինչ լեռներ են գտնվում:

Անդրկովկասի ափերն ինչ ծովեր են վորողում:

Ցույց տվեք Յեվրոպական մասի, Սիրիորի և Կովկասի սահմանները:

Դուք ԽՍՀՄ-ի վեր մասումն եք ապրում:

Անդրկովկասից ի՞նչ ճանապարհով կարող եք անցնել
Թուրքաստան, Սիրիո, Յելրուական մասը:

Աշխատանք.—ԽՍՀՄ-ի համբ քարտեզի վրա կարմիր
գծով անցկացրեք ԽՍՀՄ-ի ընական մասերի սահմանները:
Անդրկովկասի տեղը գորևե գույնով ներկեցեք և նշանակե-
ցեք Յերևան, Թիֆլիս, Բագու, Բաթում քաղաքների տ-
նունները. (աշխարհ. տետր, աշխ. 32):

ԽՍՀՄ-ի մակերեսինը կազմությունը

Գունատիալ քարտեզների վրա դաշտավայրը, բարձրա-
վանդակը և լեռները սովորաբար ի՞նչ գույներով են նշա-
նակում:

Յելրուակայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք
Միջին Ռուսական բարձրությունը, Մերձվոլգյան բարձրու-
թյունը, Ռւրալյան լեռները:

ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա գտեք Դրիմի,
Կովկասի, Ռւրալի, Ալտայան, Սայանյան, Յարկոնովյան,
Ստանովոյ և Սիրոսա-Ալին լեռները:

Դիտելով ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզը, ի՞նչ յեզրա-
կացություն կարող եք հանել—բարձրություններն են մեծ
տեղ բանում, թէ դաշտավայրերը:

Միտթյան Յելրուական մասը ներկայացնում ե մի
քննդարձակ հարթություն, վորը կոչվում ե Ռուսական
նարբուրյուն, Այդ լայնածավալ հարթությունը փռվում ե
Հյուս. Յեկային ծովից մինչև Մեծ ծովը և Ֆիննական
ծոցից մինչև Ռւրալյան լեռները: Բարձրությունները շատ
քիչ տեղ են բանում: Դրանցից նշանավոր են Միջին Ռու-
սական բարձրություններ, վորից սկիզբն են առնում Վոլ-
գան, Դնեպրը, Դնյուր և այլն: Վոլգայի աջ ափով ձգվում ե
Մերձվոլգյան բարձրություններ, վորի ամենազեղեցիկ մասը
կազմում են Փիզուլյան լեռները: Թէ Միջին Ռուսական
և թէ Մերձվոլգյան բարձրությունը ծովի մակերեսութից
այնքան ել բարձր չեն, նրանց ամենաբարձր գաղաթը
հազիվ 500 մետր բարձրություն ունի:



Նկ. 25. ԽԱՀՄ-ի ռԵԽԵԳԸ

Իսկական լեռները Ռուսական հարթության վրա չկան: Լեռները գտնվում են զլխավորապես հարթության յեզերքներին: Որինակ՝ արևելյան յեզերքով Կարայի ծովից զեղովի Կասպից ծովից ուղղվում են Խելալյան լեռները, վորոնց գագաթներից մի քանիսը—Տելպոսիսը, Յաման-Ճառն մուտ $1\frac{1}{2}$ կիլոմետր բարձրություն ունեն: Հարավում բարձրանում են Պրիմի լիոները, վորոնց ամենաբարձր գագաթը նույնպես մոտ $1\frac{1}{2}$ կիլոմետր բարձրություն ունի:

Յենիսեյ զետով Սիրիոր բաժանվում է յերկու մասի՝—արևմտյան Սիրիոր և արևվելյան Սիրիոր: Արևմտյան Սիրիորը մի բնդարձակ դաշտավայր է, վորը ձգվում է Յենիսեյից մինչև Ռերալյան լեռները և Հյուս. Բեգեռային ծովից մինչև Թուրքեստանը: Դա կոչվում է Սիրիորական:

դաւավայր: Սիրիական գաշտավայրի միջով հսկում եւ Ար գետը յուր վատկներով: Արևելյան Սիրիուս, ընդհակառակը, լեռնոտ է: Լեռնոտ է: Լեռնաշղթաները, բարձրավանդակները և խորշխոր հովիաները հաջորդում են իրար և ծածկում ընդարձակ տարածություններ: Հրաբխային ուժերից այդ լեռներն ու բարձրավանդակները շատ տեղեր քարուքանդ են յեղել, գոյացել են խոր խոր ճեղքեր. շատ տեղեր ել զետինը նստել և առաջացած խոր փոսերը հետագայում լցվել են ջրով և լցեր կազմել. որինակ՝ Բայկալ լիճը, վորը յերկրագնդի ամենախոր լիճն և համարվում (1552 մետր խորություն ունի):

Սիրիրի հարավային մասում բարձրանում են մի շարք լեռներ, վորոնցից շատերի գաղաթները ծածկված են հավերժական ձյունով: Այսուեղ իրենց բարձրությամբ աչքի յեն ընկնում Ալտայան, Այանիան, Բայկալյան լեռները: Սիրիրի արևելյան յեզերքին բարձրանում են Յարլոնվյան և Ասանովյան լեռները:

Թուրքեստանի մակերեսութիւնը հարթ է: Այսուեղ նշանավոր և Թուրանի դաւավայրը, վորը տարածվում է Կասպից ծովից մինչև Տյան-Շան լեռները և Աւրալի հարավային ծայրերից մինչև Պարսկաստանի և Աֆղանստանի սահմանը: Լեռները գտնվում են գաշտավայրի հարավային և հարավարևելյան յեզերքներին (գտեր այդ լեռները): ԽՍՀՄ-ի բոլոր մասերից ամենալեռնոտը Կովկասն է, վորի միջով Սև ծովից մինչև Կասպից ծովը ձգվում է Կովկասան լեռնաշղթան:

Հյուսիսային կովկասն ընդհանուր առմամբ հարթ է և միանում է Թուրանկան հարթության հետ: Անդրկովկասն, ընդհակառակը, չափազանց լեռնոտ է: Այսուեղ հովիտները, կիրճերը, բարձրավանդակներն ու շղթաները ամեն քայլափոխում հաջորդում են իրար և յերկրին տամբու լեռնային լանդշաֆտի ընույթի:

Անդրկովկասի մակերեսութիւն, ինչպես և գետերի ու լճերի մասին կխոսենք առանձի:

Հիշեցեք ԽՍՀՄ-ի նշանավոր լեռներն ու դաշտավայ-
րերը և ապա ցույց տվեք քարտեզի վրա:

Ա.ԺԱՄԱՆԻՔ.—Ասիայի համբ քարտեզի վրա կանաչ գույնով ներկեցեք ԽՍՀՄ-ի ասիական մասի դաշտավայրը, գեղին գույնով՝ բարձրավանդակները և դարձինագույն՝ լեռները: Գրեցեք ձեզ հայտնի լեռների և դաշտավայրերի անունները:

Յեկոսիայի համբ քարտեզի վրա ԽԱՀՄ-ի բարձրությունները ներկեցեք դարչինագույն, դաշտավայրերը՝ կանաչ գույնով։ Գրեցեք ձեզ հայտնի լեռների, բարձրությունների անունները. (աշխա, տեսար):

ԽԱՀՄ-ի բելյափ քարտեղի վրա դաշտավայրերը ներկեցիք կանաչ զույնով, իսկ բարձրավանդակները դարձնագույն. (Աշխարհ, տեսոր, աշխ., 33):

ԽՈՀԱՅՐ-Ի ԿԱՂՄԱԳԻ

Գուեք ԽԱՀՄ-ի ամենահարավյալին, ամենահյուսիսային, ամենարենց լան և ամենաարևմտյան կետերը:

Ցույց տվեք Միության այն մասերը, վորոնք գտըն-
վում են Բևեռային շրջանից զեպի հյուսված ԽՍՀՄ-ն գըլ-
խափորապես վո՞ր դուռը և գտնվում:

Դիտեցեք մթնոլորտային տեղումների քարտեզը և ասցեք—Միության վեր մասերում են շատ մթնոլորտային տեղումներ թափառում և մոտ մասերում՝ բիչ, (այս, ատլաս):

Արևմտյան Յելրոպայում ամառները շատ շոգ չեն լինում, ձմեռները՝ շատ ցուրտ, խակ արևելյան Յելրոպայում, այսինքն ԽՍՀՄ-ի Յելրոպական մասում ամառը շատ շոգ է լինում, խակ ձմեռը շատ ցուրտ, ինչու

Ենչով բացատրել այն հանգամանքը, վոր ԽՍՀՄ-ի արևմտյան մասերում և արևելյան ծովափերին ավելի շատ մթնոլորտային տեղումներ են թափվում, քան թե միջին մասերում:

Դուքսե յերկրի կլիման խնչից և կախված:

ԽԱՀՄ-Ն շատ մեծ յերկիր ե. նա բավական յերկար ձգվում և հյուսիսից գեպի հարավ և արևելքից զեպի արևմուտք։ Այդ պատճառով նրա կիմքան բազմազան է:

Յեթև մենք Ան ծովի ափից շարժվենք դեպի Հյուս. Բեռնային ծովը, այն գետըում կտեսնենք, վոր կլիման գետի հյուսիս հետզհեան ցրառում եւ Այն ժամանակ, յերբ Ան ծովի յեղերքին աճում են մշտագալար, վարթամ սաղարթ ունեցող ծառեր, Հյուս. Բեռն. ծովի յեղերքներին և կրղղիների վրա այնչափ ցուրտ եւ, վոր գետինը 1—2 մետր խորության մեջ մշտագես ստուած ել լինում, շատ տեղեր ծածկված են սառուցներով և ձյունով և բուսականությունը սոսկայի աղքատ եւ:

Աւրեմն ԽՍՀՄ-ի հյուս. և հարավային մասերը միևնույն կլիման չունեն:



Նո. 26. ԽՍՀՄ-ի մթնոլորտային՝ տեղութերը՝ (թվերը ցույց են առնելիս սանտիմետրեր):

Մյուս կողմից՝ կլիման փոխվում է նաև արևմուտքից դեպի արևելք: Դա բացատրվում է նրանով, վոր

Յեվրոպայի արևմտյան կողմը գտնվում է Ասլանտյան ովկիանոսը, վորտեղ հոսում է Գոլֆշտրոմը: Արևմուտքից փշող խոնավ քամիները վռառզում են փոչ միայն ամբողջ արևմտյան Յեվրոպան, այլ և ԽՍՀՄ-ի արևմտյան մասերը: Միության արևմտյան մասերում կլիման խոնավ է, ամառ շատ չաղ չի լինում, իսկ ձմեռը՝ շատ ցուրտ վորքան գեղի արևելք ենք գնում, կլիման այնքան ավելի ցամաքային է դառնում, այսինքն՝ ամառը շոգ է լինում, ձմեռը՝ ցուրտ և մինսոլորտային տեղումներ ելքիչ են թափում: Մանավանդ չոր կլիմա ունի Թուրանի դաշտավայրը: Ամառը բարեխառնությունն այստեղ բարձրանում է մինչև 40° և ավելի, իսկ ձմեռը՝ սառնամանիքները համնում են մինչև -20° -ի: Անձրևները հազվագյուտ են, Թուրանի դաշտավայրը ընկած է ցամաքի ներսը, ովկիանոսներից հեռու, այստեղ փշում են հյուսիս-արևելյան քամիները, վորոնք Ասիայի ներսից չորություն են բերում:

Ցամաքային կլիմա ունի և Միքրը: Նրա արևելյան մասում, Վերխոյանսկի մոտ գտնվում է ամբողջ յերկրագնդի ամենացուքա տեղը: Զմեռն այստեղ այն աստիճան ցուրտ է, վոր սառնամանիքները համնում են մինչև -60° , իսկ Վերխոյանսկ քաղաքում պատահում են նաև $-69^{\circ}, -70^{\circ}$ ցրառություն: Վերխոյանսկում ամառվա միջն բարեխառնությունը կազմում է $+15^{\circ}$:

Ստանովոյ լեռներից գեղի արևելք կլիման սուրկերպով փոխվում է: Խաղաղ ովկիանոսից փշում են մուսսոններ, վորոնք բավարար չսափով վռառզում են ծովեզերքը (ցույց տվեք):

Յեթե չհաշվենք Բեեռային շրջանից հյուսիս ընկած ցուրտ յերկրները, ինչպես և Դրիմի ու Կովկասի Աև ծովյան յեզերքները, Թուրանի դաշտավայրը, այն գեղքում ԽՍՀՄ-ի կլիման կորելի յէ անվանել չափավոր-ցա-

մարդկան հեղանակները կանոնավոր կերպով հաջորդում են իրար։ Ամենայուշտ ամիսը հունվարն է, իսկ ամենատաքրը՝ հուլիսը։ Մթնոլորտային տեղումները թափվում են գլխալորապես հուլիսին, բայց այնքան եւ առաստ չեն։

ԽՍՀՄ-ի կլիման ինչի՞ց ե կախված:
Խոչն գեղի հյուսիս կլիման հետզհետե ցրում ե:
Խոչն գեղի արևելք կլիման չորանում ե:
ԽՍՀՄ-ի հյուսիսային ափերը վողովդում են ծովերով,
բայց մթնոլորտային տեղումներ քիչ են թափվում. ինչն էւ
Խոչն Ստանովոյ լեռներից գեղի արևելք խոնավ ե,
իսկ գեղի արևմուտք՝ չոր:

Թուրանի գաշտավայրի կլիման ինչի՞ց ե կախված:
ԽՍՀՄ-ն ընդհանրապես ինչ կլիմա ունի:
Աջատանիք. — ԽՍՀՄ-ի կլիմայական քարտեզը ներկեցիք տարրերը գույներով. չոր տեղերը ներկեցնեք մի գույնը, խոնավ տեղերը՝ ուրիշ գույնով և այլն. (աշխարհ, տեսք, աշխ. 34):

"Obsberg jhd Jahrp"

ԽԵՂՄ-ի Յեղրոպական մասում ի՞նչ գետեր կան: Նրանք
դեպի մեր են հոսում:
Ի՞նչո՞ւ Յեղրոպական մասի գետերն ավելի դանդաղ են
հոսում, քան մեր գետերը:
Ի՞նչն և պատճառը, վոր Սիբիրի գետերը զեղի հյու-
սիս են հոսում:
Գետերն ի՞նչ նշանակություն ունեն:

ԽՍՀՄ-ի Յեղոպական մասի գետերը յերկը հարթ լինելու պատճառով բավական դանդաղ են հոսում և նրանցից շատերը հարմար են նավազնացության համար։ Բայց նավազնացությունը, դժբախտաբար, կարծ ժամանակով եկատարվում, վարովնետե գետերը յերկար ժամանակ ձածկվում են ստուցներով։

Յեփրոպական մասի գետերը հոսում են գեղի Հյուս. Բեեռային ծովը, Ֆիննական ծոցը, Աև ծովը, Բալտիկ ծովը և Կասպից ծովը:


Դեպի Հյուս, Բեեռային ծովը հոսում են Պեչորան յեվ Հյուս. Գվինան: Գեչորան այնքան ել մեծ նշանակություն չունի, վորովճեան հոսում և սակայ բնակչություն ունեցող տեղերով և թափվում և ծովի այն մասը, վորը միայն շատ կարծ ժամանակով և ազատվում սառուցներից. բացի այդ՝ ինքը, Պեչորան, տարվա մեծ մասը սառած և լինում: Ավելի մեծ և Հյուս. Գվինայի նշանակությունը: Նա յուր ամբողջ յերկարությամբ նավագնաց է: Նրա վրայով գեղի Արխանգելսկ արտահանության համար փոխազրում են մեծ քանակությամբ փայտ: Բայց Հյուս. Դվինան նույնական յերկար ժամանակով սառչում է:

ԽՍՀՄ-ի Յեփրոպական մասի հյուսիս-արևմտյան անկյունը հարուստ և լճերով, վորոնց մեջ իրենց մեծությամբ աշքի յեն լնինում Ոնեան յեվ Լավոգան: Սվիր գետը սկսվում է Ռնեզա ճից և թափվում և Լաղողայի մեջ: Լաղողայի մեջ թափվում է մի ուրիշ գետ և, վորի վրա կառուցված և խոշոր ելեկարական կայտան: Լաղողայից սկսվում է Նեվա գետը և թափվում և Ֆիննական ծոցը: Նեվան նավագնաց է, նրա վրա և կառուցված Լենինզրազը:

Դեպի Աև ծովը հոսում են Գվինայը, Բուզը յեվ Գվինայը: Գնեպը սկիզբն և առնում Միջին Ռուսական բարձրությունից: Գնեպը սկսվեարօնվակ քաղաքի մոտ նա ձեղում և զրանիսի ժայռերը և գոյացնում սահանքներ, վորոնց սլատճառով գետի այս մասը նավագնաց չե: Սահանքների ջրի ույժը ողտագործելու համար Խորհրդային իշխանությունը այժմ կառուցում է մի հակայական ելեկարական—Գվինայուսրոյ, վորը ամենամեծ կայտան-ներից մեկն և լինելու ամբողջ աշխարհում: Միջին Ռուսական բարձրությունից սկիզբն և առնում նաև Գվին Դոնեց վատկով և թափվում և Ազովի ծովի մեջ:

Միության Յեղոսպական մասի ամենամեծ գետը՝
Վոլգան է։ Նա սկսվում է Միջին Ռուս. բարձրությունից
և հոսում ե գեղի Կասպից ծովից Նրա յերկարությունն
է մոտ 3160 կիլոմետր, իսկ լայնությունը տեղադրության
մոտ 4 մինչև 4 կիլոմետրի։ Ճանապարհին նա աջ ու
ձափի կողմից ընդունում է բազմաթիվ վտակներ, վորոն-
ցից նշանավոր ե Կաման յել Ալյան։

Վոլգան նախադնաց եւ Նրա վրայով լողում են բազ-
մաթիվ շոգենասիեր, վորոնք գեղի հյուսիս տեղափոխում
են հաց և նավթ, իսկ գեղի ցած գործարանային ապ-
րանքներ։ Նրա ափերին առաջ են յեկել վաճառաշահ քա-
ղաքաբներ—Շիբինով, Նիժնի-Նովգորոդ, Սարատով յել
Աստրախան։ Վոլգայի նշանակությունն այնքան մեծ և
ուժու ժողովրդի համար, վոր վերջինս Նրան «Մայր Վոլ-
գա» անունն է տվել։



Նկ. 27. Նիժնի Վոլգոգրոդ

Վոլգայից քիչ հեռու նույն ծովն է թափվում Արար-
գետը, վորը բավական յերկար ե, բայց այնքան ել ջրա-
ռատ չե։

Մերձկասպյան գաշտավայրի գետերը չառերը չուրության պատճառով, ծովը հնասած ցամաքում են: Հենց այդ չորությամբ և բացառքում այն, վոր այստեղ պատահում են աղի լճեր: Գարնանն այդ լճերի մեջ մեծ քանակությամբ ջուր և համարվում, իսկ ամառվա շողերին այդ ջուրը գոլորշիանում և և լճի տակ զոյացնում աղի հաստ շերտ: Այդպիսի լճերից նշանափոք են Ելտոն և Բասկոնցակը, վորոնցից ամեն տարի ահաղին քանակությամբ աղ և ստացվում:

Միքրի գետերը հոսում են դեպի Հյուս. Բենեային ծովը: Նշանափոք են Որը, Յենիսեյը և Լենան: Նրանք նախագնաց են, բայց կլիմայի ցրտության պատճառով տարվա մեծ մասը սառած են լինում: բացի այդ՝ նրանք հոսում են սակավ բնակչություն ունեցող յերկրով և թափվում են ցուրտ ծով:



Նկ. 28 Յենիսեյի կամուրջը:

Հեռավոր Արևելքում հոսում է Ամուր, վորը նախագնաց և և թափվում և Խաղաղ օվկիանոսը:

Թուրքեստանի գետերից նշանավոր են Ամու-Դարիա և Սյուր-Դարիա գետերը, վորոնք թափվում են Արալյան ծովը։ Ամու-Դարիան սկսվում է Պամիրի, իսկ Սիր-Դարիան՝ Տյան-Շանի սառցաղաշտերից։ Յերկուսն ել ջրառատ են, մանավանդ ամառը, յերբ սարերի ձյունն սկսվում է արագությամբ հարվել, բայց նախագնացության համար հարմար չեն, վորովհետեւ վերին հոսանքում արագահոս են և սահանքներ ունեն, իսկ ստորին հոսանքում շողերի պատճառով ջուրը զոլորշիանում է։ Բացի այդ՝ նրանցից վերցնում են առուներ այդիները և վարելահողերը ջրելու համար։

Կովկասի գետերը մեծ մասամբ կարճ են, վերին հոսանքներում նրանք հոսում են բավական արագ և ճանապարհին առաջացնում են սահանքներ և ջրվեժներ։ Միայն յերբ դուքս են գալիս կիրճերից և մտնում հարթության մեջ, այն գեղքում նրանք շարժվում են ավելի հանգարաւ Հյուսիսային Կովկասում նշանավոր են Տերելը, Կուման և Վորանը, իսկ Անդրկովկասում՝ Բիոնը, Կուրը և Արաքսը։

ԽՍՀՄ-ի գլխավոր գետերի յերկարությունը

Դոլգա	3160	կիլոմետր
Դնեսլը	2139	»
Դոն	1800	»
Պեչորա	1647	»
Հյուս. Դիլինա	1297	»
Դնեստր	2150	»
Կամա	1800	»
Ոկտ	1440	»
Ոք Իրտիշ վտակով	5300	»
Յենիսեյ	5200	»
Աենա	4600	»
Ամուր	4480	»

Ներկան Մարիյին յան ջրային ճանապարհով միանում է Վոլգայի հետ։ Ցույց տվեք։

Կարելի յե նավով Աստրախանից Լենինգրադ գնալ:
Համբ քարտեզի վրա կարմիր գծով ցույց տվեք նավի անց-
նելիք ճանապարհը:

Կարգացեք «Վոլգա» և Վոլգայի գետաբերանում «Հոգ-
վածները» («Աշխարհի շուրջը» գրքից):

Խ. Միաթյանը վորոշել է Վոլգան և Դոնը արհեստա-
կան ջրանցքով միացնել իրար հետ: Դիտեցեք քարտեզը և
ասացեք՝ այդ ջրանցքը վորոշեղ պետք է կառուցվի: Վոլգա-
Դոն ջրանցքի նշանակությունը մեծ կլինի:

Աշխատանք.—ԽՍՀՄ-ի համբ քարտեզի վրա նշանակե-
ցեք զիմավոր գետերի անունները. (աշխարհ, տեսր, աշխ.
35 և 60):

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետուրյուննե-
րի Միուրյունը բաղկացած է հետեւյալ վեց հանրապետու-
թյուններից:

1. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խոր-
հրդային Հանրապետուրյուն (Խ. Ս. Ֆ. Խ. Հ.):

2. Ակտրահինայի Սոցիալիստական Խորհրդային Հան-
րապետուրյուն (Թ. Ս. Ա. Խ. Հ.):

3. Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խոր-
հրդային Հանրապետուրյուն (Ա. Ս. Ֆ. Խ. Հ.):

4. Բելոռուսիայի Սոցիալ. Խորհրդային Հանրապե-
տուրյուն (Բ. Ս. Խ. Հ.):

5. Ազգեկանանի Սոցիալ. Խորհրդային Հանրապե-
տուրյուն (Ազ. Ս. Խ. Հ.):

6. Թուրքիանանի Սոցիալ. Խորհրդային Հանրապե-
տուրյուն (Թ. Ս. Խ. Հ.):

- ԽՍՀՄ-ի գերազույն մարմինը Խորհրդային համա-
միուրենական համագումարն է, վորը գումարվում է
տարեկան մեկ անգամ: Այդ համագումարը լսում է զե-
կուցում կառավարության զործունեյության մասին, հաս-
տառում է բյուջեն և բնտրում է Կենտրոնական զործա-
դիր կոմիտե:

Խորհուրդների Համագումարից մինչև մյուսը վորապես

գերազույն մարմին հանդիսանում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, վորք նշանակում է Ժողովրդական Կոմիտարները: Բոլոր ժողովրդական Կոմիտարները միասին կազմում են Ժազովրդական Կոմիտարների Խորհուրդ, վորք և կառավարում է յերկիրը:

Միության մեջ մանող ամեն մի հանրապետություն և ունի յուր Խորհուրդների համագումարը, Կենտրոնական Գործադիր Կոմիտեն յեվ Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը:

Ամբողջ ԽՍՀՄիության մայրաքաղաքը Մոսկվան է:

Դուք վար հանրապետության մեջ եք առլուստ: Զեր հանրապետության կենտրոնը վերն է:

Խորհուրդների ընտրությանն ով և մասնակցում: Ընտրելու իրավունքից զվարել են զրկված:

Ընտրությաններն ինչպես են կայանում դյուզուս, քաղաքում, զավառում և այլն,

Միութենական հանրապետուրյաների մակարդակի մեծուրյանը յեվ ազգաբնակուրյանը:

	Մակարդակը	Բնակիչները	Մայրաքաղաքը
Ռ Ա Ֆ Խ Հ	19.748.296 քառ. կիր.	100.858.000	Մոսկվա
Բ Ա Խ Հ	126.793	4.984.000	Մինսկ
Ռ Ա Խ Հ	451.730	29.000.000	Խարկով
Ա Ա Ֆ Խ Հ	185.457	5.862.000	Թիֆլիս
Թ Ա Խ Հ	491.216	992.000	(Նախկին Պոլտա- վացկ Աշխարհաց Սամարդանդ)
Ռ Ա Խ Հ	340.346	5.275.000	
Ընդամենը	21.343.837	146.971.000	

Աշխատանք.—ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք այդ հանդիսադրությունների սահմանները և մայրաքաղաքը:

ԽՍՀՄ-ի համբ քարտեզի վրա այդ հանրապետություն-ները տարրեր գույներով ներկեցեք և ապա դրեցեք մայ-րաքաղաքները. (Աշխարհ: տետր, աշխ. 36):

Բ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

Անդրկովկասի քարտեզի վրա գտեք ձեր բնակավայրը. յեթե նա նշանակած չե, այն դեպքում ցույց տվեք այն քաղաքը, վորի հետ ձեր բնակավայրը կտպ և պահպանում:

Ցույց տվեք Կովկասյան լեռնաշղթան, Սև և Կասպից ձովերը, Թյուրքիան և Պարսկաստանը:

Ցույց տվեք Անդրկովկասի արևելյան և արևմտյան, հարավային և հյուսիսային սահմանները:

Մասշտաբի ոգնությամբ իմացեք, թե Բաթումից մինչև Բագու և Արագածից՝ մինչև Կաղըհել քանի կիլոմետր և:

Համաշխարհային քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Անդրկովկասի տեղը:

Գտեք Յերեան, Թիֆլիս, Բագու և Բաթում քաղաք-ները:

Անդրկովկասը տարածվում է Կովկաս սյան լեռնաշղթայից մինչև Թյուրքիայի սահմանները: և Պարսկաստանի սահմանները և Սև ծովից մինչև Կասպից ծովը:

Հյուսիսային սահմանն սկսվում է Գագրայի մոտից (Սև ծովի յեղերքին), ապա Կովկասյան լեռնաշղթայի վրայով անցնում է դեպի հարավ-արևելք, բայց Բաղդին չհասած, ծովում է դեպի հյուսիս արևելք և Սամուր դե-տի վրայով համանում է մինչև Կասպից ծովը:

Անդրկովկասի հարավային սահմանն սկսվում է Սև ծովից, Բաթումից փոքր ինչ հարավ (Սարպ զյուղի մոտ) և կտրելով ձորով գետը համանում է մինչև Ախուրյանը, այնուհետև Ախուրյանի և Արաքսի վրայով ուղղվում է դեպի արևելք և Կասպից ծովը չհասած, ծովում է դեպի:

հարավ ու Թօնիօի լեռներով հասնում եւ մինչև Կասպից ծովը (Անդրսան քաղաքից հարավ, Աստարայի մոտ):

Արևմտյան սահմանը կազմում եւ Ալիլ ծովը (Գագրայի մոտից մինչև Սարսկ գյուղը), իսկ արևելյանը՝ Կասպից ծովը (Սամուրից մինչև Սաստարա):

Աջառամիք. — Անդրկովկասի համբ քարտեզի վրա Անդրկովկասի հյուսիսային և հարավային սահմանների վրայով կարմիր գիծ քաշեցեք:

Գրեցիք իրենց տեղերում՝ Աև ծով, Կովկասյան լեռնաշղթա, Ասմուր, Կասպից ծով, Աստարա, Արաքս, Ախուրյան, Բաթում, Թյուրքիա և Պարսկաստան անունները (Աշխարհ, տեսր, աշխ, 37):

Յերեանից ի՞նչ ձանառաբնով կարող եք գնալ դեպի Աև կամ Կասպից՝ ծովը:

Անդրկովկասը շատ լեռնոտ յերկիր է:

Անգրեկովկասի Այստեղ կարելի յեւ տեսնել և բարձր ձյունապատ լեռներ, և խոզ հովիտներ ու ձուրեր, և ընդարձակ դաշտավայրեր, և բարձրավանդակներ:

Անդրկովկասի հյուսիսային մասով Աև ծովից մինչև Կասպից ծովը անցնում եւ Կովկասյան լեռնաշղթան, վորի հարավային լանջերը գտնվում են Անդրկովկասում: Նա սկսվում եւ Տամանի թերակղզուց աննշան բարձրություններով, հետզհետեւ բարձրանում եւ յուր միջին մասում հասնում է Պայնապիսի բարձրության, վոր բազմաթիվ գագաթներ ծածկված են հավերժական ձյունով: Այդպիսի ձյունապատ գագաթներից նշանավոր են Ելրուսը (5629 մետր բարձրությամբ), Դիլս-ասուն (5198 մետր), Կուսան-սաու (5145 մետր), Կազբեկը (5043 մետր) և այլն:

Կազբեկից գեղի արևելք շղթան կրկին ցածրանում եւ և Բագվի մոտ հավասարվում գաշտավայրի հետ: Այն հսկայական քանակությամբ ձյունը, վոր կուտակվում եւ սա-



բերի վրա, ցերեկները արևի
ձառագայթներից հալվում
ե, իսկ զիշերները ստուաց
կտրում և ընդարձակ տա-
րածություններ սառցա-
դաշտերով ծածկում: Այդ
սառցադաշտերը տեղակղ
ցած են իջնում և հարվելով
զետեր առաջացնում: Աւ-
նենալով հակայական բարձ-
րություն, կովկասյան լեռ-
նաշղթան բավական զրծ-
վարանցանելի յե, միջին
բարձր մասում գոյություն
ունեն միայն յերեր հար-
մար լեռնանցք, վորոնցով
Անդրկովկասից կարելի յե
չյուս. Կովկաս անցնել: Այդ
լեռնանցքներից ամենա-
կարեորը Կրեսովի լեռ-
նանցքն ե, վոր գտնվում
է 2379 մետր բարձրու-
թյան վրա: Նրա վրայով
անցնում ե զեղեցիկ ռազ-
մակիրական խճուղին, վո-
րով թիֆլոսը միանում է
Վազգիկավկազի հետ: Յերկ-
րորդ տեղը բանում է Մա-
միսանի լեռնանցքը (2825

մետր), վորով անցնում է Ռեպմաստական Համեսապարհը
(Քութայիս — Վազգիկավկազ): Կլոխորի լեռնանցքով կա-
րելի յե Սուխումից անցնել Բատուրլաշինուկ:



Նկ. 30. Մշտական ձյունից գոյացել են սառցադաշտեր, վորոնք
կամաց-կամաց հոսում են գեղի ցած:

Կովկասյան լեռնաշղթան իրենից արձակում և մի քանի
ձյուղեր թե զեղի հյուսիս և թե զեղի հարավ: Հիշենք
այն ձյուղերը, վորոնք գտնվում են Անդրկովկասի սահման-
ներում:

1. Գագրայի շրամ.—սկսվում է զլիավոր լեռնաշղթայից և
անցնելով Պառու և Բզիր գետերի արանքով համառում և մինչև
Սև ծովը: Գլխավոր գագաթներն ունեն 2500—3000 մետր բարձ-
րություն:

2. Բզիրի շրամ.—կազմում է Բզիր և Կողոր գետերի ջրը-
քածան զիժը: Յերկու լանջերն ել ծածկված են կուսական խիտ
անտառներով, իսկ բարձունքներում փռվում են Ալպյան մարգա-
գետինները:

3. Կողորի շրամ.—ձգվում է Կողորի և Ինգուրի միջև: Լան-
ջերն անտառապատ են, իսկ բարձունքներում տարածվում են
Ալպյան մարգագետինները: Մի քանի գագաթներ ձյունապատ են:

4. Սիսիանիան շրամ.—գտնվում է Կողորի և Ցիսենիս-Ծղալի
գետերի միջև:

5. Լեշխատի շրամ.—անցնում է Սիսիանիան լեռներին զու-
գանեռ և կազմում է Ռիոնի և յուր վտակ Ցիսենիս-Ծղալիի ջրը-
քածան զիժը:

6. Բահայի շրամ.—գտնվում է Ռիոնի և յուր վտակ Դմիերիիի
միջև: Աչքի յի ընկնում յուր հանքային հարստություններով
(Տրվիրուիի—բարածուխ, Ճիաթուրի—մանղան):




Նկ. 31. Անգղմաղի բրական ճանապարհը Կաղուեկի մոտ

7. Մեսլիխական կամ Սուրամի լեռներ,—ուղղվում են զեզեց հարավ և հասնում մինչև Բորժոմի կիրճը։ Նրա միջին մասը բաժական ցածրանում է և կազմում Սուրամի հայտնի լեռնանցքը, վորի վրայով անցնում է խճուղի։ Այսուղ փորփած և Սուրամի տունելը, վորի յերկարությունն և մոտ 4 կիլոմետր, Այդ տունելի միջով անցնում է յերկաթուղային դիմ։

8. Վերջապես Կախիեթիայի շրջանում Կովկասյան լեռներից Բորբալո լեռան (մոտ) սկսվում են Կախիեթիայի լել Քարբայլինիայի ըլքաները։ Դրանցից առաջինն անցնում է Արագանի և Յորայի միջն, իսկ յերկրորդը՝ Փշավական Արագվայի և Յորայի միջն:

Կովկասյան լեռնաշղթայից զեզի հարավ գտնվում են յերկու մեծ հարթություններ, վորոնցից մեկը կուր զետի միջին և ստորին հոսանքով տարածվում է մինչև Կասպից ծովը և կոչվում է Մերձկասպյան դաշտվայր, իսկ մյուսը Բիոնի յերկարությամբ ձգվում է մինչև Սև ծովը և կոչվում է Աևծովյան դաշտվայր։



Նկ. 32. Լեռնային դյուոզ (առող) Կովկասյան լեռներում:

քուխներ, վորոնք միաժամանակ իրենց գազաթից վիճել են հրանեղուկ լավա ու մոխիր և ծածկելով հովիտները՝ բարձրավանդակներ առաջացրել, այդպես են առաջացել, որինակ՝ Սևանա, Լոռու, Դարաբաղի, Շիրակի բարձրավանդակները, վորոնք այժմ ծածկված են սոսուծ լավայի բարային հաստ շերտով:

Այժմ ծանոթանանք վորք Կովկասի գլխավոր շղթաներին: Փոքր Կովկասը Առւրամի լեռներով միանում է զլիսավոր Կովկասյան լեռնաշղթայի հետ: Առւրամի լեռների հարավային ծայրից, վորտեղ գտնվում է Բորժոմի գեղեցիկ կիրճը, սկսվում է յերկու լեռնաշղթա: մեկը գնում է զեղի քիմիլիս և կոչվում է Պրիալերի լեռներ, իսկ մյուսը՝ ուղղվում է զեղի Սև ծովը և կոչվում է Աջարա-Ախալցխայի լեռներ: Այդ շղթաների լանջերը ծածկված

Մերձկասալյան և Ակծովյան դաշտավայրերից դեպի հարավ յերկիրը կրկին բարձրանում է և կտղմում մի չսփազանց լեռնոտ աշխարհ, վորք հայտնի իւ Փոքր Կովկաս անունով: Փոքր Կովկասը Հայկական լեռնաշխարհի մի մասն է: Նա բաղկացած է բազմաթիվ շրջաններից, լեռնահովիտներից, ու կիրճներից, առանձին-առանձին բարձրավանդակներից, վորոնցից շատերը շրջապատված են լեռներով:

Այստեղ-այստեղ բարձրանում են հանգած հրա-

են վշտակերեւ և սաղարթավոր խիտ անտառներով, վորտեսական կերպ կուր գետի վրայով ամեն տարի ահազին քանակությամբ գերաններ են փոխադրում դեպի Թիֆլիս:

Թրիալեթի լեռներից հարավ ձգվում են Խոճանի լեռները, վորոնք ծածկված են հարուստ արոտատեղերով։ Դրանից փոքր ինչ արենքը ընկած են Վրանալոց լեռները, վորոնց ամենաբարձր գագաթն է Լալվարը (մոտ 2500 մետր բարձրությամբ)։ Վրանալոց լեռնաշղթայի վրայով և անցնում Հայաստանի և Վրաստանի սահմանը Վրանալոց լեռներից դեպի հարավ գտնվում է Եզովդալի լեռնաշղթան, վորի արենելյան մասը անտառում է։ Այդ շղթայի գլխավոր գագաթն է Ալլապունի, վորի բարձրությունը հասնում է մինչև 2900 մետրի։ Փամբակ գետը կտրում է Բգովդալը և նրան բաժանում յերկու մասի՝ արենելյան և արևմտյան։

Զաջուռի լեռնանցքից, Բղովդալին զուզանես, տարածվում են Փամբակի լեռները, վորոնց ամենամեծ գագաթը՝ Մայմինը, մոտ 3000 մետր բարձրություն ունի։ Սևանա լճի հյուսիսային անկյունում Փամբակի լեռները վերջանում են Սևանենովկայի լեռնանցքով և սկսվում են Շահդադալ լեռնաշղթան, վորը շրջապատում է Աևանա լիճը արենելյան կողմից։ Նույն լճի արևմտյան ափերով ձգվում է Անմանգանի կամ Գեղամա լեռները։ Սևանից հարավ համարյա իրաք զուզանես մինչև Արաքս ձգվում են Պարագանի (Կամ Արցախի) և Զանիգեզուրի (կամ Սյունյաց) լեռները։ Այսնյաց լեռներից դեպի արևմուտք ուղղվում են Քարալագյաղի (կամ Գարփս) լեռները։

Հիշյալ բոլոր լեռները հարուստ են ալպյան արոտատեղերով, վորոնք կարենը նշանակություն ունեն մեր յերկրի անամնապահության համար։ Բայց ավելի են այն դաշտերն ու հովիտները, վորոնք տարածվում են լեռների արանքում և ծածկված են վարելահողերով ու այդիներով։

Անդրելովիկասի սպասնարքերը։ Ամբողջ Փոքր Կովկասը ներկայացնում եւ մի ընդարձակ բարձրավանդակ, գորը՝ այս ու այն կողմը զնացող շղթաներով՝ բաժանվում է առանձին սարահարթերի և հոգիաների։

Թրիալեթի լեռներից դեպի արեմուտք դանվում եւ Ախալցիալանի սարահարթը, զորի միջին բարձրությունն եւ 1700 մետր։ Խոնավ լեռների արենելյան կողմն ընկած եւ Ծալիան, զորը վառողգում եւ Խրամի վերին հոսանքով։

Վրահայոց, Խոնավ և Բզովզալ լեռների միջև տառածգում է Լոռին, զորի միջով հոսում եւ Զորագետը։ Բզովզալից հարավ գտնվում է Փամբակի հովիսը, զորտեղ զանվում են Ղարաքիլիսան, Համամլուն և այլն։ Փամբակի հովտից Զաջուռի լեռնանցքով կարելի յեւ զուրս զալ նիւրակ, զորը Ախուրյանի և Արագածի արանքով տառածգում եւ դեպի հարավ։



Նկ. 33. Արագած,

Ախուրյանից մինչև Գեղամա լեռների ստորոտները և Արագածից մինչև Արաքսը տառածգում եւ Աշարայան



Նկ. 34. Արարատյան գաշտը (հեռվում յերեսում և ձյունապատ Մասիս):

դաւար, վորը ծածկված և խաղողի այգիներով, բաժրակի և բրնձի ցանքսերով և կազմում է Խորհրդային Հայաստանի սիրտը: Այս գաշտում և գտնվում Հայաստանի մայրաքաղաքը՝ Յերեսնը:

Սեանա լճի ափերին տարածվում է Սեվանի բարձրավանդակի, վորը շրջապատված է Հորբավային Սեանի, Ահմանդանի և Շահ-դազ լեռներով:

Սարահարթեր կան և Դարաբազում ու Զանգեզուրում, բայց դրանք կարտված են խոր ձորերով՝ կամ հովիտներով, իսկ այսանդ-այնանեղ բարձրանում են բազմաթիվ հսկած հրառուխներ:

Ա. Ժամատանի. — Կուկասի քարտեզի վրա նշանակեցիք լեռների անունները և ներկեցիք. (Աշխարհ. տետր. աշխ. 38):

Դուք Անդրկովկասի վոր մասումն եք ապրում: Ձեր բնակատեղը (գյուղը կամ քաղաքը) ի՞նչպիսի տեղ և զարնում, արգյուք հարթության վրա և գտնվում, թե լեռնադիմում:

Զեր շըջանում ի՞նչ լիոներ ու հարթոթյուններ կան.
Նրանք ինչպես են կոչվում:

Կատարեցիք 39-րդ աշխատանքը:

Ա. Ելատանիք.—Թագ կավից պատրաստեցիք Անդրկով-
կասի ռելյեֆը և այսպես արեք, զոր ձեր սովորած լեռները,
լիոնագագաթներն ու հարթությունները պարզ յերեան:

Աշաղություն գարձրեք այն հանգամանքի վրա, վոր
բարձրավանդակներն իսկապես բարձր յերեան, իսկ գաշ-
տավայրերը՝ ցածր Գործը հեշտացնելու համար, զիս տախ-
տակի վրա դապրեցիք Անդրկովկասի քարտեզը, ներկեցիք
Աև և կատարեց ծովերը, տուա այդ գծապրի վրա պատրաս-
տեցիք ռելյեֆը:

Ա. Անդրկովկասի կլիման

Անդրկովկասը վոր կլիմական դոտում և գանգում,
ինչպես կարելի յե վորոշել:

Անդրկովկասը մոտավորապես վոր զուգահեռականների
մեջ և գտնվում:

Ասիայի քարտեզի վրա գտեք Յերեանը. նա վոր լայ-
նություն վրա յե գտնվում: Ցույց տվեք այն քաղաքները,
վորոնք մոտավորապես Յերեանի զուգահեռականի վրա յեն
գանգում:

Ինդհանրապես կլիման ինչից և կախված:

Արարատյան գաշտը և Անծովյան գաշտավայրը նույն
կլիման կունենան, ինչնոււ:

Ինչնու Արագածի ստորոտն ու գագաթը նույն կլիման
չունեն:

Ինչու Անդրկովկասի կլիման պետք է բազմազան լինի:

Անդրկովկասի կլիման շատ բազմազան է: Այստեղ
պատահում են մշտագալար անտառներով ծածկված խոնավ
շրջաններ, տափաստաններ, հավերժական ձյունով ծածկ-
ված գագաթներ և այլն: Կլիմայի այդ բազմազանությունը
բացարկում է նրանով, զոր Անդրկովկասի հարավային և
արևելյան կողմը գտնվում են ընդարձակ, չոր յերկրներ,
վորտեղից նա խոնավություն չի ստանամ: Արեմայան
կողմը գովում է Աև ծովը, զորը միացած ե Ասլանտյան

ովկիանոսի հետ: Այս կողմից փշում են խոնակ քամիները, վորոնք վոռոգում են Անդրկովկասի արևմտյան ափերը: Մյուս կողմից՝ Անդրկովկասում ձգվում են բազմաթիվ լեռնաշղթաներ, վորոնք շրջապատում են սարահարթերը և թույլ չեն տալիս, վոր խոնավությունն անցնի այդ սարահարթերի ներսու Յերկի բարձր ու ցածր տեղերը նույնպես սարբեր կլիմա ունեն:

Այդ բազմազան կլիման լավ պատկերացնելու համար, մենք ամբողջ Անդրկովկասը կրաժանենք յերեք մասի՝ Արևմտյան Անդրկովկաս, Արևիկելյան Անդրկովկաս յև Հարավային Անդրկովկաս:

Արևմտյան Անդրկովկասը տարծվում է Սուբարմի լեռներից մինչև Սև ծովը: Նրա մեջ գտնվում են Սևծովյան դաշտավայրը, Աջարիասանը և Արխագիան: Արևելյան Անդրկովկասն սկսվում է Սուբարմի լեռներից և կուր գետի յերկարությամբ հասնում է մինչև Սև ծովը: Հարավային Անդրկովկաս ասելով հասկանում ենք Անդրկովկասի այն բարձրագիր մասը, վորը տարածվում է Ախալցխայի և Թրիալեթի լեռներից դեպի հարավարենք և Ղարաբաղի, Զանգեզուրի վրայով հասնում է մինչև Արաքսի ափերը:

Անդրկովկասի քարտեզի վրա ցույց տվեք Արևելյան, Արևմտյան և Հար. Անդրկովկասը:

Արևմտյան Անդրկովկասն ունի խճանկ կլիմա, Մընոլորտային տեղումները տառատ են և տեղ-տեղ հասնում են մոտ 2500 միլիմետրի (կամ $2\frac{1}{2}$ մետրի): Գտ ցույց եւ տալիս, վոր յեթե անձրեներից ասածացած ջրերը վոչ ծծվեն գետնի մեջ և վոչ ել գոլորշանան, այն գետքում մի տարվա մեջ կծածկվի $2\frac{1}{2}$ մետր խորություն ունեցող ջրի շերտով: Ծովափից դեպի Սուբարմի լեռները մթնոլորտային տեղումները հետղնետե պակասում են. այսպես. Փոմի քաղաքում նրանք կազմում են 1626 միլի-մետր, Ախալի-Անակի քաղաքում՝ 1511, Քութայիսում՝

1374, Շիամթուրում՝ 1002 և Սուրամում՝ 621 միլիմետր տարվա ընթացքում։ Այդ տուատ խոնագության պատճառն այն է, վոր Արևմտյան Անդրկովկասր յերեք կողմից շրջապատված է լեռներով, իսկ Սև ծովի կողմից ըաց է։ Արևմտարից փչող խոնավ քամիներն անարդել մանում են Անձովյան գաշտավայրը և տուատորեն վոռոգում նրան։

Արևմտյան Անդրկովկասի կլիման աչքի յե ընկնում նաև յուր տարությամբ։ Զմեռը բավական մեզմ է, ամենացուրտ ամսվա միջին բարեխառնությունը լինում է $+3^{\circ}$ -ից մինչև $+6^{\circ}$ -ը։ Ամառներն ել շատ շոգ չեն լինում. ամենաստաք ամսվա միջին բարեխառնությունը լինում է 23° մինչև 25° ։

Տաք և խոնավ կլիմայի պատճառով Սև ծովի յեզերքը ծածկված է մշտագույղար բուսականությամբ։ Նարինջը, կիարոսնը, թեյը, բամբուկը կովկասյան արմավենին, մաղնողիան և այլն աճում են բավական հաջող կերպով և ազգաբնակությանը մեծ արդյունք տալիս։

Ավելացնենք և այն, վոր Արևմտյան Անդրկովկասը արհեստական վոռոգման ոռոր կարիք չունի. (ինչո՞ւ):

Այժմ անցնենք Արևմելյան Անդրկովկասին։ Արեեւան Անդրկովկասն ունի չոր-ցամաքային կլիմա, վորովհետև Սուրամի, Ախալցխայի լեռների պատճառով արեմըցան խոնավ քամիները չեն կարողանում շատ գուրը շիներ հասցնել նրան, իսկ Կասպից ծովն այնքան փոքր է և Ասիայի ներսից փչող արևելյան քամիներն այնքան չոր են, վոր Արեեւ. Անդրկովկասը կասպից ծովից շատ քիչ խոնավություն և ստանում։ Բացառություն կազմում է Արևելյան Անդրկովկասի այն փոքր անկյունը, վորը գտնվում է Թալիշի լեռների և Կասպից ծովի միջև։ Այստեղ մթնոլորտային տեղութիւներն առատ են և բուսականությունը ճոփ, ինչպես Արևմտյան Անդրկովկասում։ Յեթե Սուրամի լեռներից կուր զետի հավասվ զնանք զետի կասպից ծովը, այն դեպքում մենք կտեսնենք, վոր մրժ-

Նորորտային տեղումները հետզհետե պակասում են, ինչ-
պես այդ ցուցը և տալիս աղյուսակը:

Առրամ	621	միլիմետր
Թիֆլիս	496	»
Ղարայազ	431	»
Գանձակ	255	»
Բագու	228	»

Միջին հաշվով կարելի յէ բնդունել, վոր Արևելյան
Անդրկովկասի գաշտավայրերում տարվա ընթացքում թափ-
վում են 180—300 միլիմետր տեղումներ, իսկ Արևելյան
Անդրկովկասի այն բարձրավանդակներում, վորոնք փրա-
փում են կովկասյան լեռնաշղթայի և վորք կովկասի ստո-
րոտներում, այդ տեղումները հասնում են մինչև 400—500
միլիմետրի:

Արևելյան Անդրկովկասում ամառը սասաիկ շոգ և լի-
նում. գաշտավայրում ամենաստաք ամսվա միջին բարե-
խանությունը 25° -ից անցնում է: Զմեռը համեմատա-
բար մեզմ և, ամենացուրտ ամսվա միջին բարեխանութ-
յունը լինում է 0° — 2° , յերեմն ել պակաս Զյունը
զալիս և կարճ ժամանակով և խոր շերտով չի նստում,
այդ պատճառով մեծ քանակությամբ անստուններ արա-
ծում են այդ ընդարձակ տափաստաններում: Գարնան
սկզբներին այդ տափաստանները կանաչում են, բագմա-
թիվ թռչուններ իրենց յերզով կենդանություն են տալիս
նրանց և անստունների բազմաթիվ հոսերը առատ որ-
նունդ են ճարում: Բայց ահա զալիս և ամառը, սկսվում
են յերկարատե յերաշններ, վորից զաշտերի խոտը խանձ-
գում և: Քոչվորը յուր անստունները շտալում և գեսլի
հով սարերը քշել, թռչուններից շատերը քաշվում են զե-
տափերը, վորուեղ նրանք յեղեղնուափ մեջ պաշտպանվում
են արեի կիզող ճառագայթներից: Պարզ և, վոր այսպիսի
չոր յերկրում յերկրագործությունն առանց արհեստական

վուոզման արդյունք չի տա: Այդ եւ պատճառը, վոր բնակիչները զլսավորապես գետափերին են ապրում և արհեստական ջրանցքների միջոցով վուոզում են իրենց գաշտերն ու այգիները:

Հարավային Անդրկովկասի կլիման ցամաքային է: Առոք ցամաքային կլիմա ունեն մանավանդ այն սարահարթերը, վորոնք տարածվում են Ախալցխայի լեռներից մինչև Արագածը: Ամառը համեմատարար տաք է, հույսի մը ջին բարեխառնությունը կազմում է $16 - 19^{\circ}$, բայց ձմեռը խիստ է, հունվարի միջին բարեխառնությունն է $-10 - 17^{\circ}$: Գեկտեմբերից մինչև մարտ յերբեմն այնպիսի սառնամանիքներ են լինում, վոր բարեխառնությունն իջնում է -30° -ից ել ցած: Այսպիսով բարեխառնության տատանումները տարվա ընթացքում բավական մեծ են: Գետինը ծածկվում է ձյունի հասա շերտով, վորը հաղում է միայն գարնանը: Մթնոլորտային աեղումները հասնում են $300 - 700$ միլիմետրի, բայց Ախալցխայի լեռներից գեղի Արագած նրանք հետզհետե քշանում են, այնպես վոր Ախալքալաքի, Ծալկայի և Լոռու սարահարթերում այդ տեղումները կազմում են մոտ $500 - 700$ միլիմետր, իսկ Շիրակում՝ $300 - 500$: Այդ եւ պատճառը, վոր Շիրակը արհեստական վուոզման կարիք և զգում:

Հարավային Անդրկովկասի ամենաչոր մասը Արարատական դաշտն է: Զմեռվա ընթացքում շրջապատող բարձր սարահարթերից սաստիկ ցուրտ ողն իջնում է գեղի Արարատյան գաշտը և իջեցնում նրա բարեխառնությունը: Այդ պատճառով նա ունի շատ դաժան ձմեռ: Հունվարի միջին բարեխառնությունը մոտ -6° է: Ամառը շատ շոգ է լինում: հուլիսի միջին բարեխառնությունը 25° -ից անցնում է: Ցերեանում պատճանել է հուլիսին $36,7^{\circ}$, իսկ հունվարին՝ $-26,7^{\circ}$: Բարեխառնության տարեկան այս մեծ տատանումների պատճառը ողի չորությունն է: Շրջապատված լինելով բարձր լեռներով և սարահարթերով,

Արարատյան գաշտը չի կարողանում քիչ թե շատ խոչնավություն ստանալ փոչ Առ և վոչ ել Կասպից ծովից: Այդ պատճառով մթնոլորային տեղումներն այստեղ շատ քիչ են (150—300 միլիմետր տարվա ընթացքում):

Ոգի չորությունը, յերկարատե յերաշաները, խիստ ձմեռները, բարեխառնության որական մեծ տատանումները և ազուտ հողերը բռնականության աճման համար շատ անսպաս են, և յեթե չլինեցին դետերն ու բազմաթիվ արհեստական առուները, Արարատյան գաշտը կոտարյալ անապատ կլիներ: Դաշտում ցրված բազմաթիվ գյուղերը շրջապատված են այդիներով, վարելահողերով և բանջարանոցներով, վորոնց ջրելու համար Արաքսից և նրա վտակներից բազմաթիվ ջրանցքներ են անցնում: Մեծ հաջողությամբ մշակում են ցորեն, խաղող, բամբակ, բրինձ, ծխախոտ և այլն:

Արհեստական վոռովումը Արարատյան գաշտին կլանիք և տալիս, այդ պատճառով Խ. իշխանությունը աշխատում է հին ջրանցքները՝ նորոգել, կարգի դցել, և բացի այդ՝ վարելահողերը շատացնելու համար նաև անց և կացնում նորերը:

Զանդեգուրի, Անանի և Դարաբաղի բարձրավանդակներն աշքի յեն ընկնում իրենց համեմատաբար ցուրտ ամառներով և մեղմ ձմեռներով: Մթնոլորային տեղումների քանակը համեմում է 500—600 միլիմետրի: Այն ժամանակ, յերբ Արարատյան գաշտում ամառվա շողերից խոտը խանձվում է և անասունները դժվարությամբ են սնունդ ճարում, սարահարթերում փոփում են գեղեցիկ արտատեղեր, վորոնք հուլիսին անգամ կանաչ են լինում և կերակրում քոչվորների բազմաթիվ անսառններին:

Անդրկովկասը քանի մասի յենք բաժանում: Այդ մասերից վարի կլիման ավելի խոնաց և, ինչու:

Նկարագրեցեր Հարավային Անդրկովկասի կլիման: Ենչու Արարատյան գաշտի կլիման չոր և:

Վարոշեցեք ձեր տեղի հունվար և հուլիս ամիսների
միջին բարեխառնությունը:

Մթնոլորտացին տեղումները վճրքան են: Յերաշա-
ներ լինում են Ձեզնում արհեստական վոստով կա, թե
գոչ: Զրանցքները վարտեղից են անցկացրված:

Ջրուր քանի ամսով և նստում Ձմեռացին արտա-
տեղեր կան ձեր շրջանում:

Մասախուզներ և ամպամած որեր հաճախ են լինում:
Ձեր տեղի կլիման ցամաքացին ե, թե ծովացին:

Կատարեցեք աշխարհ: տեսրի 39-րդ աշխատանքը:

Անգրկովկասի գետերը լիկ թերը

Անգրկովկասի բարտեղի վրա ցույց տվեք ամբողջ Ա-
րաքսը, սկսած ակունքից մինչև զետարերանը: Նա վճրտե-
ղից և սկսվում և ուր և թափվում:

Գետի վոր ամին և համարիւմ աջ և վորը՝ ձախ: Ա-
խուրյանը և Զանգին Արաքսի վոր վտակներն են—աջա-
կողմյան, թե ձախակողմյան:

Գետեք Արտանը և Կուրը: Ցույց տվեք նրանց ակունքն
ու գետարերանը:

Գետերն ազգաբնակության համար բնչ նշանակու-
թյուն ունեն:

Ձեր շրջանում գետ կա: Անունն ինչ և՝ նու վճր-
տեղից և սկսվում և ուր և թափվում:

Այդ գետից բնչ սպուտներ եք ստանում:

Անգրկովկասի գետերի մի մասը թափվում է Ակ-
ծովը, իսկ մյուս մասը՝ Կասպից ծովը: Աև ծովյան գե-
տերն ընդհանրապես կարծ են և մեծ մասամբ սկսվում
են Կովկասյան լեռնաշղթայի հավերժական ձյունից ու
սացագաշակերից: Ահազին բարձրությունից գահավիժվե-
լով դեպի ցած, նրանք մեծ ուժով քանդում են իրենց
հունը և զորացնում բազմաթիվ ջրվեժներ: Իրենց վերին
և միջին հոսանքներում նրանք հոսում են անսառապատ,
նեղ կիրճերի միջով, սառըին հոսանքում դանդաղում Են

և բերած ավագն ու խճաքարը նստում է հատակին ու ծանծաղուաներ զոյացնում: Գարնանը, յերբ սարերի ձյունն սկսում է արագորեն հալվել, այդ գետերը վարարում են և կատաղորեն ցած հոսելով, զլորում են հոկայական քարեր, ծառեր արմատախիլ անում և շատ անգամ ավերում ճանապարհներն ու կամուրջները:

Սև ծովյան գետերն առանձմին նշանակություն չունեն, քանի վոր նրանք (բացի Ռիոնի ստորին հոսանքից) մեծ մասամբ լեռնային են և հոսում են այնպիսի յերկրում, վորը վոռողման կարիք չունի: Նրանցից մի քանիսի վրայով փոխադրվում են գերաններ, իսկ Ռիոնի ստորին հոսանքը նավագնաց եւ:

Դեպի Սև ծովը հոսում են Բզիրք, Կողոր, Ինգուր, Ռիոնի և Ճորոխ:

Դրանցից ամենամեծը Ռիոնն է (297 կիլոմետր), վորը սկսվում է Կովկասյան լեռների Փասիս-Արա զազաթի սառցագաշտերից: Յուր վերին հոսանքում նաև արագնաթաց է, կատաղորեն ճեղքում և կիրճեր ու հովիտներ, իսկ Քութայիսից հետո նաև մասնում է Սև ծովյան դաշտավայրը և ուսում է դանդաղորեն, առանց շտապելու հոսել գեղի Սև ծովը: Մաշելով յուր հունը, Ռիոնը տառնում է գեղի ծով մեծ քանակությամբ տիզմ, վորը նըստում է գետաբերանում և զոյացնում ցամաք: Ռիոնի գերտան ամեն տարի ծովի մեջ առաջ և գնում 6—10 մետր: Այժմ Ռիոնի վրա կառուցվում է խոշոր Ելեկտրակայարան:

Ռիոնի վտակներից նշանավոր են աջ կողմից Յիսենիս ծղալին, իսկ ձախ կողմից՝ Կվիրիլլ:

Կովկասյան լեռների հավերժական ձյունից ու սառցագաշտերից են սկսվում նաև Բզիրք, Կողոր յել Ինգուրը: Յերեքն ել հոսում են անտառապատ կիրճերով, արագահոս են և միայն ծովի գերբին նրանք վորը տարածություն անցնում են դաշտավայրի միջով: Դրանցից առ-

մենամեծը Խսդուրն է (198 կիլոմետր), խոկ ամենակառապին—Կողորդ:

Ճորոխի սկզբում և Թյուրքիայում և Բաշումի մոտ թափվում է Սև ծովը: Բայց նրա ամբողջ ընթացքի մի փոքր մասն և պատկանում Անդրկովկասին: Նրա գտակ-ներից նշանավոր է Աջարիս-ծղալին, վորը յուր ամբողջ ընթացքով գտնվում է Անդրկովկասում: Աջարիս-ծղալիի վրա կառուցվում է ելեկտրակայարան, վորը ծառայելու յէ Աջարիայի պետքերի համար:

Կասպից ծովը թափվող գետերից նշանավոր են Կուրը և Արաքսը: Յերկուսն ել հոսում են բարձրավանդակների և դաշտավայրերի վրայով և այնպես արագահոս չեն, ինչպես լեռնային գետերը: Ակսվելով բարձր սարահարթերում նրանք մի սարահարթից իջնում են մյուսը և վերջապես՝ ազատվելով գտնազան կիրճերից ու քարքարոս հունից՝ մանում են հարթավայրը, վորտեղ նրանց արագությունը նվազում է և ըերած ավագն ու տիզմը հոսում են գետի հասակին:

Կուրը և Արաքսը կարենու նշանակություն ունեն ազգաբնակության համար: Նրանց վրա կառուցված են խոշշոր ելեկտրական կայարաններ (Զագեսը — Թիֆլիսում, Յերևանի կայարանը՝ Զանգիլի վրա), վորոնք վոչ միայն լույս են տալիս, այլ և աշխատեցնում են գործարանների մեքենաները, շարժում են ելեկտր. վագոնները և այլն: Նրանցից բնակիչներն անց են կացրել բազմաթիվ ջրանցքներ, վորոնցով ջրում են իրենց այդիներն ու վարելահոգերը: Մասնավորապես Կուր գետի վրայով Ախալցխայից և Բորդոմից փոխադրում են թիֆլիս մնձ քանակությամբ գերաններ:

Կուրն Անդրկովկասի ամենամեծ գետն է, նրա յերկարությունը հավասար է մոտ 1113 կիլոմետրի: Նա սկզբում և Զարիշատի լեռների ստորոտներից (Թյուրքիայում, Կարսի մոտ) և բարձրավանդակների վրայով հոսում է գեղի հյուսիսի: Ախալցխա-

յից հետո նա ծռվում և գեղի հյուսիս արևելք և մտնում Բորժոմի կիրճը, վորի մի կողմը բարձրանում են Թրթիւնեթի, իսկ մյուս կողմը՝ Ախալցխայի լեռները:

Բորժոմի կիրճից հետո նա թեքվում և գեղի հարավ-արեւելք և անցնելով Գորու և Մուխարանի հարթությունները, Թիֆլիսի մոտ մտնում և հարթությունների շրջանը: Թիֆլիսից մինչև Կասպից ծովը նա հոսում և զատավայրերի միջով, այդ պատճառով նրա հոսանքն այսուհետ զանդաղում է: Զհասած ծովին, Կուրը բաժանվում և յերկու ճյուղի, վորոնցից մեկը կոչվում և Ակուսա, իսկ մյուսը՝ Գլխափոր: Ակուչան թափում և Դզբ-Ազաջի ծովը, Կուրի գեղատան ծածկված և ընդարձակ ճահճաներով և ամեն տարի յերկարում և 60 մետր:

Աջ ու ձախ կողմից Կուրն ընդունում և բազմաթիվ վտակներ, վորոնք սկսվում են Կովկասյան լեռներից կամ փոքր Կովկասից: Զախակողմյան վտակներից նշանավոր են՝ Լյախվան (վոռոգում և Գորու հարթությունը), Քսանիր, (վոռոգում և Մուխարանի հարթությունը), Ալազանը Յորա վասկով (Կախիթիայում): Աջակողմյան վտակներից աչքի յեն ընկնում Ալգերը, Խրամը, (Բորչալու կամ Դիբեկ վտակով), Ազսելիը, Ջեղամը, Շամինը, Թարգարարը, Խաչենը և այլն:

Խրամին սկսվում և Թրթիւնեթի լեռներում, Ցիրա-Ծղարս լեռնանցքի մոտ՝ Շալիայի հարթությունն անցնելուց հետո նա մտնում և մի յերկար կիրճ, վորը հասնում և մինչև Առըխլու գյուղը: Առըխլի մոտ նա ազատվում և կիրճից և հոսում և Բորչալիի հարթության վրայով, ապա աջ կողմից ընդունելով Բորչալու գետը՝ թափվում և Կուրի մեջ: Բորչալուն իր ամքողջ յերկարությամբ մի քանի տունն ունի Զաջուրի լեռնանցքից մինչև Ղարաբիլիսա կոչվում և Փաբրալի գետ, Ղարաբիլիսից մինչև Բորչալիի հարթությունը՝ Ոթքեղ, իսկ Բորչալիի հարթության մեջ նա ստանում և Բարչալու անունը՝ Զորագետի վրա կառուցվում և խոշոր ելեկտրական կայարան, վորը Խոր: Հայաստանի համար կարևոր նշանակություն և ունենալու: Նա կլուսավորի Զորագետի շրջանը, եներգիս կտա Ալլահվերդու պղնձահանքերին ու գործարաններին, յերկաթուղուն: Նրա ոգնությամբ կպատրաստվեն պարարտանյութեր վարելահողերի համար և այլն:

Անզրկովկասի յերկրորդ մեծ գետը Արաքսն և՝ Նոսկամի մոտ և Թյուրքիայում, Բյուրակնյան լեռներից: Կա-

զրգվանի կիրճով անցնելուց հետո նա ձախ կողմից ընդունում և Այսուցանը և մտնում և Արարատյան գաշտը Այսուեղ նրա մեջ թափվում են Քառախոր և Զանգին, վորոնց ջրերը վոռողում են բազմաթիվ այգիներ ու վարելանողեր։ Զանգվի վրա կառուցված և Յերևանի ելեկտրական կայարանը Զանգվից յետո մինչև Նախիջեանը Արաքսը հոսում և լայն հովտով և ձախ կողմից ընդունում և Գառնի, Վելի և Արեվիլյան Արփաչայ վտակները, վորոնցից անց են կացրված բազմաթիվ ջրանցքներ։

Դուլֆայից հետո Արաքսի հովտով բարձական նեղանում է Այսուեղ նրա մեջ թափվում են Չափընուց Բարզուատ յել Հակիլյար (Հակարտ) գետերը, Վերջին յերկուսը միանալով իրար հետ խառնվում են Արաքսին։ Բարզուշատի վերին հոսանքը կոչվում է Բազար-չայ կամ Վորոնի։ Քիչ հետո Արաքսը մտնում և Մերձկասպյան գաշտավայրը և հոսելով Մուղանի գաշտով թափվում և Կասպից ծովը։ Մինչև 1894 թվականը Արաքսը թափվում էր Կուրի մեջ, բայց այդ թվականին, գարնան հեղեղումների ժամանակ, նա քանդեց յուր աջ ափը և ջրերի մի մասը ուղղեց նոր հունավ գետի հարավ Ղղու Աղաջի ծոցը։ Արաքսի յերկարությունը մոտ 914 կիլոմետր է, վորի մեծ մասը գտնվում է Անդրկովկասի սահմաններում։

Ի՞նչո՞ւ Կասպից ծովը թափվող գետերը գարնանը վարպում են։

Անդրկովկասի վար մասերի համար գետերը կարեոր աշանակություն ունեն։

Բացի վոռողումից Անդրկովկասի ընակիչների համար այդ գետերն ել ի՞նչ նշանակություն ունեն։

Աօխատանի։—Անդրկովկասի համբ քարտեղի վրա նշանակեցեք գլխավոր գետերը և իրենց վտակները. (Աշխարհ, տհար, աշխ. 40)։

Անդրկովկասի լճերից ամենամեծը և ամենագեղեցիկը Անդր լիճն է, վորը ծովի մակերեսութից 1925 մետր

բարձր եւ նրա յերկարությունը հավասար է մոտ 72 կի-
լոմետրի, լայնությունը՝ 37 կիլոմետրի, խորությունը՝
103 մետրի և ամբողջ մակարդակը հաշվում էս 1370
քառ. կիլոմետր:

Սևանա լիճը Խոր. Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունի: Նա հարուստ և զանազան ձկներով, վրոնց մեջ իշխանն ու գեղարքունիքն իրենց համով հրաշակված են ամբողջ Անդրկովկասում: Այժմ այդ ձկների թվին ավելացավ և սիզը, վորը բերված և Լաղողա և Չուղ լճերից: 1924 թ. գարնանը Սևանա լիճն և ածված մեկ միլիոն հարյուր հազար հատ սիզ, 1925 թ.—5 միլիոն: Միզը Սևանա լճի մեջ բավական հաջող կերպով բազմանում է:

Սեանսա լճի ջուրը անուշ և, վորովհետեւ նրանից սկիզբն և առնում Զանգին վորքան աղ գետակները թափում են Սեանի մեջ, այսքան և Զանգին հեռացնում եւ

Անուշ ջրեր ունեն նաև Ախալքալաքի լճերը, որինակ Փարվանա լիճը, Խանչալիի լիճը և այլն. Թէ Սևանա լիճը և թէ Ախալքալաքի լճերի մեծ մասը լավային պատվար-ներից են առաջացել. Մոտակա լեռներից վիժած լավան կարել և հովիաը և, պատվարի պես բոնելով ջրի առաջը, գոյացրել և լիճ:

Անդրկովկասում կան և աղի լճեր, Այդպիսի լճերից
վոչ մի գետակ սկիզբ չի առնում: Գետերը՝ թափվելով
լճի մեջ՝ իրենց հետ ըերում են զանազան աղեր, բայց
յերբ լճի ջուրը գոլորշիանում ե, այն գեղքում աղը մնում
է լճի մեջ և զրանից նա հետպհետեւ զառնում է աղի:
Այդպիսի աղի լճեր կան Թիֆլիսի շրջակայում, Արևելյան
Անդրկովկասի գաշտավայրում և այլն:

Ձեր շրջանում լիձ կա: Նրա ջուրը աղի՞ց յէ, թէ անուշ-
Այդ լճի ջուրը վնրտեղից և հավաքվում: Նրա մակե-
րեսույթը տարվա յեղանակների համեմատ փոխվում է:
Ի՞նչ կենդանիներ ու բույներ կան նրա մեջ:

Անդրելովկասի Խնչովիս տեսանք, Անդրելովկասի կլի-
րուսականու ման փոխվում է վոչ միայն արևմուտքից
բյունը դեպի արևելք, այլ և այն դեպքում, յերբ
շածրաղիր հոգիաներից ու դաշտավայրիրից սկսում ենք
բարձրանալ սարերի գազաթները: Պարզ է, վոր Սև ծովի
խոնավ և տաք յեղերքները, Արևելյան Անդրելովկասի
չոր հարթությունները և հայկական լեռնաշխարհի բարձ-
րաղիր լեռնալանջերը նույն բուսականությունը չեն
ունենաւ:

Արևմտյան Անդրելովկասը ճոխ բուսականություն ունի
Ենթարձակ տարածություններ ծածկված են փարթամ ան-
տառներով, վորոնց մեջ պատահում են թե սաղարթավոր
և թե մշապալար ծառեր: Մշտագարար բույսերից հայտնի
յեն կոմիտայան արմավենին կամ աամելիք, մրտենին, գտփ-
նին և այլն, իսկ սաղարթավոր բույսերից — կաղնին,
հաճարին, հացին, լորենին, շագանակենին և այլն:
Առանձնապես աչքի յեն ընկնում իրենց ճոխությամբ Սև
ծովի յեղերացին անտառները: Տաք և խոնավ կլիմայի
սրամառուց ծառերն այսուեղ հսկայական մեծության են
համառում: Հաղարավոր պատառուիներ փաթաթվում են
ծառերին և անցնելով մի ծառից մյուսը, դարձնում են
այդ անտառները զժվար անցանելի: Քրանց ավելանում է
և խաղողի վորթը, վորի բարձրությունը յերբեմն համառում
է 10—12 մետրի: Արա ճյուղերը խճճվում են բարձր
ծառերի ճյուղերի հետ և կազմում խխտ ցանց: Բազմո-
պան են և այդիների ծառերը Բացի խնձորենուց, տան-
ձենուց, ծիրանից, սերկելից, նշինուց և խաղողից, այս-
տեղ աճում են նաև դեղձ և ձիթենի: Բավական հաջող
աճում են և ոտար յերկրներից բերած հետեւյալ բույսերը՝
թեյր, նարինջը, կիտրոնը, ծխախոտը, բանանը, բամբուկը,
մազնովիան և այլն:

Ծովափից վորքը ինչ բարձր՝ անտառները քչանում են

իրենց տեսակներով. այլիս չեն պատճում պատաստուկներ և խաղողի վորթ։ Բայց հաճարին, վորը սիրում է խոնավ և բարձր տեղեր, հսկայական չափերի յև հասնում է համարյա զուրս և մզում ծառերի մյուս տեսակները. ընդարձակ տարածություններ ծածկված են հաճարի անտառներով։ Ավելի բարձր կորչում են սաղարթավոր ծառերը և սկզբում են տարածվել վշտաների անտառներ, վորոնց վերին յեղերքներին պատճում են ցածրիկ կեչիներ, կազմամախի, հաճարի և այլն։ Այստեղից գեղի վեց փուլում են արդյան մարդագետինները։

Արեվելյան Անդրկովկասը բուսականությամբ աղքատ եւ կիմայի չորության պատճառով անտառներն այստեղ ընդարձակ տարածություններ չեն բռնում. յեղածներն եւ կենտրոնացած են զիսավորապես կովկասյան լեռնաշղթայի և Հայկական լեռնաշխարհի այն լանջերում, վորոնք գարձած են գեղի կուր և Արաքս գետերի գաշտավայրը։ Այսպիսով այդ անտառները կիսաողակի պես յերեք կողմից շրջապատում են Արևելյան Անդրկովկասի տափաստանները։

Սուրամի լեռներից գեղի արեելը հեռանալիս, մենք տեսնում ենք, վոր հետզհետե անհետանում են մի շարք խոնավություն սիրող ծառեր ու թփեր, իսկ զրանց փոխարեն յերեան են զալիս այնպիսինները, վորոնք կարողանում են չոր կլիման տանել Այսպես, որինակ, Սուրամի լեռներից գեղի արեելք կորչում են մշտագալարթփերը և պատաստուկները, սամշխար, շաղանակենին, ձեղիկան և այլն, իսկ զրանց փոխարեն մեծ չափով տարածվում են արեելյան կաղնին, գիհին և թխկին։ Բացի այդ ծառերից Արևելյան Անդրկովկասում պատճում են ընկուզենի, նոենի, թզենի, ալանի, ցաքի, մամիսի, ոզնի, զկոփի, բոխի, լոբենի, հացի և այլն։

Անտառային դոսուց ցած, թիֆլիսից մինչև Կասպից

ծովը կուր գետի յերկարությամբ փռվում են ընդարձակ տափաստաններ, վորոնց մեծ մասը անջուր ե և անտարդարնակ Միայն կուրի և Արաքսի ու Նրանց մի քանի ժամակների յերկարությամբ ձգվում են մի շարք զյուղեր, վորոնք շրջապատված են թթենու և խաղողի այգիներով, ցորենի և բամբակի ցանքսերով և այլն։ Գետերի յերկարությամբ ձգվում են յեղեգնուաններ և անտառի նեղ շերտեր, վորոնք բաղկացած են թեղի, ուռենի, թթենի և բարդի ծառերից։ Գետերից հեռու բուսականությունն աղքատանում ե, տեղանու պատահում են ուղտի խոտ, իշավարունգ, վշշեր և այլ չորասեր բույսեր։ Ամառային յերաշաններից կյանքը մեռնում է տափաստաններում, խոտը խանձվում է և քոչվորն իր անտառններով բարձրանում է զով սարերը։ Գարնան և աշնան անձրեններից տափաստանը ծածկվում է թարմ կանաչով, վորը այնքան ավելի փարթամ և լինում, վորքան ավելի մոտ և լեռներին։ Աշնանը քոչվորներն իջնում են սարերից և ամբողջ ձմեռն անցկացնում այդ տափաստաններում։ Այսպիսով Արևելյան Անդրկովկասի չոր տափաստանները բավական հարմար ձևուալոցներ են անտառնների համար։

Հարավային Անդրկովկասը անտառներով աղքատ է։ Անտառները այստեղ պատահում են տեղանու միայն և ընդարձակ տարածություններ չեն ծածկում։ Դրանց փոխարեն մեծ չափերի յեն հասնում տափաստանները, վորոնցից ամենաչորը Արարատյան դաշտն է։ Սա յուր բուսականությամբ հիշեցնում է իրանի և Անդրկասպյան յերկորի չոր տափաստանները։ Այստեղ աճում են ուղտի խոտ, խրփուկ, յովշան և այլ չորասեր բույսեր։ Ամառը գետերից ու վոռոգվող տեղերից հեռու դաշտի խոտը խանձվում է, բայց աշնան անձրեններից կրկին կանաչում ե և ձմեռելու համար մեծ քանակությամբ անտառներ գրավում։

Ավելի հարուստ բուսականություն ունին ալպյան մարգագիտինիները, վորոնք զանգում են ծովի մակերեսութից 2000-ից մինչև 2700 մետր բարձրության վրա և լնդարձակ տարածություններ են բռնում: Նրանք սկսվում են անտառների վերին սահմանից և տարածվում մինչև հավերժական ձյան սահմանը: Ստորին մասում այդ մարգագետինների խոտը խիտ և բարձր, բնակիչները հարում են այդ խոտը և ձմեռը, յերբ դաշտերը ծածկվում են ձյանով, որանով կերակրում իրենց անասուններին: Վորքան ավելի ենք բարձրանում ծովի մակերեսութից, այնքան ավելի կարձանում և մարգագետինների խոտը և նոսրանում: Դաշտային բնակիչների մի մասը յուր անասունները ամրող ամառվա բնիմացքում պահում և ալպյան արոտաեղերում և միայն աշնանը, յերբ սարերում սկսում են ձյուն դալ և ձմեռանոցների խոտն էշ կանաչում և, սարվորներն իջնում են ցած:

Սրե ելյան Անդրկովկասը և Արարատյան դաշտը հարուստ են զանազան պատրաստ ծառերով: Կախիթի, Գանձակի և Յերևանի խաղողը, Ախոլյանյի և Գորու ինձորն ու տանձր, Յերևանի գեղձն ու գուգման, հոչակված են ամրող Անդրկովկասում: Բացի դրանից այստեղ մշակվում են այնպիսի թանգարժեք բույս, ինչպիսին բամբակն է:

Բացի պաղատու ծառերից ամրող Անդրկովկասում տարածված են նաև զանազան հացահատիկներ — ցորեն, զարի, բրինձ, յեղիպատացորեն, կորեկ և այլն: Յեղիպատացորենը մշակվում է զլլամափորապես արևմտյան Անդրկովկասում, իսկ ցորենը և զարին՝ Արեւլյան և Հար: Անդրքի կովկասում:

Բուսականությամբ Անդրկովկասի վճռ մասերն են հարուստ և վճռ մասերը աղքատ: Բացատրեցեք պատճառները: Ինչո՞ւ Արեւմտյան Անդրկովկասում մշտադալար բռյուներ ու պատառուկներ պատճառում են, իսկ Հայկական լեռնաշխարհում՝ վոչ:

Անտառաները Արևելյան Անդրկովկասի վրա ժամելում
են տարածված:

Բնչութեա Արարատյան դաշտը և Մերձկասպյան դաշտավայրը անտառագույք են:

Յեմի կուր գետի դաշտավայրից բարձրանալու լինեք
Արագածի գագաթը, այն գեղքում Բնչ բռնսկան զստինե-
րի կհանդիպեք:

Հիշեցեք Անգրկովկասի մշակովի բույսերը:

Զեր շրջանում անտառ կմ. թիվ՝ ծառերից և նստազգություն:

Զեր շըջաններում արտատեղեր կան. Բնչ խոտաբույ-
սեր են աճում այնտեղ:

Ամառն այդ տրոտառեղերը չորանում էն: Զմեսը ա-
նասունները ինչո՞ւ են կերպակրում:

Խաչ բույսեր են մշակում ձեզնում. դրանցից վարն և կարենը բնակիինքների համար:

Զեր շրջանի բույսերից կազմեցեք հավաքածու (հեր-
թարիում), այդ մասին ցուցմունքներ ստացեք ձեր ուսուց-
չից:

Անդրեասիկան
ազգաբնակու-
թյունը

Անդրբկովիասի ազգաբնակությունը
բազմազան է: Այստեղ ապրում
են 29 ցեղեր: Դրանք են՝ Տեղական

Են ապրեկը յեզուներով։ Դրանց մեջ իրենց թվով առաջին տեղը բռնուում են վրացիները, հայերը և Աղքաղինի թուրքերը։ Հենց այդ յերեք ազգություններն ել կազմել են անկախ հանրապետություններ։ Մնացած ազգություններից աչքի յեն ընկնուում ուսուները, ոսերը, պարսիկները, արխազները, քառորդերը, թաթերը և այլն։

Անդրեասիամի ազգաբնակչության ցեղակին կողմից:

Դրամակիներ	1,799,000
Համբարձում	1,340,000
Թուրքակիներ	1,685,000
Բնակչութեան	336,000

Ոսկը	114.000
Դազոտանցիներ (լեզգիներ, ավար- ներ և այլն)	79.000
Թալիչցիներ	78.000
Մնացած ազգություններ (Հույներ, բուրգեր, արխազներ, հրեա- ներ, թաթեր, պարսիկներ և այլն)	431.000
	<u>մոտ 5.862.000</u>

Անդրկովկասի ազգաբնակության մեջ յուր թվով ա-
ռաջին տեղը զի՞ր ազգն է բննում:

Հայերը վճրերորդ տեղն են բննում:

ԱՅՀատամիք.—Գծեցիք մի այնպիսի դիազրամ, վոր
ցույց տա Անդրկովկասի ազգությունների համեմատական
մեծությունը. (Աշխարհ, տետր, աշխ. 41):

Անդրկովկասի ամբողջ ազգությանակությունը 5.861.529
շնչից է բաղկացած: Բայց նրանք հավասարապես չեն տա-
րածված: Սեծովյան դաշտավայրը յուր խոնավ կլիմայից
և արգավանդ հողի պատճառով բավական խիտ է քնակ-
ված, իսկ Մերձկասպյան շոր տափաստանները, ընդհակա-
ռակը, բավական քիչ ազգաբնակություն ունեն: Ազգա-
բնակության խոտության մասին գաղափար կազմելու հա-
մար, սովորաբար ամբողջ ազգաբնակության թիվը բաժա-
նում են յերկրի մակարդակի վրա և վորոշում, թե յուրա-
քանչյուր քառակուսի կիլոմետրի վրա միջին հաշվով քա-
նի մարդ է ապրում: Անդրկովկասի մակարդակը 185.457
քառակուսի կիլոմետր է, իսկ ազգաբնակությունն, ինչ-
պես ասացինք, 5.861.529 մարդուց է բաղկացած: Ցեթե
5.861.529-ը բաժաննենք 185.457 քառ. կիլոմետրով, կը ս-
տանանք մոտ 32: Աւքեմն Անդրկովկասում ամեն մի քառ.
կիլոմետր տարածության ընկնում է 32 մարդ:

Անդրկովկասի բնակիչներն ապրում են զյուղերում և
քաղաքներում: Գյուղերում նրանք պարապում են յերկ-

բազործությամբ, անտանապահությամբ, այգեզործությամբ և այն, իսկ քաղաքներում՝ առևտով, արհեստներով, արդյունագործությամբ և այն 5.861.529 հոգուց մոտ 4.482.000-ը կամ $76,5^{\circ}/_0$ -ն ապրում ե զյուզում, իսկ 1.380.000-ը կամ $23,5^{\circ}/_0$ -ը քաղաքներում։ Դա ցույց է տալիս, վոր զյուզանակառությունը մեր յերկրի ազգաբնակության համար շատ մեծ նշանակություն ունի։ Այդ պատճառով Անդրկովկասը համարվում է զյուզանակառական յերկիր։ Ամբողջ Խորհրդ, Միությունը նույնպես զյուզատքնական յերկիր է։ Կան և այնպիսի յերկրներ, վորտեղ ազգաբնակության մեծ մասն ապրում ե քաղաքներում և պարագում ե արդյունագործությամբ և առևտով, իսկ վորք մասք՝ զյուզերում։ այսպիսի յերկիրը կոչվում է արդյունագործական յերկիր, որինակ՝ Անդրկան, Բերգիսն և այն։

**Անդրկովկասի
փառական բա-
նանումը:** Անդրասակետություններից.
Ճանաչումը: 1. Հայաստանի Սոցիալիստական
Խորհրդային Հանրապետություն։

2. Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հան-
րապետություն։

3. Ադրբեյջանի Սոցիալիստական Խորհրդային Հան-
րապետություն։

Այս յերեք հանրապետությունները միանալով իրար
հետ կազմել են Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդե-
րատիվ Խորհրդային Հանրապետությունը, վորը յուր հեր-
թին մանում և ԽՍՀ Միության մեջ։

Վրաստանի Սոց. Խորհրդ, Հանրապետության մեջ, բա-
ցի բուն Վրաստանից, մանում են նաև Աբխազիայի,
Աջարստանի հանրապետությունները և Հարավային Ռու-

րիայի ինքնավար շշամբը խև Ադրբեյջանի Ա. Խ. Հանրապետության մասնակի Պարագաղի ինքնավար շշամբը յև Նախիչևնանի Ա. Խ. Հանրապետությանը:

Ամբողջ Անդրկովկասի Ա. Խ. Խ. Հանրապետության ժայռաքաղաքը Թիֆլիսի և, զորք միհնույն ժամանակի Խորհրդ, Վրաստանի կենտրոնն և:

Անդրկովկասի Ա. Խ. Խ. Հանրապետության մեջ մասն հանրապետությունների մակերեսույթի մեծությունը յև բնակչությունը:

Մակարդակի մեջությունը բառակուսի կիրամետոց	Բնակչությունը թիվը	Վարչական կենտրոնը (ժայռաքաղաքը)
I. Վաստանի Ա. Խ. Հ. դրա մեջ	69525	2666000 Թիֆլիս
ա. Արխագիտայի Ա. Խ. Հ.	8254	199000 Սուխում
բ. Աջարստանի ինքն. Ա. Խ. Հ. .	2912	129000 Բաթում
գ. Հար. Ռուբելիայի ինքն. շրջան . .	3911	87000 Յիխնվալ
II. Հարաստանի Ա. Խ. Հ.	29964	886000 Յերևան
III. Ադրբեյջանի Ա. Խ. Հ. դրա մեջ	85968	2315000 Բագու
ա. Ինքնավար Ղարա- բաղ . .	4161	130000 Ստեփանակերտ
բ. Նախիջնանի Ա. Խ. Հ.	5988	104000 Նախիջնան
Բնակչություն .	185457	5862000

Աշխատանք.—Անդրկովկասի համբ քարտեզի վրա հանրապետությունները ներկեցեք տարբեր գույներով: Եղանակեցեք զինագոր կենտրոնները, (Աշխարհ, տետր, աշխ. 42): Կատարեցեք աշխարհագրակ. տետրի 44, 45, 46 աշխատանքները:

Անզրկովկասի բնակիչների մեծ մասն,
Բնակիչների ինչպես ասացինք, ալլում և գյուղերում
սպառապում և գյուղանահետովթյամբ:
Մեր յերկրում բոլոր տեսակի պարապմունքներից ամենա-
մեծ արդյունքն ստացվում և գյուղանահետովթյունից.
որինակ. 1923 թ. Հայրաստանի ազգաբնակությունն ունե-
ցել և 21 միլիոն բուրլու յեկամուտ, վորից 17 միլիոնը
գյուղանահետովթյունն և ավել: Վրաստանում 70 միլիոնից
49 միլիոնը, Ազրբէջանում 75 միլիոնից 40 միլիոնը
գյուղանահետովթյունից և ստացվել:



Նկ. 35. Բըինձ



թէյ



Բամբակ

Բայց զյուղանահետովթյունն Անզրկովկասում ամեն
տեղ հավասարապես զարգացած չեւ: Կլիմայի և յերկրի
ժամանականության պատճառով մի տեղ հար-
մար և հացահատիկների, մի ուրիշ տեղ՝ բամբակի մշա-
կության համար. մի տեղ թեյն և լավ բերք տալիս, մի
ուրիշ տեղ ծխախոտը. լեռնային և գաշտացին արոտատե-
ղերը հարմար են անասնապահության համար և այն:
Ամբողջ Անզրկովկասը 16.974.200 դեսյատին եւ, վորից
13.746.100 դեսյատինը կամ $81^0/_{\circ}$ -ը պետքական հողեր
են, իսկ 3.228.100 դեսյատինը կամ $19^0/_{\circ}$ -ը՝ անպետք:
Պետքական հողերի մեջ մտնում են այգիները, վարելա-
հողերը, անատեղերը, արոտատեղերը և անտառները, իսկ

անպետք հողերի մեջ՝ ձորերը, լեռների գաղաթները, աշվագուսները, ազուանները, ճահիճները, լճերի և գետերի բռնած տեղը, ճանապարհները և այլն:

Անդրկովկասի նորային տեսիրը:

Տնատեղեր	132.200	դեսյատին
Այգներ	118.900	»
Վարելահողեր	3.363.700	»
Խոռահարք	326.700	»
Անտառ	3.733.300	»
Չմեռացին և ամառացին արո-		
տատեղեր	2.949.700	»
Գյուղական արոտներ	3.121.600	»
Անպետք հողեր	3.228.100	»
<hr/>		
Բնդամենը	16.974.200	

Անդրկովկասում վարքան վարելահող կտու Վարելահո-
ղերը Անդրկովկասի ամբողջ մակարդակի վարերորդ մասն
են բռնում:

Ինչո՞վ բացատրել այն ճանգամանքը, վոր անպետք
հողերը բագական մեծ տեղ են բռնում:

Կատարեցիք աշխարհ, տերի 47-րդ աշխատանքը

Գյուղատնտեսական ճյուղերից առաջին տեղը բանում
ե հացանատիկների մշակուրյունը, այնուհետեւ աչքի յեն
ընկնում անասնապահությունը, այգեգործությունը, բան-
քակի յել ծխախոտի մշակուրյունը և այլն:

Անդրկովկասի բնակիչների համար բացի գյուղատն-
տեսությունից կարեօր նշանակություն ունեն նաև հան-
քային արգյունաբերությունը: Հանքային հարստություն-
ներից նաևթը, մանգանը, պղինձը, քարածուխը, աղը և
այլն մշակում են և մեծ արդյունք տալիս մեր յերկրին:
Գործարաններում գյուղատնտեսական զանազան արտա-
դրանքներ վերամշակության յենթարկելով ստանում են
զանազան առլրանքներ, որինակ՝ խաղողից ստանում են

սպիրտ, զինի. բամբակից մանվածքներ ու գործվածքներ. բամբակի կորիզից՝ ձեթ և այլն:

Ձեր շրջանում բնակիչները զինավորապես ինչով են պարապում:

Գյուղատնտեսական վոր ճյուղը կարեռը նշանակություն ունի:

Ձեզնում արդյունավործական հիմնարկներ կան. ինչ նյութեր են մշակում:

Անդրկովկասի բնակիչներն ընդհանրապես ինչով են պարապում:

Հացահատիկների մշակությունը

Ե՞նչ հացահատիկներ զիտեք: Դրանցից վորոնք են ձեր շրջանում տարածված:

Ե՞նչ և նշանակում աշնանացան և գարնանացան:

Նկարազրեցեք ձեր շրջանի վարն ու ցանը, հունձը, կալ կասելը և այն գործիքները, վոր այդ ժամանակ զյուղին գործ և ածում:

Հացը մեր ժողովրդի զինավոր մսունդն է, այդ պատճառով հացահատիկների մշակույթը բավական տարածված է:

Հացահատիկներից մեր յերկրում սարածված են ցուրենը, զարին և յեղիպտացորենը, Դրանցից ցորենն ու զարին մեծ չափով տարածված են Հայտատանում և Աղբքեջանում, իսկ յեղիպտացորենը՝ Վրաստանում: Բացի այդ յերեք զինավոր հացահատիկներից՝ Անդրկովկասում մշակում են նաև համար, վարսակ, կորեկ, բըինձ և այլն: 1926 թ. տեղեկությունների համաձայն Անդրկովկասի ամբողջ ցանքսերի $49,9^{\circ}/_0$ -ը բռնված եր ցորենով, $18,6^{\circ}/_0$ -ը յեղիպտացորենով, $16,7^{\circ}/_0$ -ը գարով, իսկ մնացած մասը՝ վարսակով, հաճարով, կորեկով, բընձով և այլն: Հետեւյալ աղյուսակը ցույց է տալիս, թե զինավոր հացահատիկների ցանքսերը վորքան տեղ են բռնում (*հաշված* և պատճենագիրը):

	Տ ա ր ե ն		Գ ա ր ի		Հ ա ճ ա ր		
	Ա շ ն ա - ն ա ց ա ն ց ա ն	Գ ա ր - ն ա հ ա - ց ա ն	Ա շ ն ա - ն ա ց ա ն ց ա ն	Գ ա ր - ն ա հ ա - ց ա ն	Ջ ե կ լ ի ս տ ց ո վ ե լ ի ս տ	Ա շ ն ա - ն ա ց ա ն ց ա ն	
Ա. Ե ղ բ ր կ ո ւ լ ո ս	853333	119686	197284	127620	362762	13537	2243
Ա ղ յ ր թ չ ա ն	566542	8654	183097	13384	12807	6382	960
Հ ա յ ս տ ս ո ն	70047	84314	2467	69347	126	5403	—
Ա ր օ ս տ ս ո ն	216744	26718	11720	44889	349829	1752	1283

Ցորենի, զարու և յեղիպտացորենի ցանքսկերն ընդամենն քանի դեսյատին են կաղմում ամբողջ Անդրկովկասում և առանձին հանրապետությունների մեջ:

Վար հանրապետություններում աշխանացանն ավելի մեծ աղջ և բռնում, քան գարնանացանը:

Խաչու Հայաստանում գարնանացան ցորենն ու գարին աղիկի մէծ մակարդակ էն բռնում, քան աշնանացանը:

Բնագույնիով, զոր մեջին հաշվով մեկ գեսատինից ստացվում է 52,1 փութ աշխանացան ցորեն, 42,7 փութ՝ գարնանացան ցորեն, 57,4 փութ՝ աշխանացան զարի, 60,2 փութ՝ զարնանացան զարի, 77,6 փութ յեղիսպացորեն — վորսեցիք, թէ Անդրկոմիկասում ընդամենը վորքան ցորեն, զարի և յեգիսպացորեն և վերցնվում ամեն տարի:

Անդրկովկասի յուրաքանչյուր բնակչին քանի փոքր ցորեն, զարի և յեղիպտացորեն և ընկնում:

Ա.Յանաբին. — Հաշվեցեք,թի Անդրկովկասում տարեկան վորքան ցորեն, գարի, յեփագորեն և հաճար և ստացվում (աշնանացանը և գարնանացանը միասին : Նկարեցեք չորս պարկ, վորոնք ցույց տան այդ հացանատիկների համեմատական մեծությունը. (Աշխ. տեսր, աշխ. 48):

Զնայելով, վոր հացահատիկների մշակությունը Անդրբեկովսկի բնակիչների առաջնակարգ պարապմունքներից մեկն է, այնուամենայնիվ սեփական հացը չի բավականական: Այդ պատճառով ամեն տարի Հյուս. Կով-

կասից ներմուծում են 12—15 միլիոն փութ հաց: Թե
վորքան քիչ բերք և ստացվում մեզնում ուրիշ յերկրների
համեմատությամբ, այդ յերեսում և հետեւալ աղյուսակից:

Բերգիայում մեկ գետ պարարտացնում են 21,4 վ. հանրութ և ստանում 165 վ. ցորեն						
Հովոնդիայում	»	»	10,5	»	»	162
Գերմանիայում	»	»	8,8	»	»	140
Ֆրանսիայում	»	»	3,2	»	»	87
Անգրիայի կառում	»	»	—	»	»	50

Յերկրագործությունն Անգրիավիկասում բավական ցածր մակարդակի վրա յէ գտնվում: Դեռ այսոր ել հողագործի դիմավոր մեքենան գութանը կամ արորն ե. Արեմոյան Յերկրագայի յերկրներում տարածված և բազմադաշտյան սիստեմը, իսկ մեզնում, դժբախտաբար, դեռ չի գործազրվում: Մեր յերկրագործի ցանած սերմի մոտ $50^{\circ}/_0$ -ն աղը ու անպետք նյութեր են, իսկ Անգլիայում, Հովոնդիայում սերմացուն, նախքան ցանելը, հատուկ մեքենաներով մաքրում են: Մյուս կողմից մեր յերկրում կան ընդգարձակ անջրդի տարածություններ, վորոնք վոռողման գեպը ում կարող են մեծ բերք տալ մեր ազգայնակությանը, որինակ Արարատյան գաշտի չոր մասերը, Մերձկասալյան դաշտավայրի չոր տափաստանները և այլն: Գյուղատնտեսության վիճակը բարձրացնելու համար Խորհրդ, իշխանությունը հենց սկզբից վիճեց մի շարք միջոցների:

1. Նա նորոգեց պատերազմի ժամանակ քայլայված ջրանցքները և ապա սկսեց անցկացնել նորերը.

2. Հիմնեց ագրոկայաններ, վորոնց միջով ազգաբնակության մեջ տարածում և դյուզանտեսական մեքենաներ ու գործիքներ:

3. Բերքը բարձրացնելու համար հիմնում և հատուկ գործարաններ, վորտեղ պատրաստում են հողերը պարտացնելու նյութեր և այլն:

ՅԵՐԱՎԱԳՆԴԱՎՐՅԱՅԻ ԽԵՐԱՎԱԿԱՆ ԽԱՇԽԱՅՆԵՐԸ

ՅԵԲԵ մենք կարողանանք մեր յերկրում յերկրագործությունը լավ հիմքերի վրա զնել և հողը մշակել այսպես, ինչպես մշակում են դերմանացիները, հողանգացիները կամ բերդիտացիները, այն գեպքում մեր հացը վոչ միայն կրավականանա աղջարնակոթյանը, այլև կարտահանիք, իսկ արտահանված հացի զնով մենք արտասահմանից կդնենք այն մեքենաները, վորոնք մեզ պետք են: Վորագեղի հացի բերքը մեծանա, անհրաժեշտ ե.

1. Յանիսերի մակարդակը մեծացնել.

2. Վարելանողերը պարաւացնել հանքերով կամ անսպառների աղբով:

3. Գործածել թիսիր սերմացն.

4. Յերկրագնդավայ աշխատանիները կատակել նոր միելնանիւրով.

5. Վոռովիկ չոր տափառանիները, անցկացնելով նոր ջրանցքներ, շորացնել ձահիճները և այլն.

6. Թողինել յերկրացյան սիսևմբ յիկ անցնել բազմադաշտանի սիսևմին:

Յամբակի մաս.

Բամբակը կարենը բույս և Այժմ

կուրյունը: ամբողջ յերկրագնդի վրա զործվածքների խոշոր մասը բամբակից են պատրաստում: Բայց բամբակը պահանջներու բույս և նու սիրում ե ջրովի և տաք տեղեր: Անդրիկովկասում բամբակի մշակության ամենաարմար վայրերն են՝ Արարատյան լուսը (Յերեանի և Եջմիածնի գավառները), Մերձ-Լիտովյան լուսավայրը (Մուղանի դաշտը, Գանձակի գավառը և այլն), Խրամի ստորին հոսանքը, Ղարայազը և այլն:

Բամբակը Անգրկովկաս մուտք և զործել Պարսկաստանից XIX-րդ դարի սկզբներում, յերբ Արարատյան դաշտը պատկանում էր Պարսկաստանին: Առաջին վորձերը

Դատարվեցին Արարատյան գաշտում, բայց մինչև 1860 թվականը բամբակի ցանքսն ամբողջ Ասդրկովկասում 3500 գհոյատինից չանցավ: 1886—89 թվականներին բամբակի ցանքսն արագորեն մեծանում է, հիմնվում են բամբակի մարդեր համար մի շարք գործարաններ: պարսկական բամբակի փոխարեն սկսում են մշակել ամերիկական և յեզիրական տեսակներ: Պատերազմից առաջ (1914 թ.) բամբակի ամբողջ ցանքը կազմում էր 135.500 գհոյատին: Իմպերիալիստական պատերազմը քայլայեց բամբակի մշակության գործը և միայն 1922 թվականից մենք տեսնում ենք, վոր ցանքսերի մակարդակն սկսվում է արտգորդին մեծանալ: այսպես, որինակ՝

1923 թ.	բամբակի	ցանքը	կազմում	եր	173000	դեսյատին
1924 թ.	"	"	"		102000	"
1925 թ.	"	"	"		124800	"
1926 թ.	"	"	"		117700	"

Առացված հում բամբակի կամ, ինչողիս ասում են, նելավոր բամբակի բամբակազմիչ գործարաններում բաժանում են կորիզից և սուանում օսման բամբակ, վորից Բաղվում, Թիֆլիսում, Լենինականում և Գանձակում պատրաստում են մանվածքներ ու գործվածքներ: 1925 թ. Ասդրկովկասում ստացվել ե մոտ 1.328.000 փութ գտած բամբակ, վորից:

Աղբեջանը	ավել ե	1.094.000	փութ
Հայաստանը	"	257.000	"
Վրաստանը	"	47.000	"

Բամբակը գտելուց հետո մնում է կորիզ, վորը պատերազմից առաջ համարյա ամբողջապես արտասահման եր ուղարկում: խել այժմ Խորհրդ, իշխանության ջանքերով Գանձակում և Յերևանում հիմնվել են խոշոր ձիթահան գործարաններ, վորակեց, ինչպես և Թիֆլիսում գոյություն

ունեցող գործարաններում, բամբակի կորիզը վերամշակվում է: Հասուկ մեքենաների միջոցով բամբակի կորիզը աղում են և միջուկը թեփից բաժանում, ապա այդ միջուկը ճնշում են և ձեմքը քամում: Այդ ձեմքից պատրաստում են սալոն, իսկ քամելուց հետո մնացած պինդ նյութը (քուսպը, կոպտոնը) գործ են ածում, վորպես կեր անսառնների համար. քուսպի մի մասն ել արտահանում են: Այսպիսով բամբակը բավական ոգտակար բույսերից ե. նրանից ստացվում են թել և գործվածք, քուսպ (անսառնների կեր), ձեմք և սալոն: Այդ պատճառով բամբակը համարվում է թանգարժեք բույս:

Կարևոր է ուշագրությունն զարձնել և այն հանգամանքի վրա, վոր բամբակի արգյունագործությունը գարզանում և հենց այն շրջանում, վորանդ տարրածված եալդ բույսի մշակությունը. որինակ՝ բամբակազարիչ, ձիթահան և սալոնի նոր գործարանները գտնվում են Յերևանում և Գանձակում, այսինքն Հայաստանի և Աղբքեջանի բամբակի մշակության կենտրոնում: Թիֆլիսի ձիթահան և սալոնի գործարանները հին են և հում նյութն ստանում են Յերևանից ու Գանձակից:

Զիթն ինչ բույսից են պատրաստում: Զեր կոռպերատիվում իմացեք, թե չթեղենը ԽՍՀՄ-ի վոր քաղաքներից ե ստացվում:

Վարքան բամբակի գործվածքներ են պետք Խ. Միության ամրող ազգաբնակության համար, յեթե մեկ հոգին տարեկան միջին հաշվով գործածելու լինի 10 մետր:

Կշռեցեք 5 մետր չիթ և այդ հիման վրա հաշվեցեք, թե մեր յերկրին վարքան բամբակ և պետք (ընդունելով, վոր մեկ հոգին զործ և ածում 10 մետր բամբակի գործվածք):

Աշխատանք.—Գծեցեք Աղբքեջանի, Վրաստանի և Հայաստանի բամբակի բերքի համեմատական դիագրամ. (աշխատք, աշխ. 49):

Բամբակագործության ներական խնդիրներ

1926 թ. ամբողջ Խ. Միության մեջ ստացվել ե մոտ 8,5 միլիոն փութ զտած բամբակ, մի այլքը ան ել ստացվել ե արտասահմանից: Աւրեմն ներկայումս սեփական բամբակը չի բավականանում. մյուս կողմից՝ արտասահմանից ներմուծելու ել ձեռնուու չե: Այդ պատճառով մենք պետք ե աշխատենք շատ բամբակ ստանալ: Մեր յերկիրը բամբակի մշակության համար հարմար տեղեր շատ ունի, հարկավոր ե միայն նոր ցանցքներ անցկացնել և վոռոգչյալ այդ նողերը. այդ ժամանակ բամբակի ցանքսերը կը նդարձակին ե բերքն ել կմեծանաւ: Բացի այդ՝ պետք ե ոգնել բամբակադրուծներին, ցույց տալ նրանց բամբակի մշակության նորագույն ձևերը և զործնականում այնպիսի միջոցներ կիրառել, վորոնք կը արձրացնեն վոչ միայն բերքը, այլ ե բամբակի վորակը: Բամբակի բժշկությունը, բամբակի արտի պարարտացնելը պետք ե լայն չափով գործադրվի:

Դյանախոսի մօակուրյունը

Անդրկովկասի քարտեզի վրա ցույց տվեք՝ 1. Արխաղիան, Աջարիան, Ազուրգեթ և Զուգուղի քաղաքները, Կախեթիան — վրաստանում:

2. Զաքաթալա քաղաքը յուր շրջակայքով — Ազրբեջանում:

3. Արարատյան դաշտը — Հայաստանում:

Ծխախոտէ մշակությունը մեր յերկրում տարածել են զլխակորապես այն հայերն ու հուները, վորոնք մեզնից 50 տարի առաջ ոռւստահեղական պատերազմի ժամանակ թողին իրենց հայրենիքը և բնակություն հաստատեցին Սև ծովի յեզերքին (Աբխազիայում): Ելնելով հմուտ ծխախոտուղուծներ, նշանը իրենց հետքերին տաճկական «Սամսոն» և «Տրապիզոն» կոչված ընտիր ծխախոտի սերմեր և կարճ ժամանակում այդ բույսի մշակությունը հսկայական

չափերի հասցըին: Այժմ Անդրկովկասի ծխախոսագործության զլիսավոր շրջանը կազմում է Արխագիանի, վորի ծխախոտը հաշակված և ամբողջ Խորհրդ: Միտթյան մեջ:

Վրաստանում ծխախոտի մշակությունը տարածված և Սև ծովի յեզերքներին (Արխագիայում, Աջարիայում) Զուգպիղիի և Քութայիսի գավառներում, Կախեթում: Աղրբեջանի ծխախոտագործության զլիսավոր կենարոնը կազմում և Զաքաթալայի շրջանը, իսկ Հայաստանում՝ Արարատյան դաշտը (զլիսավորապես Յերևանի զավարք):

Պատերազմից առաջ ծխախոտի պլանուացիաները ամբողջ Անդրկովկասում բռնում եյին 16.639 գեսյատին տարածություն, վորից 15883 գեսյատինը գտնվում եր Վրաստանում, 587-ը՝ Աղրբեջանում, իսկ 169-ը՝ Հայաստանում: Այսաեղից յերեսում և, վոր ծխախոտի մշակությամբ առաջին տեղը բռնում է Վրաստանը (մանավանդ Արխագիան, վորտեղ գտնվում եր 13107 գեսյատին): 1926 թ. ծխախոտի մշակությունն ամբողջ Անդրկովկասում հետեւյալ պատկերն ուներ:

Մխախտի պլանուացիաների մակարդակը 1926 թ.

Վրաստան	12890	գեսյատին, վորից 10762-ը գտնվում է Արխագիանում
Աղրբեջան	593	»
Հայաստան	280	»
Ամբողջ Անդրկովկասում	14040	»

Արխագիայի բնակիչների ազգուստի ամենակարեւը աղբյուրը ծխախոտագործությունն է: Յեզիպատացորենի մշակութը, մրգատու այգիները, գինեգործությունը, ընդարձակ անտառները և արեագարձային կլիմային հասուել բույսերը միասին վերցրած այնքան արդյունք չեն տալիս, ինչ վոր ծխախոտը:

Ծխախոսի մշակությունը Հայաստանի աղղաբնակության համար դեռևս կարեոր գեր չի կատարում։ Բայց նկատի ունենալով ծխախոսի պլանացիաների արագորեն ընդարձակիելը, կարելի յէ հաստատապես ասել, վար այդ թանգարժեք կուլտուրան խոշոր նշանակություն և ուսենակու մեր ժողովրդի տնտեսության համար։ Հայաստանում հոգացին և կյիմայական պայմանների բազմազանության շնորհիվ կարող են աճել ծխախոսի համարյա բոլոր տեսակները։ Կան վայրեր, վորոնք նիշեցնում են Տրավեդոնի շրջանը, կան վայրեր, վորոնք հարմար են «Սամսոն» կամ «Դյուրեկ» տեսակի համար և այլն։

Նխախոսի պլանացիաների մակարդակը Հայաստանում

1923 թ.	144	դիմայատին
1924 թ.	150	»
1925 թ.	280	»
1926 թ.	488	»

Աղյուսակը ցույց է տալիս, թե վորքան արագ քայլերով և զարգանում ծխախոսի մշակությունը Հայաստանում։

Ծխախոսի բերքը վերջին տարիների ընթացքում հետեւյալ պատկերն է ցույց տալիս։

	1924 թ.	1925 թ.	1926 թ.
Անդրկովկաս	324.400 փութ	575.100 փութ	7681000 փութ
Աղբեջան	13.800 »	38.500 »	40.000 »
Հայաստան	6.800 »	13.000 »	23.400 »
Վլաստան	303.700 »	523.600 »	704.700 »

Ծխախոսը Անդրկովկասի վոր մասերում են մշակում։

Ծխախոսի մշակությունը Անդրկովկասի վոր մասի համար կարեոր նշանակություն ունի։

1926 թ. ամրող Անդրկովկասում վորքան ծխախոս և սասացիւ։

Գծեցեք մի դիազրամ, վոր ցույց տա յերեք հանրապետությունների ծխախոսի բերքի համեմատական մեծությունը:

Աշխատանիք.—Անդրկովկասի համբ քարտեզի վրա Առևիումի մոտ նկարեցեք ծխախոսի տերեւ և կողքին գրեցեք «ծխախոս»:

Նկարեցեք յերեք ծխախոսի տերեւ, վորոնք իրար նըկատմամբ այնքան անգամ մեծ լինեն, վորքան անգամ մեծ են Աղքարեջանի, Հայաստանի և Վրաստանի ծխախոսի քանակություններն իրարից. (Աշխարհ. տեար, աշխ. 50 և 51):

Թեյն աճում և խոնավ և տաք տեսակի մօսկու-
րքունք: Այդ պատճառով ամբողջ ԽԱՀՄ-ի
բեկի մշակության համար ամենատ-
հարմար տեղը Սև ծովի յեղերքն եւ, սկսած թյուր-
քական սահմանից մինչև Կողոր գեար: Ներկայումս թեյի
անկարանները կազմում են մոտ 1225 դեսյատին, վորի
խոշոր մասը գանգում և Աջարիայում և Ռզուրդեթի գա-
վառում: Նշանափոր Զալիվան, վորը հայտնի յեւ յուր թեյի
արտադրությամբ, գանգում և Աջարիայում, Բաթումից
փոքր ինչ հյուսիս:

Հետազոտությունները ցույց են տալիս, վոր Սև ծովի
յեղերքին թեյի մշակության համար պիտանի հողերը կաղ-
մում են մոտ 120.000 դեսյատին: Յեթե ընդունելու լի-
նենք, վոր մեկ դեսյատին թեյի անկարանից ստացվում է
800 ֆունտ թեյ, այն դեպքում 120.000 դեսյատինը կտա
մոտ 96 միլիոն ֆունտ, վորը հավասար է Խուստատանի
ներժուծած սե թեյին պատերազմից առաջ: Այսուղ պարզ
է, վոր թեյի մշակության տարածումը չափազանց կարենոր
նշանակություն ունի վոչ միայն Անդրկովկասի, այլև աճ-
րողջ ԽԱՀՄ-ի համար: Այդ և պատճառը, վոր Խորհրդ, իշ-
խանությունը առանձնապես ուշադրություն և դարձնում
այդ բույսի մշակության վրա:

Թերի թերքը Վրաստանում

1913 թ.	.	.	1.355.000 դուչու
1925 թ.	.	.	1.952.222 »
1926 թ.	.	.	2.071.361 »

Խոշոր Արարատյան դաշտում թեյը չի աճում:

Անդրկովկասի վոր մասերում կարելի յէ թեյի մշակությամբ պարապել:

Պատերազմից առաջ մուսասատնը վորքան ու թեյ եր ներմուծում:

Ահ ծովի յեզերքը կարող է այդքան ու թեյ ներմուծել:

Պատերազմից առաջ մուսասատնը վորպեսզի արտասահմանից քիչ կախումն ունենանք:

Աշխատանիք.—Անդրկովկասի համբ քարտեզի վրա Բաթումից փոքր ինչ հյուսիս նկարեցեք թեյի տերեւ և կողքին գրեցեք «թեյ»: (Աշխ. տեսք, աշխ. 52):

Այգեգործությունն Անդրկովկասի բնակիչները շատ հինգ տարեաւարու ժամանակներից սկսած պարապում են ծուրյան: այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: Բազմազան բնական օպայմանների շնորհիվ այստեղ հնարավոր են մշակել թե շուշ և թե ուշ համազ մրգեր ու բանջարեղեններ, վորոնցից շատերը իրենց համով հոչակված են վոչ միայն Անդրկովկասում, այլ և ամբողջ ԽՍՀՄ-ում: Բայց և այնպես այգեգործությունն ու բանջարաբուծությունը (բացի խաղողի մշակությունից) մեր յերկրի բնակիչների համար այնքան ել մեծ նշանակություն չունին: Դրա պատճառներից ամենագլխավորն այն է, վոր այգիներն ու բանջարանոցները ջրելու համար չկան բավարար չափով արհեստական ջրանցքներ: Յերկրորդ՝ այգեգործական շատ ըրջաններ գտնվում են զիսավորապես շուկաներից և յերկաթուզու գծից հեռու:

Պաղարուծությունը Նայատանում քիչ և զարդացած և կարենոր նշանակություն ունի միայն Յերևանի, Եղմիած-

նի և Մեզրու գավառների համար, վորտեղ գտնվում են պահածոներ պատրաստելու համար դեղձի, ծիրանի, սալորի և կեռասի ընտիր տեսակներ։ Պատերազմից առաջ մրգի պահածոների արդյունաբերությունը բավական հաջող կերպով զարգանում էր։ Յերեանի և Եջմիածնի գավառներում դեղձից ու ծիրանից պատրաստում եյին մեծ քանակությունը պահածոներ, վորոնք բավական բավ ընդունելություն եյին գանում ԽՍՀՄ-ի շուկաներում։ Այդ պահածոների տարեկան արտադրությունը հասնում էր մինչև 120.000 փթի։ Այժմ Յերեանում աշխատում է միայն մեկ գործարան, վորը պատկանում է Հողժողկոմատին։ Այդ գործարանն արտադրել է.

1923 թ.	գանազան պահածոներ	10,000	փթ
1924 թ.	»	20,000	»
1925 թ.	»	23,766	»

Կառավարությունը ծրագրել է պահածոների տարեկան արտադրությունը հասցնել 50.000 փթի։

Յերեանի և Եջմիածնի գավառներում տարածված են նաև ձմերուկի, սեխի, վարունգի, սոխի, պամիզորի և այլ բույսերի մշակությունը։ Լուսում և Փամբակում մեծ չափով մշակում են կաղամք, կարտոֆել և այլն։

Պտղաբուծությամբ ու բանջարաբուծությամբ պարապում են Վշտաւակի համարյա բոլոր շրջաններում, բայց առանձնապես աչքի յեն ընկնում 1. Լազովիլսի շրջանը, վորը գտնվում է Աղնաղի գավառի հյուսիսարևելյան մասում, Ալազանի ափերին։ Մշակում են տանձ, խնձոր, ձմերուկ և սեխ։

2. Թիմիլիսի շրջանի քաղաքին մասակարարում եշուտ համեղ կանաչեղեն ու բանջարեղեն՝ վարունգ, կաղամք, կանաչի, պամիզոր և այլն։

3. Բորչալու-Դարայաղի շրջան, տարածվում է կորի, կրամի և Աղգեթի ափերին։ Արտադրում ե ձմերուկ, սեխ,

վարունգ, սոխ, փորոնք վաճառվում են գլխավորապես Թիֆլիսի շուկայում:

4. Գորչի-Մոխանի ցշանը յուր քաղցրահամ մրգերով հաշակված և ամրող Անդրկովկասում: Մշակում են թե շուտ և թե ուշ համառ մրգեր, փորոնք վաճառվում են վոչ միայն Թիֆլիսի, այլ և Բագդի, Մոսկվայի, Նույնիսկ Կոստանդնուպոլսի շուկաներում: Անդրկովկասի յերկաթուզու տեղեկությունների համաձայն այս շրջանից ամեն ապրի գեպի զանազան շուկաներ փոխադրվում եր մոտ 300 հազար փութ միրզ և 400 հազար փութ ել բանջարեղեն:

5. Ախալցխայի-Բորժոմի ցշան.—հաշակված և յուր խնձորով ու տանձով: Մշակում են նաև մեծ քանակությամբ կարառիկ:

6. Քորսյուի ցշան.—Մրգերից ապրածված են գեղձը, ընկույզը, կեսար և այլն, իսկ բանջարեղենից՝ հետեւյալ շուտ համառ տեսակները՝ կաղամբ, վարունգ, կարսոֆել և այլն: Ամեն ապրի մոտ 100 հազար փութ զանազան բանջարեղեն և ուղարկվում Թիֆլիս, Բագու, Բաթում և Հյուս: Կովկաս:

7. Աշառական ցշանը հայտնի յե յուր մերձարկադարձյին մշակություններով: Բավական հաջող կերպով մըշակում են կիսրոն, նարինջ, մանդարին և այլն:

Ազրբեջանի բանջարանոցներն ու այգիները տարածված են Ղուբայի, Բագդի, Գանձակի, Շամախու գավառներում, ինչպես և Ղարաբաղում, Նախիջևանի հանրապետության մեջ: Մշակում են տանձ, խնձոր, ընկույզ, թուզ, նուռ, թութ, ձմերուկ, սեխ, պամիրոր, վարունգ և այլն:

Ազգագործության լիվ բանջարաբանության ներական խնդիրները

1. Ընդարձակել այգիների մակարդակը:

2. Գյուղացիներին ցույց տալ թե բնչպես պետք ինսամել ծառերը և բանջարեղենը:

3. Մրգից պատրաստել պահածոներ և կոռուբրատիվ-ների միջոցով վաճառքի հանել:

4. Գյուղացիներին մատակարարել ընտիր պաղատու տունկեր:

Խաղողի աշգիները յեվ գինեգործությունը

Զեր շրջանում խաղողի այդիներ կան: Խաղողից գինի պատրաստել են:

Գինին իրենք են գործածում, թե վաճառում են: Կան այնպիսի ընտանիքներ, վորոնց զիմավոր պարապմունքը խաղողի մշակությունն ու գինեգործությունն ե:

Այդիները բավական չափով պոտովվառ են:

Խաղողի մշակությունը և գինեգործությունը մեր յերկրի վորոշ շոշանների համար չափազանց կարևոր նշանակություն ունեն:

Խաղողի այդիների ընդհանուր մակարդակով և արտադրած գինով Անդրկոմիկաը բռնում ե առաջին Տեղը ամբողջ Միության մեջ: Պատերազմից առաջ խաղողի այդիները բռնում եյին մոտ 78 հազար զեսյատին, իսկ ստացված գինին կազմում եր մոտ 11 միլիոն վեղրու ներկայումս

Վրաստանում գտնվում ե մոտ 43,000 զեսյատին		
Անդրեցանում	»	19,000
Հայաստանում	»	7,500
Անդրկոմիկանում	ընդամենը	69,500

Գինու արտադրությունը հասնում է մոտ 8,5 միլիոն վեղրոյի, վորից

Վրաստանում ստացվում է 5,000,000 վեղրու		
Անդրեցանում	»	2,000,000
Հայաստանում	»	1,500,000

Հայաստանի խաղողի այդիները կենարոնացած են զլամավորապես Յերեանի և Եջմիածնի զավաներում, վորոնք հարուստ են խաղողի զանազան տեսակներով:

Ստացված խաղողի 33¹/₀-ը ծախսվում և սպիրտ և ողի պատրաստելու համար, 28⁰/₀-ը՝ գինու համար, 14⁰/₀-ն ուժվում ե, իսկ մնացած 15⁰/₀-ից պատրաստում են զոշար և չամիչ: Յերեանի խաղողը, գինին և կոնյակի հայտնի յեն ամբողջ Անդրկովկասում:

Վրաստանի խաղողի այգիները տարածված են Կոխերիայում, Գորտ և Թուշեթի գավաններում, Բորչարվում, Թիֆլիսի մոտակա գյուղերում, Քուբայիսի և Շորապանի գավառներում, Արխագիայում և այն: Այդ շրջաններից առաջին տեղը բռնում են Կախեթիան և Խմերերիան (Քութայիսի և Շորապանի գավառները): Կախերի գինին հռչակված և ամբողջ Միության մեջ:

Ազրբեջանում խաղողի այգիներով և գինեգործությամբ առաջին տեղը բռնում են Գանձակի և Շամփորի շրջանները: Հանրապետության մեջ ստացվող ամբողջ գինու 2/3-ը ստացվում և այս շրջաններից: Գանձակի խաղողը հռչակված և ամբողջ Միության մեջ: Յերկրորդ տեղը բռնում է Շամախի—Գեռկչայի շրջանը: Խաղողի այգիներ կան նաև Ղարաբաղի ցածրատիր մասում, Աղշերոնյան թերակղզում և այն:

Անդրկովկասի համբ քարտեզի վրա նկարեցեք մեկական գինու շիշ Յերեանի, Գանձակի, Քութայիսի և Թիֆլիսի մոտ և մոտը զրեցեք «գինի»:

Նկարեցեք յերեք գինու շիշ 10, 4 և 3 սանտիմետր բարձրությամբ:

Մեծ շիշ տակ զրեցեք վրաստան, միջնակի տակ՝ Աղբբրեջան, իսկ փոքրի տակ Հայաստան: (Աշխարհ, տեսր, աշխ, 53):

Անտանականուրյան

Զեր շրջանում ինչ անտանաներ կան, թվեցեք զբանց տեսակները:

Այդ անտանաներն ինչպիս են խնումվում ամառը և ձմեռը:

Անասնապահությունից բնչ արդյունք ե ստացվում:

Տեղական անասունները աղնգացնելու փորձեր կատարվում են: Աղնգացեղ անասուններ տեսնել եք: Երանք ինչպէս են առրերգում ձեր տեղական անասուններից:

Անասնապահությունը Անդրկովկասի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկն եւ Բնական պայմանները, այսինքն կլիման ու արոտատեղերը բավական նպաստավոր են այդ ճյուղի զարգացման համար: Դեռ այսոր ել Անդրկովկասում գտնվում են այնպիսի ժողովուրդներ, վորոնց համար անասնապահությունը ապրուսաի միակ աղբյուրն եւ Զմեոր նրանք իրենց անասունները պահում են ձմեռային արոտատեղերում, իսկ ամառը քոչում են սորերը և մինչեւ աշնան ցրտերի զարք անասուններին արածացնում ալպյան հարուստ մարգաղետիններում:

Զմեռային արոտատեղերը գտնվում են համարյա բացառապես Արենլյան Անդրկովկասում: Արեմայան Անդրեկովկասում նրանք բարորովին չկան (ինչնու): Զմեռային արոտատեղերն սկսվում են ամենացածր զիրք ունեցող տեղերից և հասնում մինչև 600—650 մետր բարձրության ծովի մակերեւութից: Այդ արոտատեղերը ձմեռը յերկարանում են իրենց անասուններին ամբողջ ձմեռվա ընթացքում արածացնում առանց խոտի պաշար ունենալու:

Ամառային արոտատեղերը՝ զանվում են կովկասյան լեռնաշղթայի հարավային լանջերին և Հարավ: Անդրկովկասում: Իրանք սկսվում են այնպիսի տեղերից, վորոնց բարձրությունը ծովի մակերեւութից կազմում է մոտ 1800 մետր և հասնում են մինչև 3000—3700 մետր բարձրության: Այս բարձրությունից վեր առաջածվում են մերկ ժայռեր, հավերժական ձյուն և սառցագաշտեր: Հետեւյալ աղյուսակը ցույց է տալիս, թե Անդրկովկասում վորքան արոտատեղ կա:

Արտակարգ մարդու Անդրամասնություն

Աղբարեջան	334.700	դիսյամբին	983.400	դիսյամբին
Հայաստան	587.400	»	154.400	»
Վրաստան	656.400	»	228.400	»
Ամբողջ Անդրկովկան	1.578.500	»	1.371.200	»

Մեր յերկոքի զվատվոր անսառններն են կովն ու յեզր,
գոմեշը, վոչխարը, ձին, խոզը և այլն։ Բայց դժբախտա-
քար այդ անսառնները տեղական մանր ցեղեց են և աշ-
քի չեն բնինում իրենց քաշով, կամ նստվությամբ կամ ուժով։

Աղյուսակից յերկում ե, վոր ձիերի թիվը համեմատաբար փոքր է: Դրա պատճառն այն է, վոր մեր լեռնուայրկրում վորպես լծկան կենդանի գերազատում են աշխատեցնել յեղ ու գոմեց:

Անասնապահությունը Հայաստանում: Անասնապահությունը Հայաստանի հանրապետության համար մեծ նշանակություն ունի. նա կարևոր է մանավանդ լեռնային դոսու բնակիչների համար, վորոնց անտեսության մեջ այժմ կաթնասնակեսությունը խոշոր դեր է կատարում: Այդ բանին մեծապես նպաստում են Հայաստանի արզյան մարդագետինները, վորոնք հնարավորություն են տալիս ստանալ բարձր վորակի մթերքներ: Կաթնասնակեսությունը



Նկ. 37. Աճառը սարում:

առանձնապես զարդանում է Լոռի-Փամբակի, Նոր-Բայազետի, Լենինականի գավառներում: Դեռևս պատերազմից շատ առաջ՝ Շվեյցարիայից գաղթած կաթնասնակեմները բնակություն են հաստատում Լոռում և սկսում պատրաստել շվեյցարական պանիր, ճնշած կարագ և ալին:

Մյուս կողմից նրանք բերելով իրենց հետ ընտիր ցեղի կոմիր, աշխատում են ազնվացնել տեղական կաթնասու կոմիրի ցեղը: Վերջին մի բանի տարրա ընթացքում կառավարության ջանքերի չնորհիվ կաթնասանտեսությունը ստանում է արդյունաբերական բնույթ: Հիմնվում են պաներագործարաններ, կազմակերպվում են կաթնասանտեսական արտելներ, գյուղական ընկերություններ և այլն: Հատուկ անսանարուծարաններում աշխատում են ազնվացնել տեղական կարմիր տեսակի տավարը, վորովհետեւ պարզվում է, որ Ցելքրոպայից բերած կոմիրը մեր կիւմայական պայմաններում չեն բազմանում:

1926 թ. Հայաստանում գոյություն ունեցին 81 կաթնասանտեսական արտել, վորոնք նույն թվականի առլրիլի 5-ին միանալով կազմեցին «Պանիր-Յուղ Կենտրոն»: Այդ միության մեջ մանում եյին 6389 անտեսություն, 18759 կոմուլ:

Հայաստանի կաթնասանտեսական արտելները պատրաստում են զինավորապես ըլիցարական պանիր, նույնած կարագ և բուշի պանիր, վորոնք մեծ ընդունելություն են գտնում վոչ միայն Անդրկովկասի, այլ և ամբողջ ԽՍՀՄ-ի շուկաներում:

Տեղական կոմիրի և յեղների մեջ աչքի յեն ընկնում Շամշադնի և Աղբարայի ցեղերը: Զիարուծությունը մեծ չափերի չի հանում, վորովհետև բնակիչները, վորպես լծկաններ, աշխատացնում են յեղն ու զոմեշը: Չին գործ և ածվում հեծնելու և բարձելու համար: Նշանավոր են Դարաբաղի, Դազախի, թյուրքական ցեղի ձիերը: Վոչխարներից տարածված են մազրխ, բուլախ և զոնմա ցեղերը:

Վշասան: Անասնապահությունը Վրաստանի յենային ազգաբնակության կարևոր պարապմունքներից մեկն է, վորոշ տեղերում նույնիսկ ժողովրդի ապրուստի միակ աղբյուրն է: Բայց յեղած ձմեռային և ամառային արոտա-

տեղերը անսասունապահության կարիքներին չեն բավարարում:

Տեղական անսասուններից ցեղերից աչքի յեն ընկնում խեցուր-փշավական և ոսական կովերը, վորոնք հայտնի յեն իրենց կաթնասավությամբ, այդ պատճառով այդ տեղի կովերը՝ պահվում են Թիֆլիսում: Կաելից խեցուրներն ու փշավները յուղ են պատրաստում, վորը հալած վիճարում շուկա յեն հանում: Պահրազործությամբ պարապում են փշավները: Բացի այս ցեղերից բավական տարածված են նաև զազախի և թարաքամա կովերը: Վոչ տեղական անսասուններից նշանավոր են «գուշաբորական» և «մալականի» կովերը, վորոնք տարածված են Ախալքալաքի և Բորչարդի գավառներում:

Վոշխարներից հայտնի յեն բուչի վոչխարները, վորոնց բուրգն ու միար հոչակված են ամբողջ Անդրկովկասում:

Չիերի թիվը մեծ չե, այստեղ պատճառը նույննե, ինչ վոր Հայաստանում: Կաթնասնտեսությունը Ախալքարքի զավառում, Ծալկայում, ինչպես և Բաշկիչեարի շրջանում արգույնաբերական բնույթը ունի: Պատրաստում են շվեյցարական պանիր, ճնշած կարագ, կովկասյան իեռների հարավային լանջերում վոշխարապահները դիմավորապես պահնիր են պատրաստում: Հայտնի յե բուչի պանիրը:

Աղբեջան: Անսասնապահությունը Աղբեջանի քոչվոր և կիսաբոշվոր ժողովուրդների համար չափազանց կարևոր նշանակություն ունի: Այդ քոչվորների, ինչպես և նստակյացների, անսասունները աշնանն ու ձմեռը արածում են հարթավայրերում, իսկ ամառը՝ սարերում: Բայց Աղբեջանի ամառային արտավայրերը բավարար չեն: Այդ պատճառով Աղբեջանի անսասնապահների մի մասը յուր անսասունները ամառվա ընթացքում քշում են Հայաստանի լեռները:

Տեղական անսասուններից մեծ հոչակ ունի շազախի ցեղը, վորից ստացվում են լծկաններ, կաթնեղեն և միա-

Համեմատաբար խոշոր անասուններ ունեն սեկտանտները։
Վոչխարներից հայտնի յէ Դարաբաղի ցեղը։ Ստացվող
բուրզը կոչտ և և զործ և ածվում դորգերի, պարանների,
ջվանների և այլ պետքերի համար։

Ազրբեջանում տարածված են նաև գոմեչներ, ուղտեր
և եշեր, վարոնք կարեոր գեր են կատարում զյուղատըն-
տեսության մեջ։ Խոզերը քիչ են տարածված։

Կաթնատնեսությունը ցածր մակարդակի վրա և գտնվում
է արդյունաբերական նշանակություն չունի։ Ներկայումս
շվեյցարական պանիր ստանալու փորձեր են կատարվում։

Անասնապահության ներքական խնդիրները։

1. Բարձրացնել անասունների վարակը. տեղական
մանք անասունների փոխարեն պահել աղնվացեղ անասուն-
ներ։ Դրա համար պետք է բանալ ցեղական անասունների բռու-
ժարաններ, զյուղերին տալ աղնվացեղ ցլեր և այն։

2. Անասունները կերտվ աղանովել. ցանել խոտարույ-
սեր և արժատապատուղներ։

3. Առանձին ոչչաղբություն գարձնել կաթնատնեսու-
թյուն վրա։ Ետզմակերպել պանրա-լուղազործական արժելներ
և կաթը վերամշակել զիտական յեղանակով և նորազույն
գործիքներով։

Մեղվարուծություն։

Զեր շրջանում մեղվարուծությամբ սպարապետմ են
կան այնպիսի ընտանիքներ, վորոնք բացառապես մեղվա-
րուծությամբ զբաղվելիս լինեն։ Ենթե կան, այն դեպքում
ստացված մեղրը վարտեղ են վաճառում։

Փեթակներն ի՞նչ կազմություն ունեն. Հըջանակավոր
փեթակները շատ են։

Մեղվարուծությունը յերբ են բերք հավաքում։

Մեղվարուծությունը Անդրկովկասի զյուղատնեսու-
թյան մեջ ոժանդակ գեր է կատարում։ Նա տարածված է
համարյա ամենուրեք, բացի չոր տափաստաններից ու

լեռնային բարձր շրջաններից, կան վայրեր, վորաեղ մեղաքարուծությունը նույնիսկ արդյունաբերական նշանակություն ունի:

Լեռնային և նախալեռնային շրջանները հարուստ են զանազան մեղքատու ծաղիկներով, վորոնք առատ բերք են տալիս մեղուներին: Մեղուները բերք վերցնում են նաև ծառերից, լորենու մեղքը հոչակված է ամրող Անդրկովկասում:

Կոմիայան մեղուն համարվում է լավագույնը. Նա ունի յերկար կնճիթ, վորի շնորհիվ կարողանում է կարմիր առվոյափառ բերք վերցնել: Այդ պատճառով Ամերիկայում, Անդրկովկասում և Ֆրանսիայում կովկասյան մեղքի մայրերը բավական բարձր են գնահատվում:

Այսպիսով մեղքարուծության զարգացման համար բոլոր ավյալները կան, բայց դժբախտաբար աղղարնակությունը դեռևս ծանոթ չե մեղքարուծության գիտական ձևերին և համապատասխան խնամք չի թափում: Մեծ ասամբ մեղուն պահպան է կողովներում, կեղեններում կամ ծառի կոճղերի մեջ: Միայն վերջին տարիների ընթացքում շրջանակավոր վեթակները լայն ընդունելություն են զբանաւում:

Ամրող Անդրկովկասի ամենակարևոր մեղքարուծական շրջանները գտնվում են Հայաստանում, վորաեղ մեղքարուծությունն արդյունաբերական նշանակություն ունի: Նշանավոր են Դարաբիլիսայի, Լոռու և Գարալազյաղի շրջանները: Փեթակների խոշոր մասը շրջանակավոր են (Դարգան-Բլատափ), 1921 թ. աեղեկությունների համաձայն ամրող Հայաստանում գտնվում եր մաս 50,000 փեթակ:

Լոռու և Դարաբիլիսայի մեղքը հայտնի յե յուր համով: Նրա մեծ մասը վաճառվում է Թիֆլիսում:

Մեղքարուծությամբ պարապում են նաև Վրաստանում, Աղրբեջանում:

Մերլիաբուծության ներքական խնդիր:

Վոչնչացնել հին ձեփ գեթակները և գործածել շրջանակավորները, կոմիտ վատախտի դեմ և ընդհանրապես տարածել մեղքաբուծական ոգտակար գիտելիքներ:

Կազմակերպել, տարածել մեղքաբուծության կոռուկերատիվ ընկերություններ և ընդհանուր ուժերով բարձրացնել մեղքաբուծությունը:

Հերամապահությամբ Անդրկովկասում՝

Եկամապահությամբ՝ պարապում են շատ վաղուց: Դրա զարգացմանը մեծապես նպաստում են կլիմայական և հողային պայմանները: Պատերազմից առաջ Անդրկովկասում թթենու անկարանները բանում ենին մոտ 60.000 դեստի քանակը հանում եր մինչև 360.000 փթի, վորի մի մասն արտահանվում եր: Պատերազմից քայլայից շերամապահության դորձը, այնուես վոր 1919 թվին հում բոժոժի քանակը կազմում եր ընդամենը 23.000 փութ: Վերջին մի քանի տարիների բնիթացքում՝ չնորհիվ կառավարության աջակցության՝ շերամապահությունը կրկին սկսեց զարգանալ, բայց դեռ մինչպատերազմյան դրության շի հասել: 1926 թ. ամբողջ Անդրկովկասում ստացվել է մոտ 270.000 փութ հում բոժոջ, վորից.

Ազրբեջանը ավել է 115.000 փութ

Հայաստանը » 4.500 »

Վրաստանը » 150.000 »

Այստեղից յերեսում ե, վոր շերամապահությամբ առաջին տեղը բռնում է Վրաստանը:

Վրաստանի շերամապահական գլխավոր շրջանները գտնվում են հանրապետության արեմայան մասում (Իմերեթիայում, Գուրիայում և Մինչպետքայում), Հայաստանում առաջին տեղը բռնում են Մեղրու և Ղափանի շրջանները, իսկ Ազրբեջանում՝ Նախիջևանի հանրապետու-

թյունը, Նուխու, Զաքաթալայի, Գեռկչայի և այլ արջանները:

Բոժոժներից ստացված մետաքսի միմ ասր գործ և ածվում աեղական պետքերի համար, մյուս մասն ուղարկվում և Մոսկվա:

Եւրամազահուրյան հերթական խնդիրները:

Լայնացնել թթենու տնկարանները:
Պատրաստել տեղական զրենտ և տարածել ժողովրդի մեջ, գրենան արտասահմանից ստանալը ձեռնոտու չեւ
Կազմակերպել շերամապահական կոռպերատիվ ընկերություններ:


Անդրկովկասի հարուստ և զանազան Անդրկովկասի հանքերով Դրանից մի քանիսը վաղոց հանքային հարբառությունները: մշակվում են և ժողովրդի անտեսության համար կարեոր նշանակություն ունեն, իսկ մյուսները գտնվում են խոշոր կենտրոններից հեռու և, չունենալով հարմար ճանապարհներ, առայժմ չեն շահագործվում:

Ներկայումս Անդրկովկասում ստացվում են նավք, մանկան, բարձուխ, պղինձ, աղ, յերկար և այլն:

Այդ բոլոր հանքերից առաջին տեղը բռնում է նավքը: Նա գտնվում է Ապշերոնյան թերակղզու վրա, Բագվի շրջակայինում: Գետնի խորքերից (400—600 մետր և ավելի խորությունից) զանազան յեղանակներով հանում են հում նավքը և առա փոխադրում գործարան, փառաեղ նրանից թորման միջոցով ստանում են բենզին, այրելու նավք, զանազան յուղեր (մեքենաների համար), մազուր և այլն: Բազվի նավթի մի մասը կասպից ծովով փոխադրում են Աստրախան, այստեղից վոլգայով դեպի ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասը և Միջին, մյուս մասը Բաթումի վրայով արտահանում են Թյուրքիա, Արևմտյանք

Յեկրոպա (իտալիա, իսպանիա, ֆրանսիա և այլն)։
1925—26 թ. ստացվել է 5,513,600 տոնն հում նավթ,
վորից.

Լուսավորության նավթ	924,800	տոնն
Ցուղիք մեքենաների համար	200,700	»
Բենզին	129,800	»
Նավթային մասնագործներ (մադութ և այլն)	1,826,300	»
Այլ նյութեր	90,200	»



Նկ. 38. Բազվի նավթամհանքերը։

Զեր կոռուկերատիվը նավթը վրատեղից և ստանում։
Ցույց տվեք այն ձանապարհը, վորով Բազվից նավթը հաս-
նում և ձեր շրջանը։

Բնդունելով, վոր լուսավորության համար գործածված
նավթի փութն արժե 1 ր. 50 կոտեկ, գտեք, թե ի՞նչ արժե
միայն Բազվում ստացվող լուսավորության նավթը։


Աշխատանք.—Կովկասի համբ քարտեղի վրա Բազվի
մոտ վրեա նշան դրեք և կողքին գրեցեք «Կավթ»։

Մանկանի: Անդրկովկասի յերկրորդ կարևոր հանքը մասնակի է, վորը մեծ քանակությամբ մշակվում է Զիառտուրում (Վրաստանի Շորոպահնի զավառում):

Մանգանը գործ է ածվում պղողապատի պինդ տեսակ-ներ ստանալու համար, այդ նպաստակով նրան խառնում են յերկաթի հետ: Այս հանքի արտադրությամբ Վրաստանը պատերազմից առաջ բռնում էր առաջին տեղը: 1925—26 թ. ստացվել է 769500 տոնն մանգան, վորից 466.200 տոնն արտահանվել է:

Անդրկովկասի քարտեզի վրա գտնեք Զիառտուրին:

Անդրկովկասի համը քարտեզի վրա գտնեք Զիառտուրի տեղը և այնտեղ գրիցեք «մանգան»:



Նկ. 39. Հաթարի պղնձահանքերը:

Պղինձ: Արդյունաբերական նշանակություն ունեցող պղնձահանքերը գտնվում են Հայաստանում և Աղրքեջանում:

Հայաստանի պղնձահանքի գլխավոր կենտրոններն են Պարարը (Զանգեզուրում) և Ալլահնվերդին (Լոռում): Թէ վորքան մեծ նշանակություն ունի Հայաստանի պղնձի արդյունաբերությունը, այդ յերեսում են նրանից, վոր պատերազմից առաջ ամբողջ Ռուսաստանում ստացված պղնձի $\frac{1}{6}$ -ը տվել է Հայաստանը: Պատերազմը քայլայեց այդ տնտեսությունը, բայց վերջին 4—5 տարվա ընթացքում շնորհիվ ԽՍՀՄ-ի կառավարության աջակցության՝ հնարավոր յեղավ վերականգնել պղնձի արդյունաբերությունը:

1924—25 թ. ստացվել է 87,460 ֆութ.

1925—26 թ. առ 581,800 դ

1926—27 թ. առ 1,216,053 դ

Ստացված համբը հարվում է պղնձաձուլական գործարուներում:

Ցույց տվեք Ալլահվերդու և Դաթարի պղնձահանքերի շրջաններու:


Այդ հանքավայրերի վորի աշխարհագրական դիրքն ամենի համար է: Ի՞նչ նշանակություն կունենա Ալլահվայրության յերկաթուղին, վորն անցնելու և Արաքսի հովտով, Դաթարի պղնձահանքերից մաս 40 կիլոմետր հնարավության վրա:

Աջիատանք.—Անդրկողիկասի համբ քարտեզի վրա Ալլահվերդու, Դաթարի և Գետարեկի կողքին գրեցեք «պղինձ».

Ազրեանի պղնձահանքերը գտնվում են Գետարեկու (Գանձակից վոչ հեռու):

Քարածովս: Քարածովին ստացվում է Վրաստանում, Թքիբրուլում (Քութայիսից 44 կիլոմետր հեռավորության վրա): Այդ քարածովը գործ է ածվում Անդրկողիկասի յերկաթուղու պետքերի համար:

Պատերազմից առաջ (1913 թ.) ստացվել է մաս 4,200,000 ֆութ քարածովս, իսկ, 1926, թ. 5,217,000 ֆութ: Այս թվերը ցույց են տալիս, վոր այժմ ավելի շատ քարածովս է ստացվում, քան պատերազմից առաջ:



Նկ. 40. Դաբարի ողնութի գործարանները:

Քարտեզի վրա ցույց տվեք Տքվիրուլին:

Աշխատանիք.—Կովկասի համբ քարտեզի վրա դանք Տքվիրուլու տեղը և այնտեղ գրեցեք «քարտածուխ» բառը:

Աղամայնի ստացվում է Նախիջևանի հանքապետության մեջ: Անդրկովկասում ամեն տարի գործ է ածվում մոտ $3\frac{1}{2}$ միլիոն վիոթ աղ, վորից 2 միլիոնը Նախիջևանն է տալիս:

Անդրկովկասի յերկրորդական նշանակություն ունեցող հանքերից կարեոր է հիշել կապարը, յերկաթը, արծաթը, և այլն:

Բացի վերը հիշած բազմազան հանքերից, մեր յերկիրը հարուստ է նաև զանազան շինարարական քարերով, վորոնց մեջ համամեթենական նշանակություն է ստացել Լենինականի դավառի (Արտիկ գյուղի) սուֆը: Արտիկը գտնվում է Լենինականից 25 կիլոմետր հեռավո-

բության վրա և յուր շրջանում պարունակում և ահազին քանակությամբ տուփ։ Արտիկի տուփը աչքի յե ընկնում՝ յուր թեթևությամբ և բավական գժվարությամբ և հալվում։ Նա հեշտությամբ սղոցվում է, նրա մեջ կարելի յե մեխի խփել և այլն։ Մասնագետների կարծիքով Արտիկի տուփից կարելի յե շինել աներ, վառարաններ և այլն։ Ներկայումս ծրագրվում է անցկացնել Լենինականից մինչև Արտիկ յերկաթուղու գիծ, փորի շնորհիվ տուփի արտադրությունը կարելի յե մեծ չափերի հասցնել։ Այն հակայական շինարարական աշխատանքները, փոր սկսված են լի. Միության մեջ, պահանջում են մեծ քանակությամբ շինարարական նյութ—աղյուս, քար և այլն։ Արտիկի տուփը յուր եժանությամբ և թեթեառությամբ կարող ե գործածվել աղյուսի, քարի փոխարեն։ Այսպիսով փոքրիկ Արտիկը Միության խոշոր կենտրոններին կմատակարարի շինարարության համար անհրաժեշտ նյութ։ Մոսկվայում Արտիկի առուփից կառուցվելու են խոշոր աներ։

Կարգացեք աշխարհ։ տեսրի 54-րդ աշխատանքը։

Հանիային արդյունաբերության ներքական խնդիրները

1. Ուսումնասիրել մեր յերկրի բնական հարսառությունները։
2. Ուժեղացնել նավթի, պղնձի, մանղանի, քարածինի արտադրությունը։
3. Անցկացնել զեզի հանքերը նոր ճանապարհներու հաթաքարի հանքերը յերկաթուղով միացնել Ալյաթ-Զուլֆա գծի հետ։
4. Հանքերի արտադրությունն ուժեղացնելու համար կառուցել ելեկտրակայարաններ։

Մենք տեսանք, փոր Անդրկովկասի

Անդրկովկասի բնակիչների գլխավոր պարապմունքը արդյունագործությունների գյուղատնտեսությունն եւ նրանք ստանում են զանազան հում նյութեր—բուրդքամբակ, ծխախոտ, կաշի, խոզի մազ, մետաքս, աղիքներ։

մորթի և այլն։ Բացի այդ՝ լեռներից նրանք ձեռք են քերում պղինձ, քարածուխ, մանգան։ Բազվում ստացվում է նավթ և այլն։ Բայց գրտիսաարար այդ հում նյութերի մեջ մասը փոխազրվում է Մոսկվա կամ արտասահման, գորովնեան մեր յերկրում գործարաններ շատ քիչ կամու Արտահանվող հում նյութի փոխարեն մենք ստանում ենք գործվածքներ (շիթ, բյազ, մահուղ և այլն); շաքար, թեյ, թուլ, ապակեղեն, յերկաթե իրեր (մեխ, մեքենա, թիթեղ) և այլն։

Աւելին Անդրկովկասի բամբակին ու բուրդը փոխազրվում են Մոսկվա, այնտեղ պատրաստվում են զա-



Նկ. 41 Գյուղում թթից արագ են քաշում.

նազան գործվածքներ և ապա այդ գործվածքները կրկին բերում Անդրկովկաս և վաճառում տեղական շուկայում։ Պարզ ե, վոր այդ գործվածքներն ավելի եժան կլինելին, յեթե պատրաստվելին մեր յերկրում։ Փոխադրական ծախսեր չելին լինի։ Ահա այդ ե պատճառը, վոր կառավարու-

թյունն ամեն կերպ աշխատում է աեղական արդյունաշործությունը բարձրացնելը Հին գործարանները նորովում են, զանազան շրջաններում հիմնվում են նորերը, փորտեղ աեղական հումքութիւն վերամշակության կենթարկի և այլն: Ներկայումս Անգրելովկասում կան հետեւյալ արդյունագործական ճյուղերը:

Գինի—կոնյակային արտադրություն, կաշվեգործություն, գործվածքների արտադրություն, ծխախոտի արտադրություն, ձեթի արտադրություն, սալոնի արտադրություն, կարրիֆի արտադրությունը և այլն: Բացի այդ՝ խոշոր նշանակություն ունեն նաև մանդամի, պղնձի, մանղանի, աղի և քարածխի արդյունաբերությունը:

Բացի գործարանային արդյունաբերությունից Անգրելովկասում բավական տարածված են զանազան արհեստներ:



Բուրդը աներում և մանր արհեստանոցներում մաքրում են, մանում և արտ նրանից պատրաստում գորգեր, շալեր, սլաքաններ, գուլպաներ, թաղիք, յափնջի, զրլիարկ, խուրի, ջրվալ և այլն: Պատրաստվում են նաև մետաքսե և բամբակի գործվածքներ:

Մետաղագործական արհեստներից աչքի յեն ընկնում

արծաթագործությունը և վոսկերչությունը, զենքերի արտադրությունը, պղնձգործությունը և այլն. Կավագործությունը Անդրկովկասում հայտնի և շատ վաղուց:

Բայց վոչ այդ արհեստները և վոչ ել գործարանները տեղական կարիքները չեն ծածկում: Այդ պատճառով Խորհրդ իշխանությունը Անդրկովկասի արդյունագործությունը բարձրացնելու համար դիմում և մի շարք միջոցների: Այդ միջոցներից մեկն ել ելեկտրիֆիկացիան և:

Ելեկտրականությամբ կարելի յէ լուսավորել աները, զանազան մեքենաներ պատեցնել, մետաղներ հալել, հողերը պարարտացնելու համար զանազան նյութեր պատրաստել և այլն: Կան այնպիսի մեքենաներ, վոր յեթե նրանց պատենք, այն գեպքում կատանանք ելեկտրական հոսանք: Առաջ այդ մեքենաները պատովում ենին նավթի և քարտածիսի ուժով, իսկ այժմ պատեցնում են գետերի ուժով: Ինչպես վոր գետի ուժից պատովում են անիվը և ջրաղացաքարը, այնպես ել կարող ել պատվիել ելեկտրական մեքենայի առանցքը: Յերբ այդ մեքենայի առանցքը պատովում ե, այդ գեպքում ստացվում ե ելեկտրականություն, վորը տարգում ե գործարանները և նրա ոգնությամբ այնտեղ կատարվում են զանազան աշխատանքներ: Այն կայարանները, վորտեղ ելեկտրականությունն ստացվում ե ջրի ուժի ոգնությամբ, կոչվում են ջելեկտրական կայարաններ: Այդպիսի կայարաններ են Յերևանի, Թիֆլիսի (Զագեսի), Արաշի կայարանները: Նոր կառուցվող կայարաններից նշանավոր են Չուազեսը (Առում), Քիոնիքեսը (Քութայիսի մոտ), Աջարիս-Ծղալի կայարանը (Աջարայում) և այլն:

Թե վորքան մեծ նշանակություն ունի ելեկտրական հոսանքը, այդ յերեսում ե նրանից, վոր այժմ Յերևանի ելեկտրական կայարաննը վոչ միայն լուսավորում ե ամբողջ քաղաքը, այլ և աշխատեցնում ե զանազան մեքենաներ: Բացի այդ՝ Յերևանից ելեկտրական հոսանքը վորխաղը մեծ Այղբը-լիճ և աշխատեցնում ջրնան մեքենա-

Ներ: Այդ ջրհան մեքենաներով լճից ջուրը հանում են և մղում փարելահողերը: Չորագեսի կայարանը եներգիա կտա յերկաթուղուն, բիմիական գործարաններին, կլուսագորե լոռու շրջանը և այլն:

Այսպիսով ելեկտրական կայարանները կրաքրացնեն մեր յերկրի տնտեսությունը, կզարդացնեն հաղորդակցության միջոցները և այլն:

Անդրկովկասի յերկարուղիներ:

Անդրկովկասի քարտեզի վրա ցույց տվեք այն յերկաթուղիները, վորով կարելի յե Յերևանից գնալ Թյուրքիա և Պարսկաստան:

Ցույց տվեք Բաթում—Թիֆլիս—Յերևան, Բագու—Թիֆլիս—Յերևան, Բագու—Թիֆլիս—Բաթում յերկաթուղիները:

Բագուն և Բաթումը ինչ նշանակություն ունեն Անդրկովկասի համար:

Անդրկովկասը լեռնոտ յերկիր ե և բոլորովին զուրկ քնական հարմար ձանապարհներից: Գետերը մանր են և արագահոս: Այս ու այն ուղղությամբ անցնում են զանազան լեռներ, վորոնք գժվարացնում են Անդրկովկասի տարրեր մասերի կապը: Այդ պատճառով յերկաթուղիները մեր յերկրի առևտորի և տնտեսության զարգացման համար շատ մեծ նշանակություն ունեն: Նրանց վրայով մեր յերկիրը առեսուր ե անում ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի հետ, Բաթումի վրայով՝ յեվրոպական յերկրների հետ և այլն: Մյուս կողմից այդ յերկաթուղիները կատում են Անդրկովկասի հարուստ շրջանները կենտրոնների հետ՝ ուրինակ՝ Կախեթի գինեգործական շրջանը կատվում ե Թիֆլիսի հետ, Զիատուրիի գիծը միացնում է այդ հանքային շրջանը Անդրկովկասի գլխավոր յերկաթուղային գծի հետ և հնարավորություն տալիս ստացված հանքերը փոխադրել Բաթում, այստեղից ել արտասահման:

Անգրկովկասի յերկաթուղիների ընդհանուր յերկա-
րությունն է 2268 կիլոմետր, վորից.

Աղբրեջանում	գտնվում	և 997	կիլոմետր
Վրաստանում	»	896	»
Հայաստանում	»	375	»

Անգրկովկասի յերկաթուղիներից ամենակարեսք այն
զիծն է, վորն սկսվում է Բագվից և Թիֆլիսի վրայով
համառում և մինչև Բաթում։ Առաջ Բագվի նավթը այդ
յերկաթուղով փոխադրվում էր Բաթում, իսկ այնտեղից ել
արտասահման, իսկ այժմ՝ Նրա ամբողջ յերկարությամբ
անցնում է նավթատար խողովակ, վորով նավթը մղում
են Բաթում, Բագվու-Բաթում զիծն ամբողջ Անգրկովկա-
սի համար մեծ նշանակություն ունի. նու մի կողմից Սև
ծովի վրայով կապվում է արտասահմանի հետ, իսկ մյուս
կողմից՝ Հյուս. Կովկասի վրայով՝ Մոսկվայի հետ։

Բագվու-Բաթում գծից սկսվում են մի շարք ճյուղեր,
վորոնցից յուր նշանակությամբ առաջին տեղը բռնում
է Թիմիլիս-Լելինալիսի-Յերեվան-Դուրբա գծը։ Այս
գծի սղնությամբ Հայաստանը կապվում է մի կողմից
Պարսկաստանի և Թյուրքիայի հետ, մյուս կողմից՝ Սև ծովի
և Բագվի վրայով Մոսկվայի և արտասահմանի հետ։

Մյուս գծերից նշանավոր են

1. Կախերի յերկարուղին. — Թիֆլիսը միացնում է
զինեղործությամբ հարուստ Կախեթի հետ։

2. Բորժոմ-Բակուրիանի գիծը. — Կուրորաները միաց-
նում են Անգրկովկասի զինավոր գծի և կենարոնների հետ։

3. Զիարուրի յերկարուղին. — մանգանի հանքավայ-
րերը միացնում են զինավոր յերկաթուղու հետ։

4. Թբիլիսի-Բորայիսի գիծը. — քարածխի հանքա-
վայրերը միացնում են զինավոր գծի հետ։

5. Սամցեղի-Փորի

6. Նորանի-Ռզմիրը և այլն։

Կառուցվում ե Ալյար-Զուլֆայի գիծը, վորը սկսվում է Բագվից 84 կիլոմետր հեռավորության վրա, Ալյաթ կայարանից և, կտրելով հարուստ Մուղանի տափաստանը, Զանգեզուրի պղնձահանքերի մոտավ միանում է Զուլֆայի հետ. Այսպիսով Բագուն կապվում է Հյուս. Պարսկաստանի հետ. Նա մեծ նշանակություն կունենա մանավանդ Զանգեզուրի համար. պղնձահանքերի համար ստացվող քարածուխը և արտազրված պղինձը այլևս ուզուերով ու ջորիներով չեն փոխազրվին Մոտ ապագայում կավարված այդ գիծի կառուցումը:

Չափազանց կարենոր նշանակություն ունի նաև Բագու-Թերքենի գիծը, վորը կազմում է Բաթում-Բագու գծի շարունակությունը և Անդրկովկասը միացնում է Հյուս. Կովկասի հետ:

Մասշտարի ոգնությամբ չափեցեք Բագու—Բաթում, Բաթում—Թիֆլիս—Յերևան գծերի յերկարությունը:

Անդրկովկասը համբ քարտեզի վրա յերկաթուղային, գծերի վրայով կարմիր գիծ քաշեցեք:

Ցույց տվեք այն կայարանը, վոր ձեր բնակավայրին ամենամոռն և Այդ կայարանը ձեր բնակավայրից քանի կիլոմետր և հեռու կայարանը ձեր բնակավայրի հետ ինչ, ճանապարհով և միացած. Նա ինչ նշանակություն ունի ձեր շրջանի համար:

Անդրկովկասի առաջին առաջին տեսանք. Կիչչերի գլխավոր պարապմունքը զյուղատուրը: Մնակեսությունն և, արդյունագործությունը բավական թույլ և և յերկրի կարիքները չի ծածկում: Այդ պատճառով Արդրկովկասից արտահանվում են զլիսավորապես զյուղատեսական ապրանքներ, իսկ նրանց փոխարքեն ներմուծվում են զործարանային պատրաստի իրեր: Բացի զյուղատեսական ապրանքներից մեր յերկրից արտահանվում են նաև մեծ քանակությամբ նալիք, պղինձ և մանկան:

Աւրամանվոր ապրանքներ

Նազիթ, պղինձ, բամբակ, ձուկ, սպիրտ, գինիներ, կաշի, բուրդ, ընկույզ, հանքային ջրեր, թարմ միրգ, մրգի պահածոներ, մետաքս, խողի մազ, ծխախոռն, թանգարժեք փայտ, գորգեր և այլն:

Ներմուծվոր ապրանքներ

Հաց, կարտոֆիլ, թեյ, շաքար, յուղեր, գործվածքներ, կերպաթ, մերինաներ, ցեմենտ, ղեղորայք, կոքս, թուղթ, լուցկի, ազ, ապակեղեն, թոկեր և այլն:

Անդրկովկասի հանրապետություններից յուրաքանչյուրն ինչ ապրանքներ կարտաղրի:

Ցույց ավելք Բաթում—Աղեսսա—Խարկով, Բաթում—Եսվորսսիյակ—Կրասնոգար, Յերևան—Թիֆլիս—Բագու—Ռոստով—Մասկով, Թիֆլիս—Բագու—Աստրախան—Վոլգա, Բագու—Ենցելի (այժմ Փեհլեվի), Լենինական—Կարս, Յերևան—Զուլիս—Թավրիզ—Հայքիալիք ճանապարհները:

Իտալիայի Նեապոլ նավահանգստի և Ֆրանսիայի Մարսել նավահանգստի հետ Անդրկովկասն ինչ ծովերով ե կապվում:

Հասկանալի յե, ի հարկե, վոր մեր զիսավոր առեվտուր կատարվում է ԽՍՀՄ-ի կենտրոնիների նետ: Աւլիպայ-Նայից ստանում ենք շաքար, Մոսկվայից՝ գործվածքներ և այլ ապրանքներ, Հյուս. Կովկասից՝ հաց, բուսական յուղ, ցեմենտ և այլն. Սիրիբից՝ կովի յուղ: Անդրկովկասի հում նյութի խոշոր մասն ուղարկվում ե Մոսկվայի արդյունաբերական շրջանը:

Անդրկովկասն առևտուր և անում նաև մի կողմից յեվրոպական յերկրների (Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի) և Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, իսկ մյուս կողմից՝ Պարսկաստանի և Թյուրքիայի հետ:

Սև ծովի վրայով Անդրկովկասը ղեղի յեվրոպական յերկրներ փոխադրում ե նազիթ, մանգան, յեղիպտացորեն

քուսպ, բուրդ, ծխախոտ, մետաքս, չոր միրզ և այլն, իսկ գրանց փոխարեն ստանում են զեղորայք, մեքենաներ, ցեմենտ, թեյ և այլն:

Անդրկովկասը Զուլֆայի և Բագվի վրայով մեծ տռետառ ունի նաև Պարսկաստանի հետ. բայց այս գեղքում Անդրկովկասն ավելի շուտ միջնորդի դեր և կատարում է ԽՍՀՄ-ից Անդրկովկասի վրայով Պարսկաստան են արտահանվում՝ շաքար, գործվածքներ, սպակեղեն, լուծկի, յերկաթեղեն և այլն, իսկ Պարսկաստանից ներմուծվում են բրինձ, բամբակ, չոր միրզ, կաշի, գորդեր, հում մետաքս և այլն, վորոնց խոշոր մասն ուղարկվում են ԽՍՀՄ-ի Յեղորական մասը:

Անդրկովկասի կենտրոնն է Թիֆլիսը, Անդրկովկասի վոր միենույն ժամանակ կենտրոնն է Վրաստավարականը՝ տանի հանրապետության համար: Ունի ներք:
 բարձրագույն դպրոցներ, սագնի, ձեթի, ծխախոտի, մանվածքների, սպիրտի գործարաններ: Առևտրական խոշոր նշանակություն ունի:

Վրաստանի մյուս քաղաքներից նշանակոր են՝
Բարთևմը—գանգում և Սև ծովի ափին, նավահանգիստ և: Աջարստանի վարչական կենտրոնն է.

Սովորմը—Արխագիսի կենտրոնն է: Ծխախոտ:
Փորին—նավահանգիստ և Սև ծովի ափին: Քութայիսը—Վրաստանի յերկրորդ մեծ քաղաքն է. Գորին—այգեղործական շրջանի կենտրոն: Բորժոմը և Արարումանը—հայտնի բռժարաններ են: Ախալցխա, Սամբեղի, Թելավ, Սղնախ, Ցիսինվալ, Լյուսենքուրգ, Շամումյան և այլն:

Հայաստանի վարչական կենտրոնը Յերևանն է, վորք ունի բարձրագույն դպրոցներ, սպիրտի, կաշի, բամբակի, ձեթի, կարբիդի գործարաններ և այլն:

Լենինական—Հայաստանի յերկրորդ մեծ քաղաքն է. Հայտնի յերւոր բամբակի գործվածքների գործարանով:

առևտուր թյուրքիայի հետ։ Պարագիլիսս—մեղք, ամառանոց, Աօսարակ—զինիր, Վաղարշապատ։ Գիլիջալի—աւագուանոց, բուժարան։ Եռք-Բայազէ։ Ստեփանավան—սպանրազործարաններ։ Գորիս—Զանգեզուրի կենտրոնն եւ Քեչիչենից։ Մելրի, Պարար։

Ազրբեջանի գլխավոր կենտրոնը Բագուն է, վոր հայտնի և յուր նավթային հարստություններով։ Նավահանգիստներ, ունի բիմիական գործարաններ, բարձրագույն դպրոցներ և այլն։ Գանձակ—զինեզործության և բամբակի մշակության կենտրոն։

Նախիջեվան—համանուն հանրապետության կենտրոնն եւ աղահանքեր։ Ստեփանավերս—ինքնավար Ղարաբաղի կենտրոնն է։ Խոլիս, Շամախի, Սալյան (ձկնորսարաններ); Լենինրան, Պոլքա, Անդամ և այլն։

Անդրկովկասի քարտեղի վրա գտնեք այդ քաղաքները։ Քարանեղի ողնությամբ գտնեք այն ձանապարհները, վորոնցով կարող եք ձեր ըրջանից գնալ Անդրկովկասի զանազան քաղաքները։

Անդրկովկասի համբ քարտեղի վրա նշանակեցնեք զբուխավոր քաղաքները։

Ձեր բնակավայրի ամենատարած քաղաքը վճրն է։ Դուք վոր զավառում եք ապրում։ Ձեր զավառի կենտրոնն ինչպես է կոչվում։

Կատարեցիք աշխարհ։ ահարի 55, 56 աշխատանքները։

Գ.

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Հյուսիսային Կովկասի ափերը բնչ ծովեր են վողողում։ Գտնեք նրա սահմանները։

Հյուս։ Կովկասն ինչպիսի մակերեսույթ ունի, լեռները նրա վճր կողմումն են բարձրանում։

Գտնեք գլխավոր գետերը։ Նրանք վարտեղից են սկսվում և դեպի ռեր են հոսում։

Հյուս։ Կովկասի արևմտյան մասերն են շատ վոռոգվում, թե արևելյանը։

Ե՞նչ հանքեր կան: Յույց տվեք հանքային աղբյուր-ների խռոմը (Պյատիգորսկ, Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ, Եսանսկային և այլ հանքային աղբյուրներն ի՞նչ նշանակություն ունեն:

Յույց տվեք Ռազմավերական ճանապարհը: Նա Անդըր-կովկասի վճր քաղաքում և սկսում և դեպի վճր քաղաքն և գնում:

Յույց տվեք զլիսավոր յերկաթուղային գծերը: Գտեք Յերեան—Բագու—Մախաչկալա — Վազիկավիլազ — Խոսովոյ յերկաթուղային գիծը:

Սև և Կասպից ծովերի ափին ի՞նչ նավահանգիստներ կան (Հյուս, Կովկասի սահմաններում):

Անդրկովկասից կարող ենք չյուսիսային Կովկաս գնալ Շետեյալ յերեք ճանապարհներով 1. Յերեան—Թիֆլիս—Բագու—Մախաչկալա—Վազիկավիլազ (յույց տվեք), 2. Յերեան—Թիֆլիս—Բաթում—Նավորոսիյսկ — Կրամնոգար (յույց տվեք) և 3. Յերեան—Թիֆլիս—Վազիկավիլազ (ուղղմավիրական ճանապարհով):

Չյուսիսային Կովկասի մակերեսույթի մեծ մասը հարթություն և, վորն սկսվում և Կովկասյան լեռների ստորաներից և տարածվում և մինչև Կումա-Մանիչի ցածրությունը: Այդ հարթությունն մեջուղը բարձրանալում և Ստավրոպոլի բարձրավանդակը, վորով Հյուս, Կովկասը բաժանվում և յերկու մասի—Արևիլյան և Մեծիլյան:

Արևմայան տափաստանները վսոսդվում են Սև ծովից փշող քամիներով, ծածկված են արգավանդ սեանողով և յերկրագործության համար շատ հարմար են. արևելյան տափաստաններն, ընդհակառակը, չոր են և հողը բաղկացած և կավից, ավազից և աղուտներից:

Գետերն սկսվում են Կովկասյան լեռնաշղթայից և հոսում են գեղի հյուսիս, բայց Ստավրոպոլի բարձրավանդակի պատճառով փոխում են իրենց ընթացքը և ծըռչում գեղի Սև և Կասպից ծովերը: Մերձկասալյան տափաստանների գետերը մեծ մասամբ սակավաջուր են և

շատերը ծովը չհասած կորչում են ավազների մեջ։ Դեպի կասպից ծովը հոսող գետերից ամենամեծը Տերեկի է, վորն սկսվում է Կովկասյան լեռնաշղթայի սառցագաշտերից և Դարյալի կիրճով, Վազդիկավկազի միջով հոսում է գետի կասպից ծովը։ Կուման նույնպես լեռնաշղթայից և սկսվում։ Կասպից ծովին չհասած, նա կորչում է ավազների մեջ և գոյացնում ճահճներ։ միայն գարնան վարարումների ժամանակ նա կարողանում է թափվել կասպից ծովը։ Կուբանի սկսվում է Ելբրուսի սառցագաշտերից։ հոսում է նախ գետի հյուսիս, ապա գետի արևմուտք և մի ճյուղով թափվում է Ազովի, մյուս ճյուղով Սև ծովի մեջ։

Հյուս. Կովկասում ազգաբնակությունը Բնակիչներ յեզի բաղկացած և շատ ժողովուրդներից։ Դրանց երանց պարագաները՝ մեջ առաջին տեղը բռնում են ուրային ցիները (կազակները), ապա ռուսները. լեռների ստորոտներում և Հովհաններում ապրում են կովկասյան ժողովուրդները—Կարարդինեները, Ռուսեր, Ենիքուները և այլն։

Ուկրայինցիները և ռուսները պարագում են զինավորապես յերկրագործությամբ և անսամնապահությամբ։ Սրբամյան տափաստաններում նրանք ցանում են մեծ քանակությամբ ցորեն, զարի, յեզիպտացորեն։ Բերքն այնքան մեծ է լինում, վոր մի մասը տեղափոխում են ԽԱՀՄ-ի հացի պակասություն ունեցող շրջանները։ Այդ հացը մենք ել ենք ներմուծում Կուբանի ալյուր անվան տակ։ Յերկրագործությունը զարգանում է բարգական արագ քայլերով։ այդ բանին նպաստում են Տավուրները և գյուղատնտեսական մեքենաները, վորոնք բարգական մեծ չափերով տարածվում են զյուղերում։ Բացի հացահատիկներից մեծ չափով մշակվում են նաև արևվածարիկ, վորի սերմերից մեծ քանակությամբ ձեթ և ստացվում։ ծխո-



Նկ. 43. Ասեր:

իստ և այլն: Բանջարանոցներում և այգիներում տարածված են ձմերուկ, վարունգ, կաղամբ, պամիզոր, զանազան մրգեր և այլն: Ըստհանրապես Հյուս. Կովկասի ամենահարուստ մասը արևմտյան տափաստաններն են:

Արևելյան տափաստաններն, ընդհակառակը, ալքատ են: Կիմայի չորության պատճառով յերկրագործությունը մեծ արդյունք չի տալիս: Խորհրդային իշխանությունը այստեղ անց և կացրել «Հոկաեմքերյան հեղափոխության» ջրանցքը, վորով վոռողվում են զաշտերը և այգիները: Զրովի աեղերում ապրում են ռուսներ և հայեր, վորոնք մշակում են այգիներ և մեծ քանակությամբ գինի պատրաստում: Մողղոկի և Դղլարի գինիները հայտնի յեն վոչ միայն Հյուս. Կովկասում, այլ և ամրող ԽՍՀՄ-ում: Չոր տափաստաններում իրենց անաստններով թափառում են նողայցիներ, և դարձնիներ:

Լեռների ստորաներում և լեռնալանջերում ապրում են կովկասյան ժողովունքներ, արևմտաքում չերեղիներ,



Նկ. 44. Կաբարդիններ

Կաբարդիններ և այլն, միջին մտակրում ուներ, իսկ արևելքում—չեղենները և լեզգինները: Կովկասցինների զիսավոր պարագմունքը յերկրագործության և, ցանում են զարի, բայց կլիմայի ցրտության և հարմար հողերի սակագության պատճառով մեծ բերք չեն ստանում: Մեծ չափով տարածված և և անասնապահությունը: Վոչխարի բրդից պատրաստում են օվլեր (չուխացու), յափնջի, գորգեր, զիսարկներ և այլն: Կաբարդինների ձիերը իրենց տոկունությամբ հայտնի յեն ամբողջ Միության մեջ:

Հյուս. Կովկասը հարուստ և զանազան հանքային աղ-

քյուրներով, վորոնք զանգում են Մատուկի, Բեսանու լիռների ասորոտներում և իրենց բուժիչ ջրով հայտնի յեն ամրող աշխարհում։ Այդ աղքյուրների մաս են զանգում Կիսովողսկի, Ժելեզնովողսկի, Պյատիգորսկի, Եսաենուկի կուրուրները, վորոնեղ բժշկվում են և. Միության զանազան ծայրերից յեկած հիվանդներ։

Հյուս. Կովկասը հարուստ և և նավթով։ Գրոզնի քաղաքի մաս ստացվում է մեծ քանակությամբ նավթ, վորը խողովաճներով մզվում է Մախաչկալա, այսաեղից ել նավերով փոխազրպում ԽՍՀՄ-ի Յեկատերինա մասի կենտրոնները։ Նավթահանքեր կան և Մայլովի մաս։

Հյուս. Կովկասն այժմ վարչական տեսայուխային սոսկետից միանում և նախակին Դոնի շրջանիկասի վաշչական բաժան նի հետ և կազմում ե վարչական մի առանձին միավոր, վորը կոչվում է Հուսիսային—Կովկասյան յերկիր։ Վարչության կենտրոնը Մոսկվին և, վորը վոչ միայն կարենը նավահանգիստ և, այլ և առեւրական՝ և արդյունաբերական խոշոր կենտրոն։ Մյուս քաղաքներից նշանավոր են Վանդիլիավուլիազը, Կրասնոդարը (ձեթի գործարաններ), Ստավրովով, Նովոռոսիյունը (նաև վահանգիստ և Ահ ծովի ափին, արտահանում և ցորեն և գարի), Մախաչկալան (նավահանգիստ Կասպից ծովի ափին, նըռա վրայով կատարվում և նավթի փոխազրություն), Գրոզնի (նավթի արտադրություն), Կիսովողսկի, Ժելեզնովողսկի, Պյատիգորսկի հայտնի յեն իրենց բուժիչ ջրերով։



Նկ. 45. Ղարման

Հյուս. Կովկասյան յերկրի մակարդակը հավասար է՝ 293.033 քառ. կիլ., իսկ բնակիչների թիվը՝ 8.325.000։ Հյուս. Կովկասում ապրող ժողովուրդներից շատերն ունեն ինքնավարություն։ Այդ ինքնավարությունները հետեւյալն են։

1. Ազգիկ (Չերքեզական) ինքնավար շրջ. 117.100 ժ.	Կենտր. և Կրաօնոցար
2. Բնագուշեթիա » » 74.900 ժ.	Վլագիկավկաց
3. Կարարզինա-Բալկարյան » 203.700 ժ.	Նարչիկ
4. Կարաչայա-Չերքեզակ.	Բասարայաշինուկ
5. Հյուս. Ռութիա » » 52.000 ժ.	Վլագիկավկաց
6. Չեչենական » » 310.000 ժ.	Գրազնի
7. Դաղստանը բնիք. Ասց.	Մախուչ-Կալա
Խոր. Հանրապետութ. » » 786.800 ժ.	

Մենք տեսանք, վոր Հյուս. Կովկասը Հյուս. Առինիանի բավական հարուստ յերկիր և. Նա ապիս հաղորդակցուր. և ձեթ, միս, նազթ, հաց. Այդ ապրանք-միջոցները՝

ների խոշոր մասը ուղարկվում են ԽՍՀՄ. ի արդյունագործական կենտրոնները, իսկ մի մասն ել արտասահման։ Մյուս կողմից Միության կենտրոններից Հյուս. Կովկասն ստանում ե զործարանային ասպրանքներ—մեքենաներ, թոկեր, շաքար, զործածքներ և այլն։ Այդ ասպրանքների փոխադրությունը կատարվում է յերկաթուղիներով և ծովերով։ Գլխավոր յերկաթուղային դիմու սկսվում է Գերրենդից և Վլագիկավկազից վրայով հասնում և Խոստով։ Այդ զծի աջ ու ձախ կողմից անցնում են մի քանի ճյուղեր, զորոնցով յերկրի հեռավոր մասերը միանում են գլխավոր զծի հետ։

Հյուսիսային Կովկասը քանի մասի կարելի յերաժանելու Ազգարնակությունն ինչպի և սուրապում։ Յերկրում վոր հացահատիկներն են արտածված։

Հյուս. Կովկասից ի՞նչ են արտահանում։

Անդրկովկասն ի՞նչ և ստանում Հյուս. Կովկասից։

Նովորոսիյսկի վրայով ի՞նչ ապրանքներ են արտահանվում։

Անդրկովկասից ամեն տարի մեծ քանակությամբ հիգանդներ ուղևորվում են Կիսլովոզս բժշկվելու համար, Ցույց տվեք այն ճանապարհը, վորով Յերեանից Կիսլովոզս են զնուում:

Աջատաճի. — Կովկասի բելեփ քարտեզի վրա գտեք Մտավրոպոլի բարձրավանդակը, Մերձկասալյան և Մերձազովյան տափաստանները, Բարձրավանդակները ներկեցեք զեղին, իսկ դաշտավայրը՝ կանաչ զույնով:

Կովկասի համբ քարտեզի վրա նշանակեցեք զլիավոր գետերի, քաղաքների և ինքնավար շրջանների անունները:

Ցնքնավար շրջաններից յուրաքանչյուրը ներկեցեք մեռանձին զույնով. (Աշխարհ, տեսր, աշխ. 57 և 58):

ԽՍՀՄ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԸ

ԽՍՀՄ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասը բռնում է ՅԵՎՐՈՊԱՅԻ արեւելյան կեսը և հայաստր և մոտ $4\frac{1}{2}$ միլիոն քառակուսի կիլոմետրի: Արևմուտքից նրա սահմաններն են Ֆինլանդիան, Ֆինական ծոցը, Եստոնիան, Լատվիան, Լեհաստանը և Ռումանիան, արևելքից՝ Ռւբալյան լեռները և Ռւբալ գետը, հյուսիսից՝ Հյուս, Բելուային ծովը, իսկ հարավից՝ Հյուս. Կովկասը, Սև և Կասպից ծովերը:

Միության ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասի համբ քարտեզի վրա նշանակեցեք շրջապատղ ծովերի, լեռների և սահմանակից պետությունների անունները:

Մատշտարի ողնությամբ խմացեք, թե Սև ծովի ափից մինչև Սպիտակ ծովը և Լեհաստանի սահմանից մինչև Ռւբալյան լեռնաշղթան քանի կիլոմետր է:

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասն ինչպիսի մակերեսությունի լեռները նրա վեր մասում են զտնվում:

Հիշեցեք ԽՍՀՄ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասի զլիավոր գետերը և լճերը: Ի՞նչպիս և կոչվում այն բարձրությունը, վորտեղից սկիզբն են առնում զլիավոր գետերը: Գետերից ամենամեծը վերն է, ինչ նշանակություն ունի նա:

Խոշու ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասի կիման դեսի հյուսիս առ տիհանաբար ցրտում է: Արևմույն կողմից ինչ քամիներ են փշում: Վոր մասն ունի շատ չոր կլիմա:

Ամփափի կերպով պատմեցի ԽԵՂՄ-ի Յելքոպական մասի սահմանները, մակերեվույրի կազմուրյունը, լիլիման յել գետերն ու լճերը:

Աշխատանիք.—Խ. Միության Յելքոպական մասի համբ քարտեզի վրա ծովերը ներկեցեք կապույտ գույնով։ Գրեցեք ծովերի գլու։ Կղզիների, գետերի անունները։ (աշխատանիք, աշխատանիք, 59):

Յեթե Սև ծովի յեղերքից ուղերդվելու

Խ. Միության լինենք դեսի հյուսիս, այն դեսպում մենք Յելքոպական կտեսնենք, վոր կլիման աստիճանաբար մասի բնական օրշանները։ ցրտում ե, և զրա հետ միասին փոխվում ե բռւսականությունը։ Սկզբում մեր ճանապարհը կանցնի Ռւկրայինայի և Հար։ Ռուսաստանի ընդարձակ սափառանին մասն վարդակ արգավանդ սեանոզի պատճառով հացահատիկների մշակությունը մեծ տեղ է քոնում։ Տափաստաններից հետո կմանենք խառն, ապա փշատերեվ անսառները և վերջը գուրս կրանք սունդրաները, վորոնք փռվում են Հյուս։ Բեեռ։ ծովի յեղերքներին։

Եցապիսով ստացվում են հետեւալ չորս շրջանները։

1. Տունդրաների գոտի կամ գոնա, 2. փշատերեվ անսառների գոտի, 3. խառն անսառների գոտի, 4. սափառանների գոտի։

Բացի Յելքոպայից, ել վոր աշխարհամտակրում տունդրաներ և փշատերեր անսառներ կան։ ցույց տվեք։

Խ. Միության Յելքոպական մասի քարտեզի վրա ցույց տվեք բռւսական գլխավոր զոտիները և ապա այդ զոտիներից յուրաքանչյուրը ներկեցեք մի վորեւ զույնով։ (Աշխարհ, անոր)։

Կատարեցեք տեսրի 60-րդ աշխատանքը։

ԿՅԱՆՔԸ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՏԱՐԲԵՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Յուս։ բեկուամ։ Հյուս։ բեկուային ծովի, ինչպես դիտենք, յին ծովի։ տարվա մեծ մասը ծածկված է սառուց և սառուց ներով։ Այդ ստուցներից ազատ է մասն միայն Մուրանի ծովը, վորեղ մուտք և զործում Գոլֆա շարումի մի ճյուղը։

Վորովհետեւ Հյուս. Բնեռային ծովը բնեռային շրջանից հյուսիս և գտնվում, այդ պատճառով այնտեղ ձմեռվարնթացքում ամիսներ շարունակ բնեռային գիշերներն են իշխում, իսկ ամառը՝ ամիսներ շարունակ արել մայր չի մտնում: Ծովափից գեղի հյուսիս վորքան շատ ենք հեռանում, բնեռային գիշերները և ցերեկները այնքան ավելի յերկարածե են լինում: Այսպես, որինակ՝ Կոլաթերակղզու ափին գիշերը յերկու ամիս և տևում, նոր Յերկուում 3—4 ամիս, իսկ հյուսիսային բնեռում՝ 6 ամիս: Այդպահ ժամանակ արել յերկնակամարի վրա չի յերեռում,



Նկ. 46 Մուրմանի ծովեգերբին:

ամենուրեք տարածվում ե խավարը և միայն յերեմն հյուսիսափայլը յուր ազոտ լույսը ձգում և սառուցների վրա: Գալիս ե ամառը: Ակավում ե բնեռային յերկարածե ցերեկը: Ամիսներ շարունակ արել վոչ ծագում ե և վոչ ել մայր մտնում: Նա շարունակ պառայնել ե կատարում յերկնակամարի վրա, բայց նրա թեք ընկնող ճառագայթները անզոր են ձյունի և սառուցի այդ աշխարհը բավականաչափ տաքացնելու: Ծովի վրա շարունակ ցուրտ յեղանակներ են լինում: Ջրային բնողարձակ տարածություն-

Ները հաճախ ծածկվում են մառախուղներով, յերբեմն ել ձյուն ե գալիս:



Նկ. 47 Հուս. Բեն, ծովում
(սպիտակ արջ, ծովացու և փոկ)

Են թուանիւր, վորոնք կոչվում են պունտիւր և պարապում են ձկնորսությամբ:

Ամեն տարի զարնանամախն Հյուս. Բեն. ծովից գետի Սպիտակ ծովին են շարժվում ահազին քանակությամբ փոկեր: Այդ ժամանակ պոմորները նավակներով ծովին են դուրս գալիս և լողացող սառուցների վրա վորսում նրանց:

Գլխավոր ձկնորսաբանները գտնվում են Մուրմանի ափերին: Այստեղ վորսում են ահազին քանակությամբ փրփրուկներ, վոր հյուսիսային յերկրների ընակիչների սիրած կերակուրն և: Գարնան վերջը, յերբ Սպիտակ ծովին ազատվում և լողացող սառուցներից, պոմորներն ուղենորսում են Մուրմանի ծովափբար: Նրանք այստեղ կանգ են առնաւմ իրենց կայտաններում, վորոնք ձմեռն անմարդաբանակ են լինում և սկսում են վորսի պատրաստություն:

Հենց վոր ծովին ազատվում ե սառուցների ծածկոցից, ամբողջապես ջրի խորքից յերեան են գալիս բազմաթիվ մանր ու խոշոր ձկներ— ծովային նարինգներ (սերդ), փրփրու կենց (արեսկա) և այլն: Դրանց հետապնդում են փոլիերն ու դեղքիներներ: Տեղական լողում են կետերը, իսկ նոր Յերկրի ափերին պատահում են նաև սպիտակ արջեր:

Հյուս. Բենուային ծովի ափերին շատ ֆիջ մարդ և սպրում: Մուրմանում և Սպիտակ ծովի ափերին ազգում

տեսնել։ Զուկը փորսում են կարթերով, փորսնք հազար-
ներով ամրացրած են լինում 3—5 կիլոմետր յերկարու-
թյուն ունեցող պարանների վրա։ Զկների գուշները
կտրում են, չորացնում և պահում, փորողես ձմեռային
պաշար, լյարդից ձկան յուղ են ստանում, խել մարմինը
տակառների մեջ աղում են և փոխադրում Արխանգելսկ
վաճառելու համար։



Նկ. 48. Պոմորներ

Աշնանը, յերբ ովկիա-
նոսի վրա յեղանակները
խառնվում են, պոմորները
թողնում են Մուրմանը և
վերադառնում իրենց զյու-
ղերը, փորսնք ցրված են
Սալիտակ ծովի ափերին։
Այստեղ ել փորսում են
սարմնն (սեմզա) և սերդ։
Զմեռն անց են կացնում
տներում և դարնան նոր
փորսի պատրաստություն
տեսնում։

Հյուսիսային ծովերը
ձկներով շատ հարուստ են,
բայց մեր ձկնորսները դեռ

չեն կարողանում նրանց ոգտագործել, փորովնետի հարմար
նավեր չունեն Առագաստավոր նավերով ծովափից շատ
չի կարելի հեռանալ, փորովնետի Հյուս. Բևեռային ծովում
հաճախ կատաղի փոթորիկներ են լինում։ Նորվեգացիներն
ու անգլիացիները լավ նավեր և ձկնորսական հարմար
պարագաներ ունեն, այդ պատճառով նրանք համարձակու-
րեն բաց ծով են գուրս գալիս և մեծ քանակությամբ
փրփռվելին փորսում։ Յերբեմն ել ոգտվելով իրենց նավերի
արագությամբ մանում են մեր ծովերը և ծուկ փորսում։

Ցույց տվեք Հյուս. Բնեաային ծովը՝ այնակղ Բնչ
կղղիներ կտնն
Այդ ծովագին ինչով կարելի յե պարապել
Ի՞նչպես են կոչվում այն սուսները, վորոնք ազգում
են Բնեաային ծովի յեզերներին:
Ի՞նչու պոմորները ափից շատ չեն կարողանում հեռա-
նալ:

Երջանի ներբական խնդիրներ.

1. Լավացնել ձկնորսական նավերը 2. Ձկնորսությունը
լավ հիմքերի վրա դնել: 3. Ուժեղացնել ձկների արահա-
նությունը:

**Խ. Միուրյան
Յեղորդական
մասի տանըրա-
ները**

Հյուս. Բնեաային ծովի յեզերներով
բավական լայն շերտով ձգվում են տունդ-
րաները: Նրանք ցուրտ, դաժան և միտ-
ու պաղտղ տարածություններ են, վորտեղ
տարվա մեծ մասը փչում են սոսկալի ցուրտ քամիներ:
Զմեոը յերկար ժամանակով արել թագնիում և հորիզոնից
տակ և տունդրաները ընկղմվում են բնեաային խավարի
մեջ: Բնությունը աղքատ է, ոմենուրեք պատահում են
մամուներ ու քսեր: Գետինը 1—2 մետր խորության
մեջ մշտապես սառած է լիում, այդ պատճառով ծառերն
այստեղ չեն կարողանում աճել: Ծառերի փսխարեն մենք
տեսնում ենք մանր թփուկներ, որինակ՝ զածած կեշիներ,
վորոնք աշխատում են գետնին կպած մնալ և իրենց զլուխը
շատ չբարձրացնել, վորովինետե զետինն ավելի տաք է,
քան թե ողը:

Հասկանալի յե, ի հարկե, վոր այլպիսի ցուրտ յեր-
կրում չի կարելի յերկրագործությամբ պարապել, իսկ յե-
թե յերկրագործություն չկա, չկա և մարդու դիմավոր
մնունդը—հացը: Այդ պատճառով տունդրաներում շատ քիչ
մարդ է ապրում, այստեղ կարելի յե անցնել հարյուրա-
վոր վերստեր և վոչ մի մարդու չհանդիպել: Սպիտակ



Նկ. 49. Տառնդրայում:

ծովից մինչև Ռւբալյան լեռներն ընկած տունդրաներում ապրում են ասմոեղիները, վորոնք գեղին ցեղին են ողառկանում։ Նրանց զվարավոր պարապմունքը յեղջերվապահությունն է։ Յեղջերուներից ստանում են և մնունդ, և հագուստ, և բնակարան։ Ապրում են կոնածե վրաններում, վորոնց ծածկում են յեղջերվի մորթով կամ կեչու կեղեսով։ Յերբ յեղջերվի մնունզը մի տեղ պակսում է, նրանք հավաքում են իրենց զույքը, դարսում սահնակների վրա, լծում յեղջերուները և քոչում նոր արոտասեղեր։ Սամոքը բնակություն են հաստատում Բեեռային ծովի ափերին, վորտեղ պարապում են նաև ձկնորսությամբ, իսկ ձմեռը տեղափոխվում են դեպի հարավ, անտառները։ Այստեղ նրանք պաշտպանվում են ձմեռային փոթորիկներից և բացի այդ՝ առաս վառելիք են ճարում։ Ձմեռը սամոեղները տանում են ոռուների և զիրյացիների դյու-



Նկ. 50. Սամոնդներ:

դերը յելչերվի միս և կատի, այստեղ վաճառում են և փոխարենը ձեռքք բերում ալյուր, վառող և կապար:

Կոյա թերակզզու վրա ապրում են լոպարնեցր, վորոնք նույնպես գեղին ցեղին են պատկանում և պարապում են յեղջերվազանությամբ։ Լոպարներն եւ սամոնդների նման խեղճ կյանք են վարում և նրանց թիվը հետքհետե պակասում է։

Տունդրաներում ի՞նչ ժողովուրդներ են ապրում։

Նրանց կյանքը վ՞ը կենդանուց և կախված։

Ի՞նչու սամոնդները յերկրագործությամբ չեն պարապում։

Տունդրաներում մեծ ծառեր կարող են աճել։

Տունդրայի բնության և կյանքի մասին ի՞նչ դիտեք, պատմեցեք։

Կարգացեք «Սամոնդներ» հոգվածը («Աշխարհի շուրջը»):

Տունդրաներից հարավ ֆիննական սահմանից մասից մինչև Ռուբալյան լեռները ձգվում էն փշատերեւ անտառները, վարոնք գլխավորապես շամուց և յեղելնոց են բազկացած։ Պեչորայի ավազանը յեղենու անտառի թագավորությունն եւ Այս մուժ, կուսական անտառներում այսօր ել կարելի յե հանդիպել այսօլիսի բարձրության յեղենիների, վորոնք զործ են ածում նավի կայմեր շինելու համար։



Նկ. 51. Փշատերեւ անտառների կեշպանիներ։

Փշատերեւ անտառների շրջանում արևը յերկնակամաքի վրա ավելի յե բարձրանում և յերկիրն ավելի յե տառացնում, քան տունդրաներում։ այդ պատճառով կիման այստեղ համեմատարար մեղմ է։

Փշատերեւ անտառները հարուստ են զանազան կենդանիներով, այստեղ մշտապես ապրում են սկյուռներ, գայլեր, աղվեսներ, արջեր, նապաստակներ և բազմաթիվ



Ն. 52 Կառերներ:

թոշուններ: Նրանք ծառերի ճյուղերի մեջ և վչակներում իրենց համար բներ ու վորջեր են շինում և ամառ ձմեռ կարողանում են սնունդ ճարել:

Թեև վշատերն անտառներում ավելի շատ մարդ և ապրում, քան թե տունդրաներում, բայց և այնպիս այդ անտառները գեր շատ նոր ազգաբնակություն ունեն: Այստեղ ապրում են ուստիերը և Ֆիննական ժողովուրդներից—Լաւելները (կարելական Ի.Ս.Խ.Հ.), զիրյացիները (Կոմի ինքն. շրջան): Ֆիննական ժողովուրդներն այստեղ բնակություն են հաստատել անհիշելի ժամանակներից, իսկ ուսւները ավելի ուշ են տարածվել, բայց այժմ կազմում են ցջանի ազգաբնակության մեծ մասը:

Բնակիչները պարապում են զլխավորապես անտառային արդյունաբերությամբ և յերկրագործությամբ: Կլիմայի ցրտության պատճառով այստեղ մշակվում են զարի, վարսակ, հանաւ և վուճ, ցորենն ու յեղիպտացորենը չեն համառում: Ընդհանրապես յերկրագործությունն այստեղ կիմայական անոպատ պայմանների պատճառով չէ կարող շատ զարգանալ:

Անտառից ազատ տեղերում նրանք պահում են կաթ-նատու, ընտիր տեսակի կովեր, վորոնք կոչվում են խոլ-մոգորյան կովեր: Կան բազմաթից կաթնատեսական գործարաններ, վորտեղ պատրաստում են ընտիր տեսակի:

յուդ Գովկած և Վոլոգ-դայի լուղ, վորը վոչ միայն Ենինգրագի և Մոս-կվայի շուկան և ուղարկ-վում, այլև մեծ չափով արտահանվում եւ:

Յերկրի ամենամեծ հա-րստությունը անտառն է: Գետերի զետարեաննե-րում կան բազմաթիվ սղո-ցարաններ, վորտեղ պատ-րաստում են գերաններ ու տախտակ և այդ դրու-թյամբ տեղափոխում գեպի հյուսիս — Արխանգելսկ, այսուեղից ել արտասահման: Արևմայան Յեվրոպայի յեր-կրները (Անգլիան, Բել-

Նկ. 53. Զիրյացիներ

գիան և այլն) փայտի մեծ կարիք ունեն: Արտահանած փայտի գնով մենք այդ յերկրներում ձեռք ենք բերում մեքենաներ, վորոնք պետք են մեր արդյունագործության համար:

Փայտեղենի մի մասն ել Վոլգայով փոխադրում են դեպի Հարավ Սալինգրադ, Ասրւախան: Բացի դրանից զյուղա-ցիներն անտառներում այրում են տծուլս, փշատերև ծա-ռերի բնից ու արմատներից ստանում են ձյուք, վորը տականներով փոխադրում են Սրբանդելսկ, իսկ այստեղից ել գործարանները՝ սկիպիոն ստանալու համար:



Զմեռվա սկզբներին, յերբ ձյունի շերտը գես այնքան ել հաստ չի լիում, զյուղացիներն առնում են հրացանները և վորսի գնում։ Անտառներում նրանք առատորեն փորսում են աղվես, սկյուռ և զանազան թռչուններ։

Փշատերե անտառների շրջանում շատ քիչ բնիստոր քաղաքներ կան. յեղածներն ել իրարից բավարար կան հեռու յեն ընկած։ Շրջանի համար մեծ նշանակություն ունի Արխանգելսկը, վորի մասին արդեն քանից հիշել ենք։

Վոլոգդա և Վյատկա—գտնվում են Լենինգրադից Սիբիր տանող յերկաթուղու վրա։

Պերոպավուլսկը գտնվում է Ռուսա լճի ափին, Մուրմանի յերկաթուղու վրա։ Կան սղոցարաններ, կարելի այլ ինքնափար հանրապետության կենտրոնն եւ։

Իմելվակը Վույակների բնիքնավար շրջանի կենտրոնն եւ Հայտնի յե հրացանների գործարանով։

Ա. Յանտարին. — Ներկել փշատերե անտառների շրջանը.
(աշխ. 62):

Ա. Յանտարին. — Խ. Միությունը անտառների ժակարդակով առաջին տեղն և բռնում ամբողջ յերկրագնդի վրաց Յերկրագնդի բոլոր անտառները բռնում են մոտ 2 միլիոնք հեկտար տարածություն, վորից։

ԽՍՀՄ	Ասիական մասում	696			
	Յեկարուպական	171			
Կանագայում			250	»	»
Միաց.	Նահանգներում		187	»	»
Հնդկաստանում			33	»	»
Յապոնիայում			30	»	»
Շվեդիայում			24	»	»
Ֆինլանդիայում			19	»	»
Գերմանիայում			13	»	»
Ֆրանսիայում			10	»	»

Կողք-կողքի նկարեցեք մի քանի գերաններ և դրանց միջոցով ցույց տվեք տարրեր յերկրների անտառների համեմատական մեծությունը. (Աշխարհ. տեսք. աշխ. 77):

Երջանի ներքական խնդիրները

Անտառի տնտեսությունը լավ հիմքերի վրա գնել և ավելի շատ փայտ արտահանել: Լավացնել ջրային ճանապարհները, վոր փայտի փոխադրությունն ավելի եժան նստի: Անցկացնել նոր յերկաթուղիներ: Կաթնատնտեսությունն ուժեղացնել: Շահագործել նորերս գտնված քարածուխը և զրաֆիտը:


Խառն անստանդիրների ուժում: Են խառն անտառները: Յեթե Լենինգրադից ուշ օրջանիք: Դիդ գծով գնաք մինչև Կազմն, ապա այստեղից եկեի վրայով ուղեսորդիք դեպի Լենական ասհմանը, այն դեպքում դուք կսահնաք այն տարածությունը, վոր կոչվում ե խառն անստանդիրի օրջան: Հենց այս շրջանի կենտրոնում ե գտնվում Մուկվան:

Խառն անտառներն ավելի տաք կլիմա ունեն, քան փշատերի անտառները (ինչու):

Ատլանտիան ովկիանոսից փչում են խոնավ քամիներ, գորմնք մեղմացնում են ձմեռային սասնամանիքները: Կլիմայի մեղմության պատճառով այստեղ աճում են լայնատերեւ ծառեր—կաղնի, լորի, հացի, բիւկի և այլն: Սյդ ծառերի հետ խառն աճում են նաև փշատերեւ ծառեր—շամի և յեղելնի: Մեզնից մոտ 1000 տարի առաջ խառն անտառները բռնում եյին բնդարձակ տարածություններ, բայց այժմ նրանց մեծ մասը կարտված եւ ծածկված վարելանողերով ու մարզողեթիներով:

Շրջանի բնակիչների մեծ մասը ուսումնակիցները յեզ ների են: Արևմայան մասերում ապրում ենանց պարապատությունը: Են բելոռուսները, վորոնք կազմում են առանձին Ա. Խ. Հանրապետությունն Խառն անտառների շրջանը ավելի խիտ ե բնակված, քան տունդրաներն ու փշատերի անտառները, և ազգաբնակությունն ել ավելի բարեկեցիկ ե:

Թուաները զլխավորապես յերկրագործությամբ են պարապում, բայց վորովնետի հողը քերիչներ և կիբան ել աննպաստ, այդ պատճառով սեփական հացը չի բավականանում: Ամեն տարի նրանք հարավային հացաշատ շրջաններից ահազին քանակությունը հաց են ներմռնում: Մյուս կողմից՝ ընտանիքի կարիքները հոգալու համար ազգարնակության մի մասը թողնում են իր բնակավայրը և կողմեակի աշխատանիվ փնտրում լենինգրադում: Մուկվայում և ուրիշ արդյունագործական քաղաքներում: Շատերն ել տնայնագործությանը են պարապում, այսինքն հումնյութից իրենց աներում հասարակ գործիքների միջոցով զանազան իրեր են պատրաստում և վաճառքի հանում:



Նկ. 54. Տնայնագործն աշխատանքի ժամանակ:

Տնայնագործության մեջ առաջին տեղը բռնում է վուշիլսակուբյունը, վորից պատրաստում են ընտիր ահակի խարան, սրբիչներ, սիսուցներ և այլն: Տնայնագոր-

ծությունը մեծ չափերի յէ հասել մանավանդ Վոլգայի և Ոկայի ափերին, որինակ՝ Նիժնի-Նովգորոդի նահանգում Յերկաթից պատրաստում են կողպեքներ, դանակներ (Պավլովո քաղաքում), մետաղ ցանցեր, խարիսխներ և այլն. Կանեփից պատրաստում են պարաներ, փայտից՝ զդալներ, բասեր, խաղալիքներ, վորոնք տարածվում են ամբողջ Միության մեջ:

Տնայնագործության այսափ զարգանալուն նպաստում ե խառն անտառների աշխարհագրական դիրքը: Վոլգայի, Ոկայի և բազմաթիվ յերկաթուղիների միջոցով խառն անտառների շրջանը կապվում է Միության զանազան մասերի հետ:

Յերեանը Նիժնի-Նովգորոդից ի՞նչ ձանապարհով կարող ե քաթան ստանալ:

Թուրքատանի Տաշկենտ քաղաքը Մոսկվայից ի՞նչ ձանապարհով կարող ե գտնակներ ստանալ:


Կարգացեք «Տնայնագործությունը Պավլովի շրջանում» հոդվածը («Աշխարհ. շուրջը»):

Նույն այդ շրջանում, մանավանո Վոլգայի և Ոկայի միջև զարգացել ե գործարանային խոռոր արդյունաբերությունը: Մոսկվայում և ուրիշ քաղաքներում կան բազմաթիվ գործարաններ, վորտեղ բամբակից, բրդից և վուշից պատրաստում են զանազան գործվածքներ, Առողջություն (Նիժնի-Նովգորոդի մոտ) պատրաստում են վագոններ, շոգենավեր, շոգեմեքենաներ և այլն:

Շրջանը շատ հարուստ և եժան վառելիքով—տորֆով և գորշ քարածուխով: Խորհրդ, իշխանությունը այս շրջանի արդյունագործությանը զարկ տալու համար կառուցել ե հսկայական ելեկտրական կայարաններ, վորոնցից շատերն աշխատում են տորֆով (որինակ՝ Շատուրի ելեկտրակայարանը) կամ քարածխով (Կաշիրի կայարանը): Ենինքրադի մոտ գտնվում ե հայտնի Վոլխովսրոյ ելեկտրակայարանը, վորն աշխատում է Վոլխովի գետի ուժով:

Այդ կայարանը եներգիա յե տալիս լենինգրադի գործառաններին:

Խանն անտառների շրջանի, ինչպէս և ամբողջ Միության, զվարացնելու համար կենտրոնը Մոսկվան է (2 միլ. քառակշոր)։ Քաղաքի կենտրոնական մասն եւ Կրեմլը, վորք մի հին առ-



Նկ. 55. Գործած կահ կարսոփր:

բոց և, շրջապատված պարիսպներով և աշտարակներով՝ կրեմլում են գտնվում ամբողջ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիտարենի Խորհուրդը։

Մոսկվան Միության մտքի և լուսավորության սիրան եւ Այսաեղ գտնվում են բազմաթիվ համալսարաններ, ժամանագիտական բարձրագույն դպրոցներ, Գյուղատնտեսական ձեմարանն, բազմաթիվ թանգարաններ, գրադարաններ և այլն։ Միության զանազան ծայրերից գալիս են այսուղ բազմաթիվ յերիտասարդներ բարձրագույն կրթություն ստանալու կամ կատարելագործվելու համար։

Մոսկվան Միության առևտություն և արդյունաբերության սիրան ել եւ նա առևտության կապերով կապված է Միության ծայրերի հետ։ Ունենալով հարմար աշխարհագրական դիրք, նա 10 յերկաթուղային գծերով միանում է

Միության զանազան մասերի հետ և նրանց մատակարարում գործարանային ապրանքներ:

Միության յերկրոր կենտրոնը Լենինգրադն է, վորդանվում է Ֆիննական ծոցի ափին: Շնորհիվ յուր աշխարհագրական դիրքի, նա դարձել է Միության առաջին նախանձնային կայսրությունը: Նրա վրայով արտահանվում են փայտ, հաճար, ձու, յուղ, գուշ, կանեփ և այլն:

Լենինգրադում գտնվում են հայտնի գործարաններ, վորտեղ պատրաստում են ռետինե իրեր (կրկնակոշիկներ, ավտոմոբիլի շիներ, ռետինե գնդակներ և այլն), ապակուց և հախճապակուց անոթներ և գործիքներ և այլն:

Լենինգրադը միենույն ժամանակ խոշոր կուլտուրական կենտրոն է, վորտեղ գտնվում են բարձրագույն դրաշրոցներ, Գիտության ձեմարանը և այլն: Լենինգրադից քիչ հեռու գտնվում է Կրոնստադ ամրոցը, վոր պաշտպանում և Լենինգրադն արտաքին թշնամուց:

Խառն անտառների շրջանում նշանավոր են նաև հետեւյալ քաղաքները:

Նիմի-Նովորոդ (հայտնի յե յուր տոնավաճառով): Ռիբինսկ—նավահանգիստ և Վոլգայի վրա: Նշանավոր են հացի առևտորով: Կոլոմեա—քամանի գործարանների կենտրոն: Խվանովո-Վոզնիսենսկ—բամբակի գործարանների կենտրոն: Տուլա—ունի մեծ զինագործարան:

Տվեր, Յարովայ, Կուսրովա, Կալտգա, Բյազան—վարչական կենտրոններ են: Մինսկ—Բելոռուսիայի և. Ս. Հանրապետության կենտրոնն է:

Աջականիք.—Ներկեցեք խառն անտառների շրջանը. (Աշխ. տ., աշխ. 63):

Նշանակեցեք խառն անտառների զինագործարանները. (Աշխ. տ., աշխ. 64):

Կարդացեք «Մուկվայից Զելյարինսկ» հողգածը, («Աշխարհ. շուրջը»):

Երջանի ներբական խնդիրները:

Նոր գործարաններ հիմնել: Կառուցել ծրագրված ելեկտրակայարանները: Բարձրացնել գյուղատնտեսությունը: Արդյունագործական քաղաքներում բանվորական նոր տներ շինել: Տնայնագործությունը լայնացնել, տնայնագործներին կոռպերացնել:

Անտառային շրջանից դեպի հարավ մինչև Տափաստանին Մե և Կասպից ծովերը վուգում են ոռւսական ուղաների: Լայնածավալ տափաստանները, վորոնք ներկայումս համարյա ամբողջովին մշակված են և ծածկված վարելահողերով, բանջարանոցներով և այգիներով:

Առաջ տափաստաններում թափառում եյին քոչվոր ժողովուրդներ—պեշենեզիներ, պոլովյիներ, քարարներ, վորոնք պարապում եյին անսամբլահությամբ: Հետագայում այսուեղ բնակություն հաստատեցին ոռւս յերկագործները: Մշակելով տափաստանների պարարտ հողը և պայքարելով քոչվորների դեմ, ոռւմները դուրս մղեցին քոչվորներին և իրենք հաստատվեցին տափաստաններում: Խումները ապրում են արեւլյան նահանգներում, իսկ ուկրաինիներ՝ արևմուտքում, Դնեսպրի շրջանում: Քոչվորների մնացորդները պահվել են մի քանի տեղերում—այսպես՝ Վոլգայի և Դոնի միջև՝ ապրում են դպրուխները, Վոլգայի և Ոկայի միջև՝ կիրգիզները, իսկ Կազանի շրջանում և Ղրիմում՝ քարարները:

Տափաստանի բնակիչների դիմավոր պարապմունքը յերկրագործությունն է: Հողը սելահող է, պարունակում է իր մեջ շատ այնպիսի հանքային նյութեր, վորոնք անհրաժեշտ են բույսերին, և բացի այդ պահում է իր մեջ դարնան ժամանակ ծծված խոնավությունը: Դրանով և բացատրվում այն, վոր սեւանողում ցանած հացահատիկները կարողանում են դիմանալ տափաստաններում հաճախ տեղի ունեցող յերաշտներին:

Տափաստանների սևահողը այնքան արգավանդ է, վոր նույնիսկ տառնց պարարտացնելու միքանի տարի իրար վրա կարողանեռում է առաջ թերք տալ:

Երջանի զյուղատնտեսությունը մեծ տուաջադիմություն է ցույց տալիս: Գյուղացին թողնում է հողի մշակության հին ձեր և անցնում զաւակեալուրյան նոր ձեմին (բազմադաշտյան սիստեմին): Ամեն տեղ մեծ ընդունելություն են զտել նոր ձեր յերկաթի զութանները, հնձող և կատող մեքենաները, արաքտորը և այլն:

Տափաստանների օջանիք տիբողջ Միուրյան տեսմություն է: Հացի բերքն այստեղ այնքան մեծ է, վոր նրա մի մասը փոխազրում են զեղի հյուսիս, վորտեղ հացի մեծ պակասություն կա:

Բացի հացահատիկներից բնակիչները մշակում են նաև սեխություն, իսկ արևմայան մասերում, վորտեղ կլիման ավելի խոնագ և հակընդունակ, վորից շաքար են պատրաստում: Շաքարի բոլոր զործարանները զտնվում են կիւի և Պողոսի նահանգներում:

Մեծ չափով տարածված է մելվաբուծությունը:

Տափաստանների շրջանը հարուստ է նաև հանքերով, մանավանդ բարածովառ, յերկարով և ադով: Ստացվող քարածխի քանակով Դոնիեցի բարածխային շրջանն առաջին տեղն է բանում ամբողջ Միության մեջ: 1925 թ. ամբողջ Խ. Միության մեջ ստացվել է 18 միլիոն տոնն, վորից 12 միլիոնը Դոնեցի շրջանն է տվել: Քարածխի սլաշարը գետնի մեջ (մինչև 200 մետր խորությունը) հաշվում են մոտ 200 միլիարդ ֆութ: Քարածուխն ստացվում է Բախմուտի և Ալեքսանդրով-Գրուշևկու շրջակայրում, իսկ յերկաթանաքերը՝ Լուգանսկի մոտ (Կերչի մոտ): Գրուշեվսկու անտրացիուրը հայտնի է ամբողջ Միության մեջ:

Բախմուտում և Դենիպրո-Պետրովկու կան խոշոր

գործարաններ, վորտեղ մեծ քանակությամբ չուզում են հալում և պողպատ ու յերկաթ պատրաստում:

Չուզուն հալող գործարանների կողքին գտնվում են բազմաթիվ գործարաններ, վորտեղ պատրաստվում են վաղոններ, շոգեգնացքներ, յերկրագործական մեքենաներ ու գործիքներ; ռելսեր և այլն: Մեր յերկրագործական մեքենաներն այժմ այնքան լավ են, վոր հաջողությամբ մրցում են արտասահմանյան մեքենաների հետ:

Այս արդյունագործական շրջանը կարենոր նշանակություն ունի գոչ միայն տափաստանների գոտու, այլ և ամբողջ Խ. Միության համար: Այդ պատճառով Խ. իշխանությունն առանձնապես ուշագրություն է դարձնում նրա վրա և արդյունագործությունը գարգացնելու համար կառուցում է մի քանի ելեկտրակայարաններ, վորոնցից ամենամեծը գտնվում է Դնեպրի վրա և կոչվում է Դնեպրուսրոյ: Սա ջրով աշխատող ելեկտրակայարանների մեջ առաջնակարգ տեղերից մեկն է գրավելու ամբողջ յերկրագնդի վրա:

Բախմուտի մոտ ստացվում է մեծ քանակությամբ աղ և սնիդի:

Վոլգայի ստորին հոսանքը և Կասպից ծովը ձեռք բերած ձկների քանակությամբ առաջին տեղն են բռնում ամբողջ Միության մեջ:

Շնորհիվ բազմաթիվ յերկարուդիների յել նավազնաց զետերի տափաստանները կազմում են Միության արդյունաբերական խոշոր կենտրոնների—Մոսկվայի, Լենինգրադի հետ: Արդյունաբերական շրջաններից ստացվում են գործարանային սպառաններ, գերաններ ու տախտելիքներ, խել փոխարենը դեպի հյուսիս փոխագրվում է հաց, միս, աղ, ձուկ, նավթ և այլն: Այդ առևտուրին զարկ կտա մասնավանդ Վոլգա-Դոնյան ջրանցքը, վորը Վոլգայի ամբողջ ավագանը և Ռւբալի հանքաշատ շրջանը միացնելու յե Սև և Ազովի ծովերի նավահանգիստների հետ: Զբանցքը

կառուցվելու և հենց այն տեղում, վորտեղ վոլգան ու Դոնը բավականին մոտենում են իրար և ունենալու և 101 կիլոմետր յերկարություն:

Խարելով—Ռևոլյուցիայի Ս. Խ. Հանրապետության կինտըռն է (410 հազար բնակիչ): Գտնվում է 8 յերկաթուղիների հատման տեղում: Կան զանազան բարձրագույն դպրոցներ:

Կիլով (494.000 բնակչութ), գտնվում է Պնեսպրի վրա Ֆիլադելֆիայի—ունի շատ զործարաններ, վորտեղ պատրաստվում են մեքենաներ։ Նավահանգիստ եւ Ռիվերսայ—Մէջ ծովի ափին, կարևոր նավահանգիստ եւ

Վաղայի վրա գտնվում են Կազմելը (Թաթարական հանրապետության կենտրոնն ե), Սամարան (Նավահանգստ ե, ունի ջրադաշներ), Սարատովը (առևտորական կենտրոն, նավահանգստ, համալսարան), Սալինգրադը (փայտի առևտուր), Սարգսանը (ձկնորսարաններով):

Թուսով՝ Դակի վրա—նախահանգիստ և առևտրական կենտրոն հարաբեմ:

Երանին մերժական խնդիրներ,

Տափաստանների շրջանը կարեոր նշանակություն ունի ամբողջ Միության համար: Նա տալիս և մեծ քանակությամբ հաց, վոր մենք արտահանում ենք, քարածուխ, յերկաթ, շաքար և այլն:

Պետք և վաշնացնել . յերկը ազգործության հին ձևերը, տարածել ժողովրդի մեջ յերկը ազգործական նոր մեքենաները: Պարարտացնել վարելահողերը, զոր մեկ գեսաւինից մենք են շատ բերք վերցնենք: Թողնել յերկը աշտյան և յեռագաշտյան սիստեմերը և տարածել բազմադաշտյանը:

Բնդզարձակել ճակընդեղի ցանքսիրը և ավելի շատ շաբար պարագարել:

შემსრულდა ქართველი მართლიანობის კათოლიკური ეკლესია, რომელიც გამოიყოფა სამართლის მიერ და მის მიერ მიმდინარეობოდა.

բաններ շիներ. Ծինել ելեկորսական կայարաններ. Զարգացնել հաղորդակցության միջոցները, վորապեսզի քարածխի փոխադրությունն եծան նստի:

Կարգացեք «Դոնի հարթության լեռնային շրջանը» հողվածը. («Աշխ. շուրջը»):

Եշանակեցիք տափաստանի գլխու, քաղաքները, (Աշխարհ, տեսր, աշխատանք 64 թ.):

Յուր բնությամբ և զեկցիոնյամբ բու-
թրիմի հա- լորովին ուրույն տեղ է բանում Դրիմ թերա-
րավային ծովափը: Կըզզու այն մասը, վոր բնկած է Դրիմի լեռ-

ներից դեպի հարավ, ծովափին: Հյուսիսից՝ պաշտամանված լինելով լեռներով՝ այդ ծովափն ունի ամ յել մեղմ կլիմա, վորի շնորհիկ այստեղ աճում են մշտադա-

Fig. 56. *Bromius* (*Lepidost*).

լար բույսեր—դափնի, մաղնոլիա, ձիթենի և այլն։ Մեծ տեղ են ըստում խաղողի և մրգի այգիները, վորանեղ աճում են դեղձ, ծիրան, դամբուլ և այլն։ Դրիմի խաղողը հայտնի յե յուր քաղցր համով։ Դրիմի ծովափը յուր գեղցիկ կիմայով շատ մարդկանց և զռավում, վորոնք՝ գա-

Իս են հանգստանալու, ծովում լողանալու և բժշկվելու Այստեղ շինված են սանսատորիաներ և հանգստյան տներ, ուր Միության զանազան տեղերից ուղարկվում են հիվանդ և հոգնած ծառայողներ ու բանվորներ բժշկվելու համար։ Առաջ բանվորները վոչ մի կերպ չեցին կարող ոգտվել Դրիմի ծովափով և բժշկվել, փորամիեան այս ափը պատկանում եր ցարական ցեղին կամ հարուստ բուքուաներին։ Միայն այժմ, յերբ հրաշալի պարագաներն ու ամառանոցներն անցան ժողովրդի ձեռքը, բանվորն ու զյուղացին հստագորություն ստացան վոչ միայն տեսնել այդ գեղեցիկ յերկիրը, այլ և պետական սանսատորիաներում և ամառանոցներում հանգստանալ և բժշկվել։

Առաջնակարգ կուրորտն ե Յալտա: Դրիմը ըստ կառավարության ինքնավար Խ. Ս. Հանրապետություն և, վորի գլխավոր կենտրոնն ե Սիմֆեռոպոլի: Սա գանգում է Խարկով-Սևվաստոպոլ գծի վրա:

Սելաստոպոլի—առևտրականն և ռազմականն նավահամեցիստ եւ:

Միտթյան Յեղոսպական մասի արեւ
Աւալան ին ները ելան յեղերքով հյուսիսից դեպի հարավ
յական յերկրության մեջ գույնաշղթան, զոր յուր

բնությամբ բաժանվում ե յերեք մասի—
Հյուսիս. Աւալ, Միջին Աւալ և Հարավ. Աւալ: Հյուսիս-
ային Աւալը համարյա անմարդաբնակ ե. մութ, իստ
անտառներում յերբեմն կարելի յե հանդիպել քոչվոր վո-
գուլների, վորոնք պահում են յեղջերուներ և վորսում
անտառային գազաններ:

Միջն Աւալում ապրում են ռուսները, իսկ Հար. Աւրայլում և Կրան կից տափատաններում քաշերներ:

Ռուսների և բաշկիրների գլխավոր պարապմանքը յերեազործությունն է: Ցանում են վարսակ, հաճար, իսկ հարավում նաև ցորեն: Հարավային շրջանում պահում են

մեծ քանակությամբ վոչխար և ձի: Բաշկիրները ձիու կաթից պատրաստում են մի առանձին խմիչք, վորը կոչվում է կումիս: Կումիսը բռուժիչ հատկություններ ունի: Բաշկիրիայի տափաստաններում գտնվում են սանատուրիաներ, վորանեղ ԽՍՀՄ-ի կենտրոններից յեկած բազմաթիվ թոքախտավորներ բժշկվում են կումիսով:



Նկ. 57. Վորանեղներ (Հյուս. Ռուբակով):

Բայց ավելի կարևոր նշանակություն ունեն Ռուբալի հանիքային նարսուրյունները: Ռուբալյան լեռնաշղթան իր ծոցում պարունակում է մեծ քանակությամբ յերկարահամին, վորը բավական բարձր վորակ ունի: Գլխավոր հանքատեղերում Խորհրդ՝ իշխանությունն այժմ կառուցում է նոր գործարաններ, վորոնք ճնարավորություն կտան ստանալ մեծ քանակությամբ չուզուն և պողպատ:

Լեռների զանազան շրջաններում ստացվում է մեծ քանակությամբ պղինձ: Պղնձի արտադրությամբ մեծ

հոչակ ունի կիշտիմի գործարանը, վորը ամբողջ Խ. Միությանը պղինձ մատակարարող շրջանների մեջ առաջինն եւ Այդ գործարանը շատ ավելի պղինձ և արտադրում, քան Զանգեզուրը, Ղաթարն ու Գիուարելլը:

Ուրալի լեռնաշղթան վազուց հայտնի յէ յուր քանի կազին բարերով, վուրով և պլատինով: Թէ վորքան մեծ նշանակություն ունեն Ուրալի վոսկին և պլատինը, այդ



Նկ. 58. Բաշկիրների կիրիտկան:

յերեսում և նրանից, վոր պատերազմից առաջ (1914 թ.) Ուրալում ստացված վոսկին կազմում եր 16.000 կիլոգրամ, իսկ պլատինը՝ 4507 կիլոգրամ: Պատերազմի ընթացքում, ինչպես և քաղաքացիական կովի ժամանակ պլատինի և վոսկու արտադրությունը թուլացավ. վերջին տարիների ընթացքում կրկին վերականգնվում եւ:

Ուրալում շատ կա և քարածուխ, բայց այդ քարածուխից կոքս չի ստացվում, այդպատճառով մետաղներ հալելու համար կոքսի փոխարեն փայտի ածուխ են գործածում: Քարածուխն ստացվում է կիղիլովի հանքատեղերում (Պերմից հյուսիս):

1925 թ. կամայի վերին հոսանքում (Սոլիկամսկ քա-

դարի մոտ) գտնվեցին կալիումական աղեր, վորոնք մեծ նշանակություն ունեն յերկրագործության համար. զբանցով վարելահողերը պարարտացնում են: Սոլիկամսկի կալիումական աղերի պաշարն այնքան մեծ է, վոր նրանք համաշխարհային նշանակություն ունեն: Մինչև հիմա մենք կալիումական աղերը ներմուծում ենքնաք Գերմանիայից, իսկ այժմ ինքներս կարտահանենք:

Ենթային արդյունաբերությունը Ուրալում շատ ե զարգացած: Այս շրջանում գտնվում են բազմաթիվ գործարաններ, վորտեղ հալում են պղինձ, չուկուն և պղպատ: Ավաղներից ջոկում են փոսկի և պղատին, զյուղերում հղկում են թանգարժեք քարեր և վաճառքի հանում:

Ուրալի կենտրոնը Սվերդլովսկն է, վորի հետ կապված են Միջին Ուրալի գործարանները, հանքավայրերն ու զյուղերի անայնագործները: Սվերդլովսկի վրայով անցնում են մի քանի յերկաթուղիներ, վորոնցից մեկը Միության Յեվրոպական մասը միացնում է Ասիականի հետ: Յերկրորդ խոշոր կենտրոնը Պերմն է. Պերմը այն վերջին նավահանգիստն է, մինչև ուր շոգենավերը վորդայից Կամայի վրայով հասնում են: Ամբողջ Ուրալը Պերմի վրայով կապվում է Վոլգայի և Նիմնի-Նովգորոդի հետ, վորտեղ վաճառվում են Ուրալի արտադրությունները: Իրիս-հայտնի յերտը տառավաճառով: Մորթիների առևտուրը Զելյարինսկ—Մոսկվա—Վլադիվոստոկ յերկաթուղու վրա: Զլատուս—թնդանոթների գործարան: Ուժա—Բաշկիրիայի Բնքնավար հանքավետության կենտրոնն է:

Շրջանի արդյունաբերությունն սկսում է մեծ թափով գարգանալ: Այդ զարգացմանը մեծ գարկ են տալու այն ելեկտրակայարանները, վորոնք այժմ կառուցվում են: Դրանցից մեկը (Կիզիլովի կայարանը) աշխատելու ե քառածխով:

Ե.

Ս Ի Ֆ Ի Ր

Սիրիրի ամերն ի՞նչ ծովեր են վոզոզում:

Սիրիրի հարավային կողմն ի՞նչ յերկրներ են զանգում:
Յույց ամեր Սիրիրի բոլոր սահմանները: Արևելքում Ասիան
վոր աշխարհամասին և մատենում: Ասիան այդ աշխարհա-
մասից ի՞նչ նեղուցով և բաժանում:

Գտեք Սիրիրի զլխավոր լեռներն ու գաշտավայրերը:
Ի՞նչո՞ւ Սիրիրի գետերը հասում են զլխավորապես գեղի
հյուսիսին:

Սիրիրի միջով ի՞նչ յերկաթուզի յի անցնում. ցույց
ամվեր:

Սիրիրը բանում և Ասիայի հյուսիսային մասը, Ու-
ղալյան լեռներից մինչև Խաղաղ ովկիանոսը և Հյուս,
Բնեռային ծովից մինչև Զինաստանը:

Նրա սահմաններն են հյուսիսից՝ Հյուս. Բնեռային
ծովը, իսկ արևելքից՝ Խաղաղ ովկիանոսը, վորը Խ.Ա.Հ.
Միության ափերի մոտ գոյացրել և Բերինգյան, Ալյոսի
յեվ Յապոնական ծովերը:

Հարավից Սիրիրի սահմաններն անցնում են գետերով
ու լեռներով, վորոնք Սիրիրը բաժանում են Յավոնիայից,
Զինաստանից և Մոնղոլիայից: Արտայան և Ուրալյան լեռ-
ների միջև Սիրիրի սահմանն և Կազակստանը, վորը
ԽՍՀ Միության մասերից մեկն է: Սիրիրի արևմտյան
կողմը գտնվում են Աւրալյան լեռները, վորոնցով նա բա-
ժանվում է ԽՍՀ Միության Յեվրոպական մասից,

Աշխատանք.—Սիրիրի համբ քարտեզի վրա նշանակե-
ցեք սահմանակից ովկիանոսներն ու ծովերը: Ցամաքային
սահմանի վրայով կարմիր զիծ քաշեցեք: Գրեցեք սահմա-
նակից յերկրների անունները. (Աշխ. ա., աշխատանք 65):

Սիրիրն այնքան մեծ յերկիր է, վոր կարող եր իր
մեջ առնել Յեվրոպայի բոլոր պետությունները: Նա Յեվ-
րոպայից մոտ $1\frac{1}{2}$ անգամ մեծ է:

Այս ընդարձակ աշխարհը հարուստ է անտառներով, քարածխով և յերկաթաճանքով։ Այստեղ գանգում են վուկի, աղվամազ մորթի ունեցող գաղաններ և այլ հարստություններ։ Բայց չնայելով այսչափ հարստության, Սիրիրը դեռևս բավականաչափ ուսումնասիրված չե։ Նրա հարստությունները շատ քիչ են շահագործվում, աղղարնակության պատճառը բնական պայմաններն են։

Դիտեցեք քարտեզը։ Դուք տեսնում եք, վոր Սիրիրի հյուսիսային կողմը գանգում և Բենոային ծովը, վորը տարվա մեծ մասը ծածկված և ստուցներով և նամակնացության համար սննդապատճեն Սիրիրի խոշոր գետերը — Որը, Յենիսիեյը և Լենան թափվում են Բենոային ծովը և, բացի այդ, ձմեռոր յերկար ժամանակով ստուչում են։ Միայն ամառները մի քանի նաևկը կարողանում են Բարենցի և Կարայի ծովի կողմից գալ և մասնել Որի և Յենիսիյի գետաբերանները, վարտեղ նրանք փոխանակում են իրենց բերած աղբաներները Սիրիրի գետերով բերած աղբաներների հետ։ Առեարի համար անհարմար են նաև Յերինդյան և Ոխոտի ցուրտ ծովերը։

Այժմ՝ զիտեցեք Սիրիրի հարավային սահմանները, Այստեղ գանգում են բազմաթիվ բարձր լեռներ, վորոնք Սիրիրն անջատում են հարեւն յերկրներից։

Յերկրորդ պատճառը, վոր գմբարացնում է Սիրիրի անտեսառնության զարգացումը, դա լինեան է։ Սիրիրը շատ ցուրտ յերկիր է։ Յերկրագնդի վրա վոչ մի ուրիշ տեղ այնպիսի ցուրտ ձմեռ չե լինում, ինչպես Սիրիրում։

Այստեղ Վերխոյանսկ քաղաքի մոտ սառնամանիքները հասնում են մինչև — 70° Այսպիսի ցրտություն վոչ մի տեղ չի պատճառում։ Բենոային ծովից վչող քամիները աղատորեն մասնում են յերկրի ներսը և իջեցնում նրա բարեխառնությունը, իսկ հարավ-արևելքից (Խաղաղ ով-

կիանասի կողմից) վշտ խոնավ և տաք քամիները շրջապատող լեռների պատճառով չեն կարողանում խօսավություն հասցնել յերկրի միջին մասերին։ Գեսնի խորքերը ընդարձակ տարածության վրա մշտագես սառած և լինում։ Կիմայի ցրտության պատճառով տունդրաները Սիբիրում ավելի մեծ տեղ են բննում, քան թե Յեկատական մասում։

**Սիբիրի մակարդակը հաշվում են մոտ 11 մի-
տրիւի ազ-
գարնակու-
թիունը։** Միան քառակուսի կիլոմետր, իսկ ընակիչների
թիվը 11 միլիոնից քիչ ավել է։ Այսպիսով յու-
րաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածու-
թյան վրա հազիվ մեկ մարդ և ապրում, այս տեսակետից
Սիբիրի ազգաբնակությունը շատ ավելի նոոր է, քան
Անդրկովկասինը։

Մինչև ոռուների զայր Սիբիրում ապրում եյին զա-
նազան աեղական ցեղեր, վորոնց գլխավոր զբաղմունքը
վարսորդությունն եր։ Ցարական կառավարությունը կազակ-
ների զորախմբերի ոգնությամբ կամաց-կամաց զբավեց
այդ հարուստ յերկիրը՝ ճնշելով տեղացիներին և ծանր
հարկեր վերցնելով նրանցից։ Յեզ վարովնետե տեղացի-
ները փող չունեյին, ուստի հարկը գլխավորապես թան-
գարժեք մորթիներով եյին վերցնում։ Վոսկու և արծաթի
հարուստ համբառեղերը շահագործելու համար կառավա-
րությունը բանի ուժով Յեվրոպական մասից ուղարկում
եր զյուղացիներ, վորոնք բավական ծանր պայմաններում
աշխատում եյին ցարի և կալվածատերերի համար։ Առ-
մանները պաշտպանելու համար կազակների զյուղեր եյին
զցվում, մյուս կողմից՝ կալվածատերերի ճնշումից ազատ-
վելու համար շատ զյուղացիներ թողնում եին հայրենիքը
և զաղթում Սիբիր։ Հետագայում ցարական կառավարու-
թյունն սկսեց Սիբիր աքսորել վոչ միայն քրեական հան-
ցավորներին (զողերին, մարդուսպաններին), այլ և անթիվ

հեղափոխական մարտիկների, վորոնք Սիրիրի հյուսիսային խուլ անտառներում մաշտամ եցին իրենց կյանքը:

Յերբ Սիրիրի յերկաթուղային զիծն անցկացրվեց, այն ժամանակ բավական մեծ քանակությամբ ռուսներ և ուկրաինցիներ սկսեցին գաղթել Սիրիր և բնակություն հաստատել զիմավորապես յերկաթուղու գծի յերկարությամբ: Նրանք սկսեցին մշակել տափաստանների հողը, պահել անսասուններ և այլն: Կարճ ժամանակում Սիրիրի ազգաբնակությունը կրկնապատկվեց:



նկ. 59. Յակուտ կին:

Նկ. 59. Յակուտ կին: Այս-Մոնղոլական հանրապետությունու Բացի այդ ժողովուրդներից Ասիայի արևելյան ժամանակ մի քանի մանր ժողովուրդներ, որինակ՝ կամչակա թերակղզու վրա ապրում են կամչակալները, Ասիայինում զիլյակները, Զուկույան թերակղզու վրա չուկչաները և այլն: Արևելյան Ասիայի քաղաքներում բնակություն են հաստատել յազոնացիները և չինացիները:

Ներկայումս Սիրիրի յերկաթուղու և զետափերին ապրում են ուսանանքում ապրում են ուսակիները և սամսեղները, Ալտայում՝ ալտայցիները, Յենիսեյից դեղի արևելք՝ Տմունզու գետերը, Լենայի միջին հոսանքում՝ յակուտները, վորոնք կազմել են Յակուտական հանրություն, Բայկալի մոտ ապրում են բուրյատները, վորոնք կազմել են Բուր-

Այժմ տեսնենք թե այդ բնակիչներն ինչով են պարագում տունդրաների, տայգաների և տափաստանների շրջանում:

Հյուս. Առողջացալ ովկիանոսի ափերով
սիրիսի տաճակ՝ արևմուտքից արևելք ձգվում են սիրիրա-
ռաները: Կան տունդրաները, վորոնք իրենց բնու-
թյամբ նման են յեվրոպական տունդրաներին: Որի և Յե-
նիսիելի խորշերի մոտ ապրում են սամոնդները, վորոնք
ամեն ինչով նման իրենց յեվրոպական ցեղակիցներին:



Նկ. 60. Տունդրան կիճնը կըսում և յեղջերուն:

Նրանք իրենց յեղջերուների հետ քոչում են տեղից - տեղ և յերբեմն ել անցնում են Ռւրալլ: Բայց յեղջերվապահությունից նրանք զրադգում են նաև վորսորդությամբ և ձկնորսությամբ: Յեղջերուների կաշին և աղվամազ գազանների մորթին նրանք տանում են Ռյորուկ (Ռիք գետաբերանի մոտ) և այնուեղ տոնավաճառի ժամանակ ծառականությունում:

Լենայից արևելք ձգվող տունդրաներում ապրում են յուկազիւները և չուկչաները, վորոնք բաժանվում են յերկու խմբի՝ յեղջերվապահներ և նուակյացներ: Յեղջերվա-

պահները սամուեցների նման քոչում են տեղբյուրեկ, իսկ նստակյաց չուկչաներն ապրում են ծովափերին և գորսում՝ ծովացուլ, ձուկ, փոկ և սպիտակ արջեր։ Ամերիկացիներն ամեն տարի նավերով անցնում են Բերբինդյան նեղուցը և Չուկույան թերակղուտ ափերին չուկչաներից զնում են փոկի ճարպ, ծովացուլի ժանիքներ, արջի մորթիներ և այլն։

Կարգացեք «Շներով ճանապարհորդություն Սիրիուս» հոդված («Աշխարհի շուրջը»)։

Սունդրաներից հարավ տարածվում են Սիրիւի սալտան ընդարձակ վշտաներն անտառներ, վորոնք Սիրիուս կոչվում են Տայկա։



Նկ. 61. Ռատակների վրանը (յուրթան) տայկայում։

Տայկան կենդանիներով շատ հարուստ է։ Այնտեղ ապրում են բազմաթիվ սկրուներ, նապաստակներ, աղվեսներ ու արջեր, իսկ մի քանի տեղերում պատահում են նաև կղաքիներ ու սամուցներ, վորոնց մորթին թանգ գնուվ ե վաճառվում։

Սիրիաի անտառների ազգաբնակությունը շատ նոսրէ, ամեն 10 քառ. կղլումնեար տարածության վրա հազիվ 2—3 մարդ և ապրում:

Յենիսիեյից մինչև Ախոտի ծովը մութ, կուտական տայգաներում իրենց յեղջերուների հետ թափառում են տակուսիներ, վորոնց զիլավոր պարագմունքը վորառդությունն և նրանք վորառում են սամույր և կղաքիս և սրանց մորթիները վաճառում ուսմներին Ռուսիներ տայգայի շրջանում բնակություն են հաստատել զիլավորապես զետափերին, վորովհեան այդ խիտ անտառներում ամենահարժար ձանապարհը զետերն են: Ամառը զյուղերն իրար հետ հաղորդակցություն են ունենաւմ նախակներով, իսկ ձմեռը՝ սահնակներով: Ռուսները պահում են ձիեր ու կովեր, կարառելով անտառը՝ նրանք ցանում են զարի, վարսակ և հաճար, Սակայն հացահատիկները մեծ բերք չեն տալիս, վորովհեան հողը բերրի չե:

Բայց յերկրագործությունից ուսմները պարագում են նուև վորառդությամբ և ձկնորսությամբ: Ամեն տարի մեծ քանակությամբ թանգարժեք մորթիներ ուղարկում են Երիշի տնօպանուր, այստեղից ել Մոսկվա կամ Նիժնի-Նովգորոդ և արտասահման:

Տված մորթիների քանակով Սիրիան առաջինն և ամբողջ աշխարհում: 1913 թվին հավաքվել և մոտ 18—20 միլիոն բուրգու արժողությամբ մորթի, վորի մեջ առաջին տեղը բռնում և սկսուր, յերկրորդ տեղը՝ բեկոսային աղվեսը:

Ենաւ զետի ավագանում բայց սումներից ու տունգումներից ապրում են նուև յոկուսին, վորոնք յեղակից են տունգումներին, այսինքն պատկանում են զեղին ցեղին: Նրանց թիվը այժմ մոտ 250.000 և կազմում Յակումներն առաջ տունգումների նման թափառում եյին տայգայում, իսկ այժմ ապրում են հաստատուն բնակա-

բաններում, վորոնք իրենց արտաքին տեսքով նման են ռուսական աներին: Նրանք պահում են ձիեր ու կովեր, ցանում են ցորեն և զարի: Տայգայի հյուսիսային մասերում յակուաների մի մասն այսոր ել պահում է յեղջեռուներ և լծկան շներ:

Յակուաներն այժմ կազմում են ինքնավար հանրապետություն, վորի վարչական կենտրոնը Յակուսով քաղաքն է:

Կարգացեք «Տունգուաները» հոդվածը («Աշխարհի շուրջը»):



Դի. 62. Ալբիրի յերկաթուղային դիման:

Տայգայից հարավ տարածվում է անտափաստանների շրջան: առառա—տափաստաննը, վորտեղ անտառներն ու տափաստանները հաջորդում են իրար: Կիման այստեղ ավելի տաք է և չոր, քան տայգաներում և ամառը հաճախ յերկարատես յերաշտներ են լինում:

Յերկաթործի անտեսության համար Ալբիրի տափաստանները շատ հարմար են. նրանք ծածկված են պա-

բարտ սեվահողով և բացի այդ, տեղ ~ տեղ աճում են անսունից:

Սիրիոի տափաստանները գյուղատնտեսության համար շատ հարմար են. շնորհիվ պարարտ սեահողի և հարուստ արտատեղերի յերկրագործությունն ու անտանտպահությունը մեծ արդյունք են տալիս: Գյուղատնտեսությունը զարգացած է մասավանդ Արևմտյան Սիրիում, Որ գետի ավաղանում, վորտեղ ցանում են ցորեն և վարսակ: Գյուղացիները բարեկցիկ կյանք են վարում, ունեն գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, հացի բերքն այնքան մեծ է, վոր այժմ արևմտյան Սիրիոից ամեն տարի մեծ բանակությամբ հացահատիկ և արտահանվում: Յերկրագործության հետ միասին զարգացել է անասնապահությունը:

Կովի կաթից բազմաթիվ գործարաններում պատրաստվում են յուղ, վորը արտահանվում է: Մեղ մոտ այդ յուղը կոչվում է Սիրիություղ: Նա բավական համեղ և և մեծ բնագույնելություն է գտնել արտասահմանում:


Բայկալի շուրջը տափաստաններում ապրում են բույաները (թվով 300.000), վորոնք իրենց արտաքին տեսքով նման են մոնղոլներին: Առաջ նրանք ապրում ենին վրաններում և քոչում տեղից-տեղ, իսկ այժմ շինում են հաստատուն տներ, հիմնում են գյուղեր և կամաց կամաց անցնում նստակյաց կյանքի: Բուրյատները կազմել են ինքնավար Բուրյատ-Մոնղոլական հանրապետություն, վորի կենտրոնն է Վերխնի—Խոյինսկ:

Աշխատանք.—Տարբեր գույններով ներկեցիք Սիրիոի տունդրաները, տափաստանները և տայգան (Աշխ. առ. 68 և 69):

Սիրիության հարուստուրյուն. Քերովի: Ալտայան լեռներում կան բարձր ծովի, յերկար, պղինձ, Սայանյան լեռներ: Ներում գրչաբար, իրկուտսկ քաղաքի մոտ՝ բարածովի, և նայի շրջանում վոսկի, կամչատկայում և

Ապիսալինում նաև և այնու Բայց այդ բոլոր հանքերը գժրախտաբար դժվար ե մշակել, վորովհետև նըսնք մեծ մասամբ յերկաթուղու զծից հեռու յեն ընկած և հարմար ձանապարհներ չունեն:

Վուլիմին մշակում են Լենայի վտակներից մեկի վրա, վորտեղ հազարավոր բանվորներ վոսկին ջոկում են ավա-



Նկ. 63. Իրկուտսկ:

զից: Այդ հանքերը յերկաթուղուց և զլիսավոր քաղաքներից հեռու յեն ընկած, ուստի հայի և այլ անհրաժեշտ մթերքների տեղափոխությունը բավական թանգ և նստում: Միուս կողմից բանվորներին խանդարում ե աայգայի դաժան կիմման: 1923/24 թ. ամրող Միության մեջ ստացվել է 18,5 հազար կիլոգրամ վոսկի, վորից 15,4 հազարը արտադրվել ե Լենայի վտակի՝ վիտիմի ավերից: Այստեղ աշխատում են մոտ $4\frac{1}{2}$ հազար բանվորներ, վորից $3\frac{1}{2}$ հազարը ուստի են, իսկ մնացածները յակուտներ, չինացիներ և կորեացիներ:

Քարածալիսի ամենահարուսա շրջանը գտնվում է Ալտայան լեռների սառուստներում, Կուզինցիքաղաքի մոտ: Գետնի առկ ամբողջ 20 հազար քառ. կիլոմետր տարածությամբ ձգվում էն քարածուխի հաստ խավեր, վորոնք տեղատեղ նույնիսկ գետնի յերեսն են գուրու գալիս: Ստացված քարածուխը ծափակում է Սիրիքի յերկաթուղու պետքերի համար, իսկ կորսն ուղարկվում է Ռուսական պորտարանները:

Աջակատանք: — Դիտեցեք Սիրիքի հանքային հորսառությունների քարտեզը և ասացեք ինչ հանքեր կան Սիրիքում և վոր մասերում:

Խնչակես տեսանք, Սիրիքը գլխավորակուր տակած էն հայտնի առևտություններու պես յերկրագործական յերկիր և, ազգագույքային մի բնակության խոշոր մասն ապշում և զյուղացները: Պերում և միայն շատ չնչին մասը՝ քարդարներում: Հարուստ անտառները գյուղացուն տալիս են բնափառ մորթիներ, իսկ տափաստանները՝ հաց և յուղ: Այդ մթերքները, ինչակես և քարածուխն ու մետաղները տեղափոխում են Սիրիքական յերկաթուղով, վորն անցնում է Սիրիքի տափաստաններով և միացնում է Միության Յեղուղական մասը Խաղաղ ովկիսանոսի հետ: Նույն գծով Յեղուղական մասից ներմուծվում են գործարանային աղբանքներ— կտորեկեն, մեքենաներ, շաքար և այլն:

Արևմտյան Սիրիքի առևտությունների համար կարևոր նշանակություն ունի Արք, վորի վրայով հաց, փայտ և այլ ապրանքներ փոխադրում են Հյուս: Բնեռային ծովը, այս տեղից ել կարայի և Բարենցի ծովերով արտասահման: Այս ճանապարհը կոչվում է Հյուսիսային ծովային հանապատճեն: Նա շափազանց ձեռնառու յէ, վորովհետեւ 1 վութցորենը մինչև Լօնդոն հասցնելը այս ճանապարհով նստում է 30 կոպեկ, իսկ Բալտիկ ծովով տանելու դեպքում կը կնայակի թանգ և նստում: Ահա թե ինչու Խորհրդային

իշխանությունն ուշադրություն ե գարձնում այս ճանապարհի վրա. ուսումնասիրվում են կարայի ծովի սառուցների շարժումը, կառուցվում են բաղրուկայարաններ, վորոնք նաևերին ամեն անզամ կարող են իմաց տալ, թե կարայի ծովից Բարենցի ծովը տանող նեղուցներից փորն ե ազատ սառուցներից: Բացի այդ Որի գետաբերանում կառուցվեց մի նավահանգիստ, վորը կոչվում է Նովի պոր: Ամեն տարի ծովային նավերը գալիս են Նովի պոր և այնտեղից վերցնում հաց, մորթիներ, փայտ և այլն: Այս ճանապարհը մեծ ապագա ունի:

Ավելի մեծ նշանակություն ունի Խաղաղ ովկիանոսը, վորի ամիսն գտնվում է Խորհրդ. Միության կարեոր նավահանգիստներից մեկը—Վաղիվոսովկը: Այդ նավահանգը ստորվ կարելի յե հաղորդակցություն ունենալ Յակոսնիայի, Զինասատանի, ինչպես և Ամերիկայի և Ավստրալիայի հետ:

Սիրիրի զիսավոր քաղաքները գտնվում են կամ յերկաթուղու վրա կամ նավագնաց գետերի ափերին: Նշանավոր են Ռիմսկը, Իրաֆշ գետի վրա. Սիրիրի ամենամեծ քաղաքն եւ Նովո-Սիրիրսկի—Որի վրա. առետրական կենտրոն ե: Տուսկ—Տոմ գետի ափին. կա համարսարան: Իրկուտսկ—Կուլտուրական կենտրոն ե, գտնվում է Բայկալի մոտ: Կրասնոյարսկ, Յակուտսկ, Վերինի-Ռուբինսկ, Խաբարովսկ գարշական կենտրոններ են: Չիսա—ունի համալսարան: Պետրովավլովսկ—Կամչակայի վրա:

Աշխատանք.—Ցույց տվեք Սիրիրի յերկաթուղային գիծը: Նշանակեցեք զիսավոր քաղաքները. (Աշխարհ. ա., աշխ. 54):

Ցույց տվեք այն յերկաթուղային գիծը, վորով կարող էք Վլադիվոստոկ հասնել:

Կարգացեք «Սիրիրի յերկաթուղին» հոդվածը («Աշխարհի շուրջը»):

Զ.

ԹՈՒՐՔԵՍՏԱՆ

Թուրքեստանը գտնվում է Կասպից ծովից արևիլք. Նրա մեջ են մանոււմ թուրքմենստանի, Ռւզբեկստանի և Տաջիկստանի հանրապետությունները, ցույց տվեք:

Գտեք այն ճանապարհը, վորով կարող եք Յերեանից Սամարդանդ հասնել, մասշատրի ողնությամբ չափեցեք այդ ճանապարհի յերկարությունը:

Թուրքեստանը ձգվում է Կասպից ծովից մինչև Չինաստան և Կազակստանից մինչև Պարսկաստան և Աֆղանստան։ Նրա մեծ մասը հարթություն է, ինոները գտընվում են արեւլյան և հարավային սահմաններում և շատերը նրանցից ծածկված են հավերժական ձյունով։ Այդ լեռներից սկիզբն են առնում Ամու-Փարփակ և Սիր-Փարփակ գետերը, վորոնք թափվում են Սրալյան ծովի։

Թուրքեստանի կլիման շատ չոր է, անձրեները գալիս են վետրվարին և մարտին, վորից հետո սկսվում են յերկարանի շոգեր ու յերաշոներ։ Արեն այրում է անխնակերպով, դաշտերի խորը խանձգում է, գետակներն ու աղբյուրները ցամաքում են և ողը լցվում է փոշով։ Ամառվա շոգերին ոդի բարեխառնությունը հաճախ 40°-ից անցնում է, իսկ գետինը տաքանում է նույնիսկ մինչև 70°։ Չեղոն, ընդհակառակը, ցուրտ է լինում և սառնամանիքները յերբեմն հասնում են մինչև—30°։

Սաստիկ չորսության պատճառով թուրքեստանը շատ աղքատ բուսականություն ունի. ավազոտ, անկենդան անապատները տարածվում են հարյուրավոր կիլոմետրեր։

Այդ անապատներում ափազը տեղակե կագմում է շարժական թմրեր, վորոնք կոչվում են բարխաններ։ Քամիների ժամանակ բարխաններն սկսում են շարժվել. քամու ուժից ափազի հատիկները գլորվում են ափազաթմբի մի լանջից մյուսը և այդպիսով բարխանը կամաց-կամաց իր տեղը փոխում է ու յերբեմն ծածկում մշակված տեղեր։ Ինդարձակ ափազոտ տարածությունները համարյա զուրկ են բուսականությունից, յեղաճներն ել ունեն այն պիսի հարմարություն, վոր կարողանան զիմանալ այդ

չոր յերկրում: Այստեղ կարսղ են աճել այնպիսի բույսեր, վորոնք քիչ ջուր են զոլորշացնում. այդ պատճառով թուշանի անապահների բույսերն ունեն շատ մանր տերեներ կամ բոլորովին տերեներից գուրկ են: Անապատի միակ ծառը սահսառվի և, վորք զուրկ և տերեներից և համարյա սպիտ չի տաշացնում: Նա յուր յերկար արժանահրով ծծում և ավազի խորքերի ջուրը և այդպիսով զիմանում և այդ ավազների մեջ:

Անապահներում ապրում են կլիոզիզները և բուրգինեները, վորոնք պարապում են անասնապահությունը: Զմեռը



Նկ. 64. Թուրքմեններ:


և գարնանը նրանք անասուններին պահում են անապատներում, սպասուլի նոսր անտառներում, բայց յերբ շոգերն ընկնում են և անասունների կերը պակասում և, նրանք իրենց ամրող զուրքով քոչում են սարերը և ամրող ամառը մնում այնտեղ:

Կարգացեք «Թուրքմանի տափաստաններն ու անապատները» հոդվածը («Աշխարհի շուրջը»):

Թուրանի ընդարձակ անապատներում և ապկիսները: Հոր տափաստաններում կյանքը յեռում և միայն գետերի և գետակների ափերին, վորտեղ անց են կացրած բազմաթիվ արհեստական ջրանցքներ: Այդք-

Ներք, բանջարանոցներն ու մշակված դաշտերը կանաչ յերիզի նման ձգվում են Ամու-Դարիա, Սիր-Դարիա, Զարավ-շան և այլ գետերի յերկարությամբ և կազմում կտտար-յուր ուսպիսենք:

Արհեստականորեն վոռոգվող հողերը թուրքեստանի ժողովրդի բարորության հիմքն են կազմում: Յեթե չի-նեյին թուրքեստանի գետերն ու արհեստական ջրանցք-ները, չեյին լինի և զյուղերն ու քաղաքները:



Նկ. 65. Ռոզբուկի խօճիքը սաղիսում:

Ռազինների փարթամ այգիների և դաշտերի մեջ ցըր-ված են կալից ծեփած, տափակ տանիքներով խղճուկ տներ, վորտեղ ապրում են տարբեր և ուզբեկները. Սրանք իրենց արտաքին տեսքով նման են կիրզիկներին և պատ-կանում են գեղին ցեղին: Լեռներին մոտ ապրում են տաջիկները, վորոնք ապիտակ ցեղին են պատկանում:

Դաշտերում նրանք ցանում են ցորեն, բրինձ և բամբակ: Բամբակի մշակությունը թուրքեստանում այն-չափ է տարածված, վոր պատերազմից առաջ Թուսաստա-նում զործածվող բամբակի կեսից ավելին ստացվում եր թուրքաստանից:

Թուրքեստանի բամբակն ուղարկվում է Մուկայի արդյունագործական շրջանը, վորտեղ նրանցից պատրաս-

տում են զանազան գործվածքներ և ապա ցրում Միության զանազան կողմերում: Բայց դժբախտաբար Թուրքեստանի և Անդրկովկասի արտադրած բամբակը չերավականանում մեր արդյունագործությանը, այդ պատճառով կառավարությունն ամեն տարի Հյուս, Ամերիկայի Միացյալ Նահանգներից մեծ քանակությամբ բամբակ և ներմուծում սա, ի հարկե, ձեռնառու չե, ավելի հաշիվ և



Նկ. 66. Սարթ.

արհեստական վոռոգման միջոցով մեծացնել մեր բամբակի ցանքսերը: Խորհրդ՝ իշխանությունը Թուրքեստանի անապատներից մեկը (Կարա-Կումը) վոռոգելու համար ներկայումս կազմել է մի մեծ ծրագիր: յերբ այդ ծրագիրը կիրագործվի, այն ժամանակ մեր գործարանները կաշխատեն համարյա ամբողջովին Թուրքեստանի բամբակով և արտասահմանից այլիս չենք ներմուծի:

Թուրքեստանի բամբակագործական շրջաններում կառուցվում

են բամբակագսիչ գործարաններ, ձիթահան գործարաններ և այլն:

Բացի յերկրագործությունից տեղացիները պարագում են նաև այգեզործությամբ և զինեզործությամբ: Այդիներում սատացվում են զեղնա, ծիրան, բուր, նուռ և խաղող, իսկ բանջարանոցներում սեխ և ձներուկ: Խաղողի քաղցր տեսակներից պատրաստում են քիշմիշ, վորը արտահանվում եւ:

Մի քանի շրջաններում եւ զարգացած և տնայնագործությունը: Տեղական բրդից պատրաստում են զեղեցիկ գորգեր, իսկ մետաքսից՝ շալեր և այլ գործվածքներ:

Թուրքեստանի գլխավոր ճանապարհ
հաղորդակցության միջոցները: Ներն են Անդրկասպյան և Տաշկենի յերշաբաղները: Կաթողիները: Առաջինն սկսվում է Կասպից ծովի ափից — Կրասնովոդսկից և Աշխարաղի, Մերսի, Սամարդանգի վրայով հասնում մինչև Զալալ-Աբալ: Տաշկենտի զիծն սկսվում է Անդրկասպյան զծից և Տաշկենտի, Որենքուրզի վրայով հասնում է մինչև Սամարա, Վոլգա: Այսպիսով Տաշկենտի զիծը միացնում է Թուրքեստանը Միության Յելլուզական մասի հետ:



Նկ. 67. Հացի շուկան Սամարդանում:

Թուրքեստանի պարզական բանական մեջ: Թուրք-մեստանի և Ռուգբեկստանի Խ. Ա. Հանրապետությունները, վորոնք առանձին-առանձին մտնում են ուղղակի Խ. Ա. Հ.

Միության մեջ, 2. Տաշիկստանի ինքն. Խ. Խ. Հանրապետությունն մտնում է Ռուգբեկստանի մեջ, 3. Կիրգիզ-ների ինքն. Խ. Խ. մտնում է Խ. Ա. Յ. Խ. Հանրապետության մեջ: Թուրքեստանի հյուսիսային մի փոքր մասը մտնում է Կաղակստանի հանրապետության մեջ:

Գլխավոր քաղաքներն են 1. Տաշկենի, վոր գտնվում է մի ընդարձակ ուղիսի մեջ և վոռոգվում է Սիր-Դարյայի

վտակներից մեկով: Կա համալսարան: 2. Ասմարդանից—գտնվում ե Զարավշանի ռազմական պայմանում, Աւղքեկստանի կենտրոնն ե: 3. Ավարարադ—Թուրքմենստանի կենտրոնն ե: 4. Մերձ—Նշանավոր ե բամբակարուծությամբ, 5. Անդիման—գտնվում ե Անդրկասապյան յերկաթուղու ծայրին, 6. Կրասնովոլովի—Նավահանգիստ ե Կասպից ծովի ափին: Դյուչամբե—Տաջիկստանի կենտրոնն ե:

Թուրքեստանն ի՞նչպիսի կլիմա և բուսականությունը ունի:

Ի՞նչ նշանակություն ունի արհեստական վոռոգումը թուրքեստանի համար:

Վոր պարագամունքն է մեծ արդյունք տալիս բնակիչներին: Թուրքեստանից ի՞նչ ե արտահանվում:

Թուրքեստանն ի՞նչ հանրապետություններից ե բաղկացած: Գլխավոր քաղաքները վորոնք են:

Աշխատանիք—Եշանակեցեք թուրքեստանի համբ քարտեզի վրա գտների, զիլակների քաղաքների անունները: Հանրապետություններն ու ինքնարքար շրջանները ներկեցեք տարրեր զույներով. (Աշխ. տետր. աշխ. 71):

Կարողացեք «Թուրքմեն ցեղը», «Իլրպիպները» հոդվածները. (Աշխարհի շուրջը):

ԿԱԶԱԿՈՍԱՆ

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք Կազակոսանի Ա.Խ. Հանրապետությունը:

Ցույց տվեք նրա սահմանները:

Կազակոսանը կասպից ծովի վոր կողմին և գտնվում է ի՞նչ գետեր ու լճեր կան այնտեղ:

Մասշտարի ողնությամբ չափեցեք վոլոգայի գետա-

բերանից մինչև Իրտիշ գետը:

Ի՞նչպես կարելի յե Մոսկվայից կամ Յերևանից գնալ կազակոսանի գլխավոր քաղաքը:

Կազակոսանը տարածվում է Կասպից ծովից մինչև Իրտիշ գետը: Նրա մակերեսութիւնը մեծ մասը հարթություն ե, վորը տեղափող ծովի մակերեսութիւնը ցածր ե գտնվում: Բնդարձակ տարածություններ բանված են անապատներով՝ վորոնք ծածկված են ավաղաթմբերով (բարիսաններով):



Նկ. 68. Կիրովից:

Կիմման ցամաքային եւ հունգարի միջին բարեխառնությունը
կազմում է— 18° , իսկ յուլիսինը՝
+ 22° . Ամառային սոսկալի շոգես-
րից գետերը բարակում են, շատ
գետակներ եւ բարորովին ցամա-
քում են: Արդ ժամանակ սոսկալի
շոգեր են լինում մանավանդ ա-
նապատճերում. քամիներից հաճախ
ավազի ամպեր են դոյանում,
սկսվում են ավազե փոթորիկներ,

վարօնք մեծ վնասներ են և առ-
ցնում անապատի ձանապարհորդներին: Ավազը ցեսնելվու
շոգերից այնքան և տաքանում, վոր թափփող անձրեի
կաթիլիներն անմիջապես զորոշանում են և գետինը թաց
չի լինում: Չմեռը դաժան և լինում. սառնամանիքները
յերեմն հասնում են մինչև— 40° և ավելի:

Կազակստանը չոր
յերկիներից մեկն է.
մի քանի տեղերում
համարյա ամբողջ
տարին անձրեներ
չեն գալիս, որինակ,
Գոլովնայա սենար:
Կիմմայի չորության
պատճառով կազակ-
ստանում շատ քիչ
գետեր կան: Շատ
գետեր ունեն աղի
ջուր, վորովնեան
գետինը, վորովնեան
նրանք հոսում են,
բավական շատ աղ և պարունակում:



Նկ. 69. Կիրովից աղջիկ:

Կազակստանի համար շատ մեծ նշանակություն ունեն տափաստանները, վորոնք տարածվում են արևելքից դեպի արևմուտք: Այդ տափաստաններում արածում են բազմաթիվ անասուններ, վորոնք մեծ արգյունք են տալիս կազակներին (կիրզիզներին):

Կազակստանում դանվել են գանազան հանքային հարըստություններ, վորոնցից աչքի յեն ընկնում աղը և նավթը: Աղն ստացվում է Որենբուրգից հարավ, Ելեցկայա Զաչիսայի մոտ, իսկ նամթե՛ Եմբա գետի ավազանում: Բացի այս հանքերից կազակստանում կան նաև քարածուխ, պղինձ, կապար, ծծումբ, վոսկի և այլն:

Կազակստանի ազգաբնակության մեծ քանակիցները յան մասը բաղկացած են կազակներից, վորոնք նաև պարուզ մուճիք յերբեմն կոչվում են կիրզիզներ: Բացի կազակներից այսուղ ապրում են նաև մեծ քանակին ուղարկիցներ, վորոնք գաղթել են Միության Յեվրոպական մասից: Ծուռները և ուկրաինցիները բնակություն են հաստատել Կազակստանի հյուսիսային տափաստաններում, վորտեղ նրանք պարապում են յերկրագործությամբ: Կազակստանի մնացած տափաստաններում ապրում են կազակները (կիրզիզները), վորոնց գլխավոր պարապմունքը անասնականությունն է: Իրենց գույքով և անասուններով նրանք շարունակ քոչում են տեղից-տեղ: Ամառը, յերբ տափաստանների խոտը չորանում է, կազակները կանգ են առնում գետափերին, վորտեղ ամառները միշտ կարելի յե կանաչ խոտ գտնել: Չմեռը նրանք քշում են անասունները այնպիսի տեղեր, վորտեղ կարելի յե քամիներից պաշտպանվել, Այսուղ կազակները կավից, յերեմն ել գերաններից շինում են մանր գոնսերով և առանց պատուհանների տներ, վորտեղ նրանք պատապարվում են ձմեռային սառնամանիքներից: Կազակները պահում են մեծ քանակությամբ վոշխար,

ժառշոր յեղջուրավոր անասուններ, ձի և ուղտ Անասնա-
պահությունը նրանց զիմավոր պարագմունիքն է:

Կազակները շատ են կապված իրենց անասունների և
ազատ տափաստանների հետ. այդ պատճառով նրանք
գժգոհում ելին այն գաղթական ուսուների դեմ, վոր զրա-
վում ելին կազակների արտատեղերը: Հաճախ կազակնե-
րի և ուսուների միջև ընդհարումներ ելին տեղի ունենում,



Նկ. 70. Կարա-կիրդիկ կանայք:

վորի հետևանքն այն եր լինում, վոր շատ կազակներ բան-
տարկում կամ գնդակահարվում ելին: Յարական կառա-
վարությունը պաշտպանում եր ուսուների շահները:

Կազակները տեսնելով, վոր ազգաբնակությունը հե-
տրզնետե աճում ե և քոչելը գժվարանում ե, սկսեցին
կամաց-կամաց թողնել իրենց թափառական կյանքը և
նոտակյաց կյանք վարել: Այժմ շատ կազակական ընտա-
նիքներ հաստատուն բնակարաններ ունեն և պարագում
են յերկրագործությամբ:

Կազակստանի արդյունաբերությունը շատ թույլ է.
այդ պատճառով նրանք գործարանային ապրանքները
առանձնում են Միության Յեկարովական մասից, իսկ զրանց

փոխարեն իրենք արտահանում են զլիսավորապես կաշիքուրդ, աղ, ձուկ և այլն:

Դեռ այսոր ել հաղորդակցության զլիսավոր միջոցը ուղարի կարավանն եւ մեծ նշանակություն ունի այն յերկաթուղային գիծը, վորն սկսվում եւ Ռւզբեկստանից և Կղզու Ռուզայի վրայով համառում եւ մինչեւ Վոլգա:



Նկ. 71. Կարա-կիրզիկները ուղահրի վրա

Խ. ՄԻՈՒԹՅԱՆ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տեղեկությունների համար Խ. Միուրյան ձայն Խորհրդ. Միության մեջ առլրում է բնակիչների թվով: մոտ 147 միլիոն մարդ: Այստեղից յերկում եւ, վոր Խ. Միությունը ամենախոշոր յերկրներից մեկն է վոչ միայն մակարդակի, այլև ազգաբնակության մեծությամբ:

Գլխավոր յերկրների ազգաբնակուրյան մեծությունը

Զինասատանը	438	միլիոն
Հնդկաստանը	319	»
ԽՍՀՄ	147	»
Միաց. Նահանգ. (առանց գաղութ.)	106	»
Յափոնիան (Կորեյայով)	79	»
Գերմանիան	63	»
Անգլիան (առանց գաղութների)	44	»
Ֆրանսիան	40	»
Իտալիան	42	»

և ՍՀՄ-ն ազգաբնակության մեծությամբ գորեքորոշ տեղն է ըստում:

Աչխատակի. — Կազմեցեք մի դիազրամ, վորը ցույց տարյանակոր յերկրների ազգաբնակության համեմատական մեծությունը:

Խ. Միության ազգաբնակությունը Ազգաբնակությունը մեծ է, բայց մեծ է և յերկիրը՝ Խորհրդ. Քանի խօսությունը՝ Միության մեջ միջին հաշվով մեկ քառակուսի կիլոմետրի վրա ապրում է մոտ 7 մարդ, մինչդեռ Բելգիայում մեկ քառ. կիլոմետրի վրա ապրում է 256 մարդ, Հոլլանդիայում—201, Անգլիայում (առանց իրանդիայի)—186, Գերմանիայում—135, Իտալիայում—136, Ֆրանսիայում—74 և այլն:

Խ. Միության ազգաբնակության այդչափ նոսր լինելը բացատրվում է նրանով, վոր տունդրաները, անտառները, չոր տափաստանները բավական մեծ տեղ են ըստում: Տունդրաների շրջանում մեկ քառ. կիլոմետրի վրա ապրում է մոտ մեկ մարդ, վշատերև անտառների շրջանում—2 մարդ, Յելգոսպական մասի սեահողի շրջանում—75 մարդ, իսկ Անդրկովկասում—31 մարդ: Շատ նոսր ազգաբնակություն ունեն նաև Սիբիրի ու Կազակաստանը:

Ա. Միուրյան առանձին հանրապետությունների ազգաբնակության խսություն:

ԱՄՅԻՆՀ		5	մարդ	I	քառ.	կիւոմետրի	վրա-
Քելոսուսիայի	ՍԽՀ	39	»	»	»		
Աւղաբնայի	ՍԽՀ	64	»	»	»		
Անդրկովկասի	ՍԽՀ	32	»	»	»		
Թուրքմենստանի	ՍԽՀ	2	»	»	»		
Աւղբեկաստանի	ՍԽՀ	15	»	»	»		

Խ. Միության վնր հանրապետությունն ամելի խիստ ազգաբնակություն ունի:

Դա ինչնի կարելի յե բացարձել:

Ինչն ԱՄՅԻՆՀ-ը նուր ազգաբնակություն ունի (նկատի ունեցեք, վոր այդ հանրապետության մեջ մանում են նաև Սիրիոն ու Կազախանիը):

Գյուղատնտեսությունը մեր յերկրի


Յ. Միուրյանը բնակիչների համար առաջնակարգ նշանագրության կամ յեւիր են: Այդ յերկում և նրանից, վոր ազգաբնակության խոշոր մասը պարագում և գյուղատնտեսությամբ, իսկ փոքր մասը արդյունագործությամբ, առեստով և այնու 147 միլիոն մարդուց 121 միլիոնը կամ $82^{\circ}/_{\circ}$ -ը ապրում և գյուղերում, իսկ 26 միլիոնը կամ $18^{\circ}/_{\circ}$ -ը քաղաքներում:

Դիտեցեք նկարը և առացեք—վնր յերկրներում գյուղական ազգաբնակությունը ամելի շատ ե, քան քաղաքայինը (նկ. 72):

Վնր յերկրներում քաղաքային բնակչությունն ամելի շատ ե, քան գյուղինը:

Աւելին վարպետի վորոշենք, թե մի յերկիր գյուղատնտեսական և, թե արդյունագործական, մենք ամենից առաջ ուշադրություն ենք գարճառում այն բանի վրա, թե ազգաբնակության վոր մասն և ապրում գյուղում և վնրը՝ քաղաքում: Բայց դա բավական չե: Մենք պետք ե պարզենք, թե այդ յերկրի ազգաբնակությունը գյուղատնտեսությունից և ամելի մեծ արդյունք ստանում, թե արդյունագործությունից:

1926—27 թ. Խ. Միության ազգաբնակությունը զյուղանաեսությունից ունեցել է 12775 միլիոն բռբրույեկամում, իսկ արդյունագործությունից՝ մոտ 7820 միլիոն։ Այդ նշանակում է, վոր զյուղամասնեսությունը մերժողովրդի ապրուստի գիմափոր միջոցն է։



Նկ. 72. Այս զիազրամը ցույց է տալիս, թե զանագան յերկրներում ազգաբնակչության վեր տոկումն է ապրում զյուղում և վորը՝ քաղաքում.

Յերբ ասում ենք, թե Խ. Միոթյան
մեջ 147 միլիոն մարդ կա, այդ շի նշա-
նակում թե զբանք բոլորն ել աշխատա-
վորներ են. ընդհակառակը, զբանց մեջ կան
անշափահաններ, ծերեր, աշխատանքի ընդունակությունը
կորցրած մարդիկ և այլն. Ներկայաւմս բոլոր աշխատավոր
անձանց թիվը հաշվում են մոտ 72 միլիոն, փորից

Գյուղատնտեսությամբ պարագում	59.000.000	մարդ
Արդյունագործությամբ	4.860.000	»
Փոխազբական գործով	1.510.000	»
Առևտություն	1.063.000	»
Ժաղացական լուսավորության գործով	667.000	»
Զանազան պարագմունքներով	3.900.000	»
Ընդհանուր	72.000.000	»

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր Միոթյան աշխատավորների խոշոր մասը զյուղացիներն են կազմում. դրանցից հետո գալիս են բանվորները:

Ո՞վ է ծառերում հողը պատհողը: Հեղափոխությունից առաջ հողը պատհողը կանում եր արքունիքին, վանքերին, յեկեղեցիներին, գյուղացիներին, դանագան մասնավոր մարդկանց, քաղաքներին և այլն: Խ. Միոթյան Յեղոսպական մասի ամեն 100 դեսյատինից:

36,9 %

Արքունիքի
հողեր

35,1 %



2,2 %

Դանինապատկերն
լեկեղից. ինչ այն

25,8 %



Մասնավոր անձնանոցիներ

Յ. 73. Այս դիագրամը ցույց է տալիս, թե Հոկտ. Հեղափոխությունից առաջ հողի տերն ուժ եր:

36,9 դեսյատինը պատկանում էր պետության (արքունիքին)

25,8 » » կարվածատերերին՝

35,1 » » գյուղացիներին,

2,2 » » վանքերին, քաղաքներին, և այլն:

Այսպիսով զյուղացիներին պատկանում եր ամբողջ հողի $\frac{1}{3}$ մասը միայն: Բայց ի հարկե, նրանք զբանով չելին կարող բավարարվել: Մի կողմից զյուղացիներն աշխատում եյին կապալով վերցնել կարվածատերերի հողերը, մյուս կողմից՝ ունենալ սեփհական հողեր, այսինքն՝ զնել:

Հոկտեմբերյան հեղափոխությունը հողը հայտարարեց Թորհքային Միության սեփականություն։ Միության առնմաննազդության համաձայն աժեն մի աշխատավոր է վոր անձամբ մշակում ե հողը, պետությունից ստանում ե վաշտու նորման

96,8%



2,7%



0,5%



Գյաւղացիներ

Խոհեղական, լեկ Առնելիսիվների
հիմնարկ, հողեր հողեր

Տեղ. 74. Այս դիագրամը ցույց է տալիս, թե Հոկտ. Հեղափոխությունից հետո հողն ով և ոգտագործում:

74-րդ նկարի դիագրամը ցույց է տալիս, թե այժմ Խ. Միության մեջ ով և ոգտագործում, մշակում հողը:

Ամբողջ հողի	96,8% 0,5%-ը	»	ոգտագործում են դյուզացիները.
	2,7% Ը	»	Հիմնարկութեալն.

Հոկտ. Հեղափոխությունից առաջ հողն ուժ էր պատկանում:

Ուժում է պատկանում հողն այժմ և ով է մշակում:

Գյուղացին այժմ կարող է յուր հողաբաժինն ուրիշին ձախիլ. ինչու:

Վոչ մի յերկիր այնպիսի ընդարձակ
Յանեսերի մե- սեահող չունի, ինչպես և. Միությունը-
ծուրյունը: միայն Յելբողական մասում սեահողը
բռնում է մոտ 100 միլիոն դեսյատին տեղ: Պատերազմից
առաջ Ռուսաստանում ցանքսերը կազմում եյին մոտ 103
միլիոն դեսյատին, մինչդեռ Միաց: Նահանգներում նրանք
բռնում եյին 70 միլիոն դեսյատին, Գերմանիայում՝ 13,
Ֆրանսիայում՝ 13 հատիկայում՝ 6 և Անգլիայում՝ 3:

Պատերազմի ընթացքում ցանքսերը քչացան, բայց
շնորհիվ ձեռք առած միջոցների, նրանք կրկին ընդար-
ձակվեցին և ներկայումս համարյա հավասարվում են մինչ-
պատերազմյան տարածության:

Յերկրագործության մեջ առաջին
Հացահատիկներից տեղը բռնում է նացահատիկների մշա-
վորքան բերելու: Լողարձակ տարածություններ
բռնված են նաևարով, ցորենով, վարսա-
կով և զարով: Սրանք մեր յերկրի գլխավոր հացահատիկ-
ների են: Բացի դրանից կարեոր նշանակություն ունեն
նաև կարտոֆելը, յեղիպտացորենը, կորեկը, սփառը և
և այլն:

Հիշեցներ և. Միության հացառատ շրջանները կամ
շահմարանները:

Սիրիաի վար մասն և հացով հարստա:

Միության Յելբողական մասի վար շրջանները հացի-
պակասություն ունեն և վար շրջանը մեծ քանակությումը
հաց և արտադրում:

Անգրելովկասը կարելի յե հացառատ համարել, իսկ
չյուս. Կովկասը:

Հացի արտահանությունը և. Միության համար բնոչ
նշանակություն ունի,

Հիմք զլիսավոր հացահատիկների առաղբարձրությունը 1925 թ. (միջին կոլիչնայիննով*)

Ցերկուներ	Ցորեն	Հաճար	Վարչական	Գարփական	Ցեղեղի առաջնորդներ	Ըստամենը հինգ հացահատիկներ
Միաց. Նահանջներ	181	12	219	47	738	1. 197
Կոլ ՀՇ	190	208	102	60	45	605
Կանագա	112	3	79	5	3	222
Գերմանիա	32	81	56	26	—	195
Ֆրանսիա	90	11	48	10	5	164
Հնդկաստան	91	—	—	27	22	140
Արգենտինա	52	1	12	4	71	140
Լինաստան	16	65	33	17	1	132
Խոալիա	66	2	7	3	28	106
Ռումանիա	29	2	7	10	45	93
Խոպանիա	45	8	6	22	7	88
Յուգո-Ալալիա	21	2	4	3	38	68
Վեներիա	20	8	4	6	22	60
Անգլիա	15	—	30	14	—	59
Չապոնիա	8	—	2	20	1	31

*) Կվինսարը=6,1 գրի:

Խ. Միությունը հինգ հացահատիկների բերքով վարչերորդ տեղն է բոնում:

Հաճարի բերքով Խ. Միությունը վարերորդ տեղն է բոնում:

Յուրաքանչյուրը բնակչին վարքան հացահատիկ և բնկնում (հաշվեցեք փթերով):

Ավատաբեր Միության մեջ բերքով առաջին տեղը վարչացահատիկն է բոնում:

Այսպիսով հացահատիկների մշակությունը շատ կատարում նշանակություն ունի մեր յերկրի համար: Հացահատիկների բերքն այնքան մեծ է լինում, վոր վոչ միայն առավականանում է յերկրի կարիքներին, այլ և նրա միամասն արտահանվում է: Յեզրոպական յերկրներից Անգլիան, Իտալիան, Գերմանիան, Ֆրանսիան ամեն առարի մեծ քառակությամբ հաց են ներմուծում ԽՍՀՄ-ից:

ԽՍՀՄ-ի վարչականներն են հացով հարուստ: Վարչականները հացի պակասություն ունեն. (Աշխ. 76):

Խ. Միության հյուսիսային շրջանում,
Անշաբեն են հողը վորտեղ անտառներն ընդարձակ տարա-
ծություն են բռնում, հողն այսպես են
մշակում: Գյուղացին մի վորոշ տեղ ան-
տառը կտրատում է, ծառի արմատները հողից հանում ե-
ն ճյուղերի հետ կրակ տալիս, վորպեսզի գոյացող մոխրով
հողը քիչ թե շատ պարարտանա:

Մի քանի տարի անընդհատ այդ հողը վարում են,
մինչև վոր նա ուժապառ ե լինում և այլու բերք չի տա-
վառ: Այն ժամանակ այդ հողը զցում են և անցնում մի
նոր տեղ, գարձյալ կտրատում անտառը և այլն: Իսկ տ-
առջին հողը մնում ե 20—30 տարի և ծածկվում նոր ան-
տառով: Այս ձևութեանը, ինարկե, հնարավոր ե միայն այնտեղ,
վորտեղ ազատ հողեր շատ կան, և այնքան ել արդյու-
նավետ չե:

Մեզնում, Անդրկովկասում այսպես են վարվում:
Վարելահողերը յերկու մասի յեն բաժանում և մի տարի
մի կեսն են վարում, իսկ հաջորդ տարին՝ մյուս կեսը:
Յեթե, ուրեմն, մի գյուղացի 6 դեսյատին հող ունի, նա
յերեքը վարում է, իսկ յերեքը թողնում է, վոր հան-
գըստանա:

Խ. Միության տափաստանների շրջանում տարած-
ված ե յեռապատշան սիստեմը: Գյուղացին յուր հողերը
յերեք բաժին ե անում և մեկի մեջ աշնանացան անում,
յերկրորդի մեջ՝ գարնանացան, իսկ յերրորդը՝ հանգստա-
նում է: Այս գեպքում գյուղացու հողերի մեկ յերրորդը
ամեն տարի մնում է անողուս:

Խ. Միության մի քանի տեղերում ել գործադրում են
«բազմագաշտյան» սիստեմը: Երա եյությունը կայանում է
նրանում, վոր ամբողջ հողը մշակվում է և վոչ մի կտոր չի
հանգստանում: Ամբողջ վարելահողը բաժանվում է շատ գաշ-
տերի (8,9 և ավելի) կամ կտորների: Յեթե մի դաշտում այս
տարի՝ ցանել ելին մի այնպիսի բույս, վոր սննդարար

Նյութերը վերցրել և հողի վերին շերտերից, հաջորդ տարին այնպիսի բույս են ցանում, վոր մննդարար նյութերը կարողանա հողի ներքին շերտերից վերցնելու հետո ցանում են այնպիսի բույսեր, վորոնք կարողանում են հողը հարստացնել բորակածնով (որինակ՝ սիսեռը, առվույտը և այլն). Բազմադաշտյան սիստեմի դեպքում նաև բոլոր հողերը մշակվում են, և յերկրորդ՝ անհաջող տարիներին գյուղացին այնքան ել մեծ վնաս չի ստանում, վորովհետեւ յեթե մի բույս անհաջող բերը և տալիս, մյուսը հաջող և լինում:

Այստեղից պարզ յերեսում է, վոր գանազան տեսակի սիստեմներից ամենից նպատակահարմարը «բազմադաշտյան» սիստեմն է: Յեկ խալապես՝ մենք տեսնում ենք, վոր բոլոր կուլտուրական յերկրներում, վորտեղ ազգաբնակությունը բավական խիտ և և հողը պակաս, դիմում են այդ միջոցին: Մինչդեռ մեզնում հողի մի մասը հանգուստանում և և այդ տարին գյուղացին արդյունք չի տալիս. բազմադաշտյան սիստեմի դեպքում գյուղացին բոլոր հողերից ել ոգտվում է:

Ուրեմն սոսար, շատ կուլտուրական յերկրների նման մենք ել պետք և թողնենք յերկղաշտյան և յեռադաշտյան սիստեմները և բազմադաշտյանը գործադրենք:

Խորհրդացին կառավարությունը շատ լավ գիտակցում և բազմադաշտյան սիստեմի առավելությունը և աշխատում և տարածել այս սիստեմը գյուղացիության մեջ:

Յեթե Խորհրդ Միության մեջ շատ

Առօբան թերթ հացահատիկ և ստացվում, այդ չի նշանագերած մեկի վերցնումների կում, թե մեր գյուղացին ավելի լավ յերկ-

րագործ ե, քան գերմանացին և անգլիացին. ընդհակառակը, յերբ Միության մեջ մեկ գեսայատինի տված բերքը համեմատում ենք ուրիշ յերկրների բերքատվության հետ, այն ժամանակ տեսնում ենք, վոր մեր գյուղացին շատ հետ և գերմանացուց կամ բելգիացուց:

Գլխավոր նացանաւիկների քերտավայրումն զանազան յերկրներում:

(Մեկ հեկտարից ստացված բերքը կվիճակներով)

	ցորեն	Հաճար	Գարի	Վարսակ
Դանիա	30,2	16,6	21,6	17,7
Բելգիա	24,5	21,9	27,2	24,2
Հոլանդիա	23,9	17,3	26,2	21,4
Անգլիա	21,8	18,3	19,2	18,4
Գերմանիա	20,6	17,2	20	19,4
Միաց. Նահանգներ . .	9,9	10,1	13,4	10,6
ԽՍՀՄ (Յեղոսպ. մաս)	6,5	7,9	9,3	7,9

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր մենք մեկ հեկտարից ավելի քիչ բերք ենք վերցնում, քանի թե գանիացիները, անգլիացիները և այլն Դանիացին մեկ հեկտարից այնքան ցորեն և վերցնում, վորքան մենք վերցնում ենք 5 հեկտարից։ Այս տարրերությունը բացատրվում է նրանով, վոր գանիացիները կամ բելգիացիները ահազին ծախս են անում մի կտոր հողի վրա և թույլ չեն տալիս, վոր հողը հանգստանա:

Ամենից առաջ պետք է վարելանողը բնակի անենի, վոր մենի և մեծ պարագացնենի։ 75 Նկարը ցույց է տալիս, թերժ վերցնենի վոր մեծ բերք վերցնում են հենց այն մեկ հեկտարից։ յերկրներում, փորտեղ վարելահողը լավ են պարարտացնում։ Պետք է բոլինենի յերկրացյան և յեռադաշտացյան սիստեմները և գործ ածենի բազմադաշտացյանը։ Յեռադաշտյան սիստեմի շնորհիվ ամեն տարի և. Միության մեջ հողերի $30^{\circ}/_{\text{o}}$ -ը մնում է անոդուտ, այն ինչ Անգլիայում միայն $2^{\circ}/_{\text{o}}$ -ն է մնում։

Հին արորների և գութանների, փոցիսերի և կամսերի փոխարեն մենք պետք ե ամենուրեք մացնենք նոր Տեսակի յերկարի գութաններ, սերմանցան մեթենաներ, արաք-

տորներ և այլն։ Բայց կարելի յեւ այդչափ գործիքներ հասցնել զյուղացիներին։ Այս, կարելի յեւ Այժմ արգեն զյուղացիների, խորհրդային և կոլեկտիվ անտեսությունների դաշտերում աշխատում են ավելի քան 10.000 արաքտոր։

Ի հարկե, չբավոր զյուղացին, ինչպես և միջակը իրենց ուժերով չեն կարող անհրաժեշտ գործիքները գնել։ Դրա համար նրանք պետք եւ միանան և ընդհանուր ուժերով ձեռք բերեն։ Կառավարությունն եւ զյուղատնտեսական բանկերի միջոցով նրանց ոգնության կզատ։

ՏԱՐԱԾՈՒՅԹ

ՀԱՐԱՐԵՐԱԿՈՒՅԹ

ԳԼՈՒԽԱԿՈՒՅԹ

Հացի բերեր փեթեթ

Պարաւացնեղ հյութերի
հանուկը

ՖՐԱՎԱՐՈՒՅԹ

Ո-ԱԽՈՒՅԹԱԿԱ

87

46

0,35

10,5

8,8

3,2

21.4

Նկ. 25. Այս դիագրամը ցույց է տալիս, թե զանազան յերկներում մեկ դեմքա-
տինից վճրքան փուլը ցորեն են վերցնում։

Յերբ զյուղացին ձեռք կրերի արաքտոր և այլ մեքե-
նաներ, այն գեպքում նու կկարողանա բարձրացնել յուր տնտեսությունը։

Խ. Միությունը յերկրագործական յերկիր է։ Նո
պետք եւ արտադրի զյուղատնտեսական մթերքներ։ Բայց,
վորպեսզի մենք կարողանանք այդ մթերքներն ուրիշ յեր-
կըրագործական յերկրներից ավելի աժան ծախել, անհրա-

ժեշտ ե, վոր հացի մշակությունը կատարվի մեքենաներով։ Մեքենաներով մշակելու դեպքում հացն ավելի աժանակատի:

Ինչով բացատրել այն, վոր ներկայումս Արևմտյան Յեփրոպայում հացի ամբողջ շուկան գրավել ե Ամերիկան Ահա թե ինչով ե բացատրվում։ Ամերիկայում ներկայումս աշխատում ե 400.000 տրաքտոր։ Ավտոմոբիլների միջոցով հացը ամենանեռավոր անկյուններից կարճ ժամանակում հացնում են յերկաթուղու կայարանները և խոշոր կենտրոնները։ Այժմ Ամերիկայում մոտ 17 միլիոն ավտոմոբիլ կա, այնպես վոր ամեն 6—8 մարդու մի ավտոմոբիլ ե ընկնում։

Պարզ ե, ի հարկե, վոր անհատ դյունութեակերպ սենտ պացին (մանավանդ չքավորը) յուր ուժինությունութիւրը:

բով յերբեք չի կարող յուր անտեսությունը բարձրացնել։ Բայց յեթե նրանք միանան և կազմակերպեն կոլեկտիվ անտեսություններ, այն դեպքում գործը կհեշտանա։ Կոլեկտիվ անտեսությունը հնարավորություններն են ձեռք բերել տրաքտորներ ու զանազան մեքենաներ, մշակել հողը գիտության վերջին խոսքի համաձայն և այլն։

Հետեւյալ աղյուսակը ցույց է տալիս, վոր կոլեկտիվ անտեսությունների թիվը, 1923 թվականից, անընդհանաձանում ե։

	1924 թ.	1925 թ.	1925 թ.
	հոկտ. 1-ին	հուն. 1-ին	հուլ. 1-ին
Կոմմունաներ	1290	1556	1935
Արտելներ	6880	7648	9647
Ընկերություններ	3201	3176	4726

Կարենք ե նկատել և այն, վոր չքավոր դյուղացիներն ավելի շատ են մտնում կոլեկտիվների մեջ, քան միջակները։

Մեծ ոգնությունն կհասցնի զյուղացուն Սրբառքամիացիան և ելեկտրականությունը Ամենից առաջ գութանի ու արորի փոխարեն կգործածվեն ելեկտրագութանինը, այսինքն այնպիսի գութաններ, վորոնք կշարժվեն ելեկտրական հոսանքի ուժով: Այդ գութաններով մի գեղատինը կարելի է վարել 1 ժամում, 4—8 վերշող խորությամբ: Այժմ Լենինգրադի և Բրյանսկի գործարաններում պատրաստվում են 8 խոփանի ելեկտրագութաններ, վորոնց մի մասն արդեն պատրաստ ե և գործում ե:

Այսուհետեւ ելեկտրական հներգիայով կարելի յե աշխատեցնել հնձող, կալորդ մեքենաներ, ջրհան մեքենաներ և այլն:

Մի ելեկտրական ջրհան մեքենա ամբողջ մի գյուղին ջուր կմատակարարի, կջրի, կվոռովի ընդարձակ տարածություններ:

Գյուղացին յուր անտեսության մեջ կամ մի քանիսը միասին կարող են ունենալ ելեկտրալայցիներ և այլն:

Բացի հացահատիկներից մեր յերկանինիական բուժիչական բուժակում են նաև զանազան տեխնիկական բուժություններ, վորոնց մեջ առաջին տեղում են բամբակը, վուճը և հակլինինելը:

Բամբակի մշակության համար ամենահարժար շրջաններն են Անդրկովկասը և Թուրքեստանը: Խ. իշխանությունը լավ գիտակցելով այն խոչը նշանակությունը, վոր ունի բամբակը, աշխատում է արհեստական ջրանցքներ անցկացնել և վոռողել Անդրկովկասի և Թուրքեստանի չոր տափաստաններն ու անապատները:

Բամբակի ցանկանը մեծությունը յել սացված բերք (1926 թ.).

Յանքսի մա-	Զուած բամբա-	1 գետա-
կարգակը	կի քանակը	աված բերքը
Թուրքեստան	527.700 գեղատին	8.348.000 գութ 15,8 գութ
Անդրկովկաս	117.700 »	1.136.000 » 9,7 »
ԽՈՀՄ	645.400	9.484.000

Բանբանի նամաւարհային բերքը (1925/26 թ.)

Ամբողջ յեր- կրագնդի վրա	Միացյալ Նահանգներ.	Հազկաստա- նում	Յեղիզար-	ԽՍՀՄ	Մնացած յերկրներում
5961000 տոնն	3492000 տ.	1018000 տ.	353000	164000	934000 տոնն

Բամբակը ներմուծում ենք գլխավորապես Հյուս. Ամերիկայի Միաց. Նահանգներից:

Ցույց տվեք այն ճանապարհը, վորով բամբակը Ամերիկայից Մոսկվա և բերվում:

Վաւչի արտազրությամբ ԽՍՀՄ-ն առաջին տեղն երնում ամբողջ յերկրագնդի վրա: Մեր վուշը գործ են ածում անգլիացիները, գերմանացիները, լատիվիան, ևստանիան, Բելգիան, Ֆրանսիան և այլն: Այդ բույրը մշակվում է գլխավորապես Պոկովիի, Տվերի, Սմոլենսկի, Յարոսլավի, Կոստրոմայի նահանգներում: Արտահանվում են նիմինգրադի վրայով:

Վուշից ի՞նչ են պատրաստում: Վուշի գործվածքներով ԽՍՀՄ-ի վոր շրջանն է հայտնի:

Կարենը նշանակություն ունեն նաև կանոնին ու նաև լինելու: Աւկրաբնայում և ընդհանրապես սկսանողի շրջանում ձակընդեղից պատրաստում են օսմար, վորն այստեղից ուղարկվում է Խ. Միության հեռուվոր ձայրերը:

Ճականագրություն բերքը գանձան յերկրներում (1926),

Գերմանիա . . .	10,495,000 տոնն	Ֆրանսիա . . .	4,436,000 տոնն
Միացյալ Ն. . .	6,838,000 »	Լիտվանան . . .	3,725,000 »
Չեխո-Մոլակիա 6,188,000 »		ԽՍՀՄ . . .	5,900,000 »

Նախարի նամաւարհային արտադրույթը (1926/27 թ.):

Գերմանիա . . .	1,651,000 տոնն	Իտալիա . . .	310,000
Չ. Մոլակիա . . .	1,039,000 »	Բելգիա . . .	230,000
Ֆրանսիա . . .	688,000 »	Հոլլանդիա . . .	278,000
Լիտվանան . . .	581,000 »	ԽՍՀՄ . . .	859,000

Շաքարի աշտաղը ությամբ ԽՍՀՄ-ն յերլորդ տեղն է բռնում ամբողջ Յեվրոպայում:

ԽՍՀՄ-ի ազգաբնակության համար

Անսաստագիտական բյունությունը՝ կարեոր նշանակության ունի: Անսաստաններից ստացված շատ ապրանքներ մենք արտահանում ենք: Անսաստանների թվով ԽՍՀՄ-ն բռնում և առաջնակարգ տեղերից մեկը ամբողջ յերկրագնդի վրա:

Անսաստանների թվիր գանձան յերթիւնում:

Յերկրներ	Տարբերակ	Տ	Գ	Հայոց ազգային բյունությունը					
Հայկաստան	1922	1684	1444	14500	22085	27383	—	—	—
Միաց. Նահանգներ	1925	17589	5411	64928	39134	—	54234	—	—
ԽՍՀՄ	1924	23854	—	51420	74828	4019	17672	—	—
Արգենտինա	1922	9400	—	37065	30672	—	1437	—	—
Ավստրալիա	1922	2390	16	14337	78803	230	986	—	—
Կանադա	1925	3554	8	9307	—	—	4426	—	—

Համեմատեցեք ԽՍՀՄ-ի անսաստանների թիվը ուրիշ յերկրների թիվը հետո:

Խորհրդ. Միությունը իր բնական հասարակություններով բռնում և առաջնակարգ տեղերից մեկն ամբողջ աշխարհում: Այստեղ կան յերկաթ, քարածուխ, պղինձ, նավթ, թանգարժեք մետաղներ և այլն: Յեթե մենք կարողանանք այդ հանգերի արագորությունը մեծացնել, այն դեպքում մեր յերկրի տնտեսությունը կրաքճանա և ԽՍՀՄ-ն կդառնա արդյունաբերա-յերկրագործական յերկր:

Քարածիսի ամենակարեոր շրջանը կազ-
Քարածուխ մում և Դոնեցի ավագանը (Դոնբասսը), վո-
րի քարածուխը բարձր փորակ ունի և տալիս է կոնք: Այդ
կոքսով մենք հալում ենք յերկաթի հանքը և պատրաս-
տում պողպատ և չուգուն Մյուս շրջաններից նշանավոր
են Ռուբլ, Մերձմուկովյան շրջանը, Կուգնեցի ավագանը
(Միքիրում), Կազակստանը և Անդրկովկասը:

Քարածիսի նամաշխարհային արտադրությունը (1925 թ.):

(Միլիոն ժետրական տոններով հաշված):

Միաց.	Նահանգներ	531	Բելգիա	23
Անգլիա		252	ԽՍՀՄ	17
Գերմանիա		273	Յապոնիա	29
Ավստրիա		3	Լիհապտան	29
Չիխ-Ալմակիա		32	Մնացած յերկրներ	157
Ֆրանսիա		61		
			Ըմգամենը	1375

Յերկրորդ կարեօր հանքը նավթն է, վորի
առավելագույն առաջին յերկիրն է ամբողջ
աշխարհում: Նավթը տարածված է Կովկասում (Բակու,
Գրոզնի և Մայկով), Կազակստանում (Եմբա գետի ավա-
զանում), Ֆերգանում, Չելեկին կղզու վրա (Կասպից
ծովում): Նավթով հարուստ է և Սախալինը: Այդ շրջան-
ներից ամենակարեորը Բագուն է, վորի նավթը համաշ-
խարհային նշանակության ունի և մրցում է ոտար յեր-
կրների նավթի հետ:

Նավթի արտադրությունը ԽՍՀՄ-ի տուանձին շրջաններում (1925/26 թ.):

ԽՍՀՄ	8.206.000	տոնն
Ազնիվութիւն (Բագու)	5.514.000	»
Գրոզնի (Գրոզնի)	2.404.000	»
Մայկով (Կուրսով)	72.000	»
Եմբա	216.000	»
Ֆերգան և Չելեկին կղզի	առեղեկություններ	չկան:

Աշխատանք.—ԽՍՀՄ-ի համբ քարտեզի վրա վորեն նշան դրեք նավթի արտադրության տեղերում և ապա այդ նշանի կողքին գրեցեք «ՆԱՎԹ»:

Նավթի արտադրությունը գլխավոր յերկրներում (միլիոն տոններով):

Տարիներ	Միացյալ Նահանգներ	ԽՍՀՄ	Մերսիլա	Պարսկաս- տան	Ամբողջ ՀՀԿ- րազնդի վրա
1913	34	9	4	—	53 ³ / ₄
1923	100 ¹ / ₉	5 ¹ / ₂	22 ¹ / ₂	—	142
1924	98	6 ¹ / ₄	21	—	141
1925/36	105,2	8,8	13,5	4,7	150,9

Նավթը մեր արտահանության գլխավոր առարկաներից մեկն է:

Յերկաթը մեծ գեր և կատարում մարդու ներկար: անսեստթյան մեջ: Երանից պատրաստում են գանազան գործիքներ ու մեքենաներ, նավեր ու կամուրջներ, նույնիսկ աների կմախքներ: Առանց յերկաթի արդյունագործությունը չի կարող զարգանալ:

Յերկաթահանքի պաշարը ԽՍՀՄ-ում շատ մեծ է: Նա գոնվում է կրիվոյ բողում (Դոնեցի ավագանում), Աւրալում, Կուրսկի շրջանում, Սիրիում և այլն:

Առլասի մեջ գտեք ԽՍՀՄ-ի յերկաթահանքի գլխավոր շրջանները:

Յերկարահանքի արտադրությունը և. Մինչըսն մեջ (1925/26 թ.):

(Տաններով հաշված):

ԽՍՀՄ	Բւրալ	Կրիվոյ բող (Դոնեցի ավագանու)	Ենուբոնա- կան շրջան	Սիրի	Անդրկովկաս (Վ. բաստան)
3.259.5000	876.800	2.322.900	42.000	17.000	2.000

Զուգունի յեկ պողպատի հալումը զիխավոր յերկբներում (1926 թ.)
(միլիոն տոններով հաշված):

Զուգունի հալումը					Պողպատի հալումը				
Միաց.	Ֆեր-	Անդ-	Ֆրան-	ԽՍՀՄ	Միաց.	Ֆեր-	Անդ-	Ֆրան-	ԽՍՀՄ
Նամ.	մա-	լիս	սիս		Նամ.	մա-	լիս	սիս	
39,7	9,6	2,5	11	2,4	48	12	3,6	10	3

* Յերկաթահանքի արտադրությամբ առաջին տեղը ԽՍՀՄ-ի վրա շրջանն է բռնում: Քարտեզի վրա ցույց տվեք յերկաթ տվող շրջանները:

Համբ քարտեզի վրա համապատասխան տեղում գրեցիք «յերկաթ»:

Մանգանի պաշարով Խ. Միությունն առաջանական: Ջին յերկիրն է: Մեծ քանակությամբ արտադրություն և Վրաստանում (Զիատուրի), այնուհետև մանգան գտնվում է Եփկոպոլում (Դնեպրոպետրովսկի մոտ) և Ռուբալում:

Մանգանի հանի արտադրությունը գանձան յերկբներում (1925 թ.)
(Հազար տոններով հաշված):

ԽՍՀՄ	570	տոնն	Յապոնիա	*	12,000	տոնն
Հնդկաստան	852	»	Իսպանիա	*	36,000	»
Բրազիլիա	327	»	Միաց. Նահանգ.	1,536,000	»	
Մանգանը Միության արտահանության զլիսավոր առարկաներից մեկն է:						
Մանգանն ինչու համար են գործածում:						

Վուկու արտադրությունը ԽՍՀՄ-ում (1913 թ. և 1923 թ.):
Առաջին ներն են Արևելյան Միքիրը (Լեհա), Արևմտյան Միքիրը և Ռւբալը:

Վասկու արտադրությունը ԽՍՀՄ-ում (1913 թ. և 1923 թ.):

Ռւբալ	Արևմ.	Միքիր	Արևել.	Միքիր	Ընդամենը
1913 10,800 կիլոգր.	3,300 կիլոգր.	46,800 կիլոգր.	60,900 կիլոգր.		
1923 2,990 » 200 » 15,400 » 18,500 »					

**Արդյունագույն գործարաններում բամբակից, բըր-
ճուրյունից գից և վուշից պատրաստում են զործվածք-
ներ, փայտից՝ թուղթ, յերկաթից՝ մեքենաներ, ձակընդեղից
ստանում են շաքար և այլն: Միության գլխավոր արդյուն-
ագործական շրջանները գտնվում են յեփրապական մասում,
վորաեղից գործարաններին ապրանքները ապրածվում են
զեղի Սիրիր, Թուրքիաստան և Կովկաս: Այդ արդյունագործա-
կան կենտրոններն են՝ Կենտրոնական արդյունագործական
շրջանը (Մուլգա, Խանովսկովսկի և Ենիսեյ), Հարավային շրջանը (Դոնեցի շրջանը), Լենինգրադը և
Ռուսալլը:**

Ի՞նչ գիտեք այդ շրջանի մասին: Ի՞նչ են նրանք
արտադրում:

Մետաղագործական արդյունագործությունը զարգացած
է Լենինգրադում, Կենտրոնական արդյունագործական շր-
ջանում (Մուլգա, Խիմիկ-Նովորոտոդ, Կոլոմիա, Տուլա),
Ռուսալլը և հարավում (Խարկով, Բերդյանսկ, Ռեեսուս,
Նիկոլաև և այլն): Այդ տեղի գործարաններում պատրաստված
իրերի մեջ առաջին տեղը բռնում են յերկրագործական
մեքենաներն ու զործիքները, վորոնք իրենց վորակով հետ
չեն մնում արտասահմանյան մեքենաներից:

Գյուղատնտեսական մեթենաների յեկ գործիքների արտադրությունը
1925 թ.

Գութաններ	547200	համ
Տափաններ	174800	»
Մերմացաններ	28900	»
Հնձող մեքենաներ	45600	»
Գերանդիներ	1994900	»
Մանդաղներ	360900	»
Կասող մեքենաներ	10800	»
Քամող մեքենաներ	45400	»

Վերջերս Լենինգրադի «Կրասնի Պուտիլովկա» գործարանը սկսել է պատրաստել նաև տրաքտորներ:

Բացի զյուղատնտեսական մեքենաներից մեր գործարաններում պատրաստվում են շողեղնացքներ և վագոններ: Մեծ նշանակություն ե ստանում մանավանդ ելեկտրոտեխնիկական արդյունագործությունը: Կառուցվող ելեկտրական կայարանների համար պատրաստվում են տուրբիններ, դինամո—մեքենաներ, ելեկտրական լամպեր, հաղորդիչ լարեր, բագիոյի պարագաներ և այլն:

Ցույց տվեք մեսաղագործության գլխավոր կենտրոնները (աշխարհ, տեսք. աշխ., 73):

Տիմսիլ արդյունագործությունը Խ. Միության արդյունագործական ճյուղերի մեջ առաջինն է, մանավանդ կարեոր ե բամբակի գործվածքների արտադրությունը, փորր զարգացած և զիմավորապես Մուկվայում, Իվանովո-Վոլգոնեսենսկում և, բացի այդ, Կոստրոմայի, Յարոսլավլի, Տվերի և անանգներում: Խոշոր գործարաններ կան նաև Լենինգրադում:

Բամբակի արդյունագործության վիճակի մասին կազմելի յէ գաղափար կազմել հետեւյալ աղյուսակով (1925 թվի տվյալների համաձայն)

Հիմնարկությունների թիվը	151
Բանվորների	»	367,400
Իլիկների	»	4,200.00
Դաշտահաների	»	150,00

Առաջին և

Մանվածք	186,000 տոն
Գործվածքներ	»	1,490,000,000 մետր:

1925-26 թ. ստացվեց 2,033,000,000 մետր բամբակի գործվածք: Ծրագրված է այս տարի այնքան գործվածք ստանալ, վոր յուրաքանչյուր բնակչի ընկնի 16,6 մետր:

Բրդի գործվածքները կենտրոնացած են Մոսկվայի շրջանում և էնինգրագում, բայց՝ այդ՝ գործարաններ գտնվում են նաև Ռուսանովսկի, Պենզայի, Տամբովի և այլ նահանգներում:

Բրդի արդյունաբերության վիճակը 1925 թ.

Հիմնարկությունների թիվը	81
Բանվորների թիվը	61,300
Իլիների թիվը	484,000

Ստացվել են

Մանավածք	27,600 տոնն
Գործվածք	49,241,000 մետր

1925/26 թ. պատրաստվել ե 64,710,000 մետր բրդի գործվածքներ:

Մեծ նշանակություն ունի նաև վուշի մշակությունը:

Ցույց տվեք տեքստիլ արդյունագործության կենտրոնները. (Աշխ. աხար, աշխ. 72):

Խ. Միությունը մինելով գյուղատնտեսական յերկիր, արտադրում և մեծ քանակությամբ սննդամթերքներ, վարոնք վերամշակության են յենթարկվում գործարաններում: Ամենից առաջ աշաղագության արժանի յե ալյուրի գործը, զորը զարգացած ե զիսավորապես հացառատ շրջաններում (Սարասավ, Սամարա և այլն):

Մեծ չափերի յե հասել շաքարի արտադրությունը, զորը տարածված ե Ռուսաֆինայում: Մննդամթերքների վերամշակության մյուս ճյուղերից կարենը ե յուղագործությունը: Կովի յուղը արտահանության զիսավոր առարկաներից մեկն ե: Մեծ նշանակություն ունի նաև բուսական յուղերի ստանալը:

Արդյունագործության մյուս ճյուղերից հիշենք — կաշվեգործությունը, թղթի արտադրությունը, քիմիական արդյունագործությունը, փայտի մշակումը և այլն:

Գյուղատնտեսական հում նյութերի վերամշակության գլխավոր ձյուղերը վորոնք են: Ցույց տվեք զրանց գլխավոր կենտրոնները. (Աշխարհ, տեսր, աշխ., 74):

ԽՍՀՄ-ի վարչության հում կամ այն ապրանքով հարուստ են կամ թշու ապրանքի կարիք ունեն. (Աշխարհ, տեսր, աշխ., 76):

Ցույց տվեք ԽՍՀՄ-ի մետաղագործության կենտրոնները. (աշխ., 73):

Ճանապարհները մեծ նշանակություն յեթ հաղորդակցության միջնորդության միջնորդության միջնորդության մասնակի համար: Առանց բավականաչափ հարմար ճանապարհների չի դարձանաւ վաշ առեստուրը և վոչ ել արդյունագործությունը: Մեր բնական հարստություններից շատերը չեն մշակվում հենց այն պատճառով, վոր նրանք գտնվում են խոռված անկյուններում և յերկրի գլխավոր կենտրոնների հետ հարմար ճանապարհներով միացած չեն: Իրեկ որինակ կարելի յէ բերել Կուգինցիլիավագանը, վորի քարտաժի պաշարը Դոնբասի պաշարից մեծ ե, բայց վորովհետև հարմար ճանապարհներից դուրկ ե, ուստի այդ շրջանը առայժմ չունի այն նշանակությունը, ինչվոր Դոնբասը:

Յերկաթուղիների ընդհանուր յերկարությամբ (74,000 կիլոմետր) եւ Միությունը հետ ե մնում միայն Միաց. Նահանգներից, իսկ յերկաթուղային ցանցի խտությամբ՝ շատ յերկներից: Մեր յերկիրն այնքան ընդարձակ է, որ յեղած յերկաթուղային գծերը չեն բավականանում:

Գլխավոր յերկաթուղային հանգույցը Մուկվան եւ վորտեղից սկսվում են 10 յերկաթուղային դիմ և անցնում գանազան ուղղությամբ:

Քարտեզի վրա ցույց տվեք հետևյալ գծերը 1. Մուկվա—Լենինգրադ, —2. Մուկվա—Մելեծ (Լատվիայի սահմանը), 3. Մուկվա—Նազուբելյան (Լենասանի սահմանը), 4. Մուկվա—Կիեվ—Ուկրաин, 5. Մուկվա—Կուրսկ—Սևլանսկովոյ, 6. Մու-

կփա—Բյազանի—Ռուսով, 7. Մոսկվա—Մամարա—Արենբաւրգ,
8. Մոսկվա—Կազանի—Սվերդլովսկ, 9. Մոսկվա—Նիժնի-Նով-
գորոդ և 10. Մոսկվա—Արխանգելսկ:

Յերկրորդ կարևոր հանգույցը Լենինգրանդն է, վորք
յերկրի կենտրոնների և ծայրամասերի հետ միացած և հե-
տեղալ գծերով՝ Լենինգրադ—Մոսկվա, Լենինգրադ—Լատվիայի
սահման, Լենինգրադ—Մուրմանսկ, Լենինգրադ—Վոլգա—
Վլասկու—Փերմ—Սվերդլովսկ—Զելյարֆինսկ:

Եռովկասի գլխավոր գծերը՝ 1. Ռուսով—Վլադիկավիկապ—Մա-
խաչ-Կարս—Բալաջարի, 2. Բալաջարի—Բազու—Բարում և
այլն:

Թուրքիաստանի գլխավոր գծերը 1. Կրամսովսկու —
Տաւելիս, 2. Արենբաւրգ—Տաւելիս:

Սիրիաի գիծը ամենայերկարն է: Նա սկզբում և Զե-
լյարինսկից և համառում մինչև Վլադիկոստոկ:

Բոլոր վերը հիշած հիմնական գծերից անց են կացըր-
ված յերկրորդական գծեր, վորոնք արդյունաբերական և
առևտրական նշանակություն ունեցող վայրերը միաց-
նում են գլխավոր յերկաթուղիների հետ:

Յերկարուդային ցանցի խուրբանքը տարբեր յերկեներում:

Ամեն 100 քառ. կիլոմետր տարածությանն ընկնում և

Բելգիայում 246 կիլոմետր յերկաթուղի

Անգլիայում 142 » »

Գերմանիայում 122 » »

Ֆրանսիայում 90 » »

ԽՍՀՄ-ում—Յելլըոպ, մաս 12 » »

» Ասիական մաս 0,9 » »

Մեր յերկրի համար կարևոր նշանակություն ունեն
նաև խճուղիները, մանավանդ վերջերս, յերբ ավտոմոբի-
լային տրանզորտը բավական մեծ նշանակություն և ստա-
նում: Խճուղիներով ապրանքները տեղափոխում են յեր-
կաթուղու կայարանները և ջրային ճանապարհների նա-
վահանգիստները: Երանք հեշտացնում են գորամասերի,
զրահապատ ավտոմոբիլների, տանկերի և արտիլերիայի
փոխադրությունը: Բայց խճուղիների ընդհանուր յերկա-
րությունը համեմատած մեր յերկրի մեծության հետ
աննշան է:

Հիշեցեք Խ. Միության գլխավոր գետերը, լճերը և ծովերը և պատմեցեք նրանց առևտրական նշանակության մասին: Ե՞ս պակասություններ ունեմ մեր գետերն ու ծովերը: Յույց տվեք Միության գլխավոր նավահանգիստները:

Նավերի ընդհանուր թվով, ինչպես և նավերի տոնաժողով, Միության ծովային առևտրական նավատարմը հետ և շատ յերկրներից, 1925 թ. տեղեկությունների համաձայն մեր ծովային առևտրական նավատարմը բաղկացած էր 653 նավից, վորոնցից 355-ը շոգենավեր եյին, իսկ 118-ը առագաստանավեր: Այդ բոլոր նավերը կարող ենին վերցնել 369.000 տոնն ապրանք: Գետային նավատարմը բաղկացած էր 2252 ջերմաշարժ և 4052 վոչ ջերմաշարժ նավերից:

Վերջին մի քանի տարվա ընթացքում մեր արդյունագործությունն արագ քայլերով աճում է: Գյուղը արտադրում և զանազան հում նյութեր, վորոնք տեղափոխվում են զործարանային կենտրոնները: Այս հանգամանքի վրա Խ. Խշանությունն առանձին ռւշադրություն է դարձնում: Նա վոչ միայն աշխատում է վերականգնել փոխադրական գործը, այլ և ծրագրում է անցկացնել նոր ջրանցքներ, յերկաթուղիներ, խճուղիներ, նույնիսկ նոր նավահանգիստներ (որինակ՝ նովի պորտը Որի գետարերանում):

Յույց տվեք ԽՍՀՄ-ի Յեկառագական մասի ներքին առևտրի գլխավոր կենտրոնները, (Աշխարհ, տեսր, աշխ., 76):

Խ. Միությունը արտահանում է հետևողական արտադրությունը՝ տեղայի ապրանքները — հացահատիկներ, կոտրին առևտուրը լինուղ, ձու, քուսպ, վայտ, մորթի, վուշ, մանգան և նալիք: Դրանց մեջ առաջին տեղը բոնում են հացահատիկները, յերկրորդ տեղը — նալթը, յերրորդ տեղը — փայտը, այնուհետև զալիս են կովի յուղը, քուսպը, վուշը և այլն: Այդ ապրանքների գոտարեն մենք գրանց

առանում ենք մեքենաներ, թուղթ, բամբակ, քիմիական ապրանքներ, ներկեր, բուրդ, մետաղե իրեր, գործվածքներ ու շորեր, ելեկտրական պարագաներ և այլն:

Առեարի խոշոր մասը կատարվում է Արևմտյան Յեփրակացի—գլխավորապես Գերմանիայի, Անգլիայի, Իտալիայի հետ, վորովհետև այդ յերկրները մեր հացի և նավթի կարիքն ունեն, իսկ մենք նրանց մեքենաների կարիքը:

Միաց. Նահանգներից ստացվում են բամբակ, մեքենաներ, թուղթ և այլն:

Մենք առեատուր ենք անում նաև ասիական յերկրների—Պարսկաստանի, Աֆղանստանի, Թյուրքիայի և ուրիշների հետ: Վորովհետև այդ յերկրների արդյունագործությունը մերից թույլ է, ուստի մենք նրանց վաճառում ենք շաքար, գործվածքներ, յերկաթե իրեր և այլն, իսկ նրանցից ստանում ենք հում նյութեր, որինակ՝ բուրդ, կաշի, բրինձ և այլն:

Խ. Միության արտաքին առեատուրը այնպես չե կաղմակերպված, ինչպես մյուս յերկրներում: Մեզ մոտ ինքը կառավարությունն է առեատուր անում, գրահամար հիմնված է Առեարի ժողովրդական կոմիսարիայությունը և ներմուծությունը ժամանակին կատարվի: Վոչ մի մասնավոր մարդ, վոչ մի վաճառական իրավունք չունի մեր յերկրից արտահանել այս կամ այն ապրանքը, նա չի կարող նույնպես ներմուծել այն, ինչ վոր ցանկանում է: Առեարի այս յեղանակը կոչվում է արտաքին առեվտրի պետական մոնոպոլիա: Ուրիշ յերկրներում արտաքին առեատուրը մասնավոր վաճառականներն են վարում: Այդ առեարից վաճառականները մեծ գումարներ են վաստակում:

Մենք ինչ ապրանքներ ենք արտահանում. դա ի՞նչով կարելի է բացատրել:

Վար յերկրներն են մեզնից ստանում հում նյութեր և վնասագործարանային ապրանքներ:

Արտաքին առեարի մոնոպոլիան ինչու համար և մացլած:

III. ԽՍՀՄ-Ի ԱՍԻԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

ԹՐՅՈՒՐՔԻԱՆ:

Թյուրքիան Խ. Հայաստանի վոր կողմն և գտնվում՝ (Աշխ. ատլաս, Անդրկովկասի քարտեզ):

Ցույց տվեք Լենինական—Կարս յերկաթուղին, Կարսը վոր պետության մեջ և գտնվում:

Գտեք այն առհմանը, վորով Անդրկովկասը բաժանվում և Թյուրքիայից:

Ասիայի (կամ ափելը լավ և Յելլուպայի) քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Թյուրքիայի հարեւան յերկրները և շրջապատող ծովերը:

Բաթումից Միջերկրական ծովը գուրս դնալու համար ի՞նչ նեղուցներով պետք և անցնել:

Ցույց տվեք Տրավիզոն, Ամասոն, Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, Երզրում և Անգորա քաղաքները:

Թյուրքիան Խորհրդային Հայաստանից բաժանվում և Արաքսով և Ախուրյանով:

Թյուրքիայի սահմանները կազմում են հարավից՝ Միջերկրական ծովը, Ասորիքը և Միջազետքը, արևելքից՝ Պարսկաստանը, Խորհրդային Հայաստանը և Վրաստանը, հյուսիսից՝ Սև ծովը և վերջապես արևմտաքից՝ Եղեյան ծովը, վորը Միջերկրական ծովի մի մասն և:

Այսպիսով Թյուրքիայի մեջ մտնում են ամբողջ Փոքր-Ասիան և Հայկական լեռնաշխարհի մի մասը:

Աջականիք.—Ասիայի համբ քարտեզի վրա ցույց տվեք Թյուրքիան: Նրա բանած տեղը ներկեցիք և առա նշանակեցիք հարեւան յերկրները և ծովերը (Աշխարհագր. տետր):

Թյուրքիան պատերազմից առաջ բավական մեծ յերկիր եր: Ամբողջ Ասորիքը, Միջազետքը, Արարիայի մեծ

մասը, Պաղեսափնը պատկանում է յին նրան։ Պատերազմից հետո նա զրկվեց այդ յերկրներից և այժմ թյուրքիայի մակերեսությունը կազմում է ընդունելի 785.000 քառ. կիլոմետր։ Բնակչությունը մոտ 12 միլիոն է և նրանց մեծ մասը կազմում են քյուրիերը (տաճիկները), բացի նրանցից՝ թյուրքիայում ապրում են նաև քյուրդեր, հույներ, հայեր և այլն։

Գտեք թյուրքիայի ազգաբնակության խտությունը։ Թյուրքիան և իբրա, թե Անդրկովկասը։

Թյուրքիայի գլխավոր մասն է Փոքր-Ասիան, վորը մի քարձրավանդակ է, շրջապատված Պոնտոսի և Տավրոսի լեռներով։ Նրա յեզերքները շրջապատող ծովերից բավական չափ խոնավություն են ստանում, ունեն տաք, ծովային կղիմա և պարագան հող, իսկ ներսը տարածվում են չոր տափաստաններ։

Գյուղատնակառությունը ընակիչների գլխավոր զբաղմունքն է։ Չոր տեղերում (գլխավորապես Փոքր-Ասիայի ներսը) զբաղվում են անսամբապահությամբ։ Պահում են մեծ քանակությամբ այծ և փոչսար։ Փոքր-Ասիայի անգորական այծը ամբողջ յերկրագնդի վրա հայտնի յե յուր քնքույց բրդով։

Հացահատիկների ցանքսերի կողքին փռվում են պնդարձակ տարածություններ, ծածկված ծխախոտով, ձիթենիներով, խաղողի այգիներով, բամբակով, խաշխաշով և զանազան պաղատու ծառերով։

Աև ծովի յեզերքները (Սամսոնի և Տրավիդոնի շրջանները) իրենց ծխախոտով հայտնի յեն ամբողջ յերկրագնդի վրա։

Թյուրքիայի ընակիչների համար մեծ նշանակություն ունի նաև շերամապահությունը։ Մետաքսը արտահանության գլխավոր առարկաներից մեկն է։

Թյուրքիան գյուղատնական յերկիր է։ Գործաքաններ շատ քիչ ունի, այդ պատճառով նա արտահանում

ե գյուղատնտեսական ապրանքներ—ծխախոտ, բուրդ, միս-
տաքս, ափիսն, չորացրած միրզ և այլն, իսկ զրանց փո-
խարեն ներմուծում ե շաքար, գործվածքներ, մեքենաներ
և այլն:

Թյուրքիայի արևելյան շրջանների գրւ-
թյուրքիան յեզ Խ. խավոր կենտրոնները, այն և Իզմիրը՝
Միուրյանը: Կաղզվանը, Կարսը, Արգահանը և այլն բա-
վական մոտ են Խ. Միությանը: Նրանց համար ավելի-
ձեռնտու յե իրենց անհրաժեշտ ապրանքները—շաքարը,
նամիթը, լուցկին, յերկաթեղենը, չիթը և այլն ստանալ Խ.
Միությանից, քանի թե Թյուրքիայի հեռավոր ծայրերից:
Միուս կողմից հիշած շրջանները Խ. Միությանը տալիս են
խոտ, անասուններ, կաշի և այլն: Այսպիսով Խ. Միու-
թյանը և Թյուրքիան մնանասպես կապված են իրար հետ-
իրանով և բացարկում այն, վոր այդ յերկու յերկրների-
իրար հետ ունեցած առևտուրը բավական արագ բայց երով
զարգանում է:

Մինչև 1922 թվականը Թյուրքիան-
թյուրքիայի պե-
տական կազմը յեզ
միապետություն եր, վորի գլուխն եր-
գլխավոր բազմա-
կանոնած սուլթանը: Այդ թվականին «Աղ-
նիրը» դային Ժողովը» գահընկից արեց սուլթա-
նին և յերկիրը դարձավ հանրապետություն:

Բաղադրներից ամենակարեորը Զմյուռնիան է, վոր
դանովում և Փ.-Ասիայի արևմտյան տիբն: Կարսը նավա-
հանգիստ է: Կոստանդնուպոլիս—նավահանգիստ և (նախ-
կին մայրաքաղաք): Անգորա—համբաւետության մայրա-
քաղաքն է: Տրավլիզն—նավահանգիստ է: Երգում—
գտնվում է Տրավլիզոն—Թավրիդ ճանապարհի վրա:

Մոսկվայից Իզմիր գործվածքներն ի՞նչ ճանապարհնե-
րով են առաջարկվում:

Զմյուռնիայից Լոնզոն բուրդն ի՞նչ ճանապարհով են
գործադրում:

Մասշտարով շափեցեք Յերեանի և Կոստանդնուպոլիսի միջի հեռավորությունը:

Աշխատանք. — Ասիայի համբ քարտեզի վրա ծովերը և լճերը ներկեցեք կապույտ գույնով, իսկ ԽՍՀՄ-ի բռնած տեղը՝ կարմիր գույնով:

Նույն քարտեզի վրա գտեք Թյուրքիայի տեղը և ներկեցեք, Գրեցեք — Ահ ծով, Միջերկրական ծով, Թյուրքիա և Անգորա անունները. (Աշխարհ, տեսք):

Պարսկաստան

Ասիայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Պարսկաստանը:

Նրա հյուսիսային և հարավային ափերը ի՞նչ ջրերով են գողողվում:

Ցույց տվեք այն յերկրները, վորոնք սահմանակից են Պարսկաստանին:

Գտեք Ելբարս և Զագրոշ լեռները, Թեհրան, Թավրիզ, Բաշտ, Արուշիր քաղաքները:

Հայաստանից յերկաթուղով մինչև Պարսկաստանի վեր քաղաքը կարելի յև գնալ:

Մաշտարով գտեք, թե Յերեանից մինչև Թեհրան քանի կիլոմետր եւ:

Աշխատանք. — Ասիայի համբ քարտեզի վրա ներկեցեք Պարսկաստանի բնած տեղը և ապա գրեցեք հարեան յերկրների և ծովերի անունները:

Պարսկաստանը գտնվում է Խորհրդ. Միության հարավային կողմը և Հայաստանի հարևանն եւ:

Նրա սահմաններն են հյուսիսից Խորհրդ, Միությունը, արևմաքից Թյուրքիան և Միջազգեաքը (Իրակը), հարավից՝ Հնդկական ովկիանոսը (Պարսից ծոցը), իսկ արևելքից՝ Աֆղանստանն ու Բելուջանը:

Քարտեզի վրա Պարսկաստանը փոքր եւ յերեսում, բայց իսկապես նա Ֆրանսիայից մոտ յերեք մնացամ մեծ եւ: Նրա մակերեսութքը հավասար է մոտ 1.627.000 քառ. կիլոմետրի: Բնակիչների թիվը 10 միլիոն եւ: Միջին հաշվով

ամեն մի քառակուսի կիլոմետրի վրա ապրում և մոտ 7 մարդ: Այսպիսով Պարսկաստանը նոսր ազգաբնակություն ունի: Դրա պատճառը յերկրի չորությունն եւ:

Հարավում ձգվում են Հարավային Իրանական, իսկ հյուսիսում Ելրուրս լեռները, փորոնք ծովից փշող քամիների առաջն առնելով, թռոյլ չեն տալիս, վոր խոնավությունն անցնի յերկրի ներսու: Ամրող Պարսկաստանի մեջ յերրորդը համարյա անապատներ են:

Յերկրագործության և այգեգործության համար ամենաարժար աեղերն են զետերի և զետակների ափերը: Գետերից շատերը, լճերն չհասած, աստիքի շոգից գոլորշանում են և շատերն եւ կօրչում են ավագների մեջ: Բարլոր լճերն աղի յեն, իսկ նողը աղեխառն:

Հասկանակի յե, թե ինչպիսի մեծ նշանակություն պետք և ունենա վոռոգման խնդիրը Պարսկաստանում: Այզիներն ու արտերը ջրելու համար շատ անգամ ահազին հեռավորությունից առուներ են անցկացնում, և վորապեսզի ամառվա շոգերին ջուրը շատ չգոլորշանա, այդ ջրանցքները գետնի տակով են բերում:

Բոլորովին ուրիշ կլիմա ունի Պարսկաստանի այն մասը, վոր ընկած և Կասպից ծովի ափին: Կասպից ծովից փշող քամիները վոռոգում են լեռների լանջերը և զոյացնում բավականաչափ գետակներ, վորոնք, ցած հոսելով, կենդանություն են տալիս զաշտերին: Կասպից ծովի յեղերքով են ձգվում Պարսկաստանի ամենաարդավանդ և ամենախոնավ շրջանները՝ Գիլանը և Մազանդարանը:

Պարսկաստանը յերկրագործական յերկր է: Բնակիչների բնակիչների մեծ մասն ապրում և զյուղերում և պարագում ե զյուղատնտեսությամբ: Բայց պարսիկ զյուղացին աղքատ և և հողագուրկ: Հողը մեծ մասամբ պատկանում է խաներին կամ շահին, վորոնք վարելահողերը կապալով տալիս են զյուղացիներին

և բերքի մեկ մասն իրենք վերցնում: Հացահատիկներից ցանում են ցորեն, կորեկ և զարփ: Գիլանում և Մազանդարանում մեծ տեղ են բռնում բրնձի և բամբակի ցանք-սերբ:

Պարսիկ գյուղացու համար մեծ նշանակություն ունի այզեզործությունը: Պարսկական խաղողը, գեղձը, ծիրանն ու թուզը հայտնի յեն իրենց քաղցր համով: Խաղողից պատրաստում են զանազան տեսակ չամիչներ, իսկ գեղձը, ծիրանն ու թուզը չորացնում են և մեծ քանակությամբ արտահանում: Պարսիկ ծոցի ափերին տարածված ե փյունիկյան արմավենու մշակությունը:

Լեռնուու տեղերում և առնասարակ այնտեղ, վորտեղ յերկրագործությունը բերք չի տալիս, այժմ ել թափառում են քոչվոր ժողովուրդներ, վորոնք մեծ քանակությամբ վաչխար են պահում: Վաչխարի բրդից գորգեր են պատրաստում, կաշվից՝ պարսկական սաֆյան, իսկ միուր դորձ են ածում, վորպես մնունք: Այծի բրդից պատրաստում են բաղիմ, վորով ծածկում են վրանները: Մյուս կենդանիներից կարեսը նշանակություն ունեն հշը, ձին և ուղարք: Յերկաթուղիներ չլինելու պատճառով այժմ ել ապահնենքը կարավաններով են փոխադրում:

Պարսկաստանի ամենամեծ հարստությունը նավթն է, վորը բավական մեծ քանակությամբ տարածված և յերկրի հյուսիսային և հարավային շրջաններում: Անգլիական և ամերիկական կապիտալիստաները մեծ յեռանդով մշակում են հարավային շրջանի նավթը: Նավթը արտադրության տեղից խողովակներով մղում են ծովափ, վորտեղ գտնվում են նավթի թորման գործարաններ: Այդտեղ հում նավթից ստանում են այրելու նավթ, թենօվին և այլ նյութեր, և նավերով փոխադրում Անգլիա և Ամերիկա: Դեռ 1910 թ. Պարսկաստանում բոլորովին նավթ չեր ստացվում, իսկ այժմ արտադրած նավթի քանակությամբ Պարսկաստանը հինգերորդ տեղն է բռնում ամբողջ աշխարհում: 1926 թ.

ստացվել է 4.700.000 տոնն նավթւ Բացի նավթից Պարսկաստանում գտնվում են նաև քարածուխ, աղ, պղինձ, կապար, նիկլել և այլն, բայց դրանք չեն մշակվում:

Պարսկաստանի առևտուրը ներկայումս ել գլխավորապես կարավաններով է կատավուրքում: Յերկաթուղիներն ունեն ընդամենը 563 կիլոմետր յերկարություն: Դրանից ամենակարերը Զուլֆա—Թավրիզ գիծն է, վորով Պարսկաստանն առևտուր է անում ԽՍՀՄ-ի հետ: Մյուս կարենը ճանապարհը, վորով նա առևտուր է անում Միության հետ, Կասպից ծովն եւ Փեհլեվի (Նախիլին Ենզելի) նավահանգստի վրայով Պարսկաստանը ԽՍՀՄ-ից ներմուծում է շաքար, շիթ և այլ գործվածքներ, իսկ արտահանում է բրինձ, բամբակ, բուրդ, նավթ, չոր միրզ, խաշխաշ և այլն:

Պարսկաստանը մեծ շափով առևտուր է անում նաև Անգլիայի հետ: Անգլիայից Բուշիր քաղաքի վրայով ներմուծում են գործարանային ապրանքներ, իսկ արտահանում են հում նյութեր և նավթ:

Պարսկաստանը և Խ. Միությունը բարեկամական հարաբերության մեջ են: Այդ իսկ ԽՍՀՄ: յերեսում է նրանից, վոր Խ. իշխանությունը հենց սկզբից հրաժարվեց Զուլֆա—Թավրիզ յերկաթուղուց, վորը շինվել եր ոռուսական փողերով: Բացի այդ՝ պարսկական վաճառականներն ունեն առանձին արտահանություններ, որինակ, նրանք կարող են առանց հատուկ թույտվության ներմուծել իրենց յերկրի ապրանքները ԽՍՀՄ և փոխարենը արտահանեն միութենական ապրանքներ: Պարսկաստանի և Խ. Միության առևտուրը որըստորե զարգանում է: Այդ բանին նպաստում են այն առևտրական պայմանագրերը, վորոնք կնքվել են այդ յերկու յերկրների միջև: Պարսկաստանի և ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի ընդհա-

Նուր շրջանառությունը 1924 թ. կազմում եր 30,1 միլիոն բուրլի, 1925 թ. 79,3, իսկ 1926 թ. — 99,3 միլիոն:

Դեպի պարսկական ժողովուրդը բոլորովին այլ վերաբերմունք ե ցույց տալիս Անգլիան: Նո անց ե կացրել խճուղիներ և յերկաթուղի, վորոնցով շահագործում ե յերկիրը: Բացի այդ՝ Պարսկաստանի համար բավական ծանր պայմաններով զանազան կոնցեսուիաններ ե վերցրել և յուր կապիտալով աշխատում ե հարստահարել խեղճ ժողովրդին:

Պարսկաստանի գերազույն իշխանութեանիան կազմը թյունը պատկանում է շահին, վորը յերկրի յիշ գլխավոր բարեր ու անորենն ե: Ցիշտ ե, այժմ Պարսկացիները սկասանն ունի մեջլիս, այսինքն ժողովրդի կողմից ընտրված պատգամավորների ժողով, բայց այդ պատգամավորների մեծ մասը կարգածատերեր ու հոգեութականներ են, վորոնք ժողովրդի շեն պաշտպանում:

Յերկրի գլխավոր քաղաքը Թեհրանն ե, վորի բնակիչների թիվը մոտ 220 հազար ե: Յերկրորդ մեծ քաղաքը Թավլիզին ե, վորը յերկաթուղով միացած ե Զուլֆայի հետ: Մյուս քաղաքներից նշանավոր են Սպահանը, Մեծեղը (գորգերով), Փեհլեվին (նավահանգիս ե), Բուշիրը (նավահանգիս ե):

Մուկայից Թեհրան չի թն ի՞նչ ճանապարհով են տեղափոխում:

Պարսկաստանի նավթը Լոնդոն ի՞նչ ճանապարհով են տանում:

Մասշտաբի ոգնությամբ չափեցեք Յերեանի և Թեհրանի միջի հեռավորությունը:

Պարսկաստանի բնակիչները զլիսավորապես ինչոք են պարապում: Ինչոք արհեստական վոռոգումը կարեսը նշանակություն ունի յերկրի համար:

Ի՞նչ դյուդատնահսական ապրանքներ են արտահանագում:

Հանքերից վճրը կարեոր նշանակություն ունի Պարսկաստանի համար: Ինչու Անդլիան առանձին ուշադրություն և զարձնում Պարսկաստանի վրա:

ԽՍՀ Միությունը և Պարսկաստանն ինչ հարաբերության մեջ են:

Աժդանստան:

Ասիայի քաղաքական քարտեզի վրա գտեք Աֆղանստանը Նա Խորհրդ՝ Միության վճր կողմի և գտնվում:

Խ. Միության յերկաթուղիներից մեկը վերջանում և Աֆղանստանի սահմանի մոտ ցույց տվեք:

Գտեք Հինդուկուշ լեռները, Հերատ, Կարուէ և Կանդանար քաղաքները:

Աֆղանստանը գանձվում է Խ. Միության հարավային կողմը: Նրա սահմաններն են արևմուտքից՝ Պարսկաստանը, հարավից՝ Բելոջատանը, արևելքից՝ Հնդկաստանը, իսկ հյուսիսից՝ ԽՍՀՄ:

Աֆղանստանը մոտ $3\frac{1}{2}$ անգամ մեծ է Անդրկովկասից: Նրա մակերեսույթի մեծությունը հաշվում են 634.500 քառ. կիլոմետր, իսկ բնակչությունը՝ միշտ հայտնի չե, յենթադրում են, փոք պետք է լինի 9—12 միլիոն:

Աֆղանստանը կազմում է Պարսկաստանի շարունակությունը, այդ պատճառով նրա կլիման բավական չոր և յերկրագործությունը արհեստական վոռոգման մեծ կարիք ունի: Նրա միջով անցնում են Հինդուկուշ լեռները, վորոնց լանջերը բավական հարուստ են արտատեղերով: Ազգաբնակության զիսավոր պարապմունքը յերկազործությունը և անասնապահությունն են: Ստացվում են մեծ քանակությամբ բուրդ և կաշի, վորոնք արտահանվում են: Ազգաբնակության զիսավոր հացը ցուենին և, իսկ լեռներում՝ զարին և նանարի:

Գործարաններ չկան: Միակ գործարանը գտնվում է Կարուլում, այն ել բացել են անդլիացիները: Այդ գործարանում վերամշակում են տեղական բուրդը, ազգաբնա-

կության համար կարեար նշանակություն ունեն արհեստանոցները և տնայնագործությունը, Բրդից պատրաստում են—թաղիք, գորգեր և շալ, իսկ մետաքսից զանազան գործվածքներ:

Յերկիրը չունի վոչ յերկաթուղի, վոչ նավագնաց գետեր: Հաղորդակցության միակ միջոցը կարավաններն են, վորոնք անցնում են Հերատից Կանդահար, Կանդահարից Կարուլ, Կարուլից Պեշավար: Արարքին առևտուրը կատարվում է Հնդկաստանի և ԽՍՀՄ-ի հետ: Աֆղանստանը ԽՍՀՄ-ից ներմուծում է շարար և գործվածքներ, իսկ վոխարենը տալիս են բուրդ, կաշի և ընկույզ: Խ. Միության և Աֆղանստանի միջև առևտուրը տարեցտարի զարգանում է: Աֆղանստան վաճառականներն այժմ ավելի շուտ շուտ են այցելում ԽՍՀՄ-ի տոնավաճառները և գնում զանազան ապրանքներ:

Աֆղանստանի տեր ու տնօրենը Եմիրը կամ փաղիշշան ե, վարի իշխանությունը սահմանափակված չէ:

Գլխավոր քաղաքներն են Կարուլը (մայրաքաղաք, առևտուր Հնդկաստանի հետ), Հերատը (առևտուր ԽՍՀՄ-ի հետ), Կանդահարը (առևտուր Հնդկաստանի հետ):

Մոսկվայց Հերատ գործվածքներն ի՞նչ ձանապարհով կարելի յե տանելու Յերեանից Կարուլ ի՞նչ ձանապարհներով ալետք և զնալ:

Կարուլը Յերեանի վոր կողմն և գտնվում է ի՞նչ հեռավորության վրա:

Աշխատանք.—Ասիայի համբ քարտեզի վրա ներկեցեք Աֆղանստանի բնած տեղը և գրեցեք մայրաքաղաքը:

Զինաւան

Ասիայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք ամբողջ Չինաստանը (բացի Մանգուխայից),

Գտեք Չինաստանի մասերը—Բուն Չինաստանը (Հոանդնու և Յանցե-կիանսդ գետերի ավազանը), Մանջուրիան, Տիբետը, Արևել, Թուրքիաստանը:

Գտեք Հիմալայան, Կուեն-Լուս և Խինգան լեռները
Գլխավոր գետերը վորոնք են. Արանք ինչ ուզությամբ են
հոսում:

Զի՞նաստանի արևելյան կողմն ի՞նչ ծովեր են գտնվում:

ԶՀԱՅԻԼԻՈՎ ՄՌԱՆՊՈՂԻԱԽԱՆ, ցույց տվիք այն սահմանը, վորով եւ Միությունը բաժանվում ե Զինաստանից:

Գառեք զիկին, Շանդհայ, Կանտոն, Հանկու, Մուկ-
ղեն, Լհասսա, Յարքենդ քաղաքինը:

Այդ քաղաքներից Յերևանին վորոն ե ավելի մոտ

Մասշտարի ոգնությամբ չափեցիք Տերեանից մինչեւ
զեկունը:

Զինաստանի ամենահարավային մասը վեր գոտու կտնվում է Վորոշեցեք Պելինի աշխարհագրական դիրքը:

Զինաստանը գտնվում է Արևելյան Ասիայում։ Նրա բաններն են արևելքից Խաղաղ ովկիանոսը, հարավից՝ աշխարհը, արևմուտքվաց՝ Պամիրը, իսկ հյուսիսից՝ Խորային Միությունը և Մոնղոլիան։ Այսպիսով Զինական ուժյան մեջ մտնում են բուն Զինաստանը, կենտրոն Ասիան (առանց Մոնղոլիայի) և Մանջուրիան։

Առանց Մոնղոլիայի Զինաստանը բռնում է մոտ 8.350.000 քառ. կիլոմետր, 438 միլիոն բնակչով: Իր բնակիչների թվականը նա յերկրորդ պետությունն է ամբողջ յերկրագնդի վրա: Բուն Զինաստանում միջին հաշվով մի քառ. կիլոմետրի վրա ապրում է 112 մարդ, իսկ կան տեղերուր մեկ քառ. կիլոմետրի վրա ապրում ենույնիսկ 300-ից ավելի մարդ: Ամեն տարի, խառնված պատճառով, շատ շինացիներ թողնում են իրենց հայրենիքը և գաղթում ոտքար յերկրներ (Մանջուրիա, Հոգկաչին, Հար-Աֆրիկա, Ավստրալիա, Ամերիկա):

Աշխատանք.—Ասիայի համբ քարտեզի վրա ներկեցեք ամբողջ Զինաստանը (լինսոր. Ասիայի և Մանջուրիայի համ). («Աշխատանք, տեսար»):

Զի՞նաստանի հարկան յերկըները վճռո՞ւք են:

Համբ քարտեզի վրա նշանակեցիք բուն Զինասահանը,
Արևել. Թուրքեստանը, Տիրեալ և Մանջուրիան, Գրեցիք
գլխավոր գետերի անունները:

Զինաստանի ազգաբնակության 3/4-ը

Քմակիչների յերկրագործությամբ և պարագումն Բայց
գրադաստիքը վարելահողերը մանր են և յուրաքանչյուր
քնասանիքին միջին հաշվով ընկնում ե մեկ դեսյատին հող.
5—6 դեսյատին ունեցողն արդեն կարվածատեր և համար-
վում:

Հարավային Զինաստանն ունի տաք և խօնավ կլիմա,
այդ պատճառով այստեղ մշակում են բրինձ, թեյ, թթենի
և այլն, իսկ հյուսիսային Զինաստանում, փորն ավելի չոք
և, ցանում են զլատվորապես ցորեն և բակլա: Երևանի
բերքով Զինաստանը յերկրագնդի վրա առաջին տեղն ե
քոնում, բայց, չսայելով զրան, տարեկան մոտ 30 միլիոն
ֆութ ել զրաից են ներմուծում:

Պատերազմից առաջ Զինաստանը թեյի բերքով առա-
ջին պետությունն եր, իսկ այժմ առաջին տեղը զրավել
են Հնդկաստանը և Ցեյլոնը: Թեյի մեծ մասը գործ և
ածվում յերկրի ներսու:

Զինացու համար մեծ նշանակություն ունի և բամ-
բակը: Բամբակի բերքով Զինաստանը ներկայումս յերրորդ
տեղն ե բանում:

Հարավային Զինաստանի կարեոր բույսերից մեկն ել
բրենին ե, վարի տերեններով կերակրում են շերամի թլր-
թուններին: Մետաքսի արտադրությամբ այժմ Զինաս-
տանը Յապոնիայից հետ և մնում:

Զինացին որինակելի յերկրագործ ե: Իր փոքրիկ վա-
րելահողերի վրա մեծ խնամք և թափում: Պարաբացնե-
յու համար նա հավաքում և անսառունների աղբը և վեդ-
քուներով տանում իր վարելահողը: Զբավականակալով այն
անձրեններով, վոր մուսսոնները բերում են, չինացիները
գետերից ջրանցքներ են անցկացնում և ջրում արտերը:
Բայց չսայելով այդ բոլորին, չինացին աղքատ ե:

Զինացին վոչ միայն չնորքով և ընդունակ յերկրա-
գործ ե, այլ և լավ արհեստավոր եւ նրա հախճապակյա

գեղեցիկ ամանները, մետաքսե գործվածքները, բամբու-
կից գործած կողովաները, ասեղնազործ կտորեղենը հայտ-
նի յեն ամբողջ յերկրագնդի վրա:

Բայց և այնպես չինական արհեստավորները չեն կա-
րողանում մրցել յելքոսպացիների և յաղոնացիների գոր-
ծարանների հետ: XIX-րդ դարի 80-ական թվականներին
սկսեցին կամաց-կամաց ներս խուժել նախ անդիտական,
ապա ֆրանսիական, յաղոնական, գերմանական և ամե-
րիկական կապիտալիստները: Ակզրում չինացիները կովում
են յելքոսպացիների և ամերիկացիների տեխնիկայի դեմ,
բայց հետո չինական բուքուազիան տեսավէ, վոր ինքը
կարող և մեծ ոգուաներ ստանալ այդ տեխնիկայից և կարճ
ժամանակում գործարանային արդրանագործությունը բա-
վական մեծ հաջողություն ունեցավ: Այդ բանին նպաս-
տեց այն հանգամանքը, վոր Չինաստանն ունի քարտածխի
և յերկաթի հսկայական պաշար, գործվածքների համար
մեծ քանակությամբ հում նյութեր և բացի այդ՝ եժան
ձեռքեր: Ներկայումս Չինաստանում աշխատում են 1000-ից
ավելի գործարան միլիոնից ավել բանվորներով: Այդ գոր-
ծարանների մեջ աչքի յեն ընկնում մանավանդ նրանք,
վորոնք պատրաստում են գործվածքներ, ստանում են
ձեթ, ազում են ալյուր, պատրաստում են ծխախոտ և
այլն. կան տամնյակ գործարաններ, վօրաեղ շինում են
յերկաթե իրեր, ելեկտրական պարագաներ և այլն:

Ոտար կապիտալիստները զրանով չեն բավականա-
նում: Նրանք ամեն կերպ աշխատում են Չինաստանի
հում նյութերն արտահանել իրենց յերկրները, իսկ զրա-
փոխարեն ներմուծել գործարանային ապրանքներ: Իրենց
կապիտալիստների շահերը պաշտպանելու համար Անդիտան,
Յապոնիան, Ֆրանսիան և Ամերիկան Չինաստանում պա-
հում են նավատորմ և զորք, վորոնք չեն յենթարկվում
չինական որենքներին: Այսպիսով Չինաստանն անունով
անկախ է, բայց փաստորեն նա ներկայացնում է մի զա-

դութիւն իմազերիսալիստական պետությունների համար, վորոնք ամեն կերպ աշխատում են քաղաքացիական կոմիտեր առաջացնել, վորութեազի յերկիրը հեշտությամբ կարողանան բաժան-բաժան անել:

Զինաստանը յերկար ժամանակ միա-
սական կուղմբ իւզ պետություն եր, պետության գլուխն եր
բազմենքը: կանդած «յերկնքի վորդին» — կայսրը:

Բայց 1911 թ. կայսրը գահընկից յեղակ և
Զինաստանը դարձակ հանրապետություն: Յերկրի մայրա-
քաղաքը (Պետքինն*) ե, վորը հայսնի յէ իր հախճապակյա,
ապակյա և մետաքսի գործարաններով: Նա յերկաթուղով
միացած ե Տյան-Ցզինի հետ: Շանգհայը (1,5 միլիոն
բնակչով) դանդում ե Յան-ցե-Լիանգի գետարերանում:
Նա ամբողջ հեռավոր արևելքի ամենախոշոր նավահան-
գիստն ե: Այստեղ կարելի յէ տեսնել յերկրագնդի ամեն
ծայրից յեկած շողենավեր:

Կամունը հարավային Զինաստանի կենտրոնն ե: Նրա
դիմաց գանգում ե Հոնգ-Կոնգ նավահանգիստը, վորը
պատկանում ե անզինացիներին: Հանկոու—նշանավոր ե
թերի առևտորդ:

Զինական տիրապետություններից նշանավոր ե Ման-
չուրիան, վորի գլխավոր քաղաքն ե Մուկդենը: Այժմ
Մանչուրիայի տեր ու տիրականը Յապոնիան ե, վորն աշ-
խատում ե այդ յերկիրը դարձնել գաղութ:

Մոսկվան ի՞նչ ճանապարհով կարող ե Զինաստանից
թեյ ստանալ

Ցույց տվեք Մոսկվա—Ռեսուա—Կոստանդնուպոլիս—
Սուեզ—Կարմիր ծով — Վաղիվոստոկ — Շանգհայ ճանա-
պարհները:

Աշխատանք.—Ասիայի համբ քարտեզի վրա նշանակե-
ցեք Զինաստանի գլխավոր քաղաքները:

*.) Մասդրություն կա մայրաքաղաք դարձնել Կանկինը:

Յապոնիա:

Յապոնիան գտնվում է Ճեռավոր Արևելքում, Ասիայի արևելյան մասում: Նա բաղկացած է մի շարք կղզիներից, փորձնք ձգվում են հյուսիսից դեպի հարավ: Այդ կղզիներից նշանավոր են Հոնդոն, Սիկուլոն, Կիուսիոն և Յեսուն: Բացիդրանից՝ Յապոնիային են պատկանում կուրիլյան կղզիները, Սախալինի կեսը, Ֆորմոզան, Ռիու-Կիուն և այլն:

Այսպիսով Յապոնիան բաղկացած է բազմաթիվ կղզիներից, բայց յապոնացու համար նրանք մի ամբողջություն են կազմում: Յապոնացիները լավ ծովագնացներ են, նրանց համար մի կղզուց մյուսն անցնելը դժվար բան չեւ:

Ցույց աղիք այն յերկաթուղին, վորով կարելի յեզնալ Վաղինվաստով:
Մաշտաբով չափեցեք Յերեանի և Տոկիոյի միջի հեռավորությունը:

Ցույց աղիք Բաթում—Նազարատի ծովային ճանապարհ:

Աջաւանին.—Ասիայի համբ քարտեզի վրա ներկեցեք Յապոնիային պատկանող բոլոր կղզիները և հետո նշանակեցնեք մեծ կղզիների, շրջապատող ծովերի անունները:

Յապոնիան, առանց գաղութների, բոնում է 386.000 քառ. կիլոմետր տարածություն: Այդ, համեմատաբար, փոքր տարածության վրա ապրում են մոտ 60 միլիոն մարդ, փորսնք դեղին ցեղին են պատկանում: Ամեն մի քառ. կիլոմետրի վրա, միջին հաշվով, ապրում է 155 մարդ: Ազգաբնակության խտությամբ նա գերազանցում է նույնիսկ Գերմանիային:

Յապոնիան Խորհրդային Հայաստանից քանի անգամ է խիստ:

Խոչպես տեսանք Յապոնական կղզիներին ները ձգվում են հյուսիսից դեպի հարավ: Արագությունը:

այդ պատճառով Յապոնիայի հյուսիսային կղզիներն ունեն դաժան, ցուրտ կլիմա, իսկ հարավային

կղզիները, ընդհակառակը, տաք են խոնավ և ունեն
մերձ-արևադաշտին ճոխ բուսականություն։ Յապոնիայի
համար շատ մեծ նշանակություն ունի Կուրո-Սիլո ծովային
տաք հոսանքը, վորի վրայով փչող հարավ-արևելյան
մուսսոնները առատ գոլորշիներ են տանում դեպի Յա-
պոնական կղզիները։

Այսպիսով կլիման չափազանց նպաստավոր և զյու-
ղատնտեսության համար։ Այսուեղ կարող են աճել այն-
պիսի թանգարժեք բույսեր, ինչպիսին են՝ բրինձը, թեյը,
թթենին և այլն։

Բայց Յապոնիայում հարմար հողեր քիչ կան և յերկրի
մեծ մասը ծածկված և լեռներով։ Գյուղական մեկ ընտա-
նիքին հազիվ մեկ գեսյատին վարելահող և հասնում։ Ա-
մեն մի այդպիսի վարելահող մշակում են, ջրում ու պա-
րարտացնում այնպես, ինչպես այդին։ Այդպիսի աշխա-
տանքի շնորհիվ յապոնացին յուր վարելահողից մեծ բերք
և վերցնում։

Յապոնիայի գլխավոր բույսը բրինձն է։ Ամբողջ ազ-
գարնակությունը կերակրվում է բրնձով։ Թե ինչ նշանա-
կություն ունի բրինձը յապոնացու համար, այդ յերեսում
և նրանից, վոր փոխանակ անախաճաշ, ճաշ, ընթրիք»
ասելու յապոնացին ասում է «առավոտյան բրինձ, կե-
սորվա բրինձ, յերեկոյան բրինձ»։ Զնայելով վոր Յապո-
նիան բրնձի մեծ բերք և վերցնում, բայց և այնպես այդ
բերքը չի բավականանում և ստիպված է լինում վորոշ
չափով բրինձ ներմուծել ուրիշ տեղերից։ Բացի բրնձից
ցանում են ցորեն, գարի և յեղիպտացորեն։

Յուրաքանչյուր յապոնացի իր փոքրիկ վարելահողի
կողքին մի փոքրիկ այդի ունի, վորաեղ թեյ և թթենի յե-
մշակում։ Թեյի բերքով Յապոնիան հետ և Զինաստանից և
Հնդկաստանից, բայց մետաքսի բերքով ամբողջ յերկրա-
գլուղի վրա առաջին տեղն է բռնում։

Զամիականց տարածված ե և ձկնորսությունը։ Շրջաւալատող ծովերը լիքն են թանգարժեք ձկներով, և յապոնացիներն այնքան ձուկ են ստանում, վոր յերբեմն չեն հասցնում աղելու և վորպեսզի չփշանա, նրանից ըրնձի դաշտերը պարարտացնող նյութեր են պատրաստում։

Բրինձը և ձուկը յապոնացու համար նույնն են, ինչ վոր մեղ համար հացը և միսը՝ կաթնեղին չեն գործածում։ Յեվ դա բնական ե։ Յապոնիան խիտ բնակված յերկիր ե և մեկ քառ. կիլոմետր տարածության վրա ապրում ե 155 մարդ։ Այս չափ մարդ կերակրելու համար անհրաժեշտ ե մշակել բոլոր պետքական հողերը, իսկ այս պայմաններում աղաստ արոտատեղի չի մնում։

Յապոնացիները մեծ մասամբ գյուղերում են ապրում։ Գյուղերն աչքի յեն ընկնում իրենց մաքրությամբ։ Այստեղ դուք դաներին թափած աղը չեք տեսնի. ամեն ինչ գործ են ածում հողերը պարարտացնելու համար։ Ազբ թափողին այստեղ չեն վարձատրում, ընդհակառակը, աղը թափողն ե տանտիրոջ վոր տալիս, վորպեսզի նրա բակի աղը հավաքի և տանի յուր վարելանողը։

Յապոնական արդյունագործության մեջ առաջին տեղը բռնում է գործվածքներ պատրաստելու։ Բամբակի գործարանների կենարոնը Ասական է. սա Յապոնիայի համար նույնն ե, ինչ վոր Մանչեստերը Անգլիայի համար։

Խսչպես տեսանք, Յապոնիան խիտ բնակված յերկիր ե և յուր հացը չի բավականանում (Հնդկաչինից ներմուծում ե բրինձ, խակ Մանջուրիայից՝ ցորեն ու բակլա), Նա չունի նաև բավականաչափ հում նյութեր իր գործարանների համար։ Յապոնիան դրսից պետք ե ներմուծի բամբակ, ջուտ, կաշի, յերկաթ և այլն։ Այս բոլորը կան հարեան յերկրներում, բայց այնտեղ նրա հետ մրցում են յեվրոպացիները։ Ուժեղացնելով յուր նավատորմիզն ու գորքը, նա գաղութիներ ե վնասում իրեն համար, վորպեսզի կարողանա այնտեղից հում նյութեր ստանալ և

մինույն ժամանակ վաճառել այստեղ իր գործարանային ապրանքները Ռուս-յապոնական պատերազմից հետո Յապոնիան զրավեց Սախալին կղզու կեսը, Կորեան և Մանջուրիայի մի մասը—Պորտ-Արտուր նավահանգստով: Յապոնական կառավարությունն առանձնապես ուշադրություն է դարձնում մանավանդ Զինաստանի վրա, վորտեղ յապոնական կապիտալիստներն առանձին թույլտվություն են ստացել հանքեր մշակելու համար և այստեղ վաճառում են իրենց գործարանային ապրանքները:

Միաժամանակ նա իր ուշադրությունը դարձնում է նաև զեղի Խաղաղ ովկիանոսի կողմը, վորտեղ բազմաթիվ կղզիներ կան: Պատերազմից հետո Յապոնիան ստացավ գերմանական գաղութները—Մարիանյան, Կարոլինյան յնչ Մարշալյան կղզիները: Այստեղ ել նրան խռովում են հանդիսանում Միացյալ Նահանգները:

Այսպիսով յերեք խոշոր իմալերի բարելիստական պետությունները՝ Յապոնիան, Անգլիան և Միացյալ Նահանգները մրցում են իրար հետո նրանցից ամեն մեկն աշխատում և ապահովել իր առևտուրը և արդյունաբերությունը: Յեզ դրա համար նրանցից ամեն մեկն աշխատում է զինվել, ուժեղացնել յուր նավատօրմը:

Յապոնիան իր արտաքին առևտուվ կարեոր տեղ է բռնում, նրա նավերն այժմ յերթեեկում են բոլոր ոլկիանուների վրա:

Յապոնիան միապետություն է: Պետության գլուխն է կայսրը (միկազո), վորի իրավունքները սահմանափակված են պարլամենտով:

Մայրաքաղաքն է Տոկիոն (մոտ 2 միլիոն բնակչութ), վորը Յապոնիայի առևտուական գլխավոր կենտրոններից մեկն է: Մյուս քաղաքներից նշանավոր են՝ Ոսական (մոտ 2,000,000 բնակչութ), արդյունագործության խոշոր կենտրոնն է, Յոկոհաման—թեյի և մետաքսի առևտուրի կենտրոն, Նազասակին—նավահանգիստ. Կիոտոն, Կոբեն, Կայլն:

ԽՍՀՄ-Ի ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

Թիգրանիս:

Յեկրտոպայի քաղաքական քարտեզի վրա գտեք Ֆին-
լանդիան:

Նա ԽՍՀՄ-ի վրա կողմն և գտնվում:

Ցույց տվեք Ֆինլանդիայի սահմանակից յերկրները և
ծովերը:

Յեկրտոպայի համբ քարտեզի վրա ներկեցեք Ֆինլան-
դիայի տեղը և ապա գրեցեք հարեան յերկրների և ծովերէ
անունները:

Ֆինլանդիայի հյուսիսային ծովափը գտնվում է ցուրտ
գոտում, բայց և այնպիս այդ ծովափի մոտ ջուրը չի սառ-
չում. ի՞նչո՞ւ.

Մակարդակը—343.000 քառ. կիլոմետր.

Բնակչութիւնը—3,5 միլիոն:

Ֆինլանդիան գտնվում է ԽՍՀՄ-ի արևմտյան կողմը:
Նրա սահմաններն են արևելքից՝ ԽՍՀՄ, արևմուտքից՝
Բունիիկ ծոցը, Շվեդիան և Նորվեգիան, հյուսիսից՝ Բա-
րենցի ծովը, իսկ հարավից՝ Ֆիննական ծոցը:

Յերկրի 91,5⁰/₀-ը բռնված է անտառներով, լճերով,
ձանիձներով և ժայռերով: Անտառը Ֆինլանդիայի բնակիչ-
ների ապրուստի գլխավոր աղբյուրն է: Ամենորեք տա-
րածված է փայտահատությունը: Ծառերից ստանում են
զերան ու սախտակ, վորը մեծ չափով արտահանում են.
Փայտը չոր թորման յենթարկելով ստանում են ձյուք.
Փայտից պատրաստում են մեծ քանակությամբ բուլք,
լոցկի և կահ-կարասիք: ԽՍՀՄ-ն Ֆինլանդիայից ամեն
տարի մեծ քանակությամբ թուղթ է ներմուծում:

Անտառների, ձանիձների, ժայռերի և լճերի պատ-
ճառով վարելահողերը շատ քիչ են բռնում, նրանք
կազմում են յերկրի մակարդակի 8,5⁰/₀-ը: Հացահատիկ-
ներից տարածված են վարսակը և հանարք: Զնայելով
վոր ֆինն զյուղացին յուր վարելահողը պարարտացնելու

համար ահազին ջանք ե թափվում, այսուամենայնիվ սեփական հացը չի բավականանում: Ֆինլանդիան ամեն տարի ԽՍՀՄ-ից ներմուծում ե մեծ քանակությամբ հացահատիկ:

Ֆինլանդիայում մեծ արդյունք ստացվում է նաև կրանտիսեսությունից: Պահում են ազնվացեղ կաթնատու կովեր, վորոնց կերակրելու համար բավական մեծ քանառ կությամբ խոտ են ցանում: Կարնավերքը վոչ միայն բավարարում է իրենց, այլ և մի մասը արտահանվում է:

Ֆինլանդիան քարածուխ չունի. գործարաններն աշխատում են ջրի ուժով: Ջրի ուժից ստանում են ելեկտրական հոսանք, վորով շարժում են մեքենաները: Ելեկտրիֆիկացիան մեծ դարձ ավեց յերկրի արդյունագործությանը, մանավանդ թղթի և մահուզի արտադրության:

Արտահանվող ապրանքների $70^{\circ}/_0$ -ը կազմում են վայրը, փայտից պատրաստած իրերը և թուղթը, իսկ $20^{\circ}/_0$ -ը՝ յուղը թուղը և փայտն արտահանվում է Անգլիա: Ներմուծվող ապրանքների մեջ առաջին տեղը բնում ե հացը: Բացի զրանից նա դրսից ստանում է նաև մետաղներ, մեքենաներ, գործվածքների համար հում նյութ և այլն:

ԽՍՀՄ-ն Ֆինլանդիայց ստանում է թուղթ, իսկ փոխարեն տալիս է հաց: Ժամանակի ընթացքում, յերբ թղթի արտադրությունը մեղանում է կզարդանա, մենք ֆինլանդիայի թղթի կարիքն այլևս չենք ունենա: Բայց նա ստիպված կլինի միշտ ներմուծել մեր հացը:

Նելսինգենու — յերկրի մայրաքաղաքն Գլուխու բաղադրի ներք: Եւ, նշանավոր է իր առևտրով և գործարաններով: Վիլուրզ — նավահանգիստ եւ Տուրկու — նավահանգիստ եւ Տանիերենու — թղթի արտադրության կենտրոն:

Կարիլիք յե ծովով Բաթումից Հելսինգֆորս դնաւ.
ցույց տվեք այդ ծովային ճանապարհը:

Ցույց տվեք Մուկվա—Լենինգրադ—Հելսինգֆորս ճանապարհը:

Յերեանում ստացվել եւ մի վագոն ֆինլանդական
թուղթ: Այդ թուղթը վոր քաղաքում կարող եր պատրաստ-
վել և ինչ ճանապարհով ե յեկել Յերեան:

Ֆինլանդիան վոր ապրանքներով ե մրցում ԽՍՀՄ-ի հետ:

Եսոսնիա յեւ Լատվիա:

Յեվրոպայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք
Լատվիան և Եսոսնիան:

Նրանք եւ Միության վոր կողմն են դաշնակում:

Ցույց տվեք Ռիգան և Տալլինը:

Լատվիայի միջով ինչ գետ ե հոսում:

Լատվիա—մակարդակը՝	66	հազար քառ.	կիլ.,	Ընակիչները՝	1,8	միլ.
Եսոսնիա	»	48	«	»	»	1,1 »

Եսոսնիայի և Լատվիայի ազգաբնակությունը զիստ-
վորապես զյուլատիսնությամբ ե պարապում: Հողն ար-
գավանդ չե, բայց շնորհիվ այն հանգամանքի վոր պարա-
տացնում ե, մեկ զեսյատինից ստացված բերքն ավելի
մեծ ե, քան մեզանում: Լայն չափով տարածված ե
ցանքաշրջանառությունը և բազմադաշտյան սիստեմը: Լավ
հիմքերի վրա ե դրված անանապահությունը, պահում են
կաթնառու աղնավացեղ կովեր: Կաթնեղենը մեծ չափով
արտահանվում ե:

Պատերազմից առաջ Լատվիան հայտնի յեր իր գոր-
ծարաններով, վորտեղ պատրաստվում եյին մեքենաներ,
ռեախինե իրեր, գործվածքներ և այլն: Լատվիայի գլխավոր
նախանդիսաները բավական մեծ առեսուր ունեյին:
Բայց այդ առեսուրն ու արդյունագործությունն ապրում եր
Ռուսաստանի հետ ունեցած կապով:*)

*) Լատվիան, Եսոսնիան, ինչպես և Ֆինլանդիան պատերազմից առաջ
Ռուսաստանի մասն եյին կազմում, պատերազմից հետո նրանք անկախություն
ձեռք բերին:

կապը, ընկավ և Լատվիայի առեսութն ու գործարանային կյանքը:

Քիչ թե շատ լավ զրության մեջ ե Եստոնիայի արդյունագործությունը: Այսուեղ դանվում են մահուզի, թղթի և այլ գործարաններ:

Լատվիայի գլխավոր նավահանգիստն ե Ռիգան, իսկ Եստոնիայինը՝ Տալլին: Այդ նավահանգիստների վրայով արտահանվում են զանազան հում նյութեր (վուշ, փայտ) և մննդամթերք (յուղ, վարսակ, ձկնեղեն և այլն), իսկ Եստոնիայից նաև սպիրտ, թուղթ, ցեմենտ:

Ներմուծվում են—գործարանային ապրանքներ, քարածուխ, բամբակ, նավթ և հաց: Լատվիայի և Եստոնիայի նավահանգիստները միացած են յերկրի միջին մասերի հետ յերկաթուղիներով, վորոնք և. Միության յերկաթուղիների շարունակությունն են կազմում: Այդ պատճառով և. Միությունը Լատվիայի և Եստոնիայի վրայով առեսութ և անում արևմտյան Յեվրոպայի հետ: Այսպիսով նրանք վորպես տրանզիտային յերկրներ մեծ նշանակություն ունեն և. Միության արտաքին առեսութիւն մեջ:

Է Խ Խ Ա Տ Մ Ա

Յեվրոպայի քաղաքական քարտեզի վրա ցույց ավելի լեհաստանի սահմանները:

Նա գեղի ծով յելք ունի. ցույց ավելիք:

Լեհաստանի գլխավոր գետը վճրն է: Այդ գետի վրա Բնչ քաղաքներ են գտնվում:

Լեհաստանը անկախություն ստացավ 1918 թ., նա կազմվեց նախկին Ռուսաստանի արևմտյան նահանգներից Ավստրո-Վենգրիայի մասերից:

Ներկայումս Լեհաստանի մակարդակը կազմում է 388 հազար քառ կիլոմետր, իսկ ընակիչների թիվը 29 միլիոն:

Ազգաբնակության համար կարևոր նշանակություն ունի վոչ միային գլուղաստնաեսությունը, այլև արդյունագործությունը:

Մշակում են զլիսավորապես հաճար, վարուկ և կարտոֆել: Մեծ չափով տարածվում է նաև հակընդեղը; Վորից պատրաստում են շաքար: Սեփական հացը չի բավականակատ:

Իեհաստանը հարուստ ե զանազան հանքերով, վորոնցից առաջին տեղը բռնում է բարձուխը: Գալիցիայում ստացվում ե ցինի, նավթ և մեծ քանակությամբ այլ:

Արդունագործության մեջ կարևոր նշանակություն ունի գործվածքների պատրաստելը: Լողզի և Վարչակի գործարանները գործվածքներ են մատակարարում ամբողջ Աեհաստանին:

Աեհաստանն արտահանում ե փայտ, քարածուխ, ցինի, նավթ, գործվածքներ, շաքար, ձու, միս և խոզ, իսկ ներմուծում ե բամբակ, բուրդ, մեքենաներ, գեղորաց և հաց: Աեհաստանի յերկաթուղիները կազմում են ԽՍՀՄ-ի յերկաթուղիների շարունակությունը. այս հանգամանքը բարվական կհեշտացներ ԽՍՀՄ-ի և Աեհաստանի առևտուրը, յեթե լեհական բուրժուազիան դժվարություններ չհարուցաներ:

Աեհաստանը բուրժուական հանրապետական կազմը տություն եւ Բարձրագույն իշխանության գլխավոր բարեմերը թյունը պատկանում ե պրեզիդենտին և պարլամենտին: Պարլամենտը բաղկացած է յերկու պալատներից—սեյսից և սենատից:

Աեհաստանի մայրաքաղաքը Վարչական է, վորը գտնվում է Վիսլայի վրա և առևտրական խոշոր կենտրոն է: Նրա վրայով անցնում են Մուկվա—Բերլին և Վենեսուալական գրադարան յերկաթուղիները: Վիսլայի վրայով Վարչական կապում ե ծովի հետ (Դանցիկ): Լողզի հայտնի յե գործվածքներով: Կրակով: Լվով—Գալիցիայի զլիսավոր քաղաքն է:

Յեկրոպայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք
Մոսկվա—Մինսկ—Վարշավա, Լենինգրադ—Պոկոլ—Վիլնո—
Վարշավա յերկաթուղիները:

Ցույց տվեք Դանցիգը:

Յեկրոպայի համբ քարտեզի վրա ներկեցեք Լեհաստա-
նի բռնած տեղը Գրեցեք հարեան յերկրների անունները:

Առամանիա:

Յեկրոպայի քաղաքական քարտեզի վրա գտեք Ռու-
մանիայի սահմանները:

Նրա ափերն ի՞նչ ծով և վողողում: Ցույց տվեք Դա-
նուը և նրա վաակ Պրուտը:

Պրուտի և Խնեսորի միջև զանգում և Բեսարարիան,
վորք պատկանում է ԽՍՀՄ-ին, բայց Ռումանիան բռնի
կերպով զրագել և ցույց տվեք: Բեսարարիայի զիսավոր
քաղաքը վերն եւ:

Ռումանիայի միջով ի՞նչ լեռներ են անցնում:

Ռումանիայի մակարդակը՝ 317 հազար քառ. կիլոմետր,
Ազգաբնակությունը՝ 18 միլիոն:

Ռումանիայի միջին մասով ձգվում են Կարպատյան
լեռները, վորոնց լանջերը ծածկված են հարուստ անտառ-
ներով: Կարպատներից գեսլի արևմուտք և արևելք տա-
րածվում են սևվահողով ծածկված ընդարձակ հարթու-
թյուններ, վորտեղ մշակում են մեծ քանակությամբ յե-
զիւլտացորեն և ցորեն: Հացահատիկների բերքն այնքան
մեծ ե, վոր մի մասն արտահանվում եւ: Հացահատիկների
մշակությունը ռուման գյուղացու ապրուստի հիմնական
աղբյուրն եւ:

Յերկրի բնական պայմանները շատ հարմար են նաև
անասնապահության համար: Կարպատյան լեռները հա-
րուստ են արգյան մարգագետիններով, իսկ ստորոտնե-
րում տարածվում են լնդարձակ խոտահարքեր: Պահում
են ձի, վոչխար, խոզ և խոշոր յեղջյուրավոր անասուններ,
բայց նրանք մեծ մասամբ մանր են:

Հանգային հարստություններից աչքի յեն ընկնում աղը և նալը, վորոնք ներկայումս մշակվում են և արտահանվում:

Արդյունագործությունը թույլ է և յերկրի կարիքներին չի բավարարում, այդ պատճառով Ծումանիան ստիպված է դրաց ներմուծել զործարանային ապրանքներ:

Արտաքին տևետուրը մեծ չեւ: Արտահանության կեսը կազմում է հացը, $\frac{1}{5}$ -ը՝ անտառը, $\frac{1}{8}$ -ը՝ նավթը, նույնքան ել կենդանիներ են արտահանում: Ներմուծվող ապրանքների մեջ աչքի յեն ընկնում—բամբակը, բուրդը, գործվածքները, մետաղները, մետաղեր իրերը և մանավանդ մեքենաները:

Ծումանիայի արդյունագործության և տրանսպորտի մեջ աշխատում է ռատր կավիտալ. այսպես՝ նավթի արդյունաբերության մեջ գտնվում է անզինական կավիտալ, նավահանգիստների շենքերի մեջ՝ ֆրանսիական և այլն: Ծումանիան միապետություն եւ Գլխավոր քաղաքն է Բուժարեսը:

Ծումանիան Բնչակիսի յերկիր է: Գյուղատնտեսության համար բնական պայմանները հարմար են: Ի՞նչ ապրանքներ և արտահանում և ներմուծում:

Յեփրոպայի համբ քարտեղի վրա ներկեցեք Ծումանիայի տեղը: Եշանակեցեք հարևոն յերկրները:

Բասարաբիայի գլխավոր քաղաքը վարչություն է:

